

**ԹԱՐԻԶԻՅ  
ՍՏԱԼԻՆԵԱՆ  
ԳՈՒԼԱԳ -  
ԸՆԴՀԱՏՈՒԱԾ  
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ**

Ռուբինա Փիրումեան Մինասեան  
Եւ Բաղդիկ Մինասեան



Այս աշխատութիւնը, ինչպէս նրա անգլերէն բնօրինակը,  
նուիրում է հօրս՝ Բաղդիկ Մինասեանի եւ ստալինեան  
բռնաճնշումների բոլոր զոհերի յիշատակին



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

|                                                                                                                          |     |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|
| Ներածական – Գայեանէ Շագոյեան ՀՀ ԳԱԱ ՀԱԻ                                                                                  | vii |
| Խոստումն ընթերցողներին                                                                                                   | 1   |
| Նախաբան                                                                                                                  | 9   |
| Գլուխ 0 Սկսելուց առաջ                                                                                                    | 17  |
| Գլուխ 1 Նոր կեանքի սկիզբ                                                                                                 | 30  |
| Գլուխ 2 Կենսագրական գծեր. Անվախճան<br>գրկանք եւ աղքատություն                                                             | 43  |
| Գլուխ 3 Երկրորդ համաշխարհային պատերազմի<br>բոցերում. Առեւանգուած եւ բանտարկուած<br>Թարիզում                              | 76  |
| Գլուխ 4 Երեւանի ՉէԿայի բանտում,<br>1944, 6 յունուար – 1945, 15 ապրիլ.<br>Ամբաստանություն եւ ճամբորդություն<br>դէպի Սիբիր | 117 |
| Գլուխ 5 Պատումը իր լրումին հասցնելու ճգնանքով.<br>Կեանքը ստալինեան գուլագներում                                          | 145 |
| Գլուխ 6 Գուլագի յուշագրությունները շարունակում<br>են լուսաւորել հօրս կեանքի պատմութեան<br>մութ անկիւնները                | 201 |
| Գլուխ 7 Մենք՝ երկու որբեր, «որբեւայրի» մօրս հետ                                                                          | 245 |
| Գլուխ 8 Աստուածաշնորհ պարգեւը մեզ, որ<br>վայելեցինք ամբողջ քսան-երկու տարի                                               | 268 |
| Գլուխ 9 Իջնում է վարագոյրը.<br>Գաղափարի անկոտրում զինուորը<br>յախտենականութեան ճամբան է բռնում                           | 288 |
| Գրականութեան ցանկ                                                                                                        | 299 |
| Անուանացանկ                                                                                                              | 304 |



## Բազմաձայն երկխոսություն. բանավոր պատմությամբ վերակազմած հիշողություն

«Թավրիզից ստալինյան գուլագ. ընդհատված պատմություն» գիրքը նախ լույս էր տեսել անգլերեն լեզվով, 2017-ին, ԱՄՆ-ում՝ «My Father: a Man of Courage and Perseverance, A Survivor of Stalin's Gulag» վերնագրով: Շապիկի վրա նշված երկու հեղինակներից Ռուբինա Փիրումյան Մինսկի աշխատանքի անգլերեն և հայերեն տարբերակների հրատարակման անհրաժեշտությունը բացատրում է տարբեր երկրների ընթերցողների լայն շրջանակներին այն հասանելի դարձնելու նպատակով: Սակայն, կարծում եմ, աշխատանքը պակաս կարևոր չէ նաև որպես գիտական ներդրում, և վստահաբար կհետաքրքրի հատկապես ստալինյան շրջանն ուսումնասիրողներին և բանավոր պատմությամբ հետաքրքրվողներին:

Աշխատանքն ուշագրավ է իր բազմաչափ դիտանկյունների համադրությամբ, այն չի տեղավորվում մեկ գիտական ժանրի սահմաններում, այլ հավասարապես կարող է ընկալվել և՛ որպես հուշագրություն, և՛ իրական դեպքերի վրա հիմնված գեղարվեստական գրականություն, և՛ գրականագիտական կամ պատմագիտական հետազոտություն, և՛ վերակազմություն կամ նույնիսկ դետեկտիվ հետաքննություն:

Թեև շապիկի վրա նշված է երկու անուն՝ հոր և դստեր, սակայն տեղին է նշել, որ գիրքը նախաձեռնել և, ըստ էության, կյանքի է կոչել Ռուբինան, այդ իսկ պատճառով անգլերեն տարբերակում նշված է միայն իր անունը: Հայերեն վերամշակված հատորը նա գերադասեց ներկայացնել որպես երկու հեղինակների համատեղ աշխատանք, որտեղ անձնական և ընտանեկան հուշերով ու հետազոտողի վերակազմություններով (ըստ արխիվային նյութերի, գեղարվեստական գրականության, գիտական հետազոտությունների) նա լրացնում է հոր ընդհատված հուշագրությունը:

Հեղինակների տեքստերը գրված են մեկը մյուսից անկախ, սակայն նրանց միջև չընդհատվող մի երկխոսություն է ընթանում: Եվ եթե Ռուբինայի պարագայում, որը գրում է հոր մահից հետո, իր մտովի գրույցը վերջինիս հետ սպասելի է, ապա Բաղդիկ Մինասյանի հուշերում տեղ գտած անդրադարձերն իր ապագա համահեղինակին թողնում են միստիկ կապի տպավորություն, երբ երևանյան բանտում, բացարձակ մեկուսացված, նա շարունակ «գրուցում» է հորից զրկված իր 6-7 տարեկան դստեր՝ Ռուբինայի հետ:

Բաղդիկ Մինասյանի՝ իր ապագա հուշագրության համար կազմած մանրամասն ծրագիրը դառնում է կարևոր ուղեցույց, որին պիտի հետևեր Ռուբինան, որպեսզի, չնայած համահեղինակի ֆիզիկական բացակայությանը, «համաձայնեցնեն» իր շարադրանքը հոր տեսլականի և մոտեցումների հետ՝ ստանալով իրապես համահեղինակային տեքստ: Եվ դուստրը սկսում է փնտրել այն մարդկանց հուշերը, որոնց կենսագրություններն ու փորձառությունն ինչ-որ կերպ համադրելի էին հոր ապրածի հետ, ինչպես և նրանց վերաբերող գրավոր աղբյուրներ՝ պատմաբանների և գրողների աշխատանքներ, որոնցում անդրադարձներ կան ստալինյան գուլագներով անցածների



կյանքին ու փորձառությանը: Այս տեսանկյունից գիրքն իսկապես հազվադեպ նմուշներից է: Հիմնված լինելով բանավոր պատմության գործիքակազմի վրա՝ այն ոչ թե վերականգնում է ընդհանուր պատմությունից դուրս մնացած դրվագներ կամ դիտանկյուններ (օրինակ, կանանց, տարբեր փոքրամասնությունների, պարտիզանների, ճնշված խմբերի) մեկ մարդու կենսագրության միջոցով, ինչը և սովորաբար անում է բանավոր պատմությունը,<sup>1</sup> այլ ընդհանուր պատմության, այլոց ձայների միջոցով վերականգնում է մեկ մարդու կորսված հիշողությունը, ամբողջացնում անավարտ հուշագրությունը:

## **Ձայն մարդու՝ ձայն բազմաց**

Ինչու՞ ենք այս հուշագրությունը համարում բանավոր պատմություն, առավել ևս, որ այն մեզ գրավոր է հասել: Հիշեցնեմ, որ բանավոր պատմության խնդիրը ոչ միայն և ոչ այնքան գրավոր աղբյուրների սակավության պատճառով պատմագրությունը բանավոր վկայություններով համալրելն է, որքան մեծ պատումների, դասագրքային դարձած մեկնաբանությունների կազմաքանդումը՝ ներմուծելով ճնշված, փոքրամասնություն կազմող խմբերի ձայներն ու պատմության լուսանցքում հայտնված խնդիրները:

Փորձենք հասկանալ, թե ինչպիսի «փոքրամասնությունների» կամ «լռեցված» խմբերի ձայներ է ներկայացրել Թավրիզի հայ համայնքի դաշնակցական Բաղդիկ Մինասյանը, որին Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ԽՍՀՄ-ի *կազեբեն* առևանգում է Թավրիզից և աքսորում սիբիրյան գուլագ: Ընդ

---

1 Շագոյան Գ. Բանավոր պատմությունը պատմագրության և ազգագրության միջև. Նախաբան // Չլավող ձայներ. հիշողությունն ու հետհիշողությունը բանավոր պատմություններում, խմբ. Գ. Շագոյան, Եր., ՀԱԻ հրատարակչություն, 2018, էջ 11-25:

որում, այդ լռեցված խումբը գրքում ներկայացված է ոչ միայն ի դեմս հիմնական հերոսի, այլև ի դեմս նրա կնոջ և երկու դստերի՝ կանանց, որոնք պատերազմող երկրների պատմական խորշերում մնում են անտեսանելի, անլսելի: Մարտնչող մեծ պետությունների արանքում հայտնված այս մարդկանց դիտանկյունն ու խնդիրները հազիվ թե տեղ գտնեին Երկրորդ աշխարհամարտի որևէ պաշտոնական պատմագրությունում՝ ոչ իրանական, ոչ խորհրդային, ոչ ամերիկյան կամ եվրոպական որևէ երկրի, ոչ էլ նույնիսկ՝ հայկական: Սակայն Բաղդիկ Մինասյանի հուշերի շնորհիվ մենք ոչ միայն տեղեկանում ենք այդ խառը շրջանում իր և իր ընտանիքի խնդիրների մասին, այլև որոշակի պատկերացում կազմում Իրանի հայ համայնքի, նրա առջև ծառացած այնպիսի դժվարությունների մասին, որոնք էականորեն տարբեր էին Իրանի մյուս փոքրամասնությունների և այլ երկրների հայկական համայնքների փորձառությունից:

Պարսկական և Խորհրդային կայսրությունների սահմանում հայտնված Թավրիզի հայ համայնքը պիտի կողմնորոշվեր իր թշնամիներին և բարեկամներին նույնականացնելու հարցում: Եթե Խորհրդային Հայաստանում միանգամայն պարզ էր, թե որտեղով է անցնում սահմանը «մերոնց» և «նրանց» միջև, Իրանի բնակչության վերաբերմունքը դաշնակիցների հանդեպ, որոնք օկուպացրել էին երկիրը, և համակրանքը Գերմանիայի, իսկ որոշ շրջաններում նաև Թուրքիայի հանդեպ, ստեղծել էին շատ ավելի խճճված ներխմբային հարաբերություններ: Այդ չերևացող սահմանները քարտեզագրում են մեկ այլ «աշխարհագրություն»: Դա մի շրջան էր, երբ երկրի իշխանությունն արդեն կորցրել էր իր ուժը, և բանակը նահանջում էր՝ թողնելով քաղաքներն ու գյուղերը ոչ միայն անպաշտպան, այլև անվերահսկելի, իսկ ներխուժող թշնամին էլ դեռ չէր հաստատել իր կարգն ու կանոնը: Իշխանական այսպիսի դադարի պայմաններում է, որ սոցիալական, ազգային,

էթնիկ, կուսակցական խնդիրները դառնում են ակնառու, իսկ նրանց միջև սահմանները՝ անանցանելի: Օրինակ, հյուսիսային Իրանի Ադրբեջան նահանգի միջէթնիկ թվացյալ համերաշխությունը սկսում է նվազել պարսկական գորքի նահանջի ամեն քայլի հետ: Ինչպես բացատրում է Բաղդիկ Մինասյանը. «տեղական թուրք բնակչության մի զգալի մասը լաւ տրամադրութիւն չունէր հանդէպ հայութեան՝ անհիմն ու անտեղի կերպով նրան համարելով ռուսասէր եւ բարեկամ ներխուժող բանակի»:

Ցեղասպանությունը, որի մասին տեղացի հայերը լավատեղյակ էին Իրանում ապաստանած կամ այս տարածքով Օսմանյան կայսրությունից փախչող գաղթականների միջոցով, հանկարծ ուրվագծվում է նաև պարսկահայերի միջավայրում: Ատրպատականի գրավման նախօրյակին, երբ Թավրիզի թուրք բնակչությունը խուճապահար փախչում էր, և Բաղդիկը դժվարությամբ Վասմինջ էր հասել իր ընտանիքին ամառանոցից տուն բերելու, մի դրվագ է նկարագրում «Տարօրինակ էր Ջոջ Աղայի կարծիքը, թէ լաւ է որ երեխաներին ու կանանց թողնենք այստեղ, իսկ մենք՝ տղամարդիկս, կառքերով գնանք թաքնուելու որեւէ ապահով վայրում»: Նկարագրած այս դրվագը շատ ավելին է պատմում ազգամիջյան թշնամանքի պայմաններում հայտնված գոհերի անելանելիության, դժվար ընտրության՝ նույնիսկ ազգակցի հանդէպ, թերևս, ոչ միշտ ազնիվ, վերաբերմունքի, գոհերի խոցելիության տարբեր աստիճանների մասին, քան շատ աշխատանքներ՝ նվիրված բուն ցեղասպանության խնդիրներին: Դրանցում, որպես կանոն, «գոհի մաքուր կերպարը» չխաթարելու զգուշությունն արգելափակում է նման՝ «ոչ վայել» վարքի նկարագրությունները: Ընդ որում, ցեղասպանությունը վերապրածների երկրորդ, երրորդ սերունդների միջավայրում մեր

գրանցած բանավոր պատմություններում<sup>2</sup> հաճախ են հանդիպում նման դրվագներ, երբ տղամարդիկ հեռանում էին՝ անպաշտպան թողնելով իրենց կանանց և երեխաներին:

Գրքում նկարագրվում են Թավրիզում խորհրդային զորքերի հաստատման շրջանում տեղացիների ներհամայնքային և միջհամայնքային բազմաբնույթ խնդիրները: Այս բարդ թնջուկի մեջ մի պատուհան է բացվում՝ ակնարկելու Դաշնակցության ներկուսակցական խրթին հարաբերությունների մասին: Կուսակցության ներքին կյանքը օտարի համար փակ աշխարհ է, և Բաղդիկ Մինասյանի անկեղծ պատմությունները «ապաղիվայնացնում» են այն՝ հասկանալի դարձնելով կուսակցականների զգուշավորությունն ու վախերը, ձերբակալության մշտապես սպառնացող վտանգը:

Բաղդիկ Մինասյանն առևանգումից հետո հայտնվում է Երևանի բանտում, իսկ տասնվեց ամիս անց (1944 հունվարից - 1945 ապրիլ) նրան ուղարկում են սիբիրյան գուլագ, որտեղից միայն Ստալինի մահից հետո է ազատվում և վերադառնում Իրան: Ստալինյան ճամբարում իր փորձառության մասին հուշեր գրելու մտքին գալիս է կյանքի վերջին տարիներին: Դժվար է ասել, թե ինչն էր դրդել նախաձեռնել այս ծանր աշխատանքը՝ ցանկությունը ձերբազատվելու հիշողությունների՝ դրանք փոխանցելով թղթին, թե՛ հակառակը՝ արձանագրելը դրանք և տարածելը՝ որպես զգուշացում: Ցավոք, Բաղդիկ Մինասյանը հասցնում է շարադրել իր հուշերը՝ առևանգումից մինչև Կրասնոյարսկի Բաշխիչ կայան, որտեղ և ընդհատվում է պատմությունը:

Այսպիսով, Բաղդիկ Մինասյանի պատմությունը կարող ենք դիտարկել որպես մի դիտանկյուն, որն իր մեջ ներառում

2 Տե՛ս ՀՀ ԳԱԱ ՀԱԻ-ի Կիրառական ազգագրության 2010, 2011 թթ. գիտարշավի (Հ. Խառատյան, Զ. Համբարձումյան, Գ. Ստեփանյան, Գ. Շագոյան) դաշտային նյութեր:

է տարբեր խմբերի (Իրանի քաղաքացու, հայի, կուսակցականի)՝ առանձին-առանձին և միասին հնչող ձայները:

### **Ոչ խորհրդային մարդը խորհրդային ճամբարում**

Իրանական Ադրբեջանի մաս կազմող Ղարադաղի Օղա գյուղի բազմանդամ և ծայրահեղ աղքատ ընտանիքից սերող Բադդիկ Մինասյանը հասնում է մինչև Թավրիզի հայկական վարժարան և Պրահայի համալսարան: Այսպիսի կենսագրությունները քանդում են Հայաստանում տարածված այն կարծրատիպը, թե առանց խորհրդայնացման, Հայաստանը չէր կարողանալու արդիականանալ: Մինչդեռ և՛ բազմաթիվ բանավոր պատմություններ, և՛ խորհրդային պետությունների տնտեսական որոշ ուսումնասիրություններ<sup>3</sup> խոսում են հոգուտ այն դրույթի, որ 20-րդ դարի արդիականացումն անխուսափելի էր և կիրագործվեր՝ անկախ խորհրդային նախագծից: Բադդիկ Մինասյանի կենսագրությունն օգնում է հասկանալ, թե գործնականում ինչպես էր դա տեղի ունենում, ինչպես կարողացավ գյուղացի ընչազուրկ տղան դառնալ մտավորական (քիմիկոս, մանկավարժ, քաղաքական գործիչ):

Ռուբինայի ներկայացրած կենսագրական հետհայացքն օգնում է նաև հասկանալ, թե ինչի շնորհիվ իր հայրը կարողացավ դիմակայել ստալինյան ճամբարի երկար տաս տարիների ընթացքում. դժվար կյանքն արդեն կոփել էր նրա կամքը, չեխերենի իմացությունը՝ դյուրացրել ռուսերենի արագ յուրացումը ճամբարային պայմաններում, ծանր մանկությունն ու կիսաքաղցած ուսանողական տարիները դարձրել էին դիմացկուն տարբեր անհարմարությունների հանդեպ նն: Բայց

3 A. Cheremukhin, M. Golosov, S. Guriev, Al. Tsyvinski, Was Stalin Necessary for Russia's Economic Development? // NBER Working Paper Series, Working Paper 19425, <http://www.nber.org/papers/w19425>.

այս կենսագրությունը գալիս է միաժամանակ փաստելու, որ, ի տարբերություն խորհրդային մյուս բռնադատվածների, Բաղդիկ Մինասյանը ստիպված էր ոչ միայն հարմարվել բանտային մեկուսի կյանքին, այլև հընթացս յուրացնել անձանոթ մի մշակույթ՝ իրեն բացարձակ անհասկանալի ու, թերևս նաև այդ պատճառով, զարմացնող՝ տալով դրա արժանի նկարագրությունը: Մշակութային տարբերությունների «քննարկումները» դստեր հետ առաջ են բերում գրքի ևս մեկ դիտանկյուն՝ ոչ խորհրդային մարդու հայացքը դեպի խորհրդային իրականությունը:

Բաղդիկ Մինասյանը չէր տիրապետում խորհրդային պայմանական նշաններին, լեզվին, ինչն անհրաժեշտ էր բռնատիրական համակարգում կողմնորոշվելու համար: Նա սեփական փորձառությամբ՝ ծանր դասերի միջոցով պիտի յուրացներ խորհրդային մարդուն տակավին հասկանալի պայմանականությունները: Օրինակ այն, որ տուն նամակ գրելը կարող է վնասել ընտանիքին: Այլ բռնադատվածների տեքստերից գիտենք, թե ինչպիսի կարգավիճակ ունեին նրանք, ովքեր ընտանիքից երբեմն-երբեմն ստանում էին ծանրոցներ, և նրանք, ովքեր զրկված էին նման օգնությունից: Առավել պատկերավոր այդ տարբերությունը կարելի է տեսնել Ալ. Սոլժենիցինի «Իվան Դեսինիսկիչի մեկ օրը» գրքից:

1949 թ. հունիսի 14-ին զանգվածային բռնաքսորի ենթարկված շուրջ 14.000 հայերի 10 -ը կազմում էին նրանք, ովքեր 1946-49 թթ., հավատալով Երկրորդ աշխարհամարտում հաղթած պետության խոստումներին, տեղափոխվեցին Հայաստան: Ներգաղթյալներին ավելի դժվար էր հարմարվել սիբիրյան աքսորի պայմաններին, որոշակի ժամանակ պահանջվեց, որ այս մարդիկ յուրացնեն խորհրդային իշխանության և այլոց հետ շփվելու նոր լեզուն ու կանոնները, օրինակ, թե ինչ կարելի է ասել հարևանին և ինչի մասին լռել: Երբեմն էլ այդ եզոպոսյան լեզուն այնքան խորն էր

յուրացվում, որ յուրաքանչյուր մանրուք ստանում էր հավելյալ իմաստ: Այսպես, օգնության խնդրանքով ընտանիքին ուղարկած նամակին ի պատասխան Բաղդիկ Մինասյանը ստանում է բաղձալի ծանրոցը, սակայն դրանում հայտնաբերում է ոչ թե ընտանիքի՝ մեծ դժվարությամբ ուղարկած բարիքը, այլ թերևս հենց կազաբեի կողմից այն հափշտակած և տեղը մի կանացի ներքնագգեստ դրած արկղը, ինչը ձերբակալված և աշխարհից կտրված մարդը մեկնաբանում է իբրև նշան, որով հարազատները փորձել են հասկացնել իրեն, թե իր կինը նույնպես ձերբակալված է: Ու աջակցության փոխարեն այս «ծանրոցը» միայն հավելյալ տառապանք և մտածմունք է բերում:

Երևանյան բանտում անցկացրած ամիսների մասին Բաղդիկ Մինասյանի հիշողությունները չեն պարունակում այն սարսափները, որոնք առկա են խորհրդային բանտարկյալների հուշագրություններում: Թեև նրան այնքան վտանգավոր էին համարել, որ նույնիսկ առևանգել էին այլ երկրից, սակայն Բաղդիկ Մինասյանից խորհրդային իշխանություններն առանձնապես պարզելու բան չունեին, և նրան կտտանքների ենթարկելու անհրաժեշտություն չկար՝ տեղեկություն կամ խոստովանություն ստանալու համար: Նրա «վտանգավորությունը» պայմանավորված էր, թերևս, համայնքում իր ունեցած դիրքով և ազդեցությամբ: Տարիներ անց Ռուբինյան փորձում է հասկանալ բանտում հոր հանդեպ խնայողական վերաբերմունքի պատճառը՝ դա կապելով այն հանգամանքի հետ, որ հայրը տրոցկիստ չէր, որոնցհանդեպ խորհրդային իշխանությունները, կարծես, ավելի անհանդուրժող էին: Սակայն կտտանքները որպես կանոն ուղղված էին ոչ թե հատուկ հողվածներով կասկածյալների դեմ, այլ նախևառաջ ինքնախոստովանանք կամ այլ «թշնամիների» անուններ կորզելուն: Մեղադրանքը էական չէր, կարևորը մեղքի ընդունումն էր: Բաղդիկ Մինասյանը Խորհրդային միությունում առանձնապես

ծանոթներ և կապեր չունեն, դրա համար այլոց անուն նրանից պահանջելն անիմաստ էր: Հայաստանի բռնադատվածների զգալի մասի մեղադրանքը «ազգայնական-դաշնակցական» էր, նույնիսկ նրանց, ովքեր շատ աղոտ պատկերացում ունեին, թե ինչ բան է կուսակցությունն ընդհանրապես: Դատավճիռների մեծ մասի միակ հիմքը ինքնախոստովանանքն էր: Բաղդիկ Մինասյանի դեպքում ինքնախոստովանանքի ոչ մի խնդիր չկար: Նա չէր ժխտում, որ ինքը դաշնակցական է: Ավելին, նա հպարտանում էր այդ կուսակցությանն անդամակցելու հանգամանքով: Նա հիշում է, թե ինչպես քննիչը, լսելով ձերբակալվածի պատասխանը, որ ապագան կհաստատի դաշնակցության ճիշտ լինելը, ոտքի է կանգնում և ռուսերեն բացականչում՝ «настоящий дашнак» («իսկական դաշնակ»): Հիրավի, քննիչն առաջին անգամ էր տեսնում մեկին, որի դաշնակցական պատկանելիությունը հարկավոր չէր ծեծելով ապացուցել: Փաստորեն, կուսակցական հավատարմությունը փրկել էր Բաղդիկ Մինասյանին հնարավոր տանջանքներից, եթե, իհարկե, հեղինակը, խղճալով իր ապագա ընթերցողին, չի թաքցրել այլ դրվագներ:

Ռուբինան փորձում է պարզաբանել իր հոր՝ խորհրդային իրականության մասին որոշ թյուրըմբռնումները: Բաղդիկ Մինասյանը հիշում է, որ մեկուսարանում տառապում էր ջրի կաթոցից, որը բացատրում էր խորհրդային վատորակ շինարարությամբ: Ռուբինան, համադրելով մյուս բռնադատվածների հիշողությունների հետ, բացատրում է, որ դա կտտանքների ձև էր, և նյարդերի վրա ազդելու այս հնարքը հատուկ էր մտածված:

Ոչ խորհրդային քաղաքացին խորհրդային բանտում տեղացիների համեմատ երբեմն ստանում էր որոշ առավելություն: Բանտարկյալ Բաղդիկ Մինասյանին մեքենայով ման են տալիս նորակառույց Երևանով՝ ապացուցելու, թե որքան



ավելի կենսունակ և հաջողակ է խորհրդային իշխանությունը՝ դաշնակցական կառավարության համեմատ: Հետագայում նույն «ծառայությանն» արժանացել էր նաև Նժդեհը: Բայց եթե վերջինիս՝ Երևանը տեսնելու հնարավորությունն ընձեռնվել էր իր խնդրանքով, ապա Բաղդիկ Մինասյանի դեպքում, ենթադրում են, որ եղել է անհաջող փորձ նրան «համոզելու» դառնալ «Բարգավաճող հայրենիքի» գործակալ: Չի բացառվում, որ իր հանդեպ համեմատաբար մեղմ վերաբերմունքն էլ, մասամբ, պայմանավորված էր նման հնարավորության հեռանկարով: Խորհրդային իշխանությունն արմատապես ջլնդունող Բաղդիկ Մինասյանը որևէ հրապուրիչ բան չգտավ «նոր Երևանում», որը հինի հետ համեմատելու առանձնապես հիմք էլ չուներ:

Ոչ խորհրդային մարդը խորհրդային ճամբարի իր նկարագրություններում ավելի ազատ էր այնտեղ տիրող իրականությունը ներկայացնելու ու ողջ համակարգը կասկածի տակ դնելու հարցում: Նա չէր կարծում, որ իր դեպքը եզակի մի շփոթմունք է, ինչպես հաճախ մտածում էին խորհրդային մյուս բռնադատվածները, որոնք հավատում էին, որ եթե Ստալինն իմանա իրենց մասին, ապա պարտադիր ազատ կարձակի: Երբ կարդում ես խորհրդային բռնադատվածների հուշագրությունները ստալինյան ճամբարների մասին, ստեղծվում է տպավորություն, որ այնտեղ միայն խորհրդային գաղափարախոսությանն առավել հավատարիմներն էին, նրանք, ում ուղղակի զրպարտել էին: Բաղդիկ Մինասյանի աքսորի՝ ավաղ կիսատ մնացած նկարագրություններում ներկա են բացահայտ հակախորհրդային գաղափարախոսություն ունեցողներ, օրինակ, ուկրաինացի ազգայնականների խումբը. «Ես արդեն ծանոթացել էի բանտակիցներիս հետ: Բոլորն էլ արեւմտեան ուկրաինացիներ էին, թունդ ազգայնականներ, հակառուս, հակասովետ: Կողմնակից էին Ուկրաինայի ազատութեան եւ անկախութեան

ու չէին հաւանում ռուսական ուկրաինացիների քաղաքական կեցուածքը»: Ինչու՞ էր հատկապէս այս խումբը գրավել Բաղդիկ Մինասյանի ուշադրությունը: Միգուցէ հենց այս տիպի խմբերի հետ էր նա զգում գաղափարական հարազատություն, կամ՝ այս մարդիկ էին ձգտում դեպի պարսկահայ Բաղդիկը, ի դեմս որի տեսնում էին ճամբարում քիչ հանդիպող «ոչ խորհրդային» մարդու տեսակը: Դժվար է միանշանակ պատասխանել, սակայն սա ընդգծում է «Բաղդիկ Մինասյան երևոյթի» հազվադէպությունը, որ ստիպում է ավելի ու ավելի ամփոփել հուշագրության անավարտ մնալու համար: Այն ըստ էության անհնարին է լրացնել՝ համադրելով այլ հուշագրությունների հետ, քանի որ բռնատիրական շրջանի հայ գրականությունում «ոչ խորհրդային մարդու» գրավոր տպավորություններն ինքին եզակի են:

#### **Բռնադատվածի կենսագրության «կանացի մեկնությունը»**

Հոր հետ միասին ապրած տարիների և նրա բացակայության շրջանի մասին Ռուբինայի հիշողություններն հավելում են Բաղդիկ Մինասյանի կենսագրության ևս երկու դիտանկյուն՝ բռնադատվածի կյանքը՝ կանանց ընկալմամբ և առանց տղամարդ մնացած ընտանիքի գոյատևման պատմությունը վերապրողի տեսանկյունից: Ռուբինայի շարադրանքը այս երկու դիտակետից կարող ենք բնութագրել իբրև «կանացի տեքստ»՝ անկախ այդ ձևակերպման շուրջ առկա գիտական քննարկումից:<sup>4</sup> Բոլոր պայմանականություններով հանդերձ՝ «կանացի տեքստ» եզրույթը ենթադրում է նախնառաջ կին հեղինակ, և երբեմն էլ որոշակի լեզու՝ ավելի զգացմունքային:<sup>5</sup>

4 «Կանացի տեքստի» շուրջ գրականագիտական ֆեմինիստական քննարկումների ամփոփ պատկերը տես Զերեբկինա Ի. Феминистская литературная критика // Женщина и общество, портал. <<http://www.owl.ru/library/004t.htm>>:

5 Տե՛ս նույն տեղում:

Ռուբինան, մեկնաբանելով հոր հուշագրությունը, ստեղծում է «կանացի տեքստի» մի քանի չափում: Հայրը ներկայացվում է ոչ միայն որպես քաղաքական գործիչ, այլ նախևառաջ որպես մարդ, տղամարդ, ընտանիքի հայր՝ իր այն գործառնությունով, որոնք հայ ավանդական հասարակությունը վերագրում և ակնկալում էր տղամարդուց: Կանացի շարադրանքը լույս է սփռում բռնադատված տղամարդու հատկապես հուզական խնդիրների վրա, որոնք սովորաբար անտեսվում են, քանի որ բռնադատվածների գոյատևման ֆիզիկական դժվարություններն ու կյանքին սպառնացող վտանգները ստվերում են մյուս բոլոր խնդիրները:

Ավելի հազվադեպ են քննարկվում այն դժվարությունները, որոնց բռնադատվածները բախվում էին աքսորավայրերից ազատվելուց հետո: Բաղդիկ Մինասյանի կենսագրությունը դստեր մատուցմամբ պատմում է նախկին բանտարկյալների ոչ միայն հյուծվածության ու անխուսափելի առողջական խնդիրների մասին, այլև հոգեբանական ճնշվածության (արդյո՞ք ինքը դեռ հետաքրքիր է կնոջ համար որպես տղամարդ, ընկեր, կողակից), անկարողության մասին՝ ստանձնելու սոցիալական այն դերը, որն ուներ մինչև ձեռքակալությունը (հոր, ընտանիքի գլխավորի, ամուսնու նկատմամբ): Այսպիսի հարցադրումներով բռնադատվածների կենսագրական մանրամասնությունների կարելի է հանդիպել ավելի շուտ գեղարվեստական (հմմտ. Մկրտիչ Արմենի «Ժիրայր Գլենց» վեպը), քան գիտական գրականության մեջ: Մինչդեռ, ինչպես ցույց տվեց Ռուբինան, բռնաճնշումների սոցիալական, հոգեբանական ու նաև տնտեսական հետևանքները կարոտ են գիտական վերլուծության:

«Կանացի տեքստի» մյուս կարևոր ներդրումն այն է, որ Բաղդիկ Մինասյանին գրեթե հավասար իբրև «բռնաճնշումների» զոհեր և «պայքարի պատումի» հերոսներ են ներկայացված նրա

կինը՝ Փառիկն ու իր երկու դուստրերը: Այս կանանց հպարտ կեցվածքը, հավատարմությունը հոր և ամուսնու հանդեպ, դժվարությունները միասին հաղթահարելու մաքառումները, բացարձակ հոգատարությունն ու նրբանկատությունը մեկը մյուսի հանդեպ, գրկանքներով լի կյանքն ու ծանր հոգեբանական ապրումները ցույց են տալիս «բռնաճնշումների» իրական սահմանները, որոնք տարածվում են անազատության ճաղերից դուրս, և, հատելով պետական սահմանները, ներգրավում բռնադատվածին առնչվող մի ողջ սոցիալական ցանց:

Ռուբինայի շարադրանքի չափազանց թեթև և հրապուրիչ լեզուն (թե անգլերեն, թե հայերեն տարբերակների) և գրքի ուշագրավ կառուցվածքը թողնում են մի շնչով կարդացվող գեղարվեստական գրականության տպավորություն: Ավելին, դեպքերի ներկայացված հակառակ հաջորդականությունը՝ վերջից սկիզբ, հիշեցնում է դետեկտիվ պատմվածք առևանգումից տաս տարի անց հոր և դստեր գաղտնի հանդիպումով սկսվող ողիսականը պատմում է այդ դրվագի ինչպես նախապատմությունը, այնպես էլ հետևանքները:





## ԽՈՍՏՈՒՄՍ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՍ

Երկու տարի առաջ, 2017-ի գարնան, լոյս տեսաւ հօրս՝ Բաղդիկ Մինասեանին նուիրուած անգլերէնով շարադրուած հատորս, *My Father, A Man of Courage and Perseverance, A Survivor of Stalin's GULAG*: Դա ինձ համար ելք էր ու վախճան՝ հօրս հանդէպ դոյզն պարտականութիւնս կատարելու տարիների մտահոգութեանս՝ ուղեղս չարչարող ու խիղճս տանջող. չէ՛ որ հօրս գաղափարակից, երիտասարդ ընկերներն էլ ինձ վրայ էին դրել այդ պարտականութիւնը՝ «Հօրդ կեանքի պատմութիւնը դո՛ւ պիտի գրես»:

Երկարատեւ ուսումնասիրութիւններիս եւ պրպտումներիս, տխուր եւ ուրախ վերյիշումներիս արդիւնք հատորը պիտի գոհացուցիչ պատասխանը լինէր այդ բոլորի: Միայն մնում էր հատորը ծանօթացնել հանրութեան, պատմել մի նուիրեալ, մի բացառիկ անձնաւորութեան տառապալի ողիսականի մասին՝ մի պատմական ժամանակաշրջանում, որ քիչ ծանօթ էր գոնէ Արեւմտեան աշխարհին: Ու սիրով լծուեցի այդ աշխատանքին: Արձագանքը դրական էր՝ գովասանք ու քաջալերանք, բայց միեւնոյն ժամանակ մի յամառ հարցադրում. «Գիրքը ինչո՞ւ անգլերէն է: Ինչո՞ւ հայերէնով չես գրել»:

Ի պատասխան տակաւ կրկնուող հարցումին, փորձում էի բացատրել: Անգլերէնով եմ գրել, որովհետեւ կարելոր էր ինձ համար հասնել սփիւռքահայ այն սերնդին, որ շատ քիչ

բան գիտի մեր մօտիկ անցեալի պատմութեան մասին եւ աստիճանաբար հեռանում է հայ գրքից, հայերէնը սահուն չի կարդում: Անգլերէնով եմ գրել, որովհետեւ համոզուած եմ, որ եթէ Արեւմուտքը որոշ չափով Ալեքսանդր Սոլժենիցինի, ՌաբրըՔանքուեսթի, Անատոլի Ռիբակովի, Անն Ափրլբամի եւ այլոց շնորհիւ ընդհանուր ծանօթութիւն ունի ստալինեան սարսափելի բռնապետութեան ժամանակաշրջանի մասին, այնուամենայնիւ, տեղեակ չէ, թէ ինչ դառն ու տաղտկալի փորձութիւնից անցաւ հայը, թէ ինչպէս Հայաստանի Էն ազնիւ, Էն ազգային, Էն մտաւորական խաւը զոհ գնաց Ստալին-Բերիա մեղսակցութեան: Ստալինի կատարածը եղեռնագործութիւն էր: Իգուր չէ որ, ինչպէս ժամանակի մեր գրականութիւնն ու բանաւոր պատմութիւնն են վկայում, այդ տարիները հայ մարդու մէջ Մեծ եղեռնի յիշատակն էր արթնացրել եւ նա կատարուածը որպէս «մի երկրորդ ապրիլ 24» էր բնութագրել:

Կատարածս ուսումնասիրութիւնները ինձ թոյլ տուեցին թեման արծարծել Յեղասպանագէտների միջազգային ընկերակցութեան գիտաժողովում (յուլիս 2017, Բրիզբըն, Աւստրալիա) ու ներկայացնել Սովետական Միութեան ամենափոքրիկ հանրապետութիւնում՝ Հայաստանում կատարուած ստալինեան բռնաճնշումների ու մաքրագործումների ահագնութիւնը: Եւ դա մի ժողովրդի դէմ որ մեծով մասամբ հազիւ երկու տասնամեակ առաջ ցեղասպանութեան ենթարկուած հայութեան մնացորդացից էր սերում:

Իրականութեան մէջ, երբ գրքիս գաղափարը դեռ իր սաղմի մէջ էր, առանց խորհրդածութեան անգլերէնը ընտրեցի: Թիրախս Հայաստանի հայը չէր. համոզուած էի, որ այնտեղ արդէն գիտեն այդ մասին: Օտարին պիտի ծանօթացնէի նիւթին: Ի հարկէ, պիտի խոստովանեմ, որ սխալուած էի: Հայաստանում էլ, մանաւանդ նոր սերունդը շատ բան չգիտէ այդ մասին: Ընտանիքներում վախեցել են խօսել, նոյնիսկ՝ ստալինեան բռնաճնշումներին զոհ տուած,



անմիջականօրէն տուժած ընտանիքներում: Իսկ դրանց թիւը այնքան շատ է: Ընտանիքի պատմութիւնը այնպէս որ պէտք է սերնդից սերունդ չի փոխանցուել. միայն բացուած վերքի միացող մրմուռն է մնացել: Իսկ դպրոցներում, պատմութեան դասագրքերում, լռութիւն տիրեց այդ մասին: Ի հարկէ, պէտք չէ մոռնալ, որ այդ ցատտ անցեալին խիզախօրէն դիմակայելու որոշ շարժում կար. ցուցահանդէսներ էին կազմակերպուում, գիտաժողովներ, հրատարակութիւններ. երիտասարդ պատմաբաններ եւ ուսանողներ ուսումնասիրութիւններ էին կատարում, գրում էին ստալինեան բռնաճնշումների մասին: Կարելի է ասել, որ այս շարժումը թափ է առել անցնող երկու տարիների ընթացքում: Դա ինձ դիտել տուեցին ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի աւագ գիտաշխատողներ Հրանուշ Խառատեանն ու Յարութիւն Մարութեանը (նաեւ տնօրէն Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի): Տիկ. Խառատեանն ինձ տրամադրեց նոր հրատարակութիւնների մի ընդարձակ ցանկ: Գրքիս վերջում, «Գրականութեան ցանկ»ում պիտի փորձեմ ներառել առնուազն դրանցից մի մասը: Այնուամենայնիւ, անժխտելի երեւոյթ է, որ այս բոլորը շատ սահուն ու անարգել չեն անցել: Դիմադրութիւն է եղել: Պաշտօնական Հայաստանը փորձում էր մոռնալ ու մոռացնել տալ ստալինեան աղէտը, որ անցեալին էր պատկանում, պատմութեան ծիրում էր այլեւս եւ հասարակութեան մտահոգութեան առարկան պէտք չէր որ լինէր: Բայց միթէ որքա՞ն եւ մինչեւ ե՞րբ կարելի է պատմութիւնը շղարշել կամ խեղաթիւրել: Ծարժումը շարունակուում է Նոր Հայաստանում եւս: Ապագան ցոյց կը տայ, թէ ուր կը յանգի պատմութեան ճշգրտումը:

Ժամանակին յետստալինեան համեմատական ազատութեան պայմաններում հրապարակուեցին սիբիրական յուշագրութիւններ՝ Գուրգէն Մահարի, Վահրամ Ալազան, Սուրէն Ղազարեան, Վալտեր Արամեան եւ այլն, թէկուզ գաղտնի, սամիզդատի ընձեռած

պայմաններում՝ եւ մեծ մասամբ 1980-ականներից յետոյ լոյս աշխարհ գալու համար: Այսօր չեմ կարծում՝ դրանք դպրոցական կամ համալսարանական ընթերցանութեան ցանկերի վրայ լինեն: Յատուկ մղում ու ջանք է պէտք դրանք դարձեալ ուշադրութեան դաշտ բերելու համար: Դա կը լինի պատմութեան այդ անտեսուած էջերի վերականգնումը ապահովող նախնական քայլը: Ու թող այդ քայլին աւելանայ այս իմ համեստ աւանդը:

Գուցէ հէնց դրա համար կարելոր լինի, որ ես հօրս կեանքին նուիրուած աշխատութիւնս հայերէնի վերածեմ, մանաւանդ՝ իր իւրայատկութիւնների բերումով: Նախ՝ հայրս՝ Բաղդիկ Մինասեանը, առեւանգուեց Թաւրիզում, այսինքն՝ Խորհրդային Միութեան սահմաններից դուրս: Չէհայի արիւնոտ ձեռքը Երկրորդ համաշխարհային պատերազմին իրեն չէզոք յայտարարած Իրանի Ատրպատական նահանգին էր հասել:

Հայրս, որպէս Ատրպատականի ՀՅԴ Կենտրոնական կոմիտէի ներկայացուցիչ, իբրեւ թէ շատ բարեկամական մթնոլորտում բանակցութիւններ էր վարում ներխուժած խորհրդային ուժերի ներկայացուցիչների հետ: Եւ դա՝ միայն ի սէր Ատրպատականի հայ բնակչութեան ապահովութեան, որ այդ խառնակ օրերին լրջօրէն վտանգուած էր տեղի թուրքերի, հայ եւ թուրք մուհաջիրների եւ կարմիրբանակայիների ոտնձգութիւնների առկայութեամբ: Մեծ մտահոգութիւն էր նաեւ թուրք-գերմանական հաւանական առաջխաղացքը դէպի Խորհրդային Հայաստան: Այդ հարցում պէտք էր ապահովել խորհրդայինների յանձնառութիւնը եւ տրամադրել Դաշնակցութեան ամէն տեսակ ներդրումը ի սէր Հայաստանի պաշտպանութեան:

Ու մի օր նրան առեւանգեցին փողոցից: Չէհայի շէնքի դիմացից անցնելիս երկու խորհրդային զինուորականներ ներս էին հրել նրան, որտեղից եւ սկսուել էր նրա տառապալից կեանքը՝ Թաւրիզի Չէհայի սառն ու խոնաւ նկուղից մինչեւ Երեւան՝

տասնելվեց ամիս մենակեաց բանտ, անդադար հարցաքննություն  
եւ ապա Մոսկուայում կայացած դատավճիռ.

*Մինասեան Բաղդասար (Բաղդիկ) Խաչատուրի,  
որպէս պատկանող հակայեղափոխական լրտեսական  
կազմակերպութեան եւ տեղորիստական միտումներ  
ունեցող, ազատագրելու ուղղիչ աշխատանքային ճամբարում  
տասը տարի ժամկետով...*

Եւ այսպէս դէպի Հիւսիսային Սիբիր, Բելեռային գօտուց վեր,  
յաւիտենական սառնոց Նորիլսկի աշխատանքային ճամբարներ:

Մէկ այլ իւրայատկութիւն էր այն, որ Բաղդիկ Մինասեանի  
առեւանգումը կատարուեց ծայր աստիճան գաղտնութեան  
մէջ: Մեր ընտանիքի ու շրջապատի, անգամ՝ Ատրպատականի  
ոստիկանութեան կողմից խորհրդային ներկայացուցչութեանը  
կատարուած դիմումներն էլ ապարդիւն անցան: Բացարձակապէս  
ուրացում: Նոյնիսկ Երեւանի բանտում բանտարկեալի յատուկ  
արձանագրութիւնները, նրա ստորագրութիւնը կրող թղթածրարը՝  
լրացուած հարցաթերթիկ, նկար, մատնահետք, կատարուել էին  
բանտարկութիւնից վեց ամիս անց միայն... Հաւանական է, որ  
սա միայն բացթողում էր, կամ ՉէԿայում ժամանակ էին շահում  
ամբաստանեալի թղթածրարը կազմելուց առաջ նրանից լուրջ  
խոստովանութիւն կորզելու կամ մի բան ձեւակերպելու համար,  
ինչպէս եղել էր Հայաստանում 1949-ի զանգուածային աքսորի  
պարագայում: Բայց հայրս այդ գաղտնութիւնն ու յետաձգումը  
այլ կերպ էր մեկնաբանել ու սարսափով եզրակացրել էր, որ ինքը  
գողացուած ապրանք է, եւ իշխանութիւնը իրեն կարող է ոչնչացնել  
առանց որ որեւէ մէկը լուր ունենայ:

Մենք այս բոլորը իմացանք հօրս պատմածից, նրա  
վերադարձից յետոյ, երբ 1954-ին Ստալինի մահից յետոյ

հռչակուած ընդհանուր ներումի արդիւնքում Բաղդիկ Մինասեանն էլ յանձնուեց Իրանի կառավարութեան:

Տասը տարի, տասն ամիս եւ տասնեօթ օր խորհրդային բանտերում եւ աշխատանքային ճամբարներում տառապելուց յետոյ Բաղդիկ Մինասեանը վերադարձաւ հիւծուած, առողջութիւնը կորցրած, բայց բարձր հոգեկան տրամադրութեամբ ու անկոտրում կամքով՝ վերսկսելու նոր կեանք ու նոր պայքար՝ ի խնդիր իր դաւանած ազգային գաղափարի ու սկզբունքների յաղթանակի, այսինքն՝ հայ ժողովրդի ազգային նպատակների իրագործման: Եւ դա՝ ընդդէմ այդ գաղափարներն ու նպատակները թաղել փորձող ապագային ուժերի:

Հօրս կեանքի պատմութիւնը գրառելով՝ ես փորձել եմ լաւագոյնն անել՝ որպէս դուստրը մի մարդու, որ իր կեանքը նուիրաբերեց ճշմարտութեան եւ արդարութեան՝ երբ հայ ժողովուրդը իր պատմութեան սեւ օրերն էր ապրում:

Յուսամ, որ մի օր աւելի բաց ճակատով կը նայենք այդ ցաւոտ, այդ ամօթալի անցեալին ու աւելի համարձակ կը բնութագրենք Խորհրդային Միութիւնում մեր ժողովրդի դէմ կատարուածը, կը դատենք փոքր ու մեծ դաւաճաններին, իրենց ճղճիմ շահերի համար կողքինին մատնող սողուններին, դահիճներին, որոնք այսօր դեռ ազգի հերոսներ են համարում: Կը ճանաչենք ազգի իսկական հերոսներին: Այն ժամանակ է, որ արդարութիւնը գոնէ մասամբ կը հատուցուի բռնաճնշուած, բանտերում ու Սիբիրի լագեռներում տանջահար եղած զոհերին, որոնցից մէկը՝ իմ հայրը, ով այսօր ապրում է իր յիշատակին նուիրուած այս գրքի մէջ:

Ուրեմն, ահա խոստումս ընթերցողներիս, հօրս՝ Բաղդիկ Մինասեանին նուիրուած հատորս հայերէնով՝ արեւելահայերէնով, բայց ի հարկէ դասական ուղղագրութեամբ: Այստեղ նշեմ, որ աղբիւրագիտութեան տեսանկիւնից ելած, ընթերցողին ճիշտ ուղորդելու համար, երբ յղում եմ կատարել Հայաստանում

հրատարակուած գրքերին, դրանց վերնագրերն ու հեղինակների անունները պահել եմ նոյն, հայաստանեան ուղղագրութեամբ (ի հարկէ, միայն տողատակի ծանօթագրութիւնների եւ գրականութեան ցանկի մէջ):

Գրքիս հայերէն տարբերակը գրելիս, փորձել եմ կարելոյն չափ անգլերէն բնագրի հարազատութիւնը պահել: Բայց պիտի խոստովանեմ. երբեմն գրիչս թեւ է առել ու թռչել: Միշտ չէ, որ կարողացել եմ անգլերէն բնագրի սահմաններում մնալ:

Ապրիլ, 2019 թ.

Յ.Գ. Գրքի ձեռագիրը պատրաստ էր երբ ինձ առիթ ընծայուեց գիրքս Հայաստանում հրատարակելու եւ մանաւանդ՝ ունենալու երաշխաւորութիւնն ու հովանաւորութիւնը ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի, որի համար իմ խորագգաց շնորհակալութիւնն եմ յայտնում ինստիտուտի գիտական խորհրդին եւ գիտաշխատողներին: Իրենց առաջարկներով եւ դիտարկումներով գրքի բովանդակութեան եւ աղբիւրների հարստացմանը մեծապէս օգնեցին Գայեանէ Շագոյեանը, Յարութիւն Մարութեանը, Լեւոն Աբրահամեանը, Հրանուշ Խառատեանը, Յասմիկ Գրիգորեանը եւ Գրիշա Այվազեանը:

**Շնորհակալ եմ:**



## ՆԱԽԱԲԱՆ

2015-ի աշնանն էր: Երեւանը դեռ ապրում էր Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակի առիթով կազմակերպուած ոգեկոչման հանդիսութիւնների ու դրանց ընթացքում հնչած վճռական յանձնառութիւնների ու նպատակադրուած գործունէութիւն խոստացող տեսլականի ոգեւորութիւնը: Ոգեւորուած էի նաեւ ես: Աւարտուած էր Հարիւրամեակին նուիրուած հեւքոտ ու բազմաջան վազքս, բայց աւելի կարեւորը՝ հասցրել էի տարին չբոլորած վերջացնել եւ հրատարակել Հայոց ցեղասպանութեան գրականութեան ուսումնասիրութիւնս, որ վճռել էի Հարիւրամեակին ձօնել:<sup>1</sup>

Յաջող աւարտը նշում էինք միասին Երեւանում՝ ամուսնու՝ Նշանի եւ վաղուց Հայաստան փոխադրուած մեր կրտսեր զաւակի՝ Օշինի ու իր ընտանիքի հետ: Ոգեւորութիւնս երկար չտեւեց: Զաւակներս՝ Վահէն եւ Օշինը իմ ակադեմական կեանքի ամենից դիպուկ քննադատներն են եղել: Ու այդ երեկոյին էլ չուշացաւ Օշինի դիտարկումը, «Ման, դու կեանքդ նուիրել ես ուրիշների պատմութիւնը գրելուն, մեր ժողովրդի աղէտալի անցեալը աշխարհին պատմելուն. գիտեմ, փորձել ես այդ ճամբով Հայոց ցեղասպանութիւնը ապացուցել: Չէ՛ն կարծում, որ այլեւս

---

<sup>1</sup> Հայոց ցեղասպանութեան գրականութեան ուսումնասիրութիւնների չորրորդ հատորը՝ *The Armenian Genocide in Literature: The Second Generation Responds* (Yerevan: Armenian Genocide Museum-Institute, 2015):

ժամանակն է, որ այստեղ կանգ առնես ու քո՝ պատմությունը պատմես»:

Չհասկացայ. ես վիպասան չէի կեանքիս պատմությունը գեղարուեստական պատումի վերածել կարողանալու համար:

«Մեկապէն [երեխաները հայրիկիս Մեկապա էին ասում] ստալինեան տեռորի զոհ դարձաւ, Սիբիր աքսորուեց ու տառապեց տաժանակիր աշխատանքային ճամբարներում: Մեկապէն տառապեց նաեւ ազատութեան մէջ: Քո պարտքն է իրեն՝ նրա պատմությունը եւ քո կեանքը նրա հետ պատմել աշխարհին»:

Արդեօք, իսկապէ՛ս ժամանակն էր: Արդեօք դա մի ազդանշա՞ն էր՝ ինձ մղելու, որ վերջապէս ի կատար ածեմ խղճիս վրայ ծանրացած, չիրականացուած մի ըղձանք՝ հօրս հանդէպ որդիական պարտականութիւնս կատարելու, պարտքս վճարելու: Շատ եմ մտածել այդ մասին, խղճիս մօտ յանցաւոր եմ զգացել, որ թերացել եմ՝ գիտական գործունէութեանս մէջ այնքան միսրճուած լինելու պատճառով: Հայրս ինձ համար առաքինութեան, նուիրումի ու զոհաբերութեան մարմնացում է եղել, օրինակելի մեծութիւն, որին փորձել եմ նմանուել, մանաւանդ՝ երբ զգացել եմ, որ խառնուածքով, բնաւորութեան շատ գծերով, գաղափարով ու աշխարհընկալումով նման եմ իրեն: Որքան հպարտ եմ զգացել, երբ տարբեր առիթներով, հասարակական ելոյթներիցս յետոյ, ինձ մօտեցել են հօրս ճանաչողները, ի հարկէ՝ իրանահայեր, ու ասել, թէ ես հօրս արժանի զաւակն եմ եւ թէ կարծես իմ ձայնի մէջ հօրս եռանդն ու խորիմացութիւնն է հնչում: Այս բոլորով հանդերձ, Իրանից դուրս սփիւռքահայ համայնքներում, մանաւանդ՝ երիտասարդները, հօրս համարեա չեն ճանաչում: Ծանօթ չեն նրա նուիրուածութեանը Հայ դատին, Սիբիրի աշխատանքային ճամբարներում նրա կրած երկար տարիների տառապանքին: Եւ դա միայն իմ մեղքով:

Հոկտեմբերեան այդ երեկոյից ամիսներ անցան: Մտածեցի, կշռեցի ու դատեցի: Ո՛րմ վրայ եւ ի՞նչ ազդեցութիւն կ'ունենայ



գրելիք պատմությունս: Ո՞վ է լինելու ընթերցողս:

Ստալինեան բռնաճնշումների գոհը դարձած, գուլագներում<sup>2</sup> տառապած հայ եւ օտար շատ մտաւորականների յուշագրութիւն, վէպ ու բանաստեղծութիւն եւ կարդացել: 1960-ականներից սկսած, Ստալինի մահից յետոյ ներումի արժանացած ու տուն վերադարձած նախկին քաղբանտարկեալներից շատերը փորձեցին իրենց յուշերը գրի առնել, առանց դրանց լոյս աշխարհ գալու յոյսն ունենալու: Այդ գրութիւնների մի մեծ մասը փակուած մնաց գգրոցներում, միւս մասը հրատարակուեց՝ սակայն գրաքննութեան ենթարկուած ու կոտորակուած տարբերակով: Մի շարք յուշագրութիւններ էլ գաղտնի արտագրուեցին ու ցրուեցին: Դրան *սամիզդատ*<sup>3</sup> կոչեցին:

Մեծ յուզումով ու դժուարութեամբ եւ դրանք ընթերցել: Այդ անմարդկային, դժոխային գուլագների նկարագրութիւնները ուղղակի սարսափ ու պժգանք են պատճառել (ու երբ մտածում ես, թէ այդ պայմաններում քանի-քանի արժանաւորներ իրենց գոյութիւնն են քարշ տուել ու աստիճանական մահով անցել գնացել, «ժողովրդի թշնամի» են յորջորջուել ու կեանքով վճարել Ստալինի բռնութիւններին դէմ գնալու իրենց համարձակութեան համար: Իսկ հաւատացեալ կոմունիստները, Ստալինի անդաւաճան ծառայողները, ովքեր այդ տարիների սարսափի ու

2 Գուլագ (GULAG) սկզբնատառերն են Ճամբարների եւ կալանավայրերի գլխաւոր վարչութիւն կոչուած հաստատութեան (Главное управление лагерей и мест заключения), որ ԽՍՀՄ Արդարադատութեան նախարարութեան ստորաբաժանումներից էր: Գուլագների ցանցը գոյութիւն է ունեցել դեռ ցարերի օրօք, որտեղ բանտարկուել կամ տաժանակիր աշխատանքի են դատապարտուել թէ՛ հասարակ ոճրագործներ ու մարդասպաններ եւ թէ՛ քաղաքական գործիչներ, ղեկավարներ: Ստալինեան բռնապետութեան տարիների ւաւելի ու ւաւելի է տարածուել ցանցը: Գուլագներում ամենադաժան կերպով ոչնչացուել են Ստալինի հակառակորդներն ու կարծեցեալ թշնամիները:

3 «Սամիզդատը» հնարուած բառ է, որ «ինքնահրատարակութիւն» իմաստով յղում էր այն ստեղծագործութիւններին մեծ մասամբ՝ այլախոհական, որոնց հրատարակութիւնը մերժուած էր Խորհրդային Միութիւնում, բայց դրանք գաղտնի բազմացում ու ցրում էին:

կասկածի միջավայրում գոհ էին դարձել հարեւանի կամ գործակցի դաւաճանութեան, քինախնդրութեան ու նախանձին)։

Այդ նկարագրութիւններում գուլագների կենցաղային ու աշխատանքային պայմանների որքան նմանութիւն ու ընդհանրութիւն կար։ Նեղ բանտախցեր, մեծ թուով բանտարկեալներով խռնուած, ուր վիստում են առնետներն ու ոջիլները, մերկ յատակներ, երկաթէ տակառներ, որոնց մէջ անտանելի ծովա արծակող փայտ է վառուում, որ խուցը տաքանայ, իսկ անկիւնում «պարաշան» է՝ լայնաբերան մի ուրիշ տակառ, որի մէջ բանտարկեալները իրենց բնական պէտքերն էին հոգում. դա միայն օրը մէկ անգամ էր դատարկւում. ուրեմն միշտ զարշահոտով ապականուած էր խուցը։ Իսկ քնելու յարմարութիւնը՝ երկու յարկանի մահճակալներ՝ վրան չոր տախտակ, ոչ մի բարձ, ներքնակ ու վերմակ, իսկ երբեմն՝ դրանց նման մի բան՝ կեղտոտ, պատառոտուած ու ոջլապատ։ Սնունդը՝ ամենացածր որակի եւ քիչ, չկշտացնող։ Աշխատանքային գործիքները՝ նոյնքան անորակ եւ նախնական, որոնցով պիտի ծառեր կտրատուէին, հանքեր փորուէին, շէնքեր ու ճամբաներ կառուցուէին։ Աշխատանքային ժամեր՝ երկար, անիրականանալի նորմերով։ Սիբիրի, մանաւանդ՝ հիւսիսի Բեւեռային գօտու անտանելի ցուրտ, եւ ոչքաւարար տաք հագուստ ու կօշիկներ։ Սարսուռ ազդող «Մեւ ագռաւ»ը՝ բանտարկեալներ տեղափոխող կամ, աւելի ճիշտ, նրանց դէպի մահապատիժ տանող ինքնաշարժ։ Տգէտ ու վայրենի, ամէն չափանիշով քաղբանտարկեալից ցածր բանտապետներ ու չէկիստներ, որ իրենց անմարդկային վերաբերմունքով կալանաւորին մի ծխախոտի կամ մի կտոր հացի համար քծնող, ստորաքարշ արարածի են վերածում։ Բանտարկեալը թիւ է միայն, իսկ եւ նրանից անուն, դիրք, անցեալ, նկարագիր ու մարդկային յատկանիշ։ Ու երբ ամէն երեկոյ, սոված, յոգնած ու դադրած կալանաւորը ճաշասրահ է մտնում, նրան ողջունողը Ստալինի եւ

երբեմն էլ՝ Լենինի ու Ստալինի մեծադիր նկարն է ու ներքետում մեծ տառերով գրուած լոգունգը՝ «Կեցցէ՛ Մեծն Ստալին՝ Հայրը բոլոր ժողովուրդների»: Ո՛վ հեգնանք, որ զարկում է կալանաւորի ճակատին ու յիշեցում, թէ ինչպէս իր կեանքը Ստալինի քմահաճոյքից է կախուած:

Վերադարձից յետոյ, հայրս երկար ժամանակ չէր կարողանում իր սարսափելի անցեալի հետ հաշտուել, դեռ ինչ մնաց՝ պատմել կամ գրի առնել յուշերը, որոնց յորձանուտը չէր դադարում քնած թէ արթուն մղձաւանջներով չարչարել նրա հոգին: Ու երբ տարիներ անց ժամանակը իր սպեղանին էր դրել, երբ արդէն պատրաստ էր մէկ անգամ եւս ապրելու անցեալը եւ այն գրի առնելու, այլեւս ուշ էր. կեանքը ժամանակ չտուեց, թափով ու եռանդով սկսած յուշագրութիւնը անաւարտ մնաց՝ աքսորի ճամբին: Սիբիրի իր տառապալի կեանքի մանրամասները, գուլագների անպատմելի չարչարանքի նկարագրութիւնը մնացին յուշագրութեան կմախքը կազմող ցանկագրութեան մէջ: Բայց եւ գիտեմ, մի՞թէ նոյն դժոխքի բնակիչները չէին Ալեքսանդր Սոլժենիցինը, Գուրգէն Մահարին, Սուրէն Ղազարեանը եւ շատ ուրիշներ, որոնց նկարագրութիւնները կարդալիս՝ նրանց տեղում միշտ հօրս եմ պատկերացրել: Դեռ աւելին, պատկերացումս աւելի յստակացաւ, երբ *American Historical Review*-ից գրախօսականի խնդրանքով ինձ ուղարկած Զարեհ Ճգնաւորեանի *Enemy of the People: Armenians Look Back at the Stalin Terror* (Ժողովրդի թշնամի. Հայերը յետադարձ հայեացք են նետում ստալինեան սարսափին), 1998-ին արտադրած փաստավաւերագրական ֆիլմը դիտեցի: Ճգնաւորեանը, օգտուելով 1991-ին հռչակուած Հայաստանի անկախութեանը յաջորդող համեմատական ազատ մթնոլորտից, որ նախկին քաղբանտարկեալներին համարձակութիւն էր ներշնչել բարձրաձայնելու անցեալի իրենց ահռելի փորձութիւնը, խօսեցրել ու տեսանկարել էր նրանց: Ֆիլմը պարունակում էր

նաեւ հազուագիւտ արխիւային տեսանիւթեր՝ աքսորավայրերի աշխատանքային ճամբարներից առնուած: Ազդեցութիւնը աննկարագրելի էր: Ես իմ դիմաց՝ համակարգչիս էկրանի վրայ տաժանակիր աշխատանքի դատապարտուած հօրս էի տեսնում:

Հիմա, երբ մտածում եմ վերջապէս պարտքս վճարել, յստակ գիտեմ, որ հօրս պատմութիւնը պիտի գայ աւելանալու պատմութեանը այդ ազատագրկուած, անմարդկային չարչարանքների դատապարտուած մարդկանց, ովքեր այդ բռնակալ աշխարհում լոյս էին փնտրել ու ազգային անկախութեան եւ ինքնորոշման իրաւունքի ձգտել: Մէկ պատմութիւն՝ հազարների մէջ, բայց որքան էլ շատ լինեն այդ վկայութիւնները, ինչպէս հօրս անաւարտ յուշերի հրատարակութեան առիթով Հ.Յ.Դաշնակցութեան պաշտօնաթերթ «Դրօշակ»ի խմբագրութեան կողմից գրուած «Երկու խօսք»ի մէջ էր ասուած, «Այդուհանդերձ ամէն նոր փաստ, աքսորական կեանքի ամէն մի նոր պատում մի նոր աշխարհ է բացում ընթերցողի առաջ եւ առիթ տալիս նորովի տեսնելու մարդկային բթացած խղճի այդ այլանդակ դրսեւորումը»:<sup>4</sup> Եւ իրօք, Դաշնակցութեանը անձանօթ չէին Սիբիրի տաժանակիր աշխատանքի ճամբարները.

Ցարական թէ բոլշեւիկեան վարչակարգերը Սիբիրում յաճախ են «հիւրընկալել» դաշնակցական գործիչներին, ֆեդայիներին ու մարտիկներին՝ Կուկունեանից ու Եփրեմից մինչեւ Համօ Օհանջանեան եւ մինչեւ Գարեգին Նժդեհ: Ցարերը գործածեցին այդ սպառնալիքը կասեցնելու հայկական ազատամարտի յաղթական երթը, բոլշեւիկները դիմեցին նրան՝ լռեցնելու հայութեան պահանջատիրութեան գոռ ձայնը եւ դրանց

4 Մէջբերումը առնուած է հօրս անաւարտ յուշերի յետմահու հրատարակութեան մէջ գետեղուած «Երկու խօսք»ից: Տե՛ս, Բաղդիկ Մինասեան, «Տաւր տարի, տասն ամիս եւ տասնէօթ օր խորհրդային բանտերում եւ աշխատանքային ճամբարներում, 1944, 3 յունուար – 1954, 17 նոյեմբեր», (Աթէնք, հրատարակութիւն Հ.Յ.Դաշնակցութեան Բիւրոյի, Յեղափոխական գրադարան, թիւ 13, 1991), էջ 3:

արդիւնքը եղաւ աքսորեալների երկար կարաւաններ եւ  
աքսորավայրերում հիւծուած ու կմախքացած դէմքեր....<sup>5</sup>

Հայրս՝ Բաղդասար (Բաղդիկ) Մինասեանը մէկն էր այդ  
գոռ ձայներից եւ նրա կեանքի պատմութիւնը արժանի է  
արձանագրուելու՝ ո՛չ միայն յաւիտենականութեան յանձնելու  
մի արժէքաւոր եւ օրինակելի կեանքի պատմութիւն, բայց  
նաեւ որովհետեւ գուլագներին կեանք տուող բռնաճնշման  
քաղաքականութիւնը դեռ արմատախիլ չի եղել: Եթէ Բ.  
աշխարհամարտի աւարտով վերջ գտան նացիստական  
համակենտրոնացման ճամբարները, սակայն գուլագներում  
կիրառուած պատժամիջոցները շարունակեցին դեռ աւելի  
շեշտուածութեամբ սարսափի տակ պահել խորհրդային  
հասարակութեանը՝ առ նուագն մինչեւ Ստալինի մահը, որից  
յետոյ միայն կազմալուծուեցին ոչ բոլոր բայց որոշ թուով  
աշխատանքային ճամբարներ: Գուլագը կազմալուծուեց, բայց դեռ  
իշխում է գուլագային մտածելակերպը եւ աշխարհը նախընտրում  
է չտեսնել յետ խորհրդային իրականութեան մէջ հակառակորդին  
ոչնչացնելու երկաթեայ քաղաքականութիւնն ու մարդկային  
իրաւունքների կոպիտ ոտնակոխումները: Աշխարհը նախընտրում  
է անտեսել ծայրայեղականներին հովանաւորող Ռուսաստանի  
բացասական դերը այսօրուայ պայթուցիկ խաղաղութեան  
պահպանման գործում: Ռուսաստանը դեռ հաշուի չի նստել իր  
անցեալի՝ խորհրդային անցեալի հետ, քանի որ կատարուած  
փոփոխութիւններն էլ շեշտակի չեն շեղել դէկը:

Ահա՛ նման ալեկոծ մտքերի հեղեղն էր, որ յուշեց ինձ, թէ  
ժամանակն է, թէ ուշացել եմ, թէ պիտի այլեւս ձեռնարկեմ  
յապաղեալ ծրագիրս՝ հօրս ծանօթացնելու աշխարհին, բայց

---

5 Նոյն տեղում, էջ 4:

մանաւանդ՝ նրա կտակը թողնելու իր թոռներին, ծոռներին ու գալիք սերունդներին:

Չորս ամիսների խորհրդածութիւններս, ձեռքիս տակ գտնուող եւ այլ կարելի աղբիւրները դատելով, համոզուած եմ, որ երկար ու դժուարին ճամբայ ունեմ իմ առջեւ, բայց պիտի քայլեմ այդ ճամբան՝ ուր էլ որ հասնեմ:

Ուրեմն, որդիական ակնածանքով եւ մեծ ակնկալիքներով սկսում եմ իմ առջեւ բացուած ճանապարհը ու մի քիչ հոգեւոր պաթոսով արձանագրում՝ «Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

Փետրուար, 2016 թ.

Գլուխ 0

## ՄԿՍԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Ամերիկայի Միացեալ Նահանգներ փոխադրուելուց յետոյ Թեհրանից ստացած մեր արկղերի մէջ, գրքերից, հագուստներից ու հին յիշատակներ ու յուշեր պարունակող մի քանի տնական իրերից բացի, հօրս թղթերն էին, ձեռագրերի մի մեծ խուրձ, որոնք, բանից դուրս եկաւ, որ մեծ մասամբ 1960-ականներին հրատարակած նրա աշխատութիւնների նախնական տարբերակներն են: Այն ժամանակ հայրս աշխատում էր մեծ փութով, կարծես կորած ժամանակը ետ վերադարձնելու համար:<sup>1</sup> Թղթերի մէջ էր նաեւ

---

1 Ստորեւ, բերում եմ ցանկը Բաղդիկ Մինասեանի հրատարակութիւնների, որոնք ի հարկէ չեն պարունակում «Ալիք» թերթում նրա գրած բազմահարիւր խմբագրականներն ու Ատրուշանեան կամ Բագին գրչանուններով ստորագրուած նրա յօդուածները, քաղաքական տեսութիւնները.

«Հայ ժողովրդի մարդաբանական եւ պատմահոլովութեան գոյացումը» (Թեհրան, 1962).

«Անպատիժ մնացած ցեղասպան-հայասպան Թուրքիան շարունակում է իր հակահայ հալածանքները» (Թեհրան, 1964).

«Թուրքիայի հայասպանութեան եւ Հայաստանի քաղաքական ոչնչացման քաղաքականութիւնը» (Թեհրան, 1975).

«Հայաստան եւ Հայ Ժողովուրդ» (Թեհրան, 1977). (այս յետմահու հրատարակութիւնը ընդգրկում է նաեւ հեղինակի հակիրճ կենսագրութիւնը, ներքո՝ նրա յիշատակին նուիրուած եւ Աստրալիայում մայիս-յունիս, 1976 թ. նրա կարդացած չորս դասախօսութիւնների վերծանութիւնը):

«Հայաստան, Հայ Ժողովուրդ եւ Հայկական Դատ» (Բէյրութ, Համազգայինի հրատարակութիւն, 1979), նոյնպէս հրատարակուած յետմահու:

Այս ցանկի վրայ պիտի աւելացնել Բաղդիկ Մինասեանի առաջին աշխատութիւնը, որ իր ուսանած մանկավարժական խոր գիտելիքներն էր պարփակում, «Մանկավարժութեան հիմունքներ, Principes de pédagogie» (Թաւրիզ, 1931):

նրա յուշերը՝ մինչև ուր որ հասցրել էր գրել: Ջարմիկս՝ Քնար Ամիրխանեան Ղարաբեկեանը, այն քչերից, ով ազատօրէն կարողում էր հօրս անընթեռնելի ձեռագիրը, մեքենագրել էր դրանք:

Հօրս մահից յետոյ խնդրել էի Դաշնակցութեան Բիւրոյին արտօնել ինձ՝ հրատարակելու նրա յուշերը հէնց անաւարտ վիճակում: Բիւրոն յարմար չէր նկատել ու խորհուրդ էր տուել ինձ սպասել՝ գտնելով որ ժամանակը ճիշտ չէր այդպիսի հակախորհրդային նիւթ հրատարակելու: Ի՛նչ հեզմանք:

Տարիներ սպասելուց եւ անգամներ դիմելուց յետոյ, վերջապէս թոյլտուութիւն ստացայ: Ձեռագիրը սրբագրեցի եւ աւելացրի իմ «Որպէս լրացում» վերնագրուած վերջաբանը: Գիրքը լոյս տեսաւ Աթէնքում 1991-ին, Բիւրոյի հրատարակութեամբ եւ «Դրօշակ»ի խմբագրութեան յառաջաբանով:<sup>2</sup>

Հայրս իր յուշերը սկսել էր Խորհրդային Կարմիր Բանակի Ատրպատական<sup>3</sup> մուտքով (1941) եւ Իրանի այս հիւսիս-

2 Տե՛ս, Նախաբանի ծանօթ. 4-ը:

3 Այս գրքի անգլերէն բնագրում երկար ծանօթագրութեամբ փորձել եմ կանխել հաւանական շփոթը, որ կարող է առաջանալ Իրանական նահանգ՝ Ազարբայջանի (հայերէնով՝ Ատրպատական) եւ Խորհրդային Ադրբեջանի միջեւ: Կարծում եմ, որ հայ ընթերցողների համար դա հարց չէ, այնուամենայնիւ, հակիրճ բացատրութիւնը տեղին կը լինի: Յարական կայսրութեան փլուզումից յետոյ, Կովկասի երեք ազգութիւնները՝ վրացի, հայ եւ թաթար, իրենց անկախութիւնը հռչակեցին (1918): Թաթարների քաղաքական կենսքը ղեկավարող Մուսաւաթ կուսակցութիւնը իր հաստատած հանրապետութիւնը Թուրքիայի Երիտթուրք ղեկավարութեան դրդումով Ազարբայջան կոչեց: Յետագայում, Կովկասի Ադրբեջանցիները պետական որոշումով (1936) ազերիներ կոչուեցին, որ որեւէ ցեղի չի յղում, բայց այդ բնակչութիւնը դարձնում է տիտղոսակիր խումբ, որի հիման վրայ ձեւաւորում է Խորհրդային եւս մէկ հանրապետութիւն: Իրանի հիւսիս-արեւմտեան նահանգի անուան նմանակումը դիտումնաւոր էր եւ յատուկ նպատակներ էր հետապնդում, այն է՝ իրանական Ազարբայջանը անջատել Իրանից եւ նորաստեղծ կովկասեան հանրապետութեանը միացնելով մէկ մեծ, անկախ «Մեծ Ադրբեջան» հանրապետութիւն հիմնել: Ադրբեջանի խորհրդայնացումից յետոյ, Խորհրդային ղեկավարները որդեգրեցին այս «միացեալ մեծ, բայց արդէն բոլշեւիկ Ադրբեջան» ունենալու քաղաքականութիւնը եւ յետագայի գործառնայնութիւնը, ապա Բ. աշխարհամարտի առիթը օգտագործելով՝ Ազարբայջան (Ատրպատական) նահանգի գրաւումը, այդ քաղաքականութեան դրսեւորումներն են: Նկատի ունենանք, որ իրանեան Ազարբայջանի եւ Կովկասեան Ադրբեջանի անուան, պատմութեան, լեզուական եւ ցեղային յատկանիշների վերաբերող եւ մեծ



արեւմտեան նահանգի գրաւումով: Այն երկարում էր մինչեւ Կրասնոյարսկի փոխանցման կամ բաշխիչ կայանը, դէպի աքսոր ճամբի վրայ վերջին կէտը, որտեղից կալանաւորներին խումբ առ խումբ դէպի ճամբարներն էին ուղարկում: Հայրս Ենիսէյ գետի վրայով պիտի ուղարկուէր հիւսիսային Սիբիր, դէպի տունդրաներ: Ձեռագիրը ընդգրկում էր համառօտ նկարագրութիւն խորհրդային գրաւման տակ գտնուող Ատրպատականում տիրող իրավիճակի, իր առեւանգումը ՉէԿայի (ամբողջական անուանումն է՝ Всероссийская чрезвычайная комиссия по борьбе с контрреволюцией и саботажем) կամ Խորհրդային գաղտնի ոստիկանութեան՝ ՆԿՎԴ-ի (հայերէնով ՆԳԺԿ՝ Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատ) կողմից, փոխադրումը

---

մասամբ քաղաքական միտում հետապնդող իրարամերժ ուսումնասիրութիւններն ու փաստարկութիւնները այս հատորում չեն կարող տեղ ունենալ: Այնուամենայնիւ, հակուած եմ ընդունելու, որ ըստ رضا الله رضا -ի (Էնայաթօլլահ Ռեզա) و اران آزريايان و اران (Ազարբայջանը եւ Ալանը), Թեհրան, 1360 (1981), ناطق ناصح -ի (Նասեհ Նաթեղ) (Ազարբայջանի լեզուն եւ Իրանի ազգային միութիւնը) Թեհրան, 1358 (1980) եւ Երուանդ Աբրահամեանի Iran Between Two Revolutions (Իրանը երկու յաղափոխութիւնների միջև) (Princeton, NJ, Princeton University Press, 1982) եւ նման այլ աղբիւրների, Ատրպատականի լեզուն համարում է պարսկերէնի մէկ ճիւղը, որ գոյութիւն է ունեցել շատ հին ժամանակներից, բայց որ կրել է ներխուժող թաթար ցեղերի խօսքի ազդեցութիւնը: Հախամանէշի եւ սասանիների ժամանակ Ազարբայջանը Մաղերի երկիր էր եւ ժողովուրդը կազմուած էր արիական զանազան ցեղերից (Փարսեր եւ Մաղեր): Տասներորդ դարու աշխարհագրագէտ Էբն Թաւաղուլը գրում է, որ Ազարբայջանում մարդիկ պարսկերէն էին խօսում (պարսկերէնի Ազերի ճիւղը): Թուրք կամ թրքերէն բառը գործածուած չէ: Իսկ Արաքս գետի հիւսիսում տիրապետող երկու լեզուները Աղուանների լեզուն էր եւ Ուտիերէնը, դարձեալ որեւէ անուն չկայ թրքերէնի մասին: Ազարի լեզուի թրքացումը Սաֆաւի թագաւորութեան ժամանակներից սկսեց (16-րդ դարու սկզբից. «ազարի» լեզուի վերջին յիշատակումը հէնց այս շրջանին է վերաբերում) երբ արդէն մողոլները թրքերէնը բերել էին իրենց հետ: Նոյնիսկ մարքսիստ թուղէ կուսակցութեան հիմնադիր-գաղափարախօսը Թ. Առանին 1924-ին գրած մի յօդուածում այն կարծիքի էր, որ մողոլների արշաւանքները եւ թողած ազդեցութիւնը Ատրպատականի բնակչութեան վրայ այն հետեւեալն էր ունեցել, որ բնակչութիւնը կորցրել էր իր լեզուն (պարսկերէնի Ազերի ճիւղ) եւ ընդունել թուրքերէնը, որ շատ աւելի դիւրին էր: Եւ դա բնակչութեան մէջ ստեղծել էր այն թիւր կարծիքը թէ իրենք թուրք են եւ նոյնիսկ ձգտում էին միանելու Արաքսից հիւսիս գտնուող իրենց եղբայրներին: Իսկ աշխարհագրական տեսանկիւնից՝ Ատրպատականը համարեալ այսօրուայ իրանական նահանգի տարածքում է եղել:

Երեւան եւ մենակեաց բանտարկութիւն Չէհայի բանտում, ապա՝ երկարապատում հարցաքննութիւններ, դատավճիռ եւ ճամբան դէպի աքսոր:

Հայրս իր յուշերը գրել էր սկսել մահուանից մէկ տարի առաջ միայն: Մինչեւ այդ, պարզապէս չէր կարողանում իր սարսափելի փորձութեան մասին պատմել: Վերքը դեռ թարմ էր, պատմել անցեալը նշանակում էր նորից փոխադրուել այդ դժոխքը ու նորից ապրել չարչարանքը: Որոշ առիթներով, երբ տրամադրուում էր այդ զարհուրելի տարիների մասին խօսել, յանկարծ դէմքը կաս-կարմիր էր կտրում, լայն ճակատի վրայ մի կապոյտ երակ էր երեւում, որ ուռչում էր, կարծես պիտի պայթէր: Պարզ էր, որ այդ վայրկեանին կորցրել էր ժամանակի ու տարածութեան զգացումը, արդէն ուրիշ տեղ էր՝ սառցապատ Սիբիրի տաժանակիր աշխատանքի ճամբարում: Ու մենք սարսափած, ընդհատում էինք իրեն, խնդրում էինք չշարունակել: Արդէն բարձր ճնշումը կարող էր աւելի բարձրանալ եւ կաթուածահար անել նրան:

Վերադարձից յետոյ, առաջին տարիներին նոր կեանքի անխնայ պայքարի մէջ էր ներքաշուել: 52 տարեկան այս նախկին բանտարկեալը պիտի վերականգնէր իր ֆիզիքական եւ հոգեկան առողջութիւնը, պիտի կարողանար անցեալի բնականոն կեանքը կամրջել ներկայի հետ ու ետին թողնել տաժանքի տարիները, պիտի կարողանար իր երկար բացակայութեան պատճառած տնտեսական, ընկերային եւ հոգեբանական հսկայ վիհը լեցնել: Երկաթէ կամքով այդ փորձութիւնն էլ յաղթահարեց: Իրեն գերզբաղուած էր պահում, չարչարող յիշատակները տարբեր զբաղումների եւ առօրեայ գոյապայքարի թոհուրոհի մէջ էր թաղում: Նա այն քչերից էր, որ յաջողեց խափանել անցեալի մահաբեր փորձութեան թողած ազդեցութիւնը (ի հարկէ՝ ոչ երբեք լիակատար), եւ կարելոյն չափ բնականոն կեանքի մէջ մտնել:

Տասնութ տարի բանտերում ու աքսորավայրերում անցկացրած

Գուրգեն Մահարին եւս մէկն էր այդ բացառութիւններից: Այդպէս է վկայում Գրիգոր Աճեմեանը՝ իր հօր կեանքին ու գործին նուիրած հատորում: «Յեղափոխական շատ գործիչներ չդիմացան գուլագի փորձութիւններին, կոտորուեցին մարմնով կամ ոգով, եւ եթէ չթաղուեցին անգերեզման ու անշիրիմ, վերադարձան իբրեւ հազիւ նշմարուող ստուերներ կամ կենդանի դիակներ...»<sup>4</sup> Այդ քչերի շարքում յիշենք նաեւ Ալեքսանդր Սուլժենիցինին, ով, առանց թողլո՞ւ ու մատիտ (դա արգիլուած էր կալանատրին), միայն իր արտակարգ յիշողութեան ապաւինելով, վերադարձից յետոյ կարողացաւ գուլագի ամբողջական ու եզակի պատկերացումը տալ: Սուլժենիցինը 38 տարեկան էր միայն, երբ կալանքից ազատուեց: Երիտասարդ էր դեռ ու կորովի: Գուլագը չէր հասցրել նրա աւիւնն ու աւիշը քամել:

Վերադարձից քսան տարի անց՝ Թեհրանի պետական դպրոցներում քիմիայի ուսուցչի իր պաշտօնից հանգստի կոչուելուց եւ «Ալիք» օրաթերթի խմբագրապետի իր պաշտօնը թողնելուց յետոյ, հայրս սկսեց իր յուշերի վրայ աշխատել: Վերջապէս պատրաստ էր թղթին յանձնել, այսինքն՝ սարսափի տարիները նորից ապրել: Ափսո՛ւ, բախտը չներեց: 1976-ի մայիսին Աւստրալիայի ՀՅԴ «Դրօ» կոմիտէն նրան, որպէս «Հայ Դատ»ի գործիչ, մէկ ամսով հրաւիրեց՝ Սիդնի եւ Մելբուռն քաղաքներում մի շարք դասախօսութիւններ կարդալու եւ հանդիպումներ ունենալու: Մեծ ոգեւորութեամբ ընդունեց հրաւերը եւ յաջողութեամբ կատարեց իր վրայ դրուած պարտականութիւնը, առաքելութիւնը: Բայց այցելութեան վերջին շաբաթուայ ընթացքում էնֆլուենզայով բռնուեց: Այդ տարի Աւստրալիայում էնֆլուենզայի համաճարակ էր սկսել եւ մեծ թուով գոհեր էր խլել: Արագ ապաքինման համար նրան հիւանդանոց էին փոխադրել:

---

4 Գրիգոր Աճեմյան, «Սիրիբական», Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009, էջ 9:

Երբ վերադարձաւ լիովին ապաքինուած չէր, բայց այնքան բարձր էր տրամադրութիւնը: Աւստրալիայի հայ համայնքը նրան մեծ խանդավառութեամբ ու պատիւներով էր ընդունել: Դասախօսութիւնները ընկալուել էին մեծ հետաքրքրութեամբ եւ բազմամարդ մասնակցութեամբ: Վերադարձի օրը շատ յոգնած էր, ասաց շատ բան ունեւ պատմելիք, վաղը կը պատմեմ. ու գնաց հանգստանալու:

Այդ գիշեր նրան համարեա ուշաթափ հիւանդանոց փոխադրեցինք: Յունիսի 13-ն էր:

Էնֆլուենզան արագ բուժելու համար Սիդնիի հիւանդանոցում մեծ չափերով ասպերին էին տուել, ու Սիբիրում ստացած ստամոքսի խոցը, որ այդքան տարի զգուշաւոր սննդառութեան արդիւնքում թաքնուած էր մնացել, արիւնելու էր սկսել: Բժիշկները չէին կարողանում արիւնահոսութեան առաջն առնել, արեան ճնշումը աստիճանաբար նուազում էր: Հայրս պայքարում էր, բայց մէջընդմէջ մահաքնի մէջ էր մտնում: Ծանր գործողութիւնն ու դեղամիջոցները անօգուտ մնացին: Հայրս չապաքինուեց ու իր մահականացուն կնքեց յուլիսի 13-ին:

Յիշում եմ, երբեմն կիսաթոն րոպէներին լսում էր նրա մարող ձայնը՝ «Ենիսէյ... Նորիլսկ...»:<sup>5</sup> Հարցնում էի՝ ինչ էր ուզում ասել, բայց ինձ չէր լսում: Դարձեալ մահաքնի մէջ էր անցնում: Որքան անտեղեակ էի, անգիտակ: Նրա մահուանից յետոյ, երբ ձեռք առայ մեքենագրուած յուշերը, Ենիսէյն ու Նորիլսկը այնտեղ էին: Ենիսէյ գետի վրայով նրան հիւսիսային Սիբիրի Նորիլսկ ճամբարներն էին ուղարկել:<sup>6</sup> Ու այդտեղ էլ կանգ էր

5 Հայրս Նորիլսկը ռուսական հնչիւնաբանութեամբ Նորիլսկ էր կոչում, նաեւ՝ Կրասնայարսկ: Ես այդ երկու տեղանունները իր խօսքին հարազատ մնալու համար ըստ իր բնագրի եմ պահել:

6 Ենիսէյ գետը հոսում է Հիւսիսային Սիբիրի տարածքում՝ մինչեւ Հիւսիսային սառուցեալ ովկիանոս: Նորիլսկը բոլորովին հիւսիսում է՝ Կրասնոյարսկից աւելի քան 1500 կիլոմետր հեռավորութեամբ, Տայմիր թերակղզու սկզբին, Ենիսէյ գետի արեւելքում: Նորիլսկը համարում է աշխարհի ամենահիւսիսային քաղաքը եւ

առել գրառումը... Հայրս ուզում էր հասկացնել՝ յուշագրութիւնը այդ կէտին էր հասցրել, ու կիսատ էր մնացել: Գիտէր, որ այլեւս չպիտի կարողանայ շարունակել:

Հօրս անաւարտ յուշերը իմ միակ գրաւոր աղբիւրն էր: Բացի այդ, իր թղթերի մէջ գտայ նաեւ ուրուագիծը կամ աւելի մանրամասն ցանկագրութիւնը գալիք նիւթերի: Երբ այդ յուշերի հրատարակութեան թոյլտուութիւնը ստացայ, ձեռագրին աւելացրի վերջաբանս, ուր ընդգրկել էի այդ ցանկագրութիւնը՝ ընթերցողին գաղափար տալու համար, թէ Բաղդիկ Մինասեանի յուշերը ինչ պիտի պարունակէին, եթէ վերջացնելու ժամանակ ունենար: Այս գրքի 3-րդ եւ 4-րդ գլուխները ընդօրինակումն են այդ հրատարակութեան, թեթեւ սրբագրութեամբ՝ յարգելով հեղինակի գրելաոճը, վերլուծումներն ու կարծիքները: Անգլերէն բնագրում, նորից 3-րդ եւ 4-րդ գլուխներում, որոշ բովանդակային փոփոխութիւններով եւ յապաւումներով, դա ներկայացրել էի թարգմանաբար:

Աշխատութիւնս ամբողջացնելու համար պրպտումներս ինձ Հայաստանի Ազգային արխիւ առաջնորդեցին: Յոյս ունէի այնտեղ գտնել փաստաթղթեր՝ հօրս արգելափակման, հարցաքննութիւնների եւ նրան տասը տարի աքսորելու դատավճռի մասին: Հետաքրքիր էր ինձ ձեռք գցել երկար հարցաքննութիւններից յետոյ կազմուած եւ հօրս ստորագրութիւնը կրող ամբաստանագիրը, ուր նրա գործած յանցանքներն էին թուարկուած: Կարդացել էի, թէ ինչպէս, անասելի չարչարանքների տակ կալանաւորը իր ստորագրութիւնն է դնում արդէն պատրաստուած «խոստովանութեան» տակ՝ քաջ գիտենալով,

---

տարուայ մեծ մասը սառցապատ է: Շրջանը հարուստ է ընդերքներով՝ նիկել, պղինձ եւ այլ: Ճարտարարուեստական այս քաղաքը հիմնադրուած է 1920-ական թուականներին, բայց կարեւորուել է 30-ականներին՝ երբ գուլագեան ցանցի Նորիլագ կոչուող աշխատանքային ճամբարների կենտրոնի է վերածուել:

որ իր մահուան կամ տասը, տասնհինգ, քսանհինգ տարուայ ազատագրկման ու աքսորի դատավճիռն է հաստատում:<sup>7</sup>

Լսել էի, որ վերջերս Երեւանի Պետական արխիւին են յանձնուել ԿաԳէԲէՅի արխիւներում գտնուող Ստալինի բռնապետութեան տարիներին Հայաստանում ձերբակալուած ու դատուած անհատների թղթապանակները: 2016-ի գարնանն էր, Երեւանում էի: Դիմեցի Արխիւ, ուր վաղեմի ծանօթ Սոնա Միրզոյեանը օգնեց ինձ ձեռք բերելու՝ ինչ որ կար Բաղդիկ Մինասեանին առնչուող: Դժբախտաբար՝ նշանակալի ոչինչ: Նիւթերից մէկը, Սովետական Հայաստանի Արտաքին գործերի նախարարութեան 1960-ականների զեկոյցների մէջ էր: Բաղդասար Մինասեան անունը յիշուած էր որպէս Թեհրանում հրատարակուող «Ալիք» թերթի խմբագիր, ով իր հակասովետ գործունէութեան համար պատժուել ու աքսորուել է Սիբիր:<sup>8</sup>

Վերջապէս, Արխիւի տնօրէն Ամատունի Վիրաբեանը յայտնեց, որ ԿաԳէԲէՅի կողմից յանձնուած են 1937-38 թուականների մաքրագործումների զոհ քաղբանտարկեալների թղթապանակները միայն, եւ իմ հօր պարագայում ես պիտի Ազգային անվտանգութեան ծառայութեան դիմեմ:

Մի նոր խոչընդոտ: Յոռեւես էի. նման խնդրով Ազգային անվտանգութիւն դիմելը անկարելի էր թուում ու մի քիչ էլ

7 ՆԿՎԴ-ի Յատուկ Խորհրդակցութիւն կոչուած յանձնաժողովը լիազօրութիւն ուներ խորհրդային դատարաններից դուրս դատավճիռ արձակելու կալանաւորի դէմ: Տրուած արգելափակման ժամկէտները կապուած էին այն իրաւասութեան հետ, որ Կոմունիստական կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի Քաղբիւրոն տալիս էր Յատուկ Խորհրդակցութեանը: Այդ ժամկէտները տարբեր էին Բ. աշխարհամարտից առաջ, ընթացքում եւ յետոյ:

8 Երեւանի պետական արխիւ, 326/1/532, էջ 3: Առ ի բացատրութիւն նշենք, որ Բ. աշխարհամարտի աւարտից յետոյ, Մոսկուայի իշխանութիւնը թոյլատրեց ԽՍՀՄ «արբանեակ» հանրապետութիւններին իրենց արտգործ նախարարութիւնն ունենալ: Սա վերադարձ էր Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի, որ լուծարուել էր 1922-ին: Խորհրդային Հայաստանի Արտգործ նախարարութիւնը կեանքի կոչուեց 1946-ին: Նախարարութեան բոլոր գրութիւնները եւ ներքին ու արտաքին նամակագրութիւնները կատարում էին ռուսերէնով:

վտանգաւոր: Բայց դիմեցի: Ներս մտայ ԿաԳէԲէյի շէնքը ու հայցս ներկայացրի ընդունարանի երկու բարեհամբոյր եւ քաղաքավարի երիտասարդ պաշտօնեաներին, որ նոյնիսկ օգնեցին ինձ պաշտօնական դիմում գրելու: Ու ի զարմանս ինձ, մէկ շաբաթից պատասխանը ստացայ:

Պատասխան նամակը սկսւում էր Բաղդասար (Բաղդիկ) Խաչատուրի Մինասեանի կենսագրական գծերով՝ կրթութիւն, Դաշնակցութեան անդամակցութիւն եւ վարած պաշտօններ: Ապա՝

Բ. Մինասեանը՝ որպէս դաշնակցութեան կուսակցութեան ակտիւ գաղափարախօս եւ նուիրեալ, սովետական իշխանութեան դէմ քայքայիչ աշխատանքներ տանելու, բոլշեւիկեան կուսակցութեան եւ նրա մամուլի դէմ հանդէս գալու համար 07.01.1944 թ.<sup>9</sup> ձերբակալուել է Թաւրիզում, յետագայում ձերբակալուել ձեւակերպուել է ՍՍՀՄ ՆԳԺԿ յատուկ խորհրդակցութեան 12.03.1944 թ.<sup>10</sup> որոշումը եւ 02.09.1944 թ. դատապարտուել է 10 տարի ազատազրկման:

Նամակը տեղեկացնում էր, որ «ՍՍՀՄ Գերագոյն Դատարանի զինուորական կոլեգիայի 05.06.1953 թ. որոշմամբ» ներում է տրուել Մինասեանին եւ յանձնուել Իրանի իշխանութեան: Որեւէ տեղեկութիւն չկար, թէ Բաղդիկ Մինասեանը որտեղ է անցկացրել այդ 10 տարին, կամ այլ մանրամասնութիւններ: Միայն շեշտուած էր՝ «Այլ տեղեկութիւններ առկայ չեն», այսպիսով՝ փակելով դուռը իմ առջեւ: Բաւարարուած չէի:

Բոստոնի ՀՅԴ արխիւին էլ անմատչելի էր ինձ համար:

9 Այս թուականը՝ յունուար 7, 1944, Բաղդիկ Մինասեանի առաջին օրն էր Երեւանի ՉէԿայի բանտում:

10 ՍՍՀՄ ՆԳԺԿ սկզբնատառերն են Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութիւն, Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատ:

Յայտնեցին, թե անբաւարար բիւդճէի պատճառով արխիւային նիւթերը ցանկագրուած են եւ տրամադրելի միայն մինչեւ 1928 թուականը: Այսինքն՝ ես հնարաւորութիւն չունէի հօրս գործունէութեան մանրամասներ գտնելու, կամ կուսակցութեան շարքերում նրա առեւանգման արձագանքը փնտրելու:

Սկսեցի քրքրել հօրիցս պահած իմ յիշողութիւնները: Վերադարձայ գրքերիս, որտեղից այնքան պիտանի տեղեկութիւններ էի քաղել, տեղեկութիւններ ստալինեան բռնապետութեան պարտադրած առօրեայ կեանքի մասին, բանտերի ու գուլագների մասին: Ու դարձեալ վերադարձ հօրս թղթերին: Ինչպէ՛ս նախապէս չէի նկատել այս մի կտոր թուղթ, ոչ նոյնիսկ լրիւ էջ, ու հօրս ձեռագիրը, վերնագիրը՝ «Զօն»: Անկասկած սա նպատակադրուած էր իր յուշերի ընծայագիրը լինելու: Այս նուիրեալ հայն ու հաւատաւոր դաշնակցականը իր ցաւագին ողիսականը նուիրում էր իր ազգին ու կուսակցութեան՝ միաժամանակ դրսեւորելով նաեւ իր հայու նկարագիրն ու վճռականութիւնը:

Քեզ եմ ձօնում հայ ժողովուրդ, քեզ, որ քո ցեղային Մեծ Համբերութիւնը քո ինքնապահպանման եւ յարատեւութեան վահանը դարձրիր քո վատ օրերին, քեզ, որ քո Մեծ եւ Յաւիտենական Յոյսը՝ քո խաւար օրերի լուսավառ փարոսը դարձրիր լաւ օրերին հասնելու համար, քեզ, որ քո պատմական երթը դիրք գաղափարի ռելսերի վրայ, եւ քո կրտսեր Զաւակին՝ Հ. Յ. Դաշնակցութեան, որ ժառանգեց քո ֆիզիկական, հոգեկան եւ բարոյական իսկական էութիւնը եւ կրում է քո պայքարը:



«ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ»

13

ԲԱՂԴԻԿ ՄԻՆԱՍԵԱՆ

**ՏԱՍԸ ՏԱՐԻ, ՏԱՄՆ ԱՄԻՍ  
ԵՒ ՏԱՄՆԵՑԹ ՕՐ  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԲԱՆՏԵՐՈՒՄ ԵՒ  
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՃԱՄԲԱՐՆԵՐՈՒՄ**

1944, 3 ՅՈՒՆՈՒԱՐ – 1954, 17 ՆՈՅԵՄԲԵՐ

ԱԹԷՆՔ 1991

Lat



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Երևան-1, Նաղառնական փ 1114

« 06 » ապրիլի 2016թ.

№ 24/665.

Օր. թիվ 1

Ռաբինա Փերոնյանին (Մինասյան)

ք.Երևան, Հանրապետության 62 շ., քս.32

Ի պատասխան Ձեր 29.03.2016թ. դիմումի

Հարևում ենք, որ Բաղդասար (Բաղդիկ) խաչատուրի Մինասյանը ծնվել է 1902թ. Իրանի Ղարաբաղի շրջանի Ողա գյուղում, Իրանի բաղաբացի, բաղձրագույն կըրթությամբ: Իրանի Ռեյտ, Կազվին, Ռեհրան և Թեմրիզ քաղաքների դպրոցներում աշխատել է որպես ուսուցիչ: 1919թ-ից Իրանում հանդիսացել է դաշնակցության երիտասարդական միության անդամ, այնուհետև՝ նույն միության կառավարման նախագահ: Բ.Մինասյանը 1939-40թթ. եղել է Ատրպատականում (Իրան) դաշնակցության կենտրոնական կոմիտեի անդամ, ղեկավարել է կուսակցության դպրոցը և աշխատանք տարել կուսակցության երիտասարդական միության հետ, 1944թ. հանդիսացել է նույն նախագի դաշնակցության կենտրոնական կոմիտեի նախագահ:

Բ.Մինասյանը՝ որպես դաշնակցության կուսակցության ակտիվ գաղափարախոս և «վիրյալ, սովետական իշխանության դեմ քայքայիչ աշխատանքներ տանելու, լուրջիկյան կուսակցության և նրա մամուլի դեմ հանդես գալու խամար 07.01.1944թ. ձերբակալվել է Թավրիզում, հետագայում ձերբակալումը ձևակերպվել է ՍՍՀՄ ՆԳՄԿ Խառնակ ներքին դակցության 12.03.1944թ. որոշմամբ և 02.09.1944թ. դատապարտվել է 10 տարի ազատազրկման:

ՍՍՀՄ Գերագույն դատարանի զինվորական կոլեգիայի 05.06.1953թ. որոշմամբ Բ.Մինասյանը վաղաժամկետ ազատվել է պատիժը կրելուց և որպես իրանահայատալ 03.07.1954թ. հանձնվել է Իրանի իշխանությանը:

Այլ տեղեկություններ առկա չեն:

Հաշվառման և արխիվային ֆոնդերի  
վարչության պետ

Գ. Տեր-Վարդանյան

## ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ՍԿԻԶԲ

Ամրան տաք օրերից մեկն էր Թեհրանում, յուլիս, 1954: Քոյրս՝ Ռուզանը, եւ ես տուն վերադարձին զարմացած ու շփոթուած մեր սենեակի դռանը կանգնեցինք: Սենեակը լիքն էր, մաման շրջապատուած էր հարեւաններով ու ծանօթներով, ամէն մէկը ձեռքին մի թերթ: Ի՞նչ էր կատարում:

Այդ օրը Իրանի գլխաւոր թերթերից՝ *Քէշաս* օրաթերթը մի լուր էր հրապարակել, ըստ որի՝ մի խումբ իրանցի պատերազմական գերիներ խորհրդային բանտերից արձակուել եւ Իրանի կառավարութեանն էին յանձնուել: Կառավարութիւնը նրանց պահում էր յատուկ ճամբարում արգելափակուած եւ պիտի ազատ արձակէր մանրագնին ստուգումներից ու հարցաքննութիւններից յետոյ միայն: Թերթի համաձայն՝ խմբի մէջ էր քիմիայի պրոֆեսոր՝ Դոքտ. Բադրասար Մինասեանը: Եւ դա միակ յիշուած անունն էր թերթում: Մեր ծանօթներից ով որ լսել էր այդ լուրը, թերթը գնել եւ մեր տուն էր շտապել՝ ուրախ լուրը մեզ յայտնելու համար:

Լուրը զարմանալի էր եւ անհաւատալի: Արդեօք իրականութիւն էր դա: Արդեօ՞ք այսքան երկար տարիներից յետոյ մեր կորածը տուն էր գալու: Թէ՛ սա մամուլի հերթական զոհիկ կատակներից էր սովետ-իրանական յարաբերութիւնները յեզնոդ: Չէ՛ որ արդէն նախորդ ամառուանից, վարչապետ Մոսադեղի կառավարութեան տապալումից յետոյ, բաւական սրուել էին

այդ յարաբերությունները: Երանի թէ լուրը իրականություն լինէր: Առողջական ու հոգեկան փխրուն վիճակում մայրս այլեւս մի նոր հարուածի, նոր յուսալքութեան դիմանալ չէր կարող:

Այսօր, երբ յետ եմ նայում, զգում եմ, թէ ինչպէս այդ օրը ամէն ինչ փոխուեց մեր կեանքում: Ոչինչ նոյնը չէր այլեւս:

Այդ երեկոյ բոլորս հաւաքուեցինք հօրաքոյր Ալմաստենց տանը: Տօնական էր տրամադրությունները, խանդավառ էինք բոլորս, բայց նաեւ կասկած կար մեր սրտերում: Թերթերի լուրերին շատ չէր կարելի վստահել: Միակ ձեւն այն էր, որ մենք ինքներս անձամբ ստուգէինք լուրի ճշմարտութիւնը: Ուրեմն, Ալեքսան մօրեղբայրս<sup>1</sup> ու Ալմաստ հօրաքոջ երկու զաւակները՝ Վաչիկ եւ Բաբուշ (Բաբկէն) Ղարաբէկեան, միւս օրը մեկնեցին Մաշհադ, որի շրջակայքում տեղակայուած էր յատուկ ճամբարը:

Մերոնց իրաւունք չէր տրուել արգելափակուած Բաղդասար Մինասեանին հանդիպելու, բայց պատասխանատու զինուորականը ցոյց էր տուել հօրս թղթապանակը եւ սահմանին առնուած նրա նկարը: Կասկած չկար, ինքն էր, բայց 52 տարեկանում այդքան ծեր ու կոտրուա՞ծ:

Կալանաւորների արձակումը երկար տեւեց: Կառավարութիւնը իրաւունք ունէր մանրամասն քննութեան ենթարկելու նրանց: Ո՛վ գիտէ՝ քանիսը դրանցից խորհրդային լրտեսներ էին, որ պատերազմական գերիների պիտակի տակ Իրան էին ուղարկուել: Որոշուել էր անհատ առ անհատ քննել բոլորին, ապա Թեհրան ուղարկել:

Երկար ժամանակ այլեւս հօրիցս լուր չստացանք, մինչեւ որ մի

1 Կարծում եմ, որ Ալեքսան Մարգսեանը մի քանի տող ծանօթագրութեան արժանի է այս տողատակում: Ալեքսանը էն խոնարհներից էր, Դաշնակցութեան նուիրուած ղեկավար, բայց նաեւ թատրոնի սիրահար: Իր երիտասարդ տարիներին Ղազուխում եւ Համադանում իր ազգային-կուսակցական գործունէութեան կողքին թատերական երեկոներ էր կազմակերպում: Իրանական այդ ոչ շատ կարեւոր քաղաքներում հայ մշակոյթ էր պահպանում ու նուիրեալ սերունդ դաստիարակում:

որ «Ալիք»ի խմբագրատանը, որ միաժամանակ Դաշնակցության ժողովատեղին եւ կենտրոնն էր, ընկ. Տիգրան Բաղդասարեանը ինձ իր գրասենեակը կանչեց ու ասաց. «Գաղտնի հանդիպման ենք գնում, հետս պիտի գաս»:<sup>2</sup> Ընկ. Տիգրան Բաղդասարեանը առասպելական դէմք էր մեզ՝ պատանիներին համար: 1915-ի Շատախի ինքնապաշտպանության ղեկավար եւ Անկախ Հայաստանի Հանրապետության բանակի գնդապետ, այնքան հերոսական դրուագներ գիտէինք իր մասին:

Ճանապարհին ընկերը ինձ ասաց, որ գնում ենք հորս տեսնելու: Գաղտնի ոստիկանությունից մի կարճ հանդիպման թոյլտրությունն էին ստացել, որ տեղի պիտի ունենար ընկ. Ասլան Ստեփանեանի բնակարանում: Ընկ. Ասլանը, դարձեալ մեր առասպելական դէմքերից, Անկախ Հայաստանի Հանրապետության օրերին ֆեդայի խմբապետ, Դաշնակցության կապն էր Գաղտնի ոստիկանության հետ եւ Իրանի իշխանության յարգանքը վայելող անձնաւորություն: Ուրեմն, յստակ էր, որ հորս Թեհրան էին ուղարկել, բայց դեռ ազատ չէին արձակել: Եւ ես մեր ընտանիքի առանձնաշնորհեալ անդամն էի, որ հորս պիտի հանդիպէի դեռ բանտից չազատուած:

Միրոս տրոփում էր անհանգիստ, վախից ու անձկությունից: Ինչ էր սպասում ինձ: Ներս մտանք: Մենեակում մի բարձրահասակ գեղեցկադէմ զինուորական ինձ ողջունեց անթերի հայերէնով: Յետոյ իմացայ, որ գաղտնի ոստիկանության պարսիկ սպայ էր եւ կառավարության կապը Դաշնակցության հետ: Մենեակի շուրջը նայեցի: Սոսկալի նիհար ու հիւժուած մի ծեր մարդ ոտքի ելաւ եւ, «Ուրիկ ջան» բացականչելով, դէպի ինձ եկաւ: Սա իմ հայրը

2 Այդ ժամանակ ես էլ արդէն Դաշնակցության շարքային անդամ էի եւ «Ալիք»ում յաճախ էի լինում: Չնայած տարիքս դեռ կանոնագրության սահմանած 18 տարեկանին չէր հասել, բայց հորս յիշատակը յարգելով, պատասխանատուները որպէս բացառություն ընդառաջել էին իմ բուռն ցանկության եւ ընդունել էին ինձ՝ երդումս առնել եւ Պատանեկան միությունից՝ կուսակցության շարքերն անցնել:

լինելու է, մտածեցի: Իմ մանկական յիշողութեան մէջ նա էր միայն, որ ինձ Ուրիկ էր կանչում: Մօտիկներիս համար, իհարկէ, Ուրի էի, ո՛չ Ռուբինա: Նրա կերպարանքի մէջ ճանաչեցի անսփոփոխ մնացած հաստ ապակիներով եւ կլոր շրջանակով ակնոցները եւ բարձր ու լայն ճակատը: Ես դրանք յիշում էի իր հին նկարներից: Անբացատրելի բոլակներ էին, երազներիս իրականացում, աղօթքներիս պատասխան՝ տասնեւմէկ տարի, ամէն գիշեր քնելուց առաջ, «Աստուած ջան, օգնիր պապիս՝ ազատուի ու տուն գայ»:

Այդ օրուայ խօսակցութիւնից բան չեմ յիշում: Ուղղակի ցնցուած էի, ամէն ինչ աղօտ ու շփոթ էր ինձ համար: Զգացումներիս յորձանքը խեղդում էր կոկորդս: Անտարակոյս, հայրս հարցրել էր մեր ընտանիքի մասին՝ քոյրս, մայրս, եւ յատուկ՝ «Փառիկը (մայրս) ինչպէ՛ս է»: Այս հարցումով, յետոյ իմացայ, հայրս անձկութեամբ սպասում էր լսել տասնեւմէկ տարի իրեն տանջող հարցումի պատասխանը՝ արդեօ՞ք Փառիկը սպասել էր իրեն, թէ՛ ամուսնացել, նոր ընտանիք էր կազմել: Հանդիպումը անտանելի կարճ էր: Ես դեռ ինքս ինձ չէի գտել, որպէսզի կարողանամ իրականութիւնը ըմբռնիս, երբ պարսիկ սպան ոտքի ելաւ: Դա նշան էր, որ տեսակցութիւնը աւարտուած է: Հօրս պիտի արգելանոց վերադարձնէր:

Այդ խորհրդաւոր եւ առանձնաշնորհեալ հանդիպումից յետոյ, մինչեւ իր ազատ արձակուելը, մի երկու անգամ էլ մայրս, քոյրս եւ ես առիթ ունեցանք իօրս հաղիպելու՝ կարճ բոլակներ, միշտ նոյն սպայի ներկայութեամբ եւ ընկ. Ասլանի տանը: Մեր ուրախութիւնը անսահման էր: Նոր ու փայլուն արշալոյս էր բացուում մեր կեանքում: Տեսնողը մեզ աչքալուսանք էր տալիս, ուրախ էին մեզ շրջապատող մեր բարեկամները, որոնց թիւը զգալիօրէն աճել էր յանկարծ: Բոլորը անհամբեր սպասում էին տեսնելու այն հերոս մարդուն, որ սիբիրական աքսորի գերեզմանից էր յառնել:

Ռուզանը յիշում է, երբ այդ օրերին մի անգամ դպրոցում չարաճճիօրէն աստիճանների բազրիքին հեծած ցած էր սահում, յանկարծ երեսաց դպրոցի վերակացու, յայտնի Խանում Ֆարազմանդը, միշտ քանոնը ձեռքին՝ չար աշակերտներին պատժելու համար: Ռուզանը արդէն հաշիւ էր անում, թէ քանոնի քանի հարուած է ստանալու ձեռքերին: Դա կապ ունէր անկարգութեան չափին: Սովորաբար քանոնի տափակ երեսով էր գալիս հարուածը, բայց եթէ յանցանքը ծանր էր, Խանում Ֆարազմանդը քանոնի սուր կողքով էր խփում, որ աւելի շատ ցաւացնի: Բայց դպրոցի կարգը պահող այս խստաբարոյ դաստիարակը, որի քանոնի հարուածները յայտնի են Հայոց Մարիամեան աղջկանց դպրոցի բովից անցած բոլոր աշակերտներին, այս անգամ միայն ժպտաց. «Ի՞նչ ասեմ: Ռուզան խանումը երկինքներում է: Հայրը տուն է գալիս»:

Շաբաթներ սպասումից յետոյ, վերջապէս 1954թ. Նոյեմբեր 17-ին հայրս ազատ արձակուեց ու տուն վերադարձաւ: Վերադարձաւ մեր ընտանիքի ջարդուած անուրջների փշուրները հաւաքելու, վերսկսելու կեանքը հէնց այն կէտից, որ կտրուել էր տասնեւեկ տարի առաջ: Բայց հնարաւոր էր: Ժամանակը իր գործն արել էր: Հիմա իր դէմ կանգնած էին խորթացած երեք անձանօթ անհատականութիւն:

Կինը՝ Փառիկը (Փառանձեմ), վաղուց յարմարուել էր իր անօգնական, միայնակ ծնողի կարգավիճակի հետ: Գիտէր՝ ինքն էր, ու միայն ինքը՝ ընտանիքի բոլոր կարիքների հայթայթողը, հոգսերի կրողը: «Զինգեր» (Singer) կարի մեքենայի ընկերութիւնում էր աշխատում: Տիրապետել էր մեքենայի գործածութեան բոլոր մանրամասնութիւններին ու բարդութիւններին եւ սովորեցնում էր մեքենան գնողներին եւ մեքենայի ասեղնագործութիւն սովորել ցանկացողներին: Բացի այդ, իր սովորած ասեղնագործութիւնը յաւելեալ եկամուտի աղբիւր էր դարձրել: Մեծ ու փոքր պատուէրներ



էր վերցնում, հագուստներ, սպիտակեղէն, սփռոցներ, երեխայի հագուստներ եւ հարսի օժիտ էր զարդարում: Աշխատում էր գիշերները, տանը՝ իր երկու դուստրերին իր կարողութիւններից վեր պայմաններում մեծացնելու համար: Մայրս սպանել էր իր մէջ բոլոր կանացի զգացումներն ու ցանկութիւնները: Մոռացել էր՝ ինչպէս տղամարդ սիրել: Տարիների ընթացքում շատերն էին մօտեցել, նոյնիսկ՝ հօրս ընկերներից, առաջարկել էին ամուսնանալ, միայնակ կին չմնալ, ազատուել ընտանիքի կարիքները մենակ հոգալու ծանր պարտականութիւնից: Մերժել էր: Շատերի համար կարող է անհաւատալի թուալ, բայց մայրս յոյսով էր ապրել, հաւատացել ու սպասել՝ «Բաղդիկը կ'ազատուի ու կը վերադառնայ»:

Իսկ քոյրս եւ ես, մենք կարողացել էինք հօրից զրկուած մեր կեանքը հունաւորել, մեր աշխարհը կառուցել: Այդ աշխարհը երբեք կատարեալ չէր, բաւարար չէր: Բայց անհայր մեծանալը մի տեսակ կենսաձեւ էր դարձել մեզ համար: Երեք միայնակ կին էինք այս աշխարհում, մայր՝ երկու աղջիկներով, եւ մեզ համար անսովոր էր տղամարդու ներկայութիւնը տան մէջ:

Երբ հայրս վերադարձաւ, մենք մի սենեակում էինք ապրում: Խոհանոց չունէինք: Մի անկիւնում նաւթ վառող պոխմուսն էր (ճաշ եփելու փոքրիկ վառարան), միւս կողմում՝ մէկ մահճակալ՝ մեր բոլորի անկողիները վրան դարսած, մէջտեղը՝ մի փոքրիկ սեղան, որի վրայ թէ՛ ճաշում էինք, թէ՛ դաս էինք սովորում եւ թէ՛ մօրս կարուձեւի պիտոյքներն ու ասեղնագործի մեքենան էր դրուած: Մեր սենեակը շէնքի երկրորդ յարկում էր: Շէնքը ունէր բազմաթիւ սենեակներ եւ բազմաթիւ վարձուորներ: Ներքեւի յարկում արտաքնոցն էր (աւելի շուտ՝ մի փոքրիկ խուց՝ յատակին մի ծակ), որից օգտւում էին բոլորը: Ի հարկէ, շէնքում բաղանիք չկար:

Հայրս եկել էր մեզ հետ ապրելու մի սենեակում, որ արդէն սոսկալի նեղ էր մեզ երեքիս համար:

Հայրս օտար էր յատկապէս քրոջս համար, որ հագիւ երեք ու կէս տարեկան էր, երբ հօրս առեւանգեցին: Ռուզանը յիշում է, մի քիչ խղճահարութեամբ, մի քիչ արգահատանքով, թէ ինչպէս Թեհրանի ցուրտ ձմռանը պապէն առաւօտեան բոլորիցս շուտ արթնանում էր, սենեակի վառարանը ամենաուժեղի վրայ վառում՝ որպէսզի երբ մենք արթնանանք, սենեակը տաք լինի: Նալթ վառող վառարանը կարմրում էր եւ արջի ոռնոց արձակում: Լեղապատառ վեր էինք թռնում: Մի օր Ռուզանը բարկացած բացականչեց, «Մամա՛, էս մարդուն ասա՛՝ էսպէս չանի»: Կուտակուած դիմի ու օտարումի խտացումն էր հնչում այդ բացականչութեան մէջ:

Մենք չորսս էլ նոր իրավիճակին յարմարուելու, հեռու անցեալի երջանիկ կեանքի գրաւականով նորը կառուցելու դժուարին ճամբայ ունէինք մեր առջեւ:

Ես 11-րդ դասարանում էի սովորում, եւ բաւական յաջող: Նոյնիսկ որպէս Ռեզա Շահ Զաբիր միջնակարգ դպրոցի լաւագոյն աշակերտ մասնակցել էի ամբողջ Իրանի լաւագոյն աշակերտների համար Սորայեա թագուհու հիւրընկալած ամառային ճամբարին: Առաջին անգամ էի տեսնում Կասպից ծովն ու ծովափնեայ գեղատեսիլ հանգստավայրերը: Այդ ամառ իրօք որ իւրայատուկ էր եղել ինձ համար. նախ՝ անակնկալ տեսակցութիւնը հօրս հետ, յետոյ՝ ամառային երազային արձակուրդ, որին հօրս առեւանգումից ի վեր երբեք չէի արժանացել: Եւ հիմա՝ սկիզբը նոր կեանքի, որ ինձանից յատուկ ջանք էր պահանջում: Կարծեմ՝ պատրաստ էի ընդունել ու վայելել հօրս ներկայութիւնը, պատսպարուել նրա հայրական հովանու տակ եւ անցած, կորած տարիների բացած պարապը ծածկել:

Մայրս իր ուժերի ներածից աւելին էր արել, որպէսզի մենք կրթութիւնից չզրկուենք: Բայց ես էլ աշխատում էի աւելի քան որեւէ աշակերտ: Պիտի միշտ դասարանի լաւագոյնը լինէի՝ որպէսզի դպրոցում անվճար սովորէի: Բայց վարժուել

էի: Մեծ եռանդով մասնակցում էի մեր դպրոցի մարզական ու արտադասարանային աշխատանքներին: Անդամ էի Հայոց դպրոցի Շրջանաւարտից միութեան:<sup>3</sup> Տնային գործերում մօրս օգնականն էի, բայց նաեւ՝ նրա սրտակիցը՝ երբ դժուարութիւնների առջեւ էր կանգնած, երբ հարցեր կային լուծուելիք: Կարծես լռելեան համաձայնուել էինք, որ Ռուզանին պիտի պաշտպանենք ու յատուկ ուշադրութիւն դարձնենք, շատ զգայուն էր, կարծես ինքն էր մեր ընտանիքի իրական որբը: Ես երեք տարով մեծ էի իրենից եւ պարտականութիւն էի զգում մօրս բեռը կիսելու, օգնելու քրոջս, որ կարելոյն չափ անփորձանք մեծանայ:

Այսպիսի պայմաններում, անակնկալի չեկայ, երբ մի օր, հօրս ազատ արձակուելու լուրը լսելուց առաջ, մեր մտերիմ խօսակցութիւններից մէկի ընթացքում մայրս առաջարկեց, որ համալսարանական կրթութեան մասին չմտածեմ եւ միջնակարգը աւարտելուց յետոյ աշխատանքի անցնեմ: Հասկանում էի, որ կքում է մեր ընտանիքի տնտեսական բեռնն տակ, առողջութիւնը այդքան էլ լաւ չէր: «Զինգեռ»ում երկար ժամեր էր աշխատում: Ճամբան էլ հեռու էր. պիտի քայլէր երկար՝ ձմռան ցրտին ու ամռան շոգին: Ես արդէն սկսել էի ինքս ինձ պատրաստել ու հաշտուել էի այն մտքի հետ, որ պէտք է հրաժարուեմ բարձրագոյն կրթութիւն ստանալու երազանքիցս եւ պարզ, գրասենեակային քարտուղար դառնամ: Նոյնիսկ, հօրս երբեմնի ընկերներից մէկը՝ մի հարուստ կապալառու, խոստացել էր մօրս, որ ինձ իր գրասենեակում աշխատանքի կ'ընդունի՝ երբ պատրաստ լինեմ:

Հօրս վերադարձով իմ ապագայ ծրագիրները գլխովին շրջուեցին: «Ես չեմ թոյլ տայ, որ Ուբիկս միջնակարգի

3 Սա էլ մի այլ բացառութիւն էր իմ նկատմամբ: Ես երբեք հայոց դպրոց չէի յաճախել, բայց Պրն. Երուսնդ Հայրապետեանը՝ յարգուած ուսուցիչ եւ Միութեան խորհրդատու, ընդունեց ինձ: Միութիւնը հիմնադրուել էր այն ժամանակ, երբ հայոց միջնակարգ դպրոց գոյութիւն չուներ, եւ մի տեսակ շարունակութիւն էր՝ շրջանաւարտների կապը հայ կեանքի ու մշակոյթի հետ պահպանելու համար:

վկայականով բաւարարուի: Պիտի շարունակի իր ուսումը՝ ինչ մասնագիտութեան մէջ որ ցանկանում է»: Մեծ էր ուրախութիւնս: Հայրս իսկապէս նոր կեանք էր բերել ինձ համար, ու ճանաչում էր իմ կարողականութիւնն ու ապագայի կարելիութիւնները:

Գոհ էր իմ միութենական գործունէութիւնից, բայց երկու տարով ինձանից մեծ ընկերոջս հետ իմ մտերմութիւնը նեղում էր նրան: Մենք ապագայի այնքան շատ երազներ էինք հիւսել միասին: Բայց հորս կամքն էր, պիտի խզէի յարաբերութիւններս՝ ինչքան էլ որ ցաւոտ էր դա: Որքան դժբախտ էի: Որքան գիշերներ եմ թաքուն լաց եղել, երբ լսել եմ նրա ձայնը՝ մեր սիրած կոմիտասեան եղանակը սուլելով մեր փողոցից անցնելիս: Պիտի խոստովանեմ, որ ես՝ սիրտը կոտրուած տհաս երեխայ, բարկացած էի հորս դէմ: Նոյնիսկ մտածում էի երանի չգար, ու այսքան երկար բացակայութիւնից յետոյ այսպէս չխառնուէր իմ կեանքին, չխորտակէր երազներս: Ինչն էր հորս վանել այդ ընկերոջիցս եւ ի՞նչ տեսաւ ապագայ ամուսնում՝ Նշանի մէջ, որին հանդիպեց մի քանի տարի յետոյ եւ համակրեց ու կապուեց նրան՝ նախքան այն, որ մեր մէջ լուրջ յարաբերութիւն զարգանայ: Ես այդքան հասուն չէի կարողանալ ըմբռնելու համար նրա սուր դատողութիւնն ու ապագայի կանխատեսութիւնը:

Ես Նշանին, ում Նուշիկ էինք ասում, ծանօթացայ Հայ երիտասարդական մշակութային միութիւնում (ՀԵՄՄ, որը յետագային պիտի անուանափոխուէր ու դառնար Հայ մշակութային Արարատ կազմակերպութիւն, ՀՄԱԿ):<sup>4</sup> Միութեան գրական խմբակում մենք գործակիցներ դարձանք ու աստիճանաբար մեր մէջ ծագեց ու զարգացաւ այն զգացումն ու ջերմութիւնը, որ մեզ միացրեց ամբողջ կեանքի համար:

4 Շատ մեծ եռանդով էի լծուած միութենական աշխատանքներին, որի արդիւնքում, չնայած շատ երիտասարդ տարիքիս, վարչութեան անդամ էի ընտրուել ու վարչութեան քարտուղարի հանգամանքն ունէի:

Հայրս ինձ համար նոր կեանք էր բերել, բայց մօրս պարագայում հարցերը այդքան էլ դիւրին չէին: Երանի կարողանայի վերլուծել այն հոգեբանական ներգործութիւնը, որ հօրս վերադարձը ունեցաւ նրա կեանքում: Բնականաբար, ես չէի կարող իմանալ, ինձ չէր էլ հետաքրքրում, թէ ինչ է անցնում-դառնում նրանց միջեւ ներանձնական զգացողութիւնների եւ ամուսնական յարաբերութիւնների տեսանկիւնից: Վերջապէս, երբ յետ եմ նայում, յիսուն-երկու եւ քառասուն-երկու տարեկան մեր ծնողները դեռ երիտասարդ էին: Բայց այն ժամանակ, նրանք մեզ համար արդէն ծեր էին համարւում, ուրեմն եւ բացառուած էր սիրոյ զգացումներ, սեռային յարաբերութիւն:

Մայրս հաւատարմօրէն սպասել էր իր ամուսնուն՝ իր մէջ խեղդելով կանացի որեւէ սեռային զգացում, մերժելով ամուսնական եւ սեռական յարաբերութեան հաճոյքն ու առթած խաղաղութիւնը: Յիշում եմ, երբ հայրս նոր էր ազատ արձակուել եւ տուն վերադարձել, Ալեքսան մօրեղբայրս եւ Մանուշ քեռակինս մեզ հրաւիրեցին մի քանի օր իրենց տանը անցկացնելու: Պարզ է, որ նրանց մի քանի սենեականոց յարկաբաժինը աւելի յարմար էր գոյգին՝ իրենց երբեմնի երջանկաւէտ կապը վերանորոգելու համար որոշ առանձնութիւն տալու տեսանկիւնից, քան՝ մեր մի սենեականոց տունը: Յիշում եմ, առաջին գիշերը, քեռակինը նրանց համար հիւրանոցում առանձին անկողին պատրաստեց եւ ծիծաղկոտ յարեց. «Տեսնենք, հօ չէ՞ք մոռացել ինչպէս սիրել իրարու»: Յիշում եմ նաեւ նոյն այդ օրերին, քեռակինի մի ականարկը մօրս. «Ի՞նչ է: Կորցրե՞լ ես կանացի զգացումներդ»:

Մայրս աշխատանքից հրաժարուեց: Աւելի հանգիստ կեանք ունէր հիմա՝ նուիրուելու համար իր ամուսնուն, օգնելու նրան վերականգնել առողջութիւնը, յաղթահարել դառն անցեալը, յարմարուել ներկայի միջավայրին ու իր տեղը գտնել համայնքի մէջ, նոյնիսկ իր նկատմամբ բարեացակամ, բայց եւ ոչ-բարեացակամ

ծանօթ, բարեկամ, ընկերների շրջանակում: Ալեքսան մօրեղբայրս այնքան գրոտ ու բարի էր մեր եւ յատկապէս ինչպէս: Նրա վաղաժամ մահով 1957-ին, հազիւ երեք տարի ինչպէս վերադարձից յետոյ, հայրս մի ճշմարիտ, մի հաւատարիմ ընկեր ու հովանաւոր կորցրեց:

Հայրս մենք դժուարութեամբ կարողացել էր երկրի կրթական նախարարութեան մօտ իր անցեալը վերականգնել եւ պետական միջնակարգ դպրոցներում քիմիայի ուսուցչի իր պաշտօնին վերադառնալ: Միեւնոյն ժամանակ պարբերաբար «Ալիք»ում քաղաքական վերլուծութիւններ էր հրատարակում: Հայրս թելադրում էր յօդուածը՝ սենեակում յետ ու առաջ ճեմելով: Մայրս գրի էր առնում: Այդպիսով՝ «Ալիք»ի գրաշարը փրկւում էր ինչպէս անընթեռնելի ձեռագրի վրայ չարչարուելուց: Բայց իրապէս հաճելի էր տեսնել այս երկուսի համատեղ աշխատանքը միասին. մէկը իր մտքերն էր թելադրում, միւսը համբերութեամբ գրում էր ու ջնջում ու վերջում մաքուր արտագրում: Միշտ յիշում եմ այդ տեսարանը: Մենք էլ, ի հարկէ, նոյն սենեակում մեր դասերն էինք սովորում:

Յիշում եմ նաեւ ծնողներիս սիրած թղթախաղը՝ Բլոթը, որ խաղում էին չորսով մօրեղբայր Ալեքսանի եւ Մանուշ քեռակինի հետ: Հետաքրքիր էր այդ խաղի երեկոները, չորսը՝ սենեակի միակ սեղանի վրայ, իսկ քոյրս, ես եւ մօրեղբորս երկու աղջիկները՝ յատակին՝ ծալապատիկ, քարդերը գետինը փռած, մենքերից սովորած նոյն խաղն էինք խաղում: Հաճելի ժամեր էին, երկու կանայք միշտ ընկերանում էին իրար հետ ու խարդախութիւններ անելով՝ միշտ յաղթում: Խեղճ ամուսինները չէին կարողանում խարդախութիւնը բռնել ու դա մենք հաճոյք էր պատճառում չարածճի կանանց: Հայրս երբեմն ասում էր մօրս. «Չես փոխուել: Դու այն ժամանակներն էլ նարդի խաղալիս խարդախութիւն էիր անում ու միշտ ինձ յաղթում»: Մի անգամ հայրս խոստովանեց,

որ արքայություն, երբ ծայր աստիճան յուսահատության մէջ էր յայտնւում, փորձում էր ինքն իրեն պատկերացնել տանը, կնոջ ու երեխաների հետ Թաւրիզում: Յիշում էր իր եւ Փառիկի նարդիի խաղերը, ուր միշտ Փառիկն էր յաղթում: Գիտէր, ու ներում էր խաբէութեամբ տարած յաղթանակը, որովհետեւ կինը այնքան մեծ հաճոյք էր ստանում դրանից: Բայց ինչպէ՞ս էր դա անում: Մտածում էր ու չէր գտնում:


Գիտեմ, որ հայրս փորձում էր սիրաշահել մամային: Անուշ խօսքերով ու գունաւոր մեխակների փնջերով, որ յաճախ գնում ու տուն էր բերում, փորձում էր կոտրել նրա կարծր վերաբերմունքը: Յաջողո՞ւմ էր արդեօք:

Հայրս մամային մի նոր կեանքի սկիզբն էր բերել, բայց գնահատւո՞ւմ էր դա:

Ամէն մէկը իր ձեռով փորձում էր ելք գտնել, ընտանեկան յարաբերութիւնները բնականոն հունի մէջ դնել:



Մաշհադ քաղաքի մօտ  
գտնուող յատուկ ճամբարում  
ուր արգելափակուած էին  
Խորհրդային Միութիւնից  
ստացուած պատերազմական  
գերիները



Բաղդիկ Մինասեանի ինքնութեան թուղթը՝ Իրանի գաղտնի ոստիկանութեան  
(Ռոքնէ Դօ) կողմից 12/4/1333 թուականին (յուլիս 3, 1954) ձեւակերպուած՝ երբ  
Խորհրդային Միութեան սահմանի վրայ Իրանի կառավարութիւնը ընդունել էր նրան:



## Գլուխ 2

# ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԾԵՐ. ԱՆՎԱԽՃԱՆ ԶՐԿԱՆՔ ԵՒ ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ

Պարտք եմ համարում այստեղ որոշ տեղեկություններ հայթայթել նախքան առեւանգում հորս կեանքի ու գործի մասին՝ նրա կերպարը ընթերցողի տեսադաշտում աւելի ամբողջական պատկերելու համար:

Բաղդասար (Բաղդիկ) Մինասեանը ծնուել էր 1902թ. դեկտեմբեր 10-ին, Իրանի Ազարբայջան (Ատրպատական) նահանգի գաւառներից՝ Ղարաղաղի Ողան գիւղում:<sup>1</sup>

---

<sup>1</sup> Սա Բաղդիկի ծննդեան տուեալներն են՝ ըստ նրա մասին պաշտօնական արձանագրությունների: Բայց, իմ կարծիքով, իրականությունը իր ապագայ կնոջ՝ Փառանձեմին գրած, փետրուար 7, 1933 թուակիր նամակում է, ուր նա իր ծննդեան թուականը նշում է 1903, դեկտեմբեր 10 եւ ծննդավայրը՝ Օղա եւ ոչ Ողան: Ի դէպ, այս նման անուններով երկու գիւղերն էլ Ղարաղաղի գիւղերից են: Ես հակուած եմ Օղան ընդունելու որպէս նրա ծննդավայր: Յետագայ պաշտօնական գրառումների, մասնաւորապէս ԿաԳէԲԷյի տեղեկագրի մէջ արձանագրուած «Վողանը», որ կարող է Արեւելեանական ուղղագրութեամբ լինել՝ Ողան իմաստով, դիրտութեամբ կարելի է Օղայի հետ շփոթուած համարել: Ի միջի այլոց, ըստ Յովհաննէս Յովսէփեանի, «Ղարաղաղի հայերը» երկիստորր ուսումնասիրութեան (Հովհաննէս Հովսէփյան, «Ղարաղաղի հայերը» ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2009, հատոր 1, Ազգագրություն, էջ 106-112), Օղա գիւղը հին դարերում օղականէ բերդաքաղաք է եղել՝ քարով եւ կրով շինուած պարիսպներով եւ այստեղից էլ՝ անունը: Օղան գտնուել է «մի գեղեցիկ լեռնալանջի արեւաշատ ու հարթ տարածքի վրայ» (էջ 106): Ունեցել է իր անուանի մարդիկ՝ մելիք Օհանջան, մելիք Յովսէփ, որոնք եղել են միշտ գինուած, քաջակորով գիւղը պաշտպանող: Բայց 1915-16 թուականներին այդ մելիքները չկային այլեւս, իսկ Ղարաղաղի թուրք խաները, հարեւան օսմանցի թուրքերի նախնիներից ոգեւորուած, աւելի մեծ յաճախանքով սկսեցին յարձակուել

Ազարբայջանը, հին հռոմեական Աթրոփաթենը, կամ հայկական Ատրպատականն է, որը պատմականօրէն եւ աշխարհագրական դիրքով համապատասխանում է Մեծ Հայքի թագաւորութեան Վասպուրական նահանգի Պարսպատունիք, կամ Պատսպատունիք գաւառի լեռնային շրջանին:

387 թուականից ի վեր, երբ Հայաստանը բաժանուեց Հռոմի եւ պարսիկ Սասանեանների միջեւ, Պարսպատունիքը իր շատ խիտ անտառների բերումով «Սիահ Քուհ» կոչուեց, որ պարսկերէնով «սեւ սար» է նշանակում: Թուրք ցեղերի արշաւանքներից ու այդ տեղանքի գրաւումից յետոյ (11-րդ դար), այդ շրջանը թարգմանաբար Ղարա Դաղ կոչուեց: 18-րդ դարում Ղարա Դաղը (Ղարադաղ) դարձաւ պարսկական Ազարբայջանի խանութիւններից մէկը, որ Արաքսի հարաւում էր տարածւում եւ որպէս կենտրոն ունէր Ահաբը (հին հայկական Դրունք):

Ղարադաղը այսօրուայ Արասբարանն է, որ գտնւում է Սիւնիքի հարաւ-արեւելքում եւ Ղարաբաղի ուղիղ հարաւում: Ինչպէս պատմաբան եւ ազգագրագէտ Յովհաննէս Յովսէփեանն է նկարագրում, աշխարհագրական իւրայատկութիւնների եւ

---

ու կողոպտել հայկական գիւղերը: 1919-ին Օղա գիւղի բնակչութիւնը գաղթեց, իսկ գիւղը դարձաւ թրքաբնակ՝ վերանուանուելով Ալլի Բուլաղ (50 աղբիւր), գիւղի տարածքում գտնուլ 50 աղբիւրների առիթով:

Ղարադաղի բնակչութեան մեծ մասը 1946-ին ներգաղթել է Խորհրդային Հայաստան, իսկ մնացեալը 1960-ականներին Թարիզ կամ Թեհրան է փոխադրուել:

Ըստ Յովհաննէս Յովսէփեանի աշխատութիւնում մէջբերուած՝ Ատրպատականի Հայոց Առաքելական Եկեղեցւոյ Առաջնորդարանում պահուած ցանկերի՝ մինչեւ 1946 թուականը Ղարադաղում գործել է 15-ից աւելի եկեղեցի: Այս ցանկում Օղայի եկեղեցու անունը չկայ: Բայց քանի որ անգլերէն բնագրում Ողանի վրայ եւմ կենտրոնացած եղել, մի քանի տեղեկութիւն այդ գիւղի մասին:

Ողանը ունեցել է մէկ եկեղեցի՝ Սուրբ Մարտիրոս անուամբ, որ կառուցուել է նոր Ողանում: Հին դարերից ի վեր հայաբնակ Ողանի բնակչութիւնը, ըստ նոյն աղբիւրի, 1840 թուին ամբողջովին գաղթել է Ղարաբաղ: Քսան տարի յետոյ վերադարձել ու հագիւ է գտել գիւղի տեղը, որ ծածկուած էր առաջացած անտառով եւ շրջապատի թրքաբնակ գիւղերի շարունակական վտանգի տակ էր գտնւում: Որոշում է նոր գիւղ կառուցել այդտեղից 5 կիլոմետր արեւմուտք՝ նոյն լեռան արեւահայեաց մի բացատում (էջ 113):

կլիմայի տեսանկյունից, Ղարաբաղն ու Ղարադաղը նման են մի հսկայ խնձորի՝ որ Արաքս գետը երկու մասի է բաժանել: Երկու հատորում տեղ գտած՝ Յովսէփեանի ազգագրական եւ ժողովրդական բանահիւսութեան ուսումնասիրութիւնը եզակի հրատարակութիւն է եւ հազուագիւտ աղբիւր՝ Ղարադաղի մասին ցայժմ հանդիպած ուսումնասիրութիւններում:

1920-ական թուականներին Ղարադաղում գոյութիւն են ունեցել շուրջ 400 գիւղեր, որոնցից 28-ը հայկական՝ շուրջ 3000 բնակչութեամբ: 1600 տարի իրենց ազգութեան, լեզուին, մշակոյթին եւ ասանդութիւններին, այսինքն՝ ինքնութեանը կառչած այս հայերը, սակայն, 1940-ականներին Խորհրդային Հայաստանի տարածած ներգաղթի պրոպականդից զայթակղուած, իրենց տուն, տեղ, ունեցուածք ծախեցին ու Թեհրան եկան այն յոյսով, որ շուտով իրենց թղթերը պիտի պատրաստուեն եւ հայրենիք պիտի ներգաղթեն: Շատերը յաջողեցին ու Խորհրդային Հայաստան անցան: Բայց ներգաղթը յանկարծ կանգ առաւ, եւ շատերը Թեհրանի արուարձաններում աղքատ ու անօգնական ամենօրեայ գոյապայքարում իրենց կեանքը մաշեցին ու փորձեցին քաղաքի կեանքի հետ համակերպուել: Քչերը մնացին լքուած գիւղերում, ու փորձեցին բնականոն կեանք շարունակել, բայց հայկական գիւղերի լքուած տներում կայք հաստատած թուրքերի ոտնձգութիւններին ու պատճառած տնտեսական ու կրօնական ճնշումներին չդիմանալով, նրանք էլ թողեցին գիւղը եւ դէպի քաղաք՝ Թաւրիզ կամ Թեհրան գաղթեցին: Այսօր կարելի է ասել, որ Ղարադաղում հայ չի մնացել, բայց երբ հայրս էր աշխարհ գալիս, Ղարադաղը որոշակի հայկական դիմագիծ ունէր:<sup>2</sup>

2 Այստեղ, փակագծի մէջ աւելացնեմ, որ Ղարադաղցիները բոլորին յայտնի մի յատկանիշ ունեն՝ լաւ ներկարարներ են (նկարիչ չէ, ներկարար): Ու ես էլ իմ մէջ ունեմ այդ գիծը՝ պատ ներկել ու որմնանկարներով զարդարել: Ուրեմն, հէնց որ ներկի վրձինը ձեռք առնեմ եւ գոյնզգոյն ներկեր շուրջս շարեմ, ինձ ասում են. «Միջիդ դարադաղցին գլուխ է բարձրացրել»: Հետաքրքիր է, որ Յովհաննէս

Բաղդասարի հայրը՝ Խաչատուրը, շուտ մահացաւ եւ պարտատէրերը տունը մաքրեցին, պարտքի դիմաց գրաւեցին ամէն ինչ՝ Բաղդասարի մօրը՝ Եղիսապետին, ու իր չորս երեխաներին ծայր աստիճան աղքատութեան մէջ թողնելով:<sup>3</sup> Խեղճ կինը ուրիշների լուացքն անելով էր երեխաներին պահում: Դեռ ցաւը քիչ էր, մի օր էլ պարտատէրերը եկան ու երեխաներից մեծին՝ եօթ-ութ տարեկան Բաղդասարին, պարտքի դիմաց տարան աշխատեցնելու: Բարեբախտաբար, քիչ անց ընտանիքի ազգականներից՝ մեծահարուստ Յովհաննէս Տէր-Յակոբեանը<sup>4</sup> ստրկութեան ճանկն ընկած փոքրիկ Բաղդասարին ազատեց այդ տնից ու իր հետ Թաւրիզ տարաւ, ուր պայմանները աւելի բարենպաստ էին խեղճ որբուկի համար: Բաղդասարը տան մէջ մանր գործեր էր անում եւ տանտիրոջ խանութում յանձնարարութիւններ կատարում: «Ուրիշների խոհանոցն էր իմ արժանի վայրը», իր ապագայ կնոջ՝ Փառնանձեմին յղած փետրուար 7, 1933 թուակիր նամակում գրում է Բաղդիկը. «Փոքր հասակից չեմ ունեցել մայրական գուրգուրանք»: Նրա յետագայ դպրոցական եւ համալսարանական կեանքն էլ նոյնքան փոթորկոտ ու չարչարալից է եղել:<sup>5</sup>

---

Յովսէփեանը այս յատկանիշի սկզբնաղբիւրը տեսնում է Ղարաղաղի հարուստ բուսականութեան մէջ, գունագեղ բոյսեր, ծաղիկներ ու արմատներ, որոնցից տեղացիները սովորել էին բնական գոյներ ստանալ:

- 3 Յովսէփեանը նշում է, որ 1900-1921 թուականներին, տեղի թուրք խաները սարսափի տակ էին պահում Ղարաղաղի գիւղերը, թալանում, սպանում եւ գրաւում էին կալուածները (էջ 113): Անհաւանական չէ, որ Խաչատուրի ընտանիքն էլ այս դահիճների չարագործութիւններին ենթարկուած լինի:
- 4 «Ղարաղաղի հայերը» աշխատութեան մէջ, Յովսէփեանը գրում է 1898-ին Խանազահ գիւղում կառուցուած Ղարաղաղի միակ օրինական դպրոցի մասին, որ բարերար գոյգի՝ Մնացական եւ Ազիզ Տէր-Յակոբեանների անունով Ազիզեան-Մնացականեան դպրոց էր կոչուել: Ընթերցողին ուշադրութիւնն են հրաւիրում երկու կէտի վրայ. նախ՝ հակառակ ընկալեալ սովորութեան, դպրոցի անուանումի մէջ առաջ կնոջ՝ Ազիզի անունն է յիշուած. երկրորդ, արդեօք Բաղդիկին ստրկութիւնից փրկող Յովհաննէս Տէր-Յակոբեանը նոյն ընտանիքից էր սերում: Մեծ հաւանականութեամբ:
- 5 Բաղդիկից մնացել են որոշ թուով նամակներ՝ Փառիկին գրուած, Թեհրանից

Ինչպես Թումանյանի «Գիքոր»-ում, Տեր-Յակոբեան ընտանիքի դուստրը՝ Մարոն, որին Բաղդիկը Մարո քոյրիկ էր կոչում, նրա մէջ նկատում է գրել-կարդալու արտակարգ սէրը եւ օգնում է նրան: Զանազան նիւթեր պարունակող գրքեր է տրամադրում եւ օգնում է կարդալ ու հասկանալ: Եւ այդպէս, ինքնաշխատութեամբ, յարատեւ ճիգ ու ջանքով, առանց դպրոց յաճախելու, Բաղդիկը պատրաստում եւ յաջողութեամբ անց է կացնում տարրական դպրոցի աւարտական քննութիւնները եւ միջնակարգ դպրոց ընդունում:

Իրանահայ բանաստեղծուհի Արշին, Բաղդիկ Մինասեանի յիշատակին նուիրուած «Ալիք»-ի յատուկ համարում այսպէս է նկարագրում Բաղդիկին՝ երբ նա առաջին անգամ, որպէս նոր աշակերտ, մի ուսուցչի ընկերակցութեամբ մուտք է գործում դասարան.

Միջահասակից բարձր, ջղուտ մարմին, խոր ու զննալից աչքեր, ուսերի վրայ լայնաճակատ մի փոքրիկ գլուխ, որի պարունակութեան մէջ նստած էր հայ ժողովրդի ազատատենչութիւնը, հայրենասիրութիւնը:

Մեր Բաղդիկն էր, որ Թեմական Միջնակարգ չորրորդ դասարանի դասընթացներում իր ոյժը եւ ունակութիւնները, իր ճշմարտութիւնն ու նուիրականութիւնը հանդէս բերեց խառնելու մեզ՝ իր նոր դասընկերների հոգուն...<sup>6</sup>

---

Ղազուին եւ յետոյ Համադան ուղարկուած: Նամակները սկսում են անսովոր դարձուածքներով ու արտացոլում են նրա անսահման սէրն ու կարօտը եւ իր սէրը անպատասխան չթողնելու ու փոխադարձ սիրոյ թախանձանքը: Այսպէս, «Միրելի Փառանձեմ, Միրելիդ իմ, անփոխարինելիդ իմ», «Իմ թանկագին, իմ անուշիկ Փառանձեմ, իմ ամենասիրեցեալ», «Իմ սիրուն, իմ կեանք Փառանձեմ», «Իմ կեանքի արեւ Փառանձեմ», «Իմ մտքերի, իմ յոյզերի, իմ կամքի էութիւն Փառանձեմ», «Իմ հոգու աստղագարդ երկինք Փառանձեմ», «Հրաշափառ տիեզերքդ իմ Փառանձեմ», «Իմ կեանքի դիցուհի Փառանձեմ»...:

6 Արշի, «Մեր Բաղդիկը», «Ալիք» օրաթերթ, 21 օգոստոս, 1976, էջ 4, 6:

Բաղդասար Մինասեանը Թաւրիզի Թեմական Կենտրոնական միջնակարգ դպրոց էր ընդունուել 1919-ին եւ բախտ էր ունեցել աշակերտելու Կարապետ Պիոնեանի եւ Հրաչեայ Աճառեանի պէս հայ կրթական ասպարէզում իրենց մեծ աւանդը թողած մանկավարժներին: Մեծ է եղել նրանց ազդեցութիւնը Բաղդիկի վրայ:<sup>7</sup>

7 Թաւրիզի Թեմական Կենտրոնական միջնակարգ դպրոցը հիմնադրուել է 1909 թուին: Եղել է ժամանակի կրթական առաջադէմ կենտրոններից՝ երկսեռ աշակերտութեամբ, Կովկասի հայկական կրթօճախներին հաւասար դասաւարդով եւ մանկավարժական կարող կազմով: Դպրոցը սպասարկում էր ամբողջ Ատրպատականի հայութեանը եւ տեղակայուել էր Թաւրիզի երկու թաղամասերի՝ Լիլաւայի եւ Ղալայի միջեւ: Բացատրութեան կարգով՝ Լիլաւա, որ աղաւաղուած Լէյլիաբադն է, մի հին պատմութիւն ունի: Ասում են թուրք Լէյլին եւ մի հայ տղայ սիրահարուում են ու կապում իրար: Թուրքերը կատաղած հայածում են աղջկան, որ սպանեն: Աղջիկը փախչում է հայերի թաղ եւ պատսպարում: Յետագայում թաղը նրա անունով Լէյլիաբադ է կոչում, այսինքն՝ Լէյլիի շէնացրած: Իսկ Ղալա թուրքերէնով նշանակում է «բերդ» եւ հայկական անունով բերդաթաղ է եղել: Հնում Ղալայում բնակւում էին հարուստները, իսկ համեստ դասակարգը Լիլաւայում էր:

1936-ին փակւում է Թաւրիզի Թեմական Կենտրոնական միջնակարգ դպրոցը: Ռեզա Շահի հրամանով փակւում են Իրանի բոլոր հայկական կրթօջախներն ու միութիւնները, արգելւում է որեւէ ազգային ձեռնարկ եւ միջոցառում: Դա արդիւնք էր Ռեզա Շահի Իրանացւան քաղաքականութեան, այն է՝ օտարների ազդեցութիւնից ազատել Իրանը, չէզոքացնել փոքրամասնութիւնների ազգային եւ մշակութային իւրայատկութիւնները եւ Իրանը դարձնել մէկ լեզու եւ մէկ մշակոյթ ունեցող երկիր: Ընդունուած իրողութիւն է, որ երբ Ռեզա Շահը Պարսկաստանի ղեկը ձեռք առաւ, իր հեռանկարային նպատակն էր Թուրքիայի օրինակով, երկրում իրանական ազգային ինքնութիւն դարբնել: Այս քաղաքականութեան մէջ անժխտելի է Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի ազդեցութիւնը, որ աւելի շեշտաւորուեց Ռեզա Շահի 1934-ին Թուրքիա կատարած ճամբորդութեան արդիւնքում (դա, ի դէպ, արտասահման կատարած նրա միակ ճամբորդութիւնն էր): از مدرسه هایکازیان تا دبیرستانهای پسرانه کوشش داویدیان و دخترانه کوشش مریم (Հայկազեան դպրոցից մինչեւ Քուշէշ տղայոց եւ Մարիամեան աղջկանց միջնակարգ դպրոցներ) յօդուածում Արա Աւանեսեանը հայոց դպրոցների վրայ կատարած Ռեզա Շահի բռնաճնշումները անըմբռնելի եւ անտրամաբանական է համարում եւ միանում է այն կարծիքին, որ Ռեզա Շահը դա կատարել է Աթաթուրքի խորհրդով: Ռեզա Շահը իր այս խստաբարոյ կեցուածքով չինայեց անգամ Մատթէոս Խան Մելիքեանին, որ պարսկերէն լեզուի առաջին դասագրքերն էր կազմել: Զերբակալել տուեց ու բանտարկեց Հայկազեան միջնակարգ դպրոցի տեսուչ, պարսիկ կրթական համակարգում իր մեծ ներդրումը ունեցած այս հային (յօդուածը տե՛ս 66 پيمان شماره 49 «Պայման» թիւ 66, Թեհրան, 1392 (2014)):

Հայոց դպրոցների փակման գործընթացը 1934-ից սկսեց՝ Կրթութեան նախարարութեան կողմից ներկայացուած անգործադրելի պահանջներով: Այս մանրամասնութիւնների, Ռեզա Շահի անունից նախարարութեան յղած փակման հրահանգը փոխանցող հեռագիրը տե՛ս «Պատմութիւն Ատրպատականի Հայոց

Բաղդիկի կեանքի այս հատուածը համընկնում է հայ ժողովրդի պատմութեան ամենից փոթորկալից ժամանակաշրջանի հետ: Իրադարձութիւններ, որոնք իրենց անդրադարձը ունեցան ժամանակակից իւրաքանչիւր հայի կեանքում:

1915-ի Յեղասպանութեան ողբերգական մնացորդացը ամենաթշուառ պայմաններում Ատրպատականի վրայով դէպի Կովկաս էր գաղթում: Թաւրիզը մի կանգառ էր, շատերի համար՝ մի անարշալոյս վերջին հանգրուան: Պատմում են, թէ ինչ ողորմելի վիճակ էր տիրում, թէ ինչպէս Ատրպատականի Թեմի առաջնորդ Ներսես Արք. Մելիք-Թանգեանը օգնութիւն էր խնդրում այդ դժբախտների կեանքի պայմանները մի քիչ բարելաւելու համար: Թաւրիզը ճգնաժամ էր ապրում: Պատանի Բաղդիկը ականատես էր այդ աղէտին:

Ղարաղաղի թուրք խաները, հայկական գիւղերի վրայ անդադար յարձակուելով, կողոպուտով ու սպանութիւններով շարունակական սարսափի տակ էին պահում հայ գիւղացուն եւ պատճառ դառնում, որ շատերը թողնեն տուն ու տեղ ու աւելի ապահով վայրեր գաղթեն: Եւ դա էլ հէնց նրանց նպատակն էր՝ հայերին հանել ու նրանց բնակավայրերում տեղաւորուել (որ մասամբ յաջողեցին):<sup>8</sup> 1919-ին, Ղարաղաղի այս հալածանքների գագաթնակէտին, կալուածք եւ ունեցուածք թողած մեծ թուով

Թեմական Դպրոցի, 1909-1936», Թեհրան, տպարան «Ալիք», 1981, էջ 187-193:

8 «Ղարաղաղի հայերը» ուսումնասիրութեան մէջ, Յովսէփեանը պատմում է արիւնարբու Հաջի խանի մասին, որ որոշել էր Ղարաղաղում հայ չթողնել: Պատմութիւնը Ողանի վերաբերեալ է, բայց հետաքրքիր, քանի որ կարող է տարածուել միւս գիւղերի վրայ եւս: Ուրեմն, Ողանի վրայ յարձակուելիս նա դէմ է գալիս մեծահամբաւ Թումանեաններին (Ողանը նրանց պատկանող հայաբնակ 19 գիւղերից էր): Հաջի խանը համարձակուել էր նենգաբար թունաւորել Թումանեանների ներկայացուցիչ Բաղդասար բեկին: Հաջի խանին վախեցնելու համար Ողանի երիտասարդներին ցարական բանակի զինուորական համազգեստներ են հագցնում ու լուր տարածում, որ ցարական մի վաշտ եկել է Հաջի խանից վրէժ լուծելու: «Ռուս զինուորները» կրակի են տալիս Հաջի խանի կալուածքը եւ նրա ամբողջ ընտանիքը հրոյ ճարակ է դառնում. փրկւում է միայն աւագ զաւակը: Դա 1916-ին էր:

գիւղացիներ գաղթում են Թաւրիզ, շատերը անգործ, անօգնական, օրուայ հացի կարօտ: Այդ գաղթականները գալիս էին աւելանալու Յեղասպանութիւնը վերապրած, ջարդ ու կոտորածից ազատուած ու Թաւրիզ ապաստանած շուրջ 25 հազար հայ գաղթականներին:

Դրութիւնը աւելի վատթարացաւ, երբ 1917-ին Յարական կայսրութեան փլուզումից յետոյ ժուս զօրքը լքեց ճակատը: Թուրք բանակը, առիթից օգտուելով, շարժուեց դէպի Ատրպատական եւ գրաւեց Թաւրիզը: Այս անգամ Ատրպատականի հայութիւնն էր թիրախը: Հալածանք ու կոտորած: Հայաջնջումը ընթացքի մէջ էր, որ տեսեց մինչեւ 1918, Ա. աշխարհամարտի աւարտը:

Պատանի Բաղդիկը ականատես էր այդ աղէտին:

Պատմական Հայաստանից մնացած մի կտոր հողի վրայ, արեւելեան ծայրամասում, Հայաստանը իր անկախութիւնը յայտարարեց 1918 թուի մայիս 28-ին: Յաջորդ տարին, երբ Բաղդիկը միջնակարգ դպրոցի աշակերտ էր արդէն, հայութիւնը ամենուրեք տեղեակ էր, թէ ինչպէս նորանկախ Հայաստանը իր ղեկավարութեան գոհաբերութիւնների գնով փորձում է պատերազմի մոխիրներից յառնել, Յեղասպանութեան հետեւանքները թօթափել, եւ դա՝ ամենաանպատ պայմաններում: Երկրում տնտեսական ճգնաժամ էր, Յեղասպանութիւնը վերապրած, Արեւմտեան Հայաստանից դուրս վճռուած բազմահազար գաղթականներ, անտուն, անգործ, սովեալ ու համաճարակ հիւանդութիւններով բռնուած Երեւանի ու Էջմիածնի փողոցներում իրենց ողբալի գոյութիւնն էին քարշ տալիս: Ու դեռ աւելին, այս տագնապալի երեւոյթը շահագործելով, մի խումբ հայ բոլշեւիկներ դաւաճան ու կործանարար իրենց գործունէութեամբ փորձում էին խոչընդոտել կառավարութեան ջանքերը, տապալել անկախութիւնը, հողային զիջումներով Թուրքիային ու Ադրբեջանին սիրաշահել ու կոտորակուած Հայաստանը Կարմիր Ռուսաստանի գիրկը նետել:



Սիմոն Վրացեանի բնութագրումով, բոլշեիկեան մուրճի եւ թրքական սալի արանքը բռնուած, Հայաստանը պիտի պաշտպանուէր՝ մի կողմից կանխելու քեմալական զօրքերի առաջխաղացքը արեւմուտքից, ու միւս կողմից՝ դէմ դնելու հայ բոլշեիկների սադրանքներին ու խորհրդայնացում սպառնացող, Կարմիր Ադրբեջանում պատրաստ սպասող Կարմիր Բանակին: Անկախ Հայաստանի այս երկուսուկէս տարիները ոգեւորութեան, յոյսի ու դառն յուսալքումի աղբիւր էին հայ ժողովրդի համար համայն աշխարհում, բայց մանաւանդ՝ դրկից Ատրպատականում: Բաղդիկը վստահաբար ապրել էր այդ ոգեւորութիւնը եւ ցաւը այդ անփառունակ վախճանի. ու վստահաբար աւելի խորն էր զգացել այդ բոլորը. չէ՞ որ արդէն Դաշնակցական աշակերտական միութեան անդամ էր եւ յետոյ էլ՝ ղեկավար:

Հայաստանի խորհրդայնացումը, 1920, դեկտեմբեր 2, ծանր հարուած էր: Փետրուարեան ապստամբութիւնը, 1921, փետրուար 16-18, Դաշնակցութեան առաջնորդութեամբ, ողբերգական վախճան ունեցաւ: Բոլշեիկները պարտութեան մատնեցին Գարեգին Նժդեհին ու ճգմեցին Սիւնիքի ապստամբութիւնը: Դա հայու վերջին ճիգն էր, ազատագրական պայքարի վերջին փուլը, որ ձախողութեամբ ւարտուեց ու դրանով դրուեց վերջը անկախ Հայաստան ունենալու հայ ժողովրդի տենչանքին: Այս գահավէժ եղելութիւնների արդիւնքում, մի մեծ խումբ ղեկավարներ, մտաւորականներ, ու նրանց ետեւից շփոթ ու անյոյս, բոլշեիկմի վախից ճողոպրած մի հսկայ բազմութիւն Իրանի Ատրպատական նահանգում յայտնուեցին եւ մեծ մասամբ Թաւրիզ հաստատուեցին: Մտաւորականների ու քաղաքական ղեկավարների կեցութիւնը, թէկուզ ժամանակաւոր, իր բարենպաստ զգալի ազդեցութիւնն ունեցաւ Ատրպատականի հայ մշակութային կեանքի եւ շրջանի Դաշնակցութեան կառոյցների վրայ:

Բաղդիկը ինչպէ՞ս կարողացաւ այս վտանգաւոր ու չարաշուք

տարիների փոթորկոտ ծովում իր խախուտ կեանքի նաւը դէպի խաղաղ ափեր թիավարել: Դա հեռու անցեալ էր, որի մասին հայրս երբեք չխօսեց: Բայց կասկածից դուրս է, որ անկախ Հայաստանի ծնունդը եւ նրա ներշնչած ազատութեան գաղափարախօսութիւնը հօրս ապագայի վրայ մեծ ազդեցութիւն ունեցաւ:

Դաշնակցութիւնը աքսորուած էր, վտարուած թէ՛ Արեւմտեան եւ թէ՛ Արեւելեան Հայաստանից: Բայց պարտուած չէր եւ ոչ էլ անճարակ ու անգործուն: Հսկայ կարիք կար Յեղասպանութիւնից ու Հայաստանի խորհրդայնացումից յետոյ աշխարհի չորս ծագերում ցրուած, ամբոյս դարձած հայ զանգուածներին վերակազմակերպելու, նրանց հոգիներում վառ պահելու ազգային գաղափարախօսութիւնը, սերունդներին ներարկելու ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի տենչը՝ մինչեւ որ մի օր...

Դաշնակցութեան ծրագիրներից մէկը ապագայ ղեկավարներ եւ կուսակցական գործիչներ պատրաստելն էր: Այդ ճամբով կարելի կը լինէր հայ ազատագրական պայքարի ջախը նոր սերնդին փոխանցել: Ուրեմն, ընտրուեց ուսումնական մեծ յաջողութիւններ արձանագրած երիտասարդների մի խումբ: Այդ երիտասարդները, եւրոպական լաւագոյն համալսարաններում բարձրագոյն ուսում ստանալով, պիտի վերադառնային եւ հայ ժողովրդի ծառայութեան լծուէին: Բաղդասար Մինասեանը մէկն էր այդ երիտասարդներից: Նա կարողացել էր միջնակարգ դպրոցը աւարտել երեք տարում եւ դասարանի լաւագոյն աշակերտը հանդիսանալ: Նա մեծ կարողութիւն էր ցուցաբերել Դաշնակցական աշակերտական միութեան ղեկավարի իր դերում: Եւ այսպէս, *Universitatis Carolinae Pragensis* ընդունուելով, Բաղդիկը իր ճամբան բացեց դէպի սիրտը եւրոպական լուսաւորութեան:<sup>9</sup>

9 *Universitatis Carolinae Pragensis*-ը Եւրոպայի հնագոյն եւ բարձր հեղինակութիւն ունեցող համալսարաններից է: Հիմնադրուել է 1348 թուին: Համալսարանի շրջանաւարտներից են մեծ գիտնականներ եւ Նոբելեան մրցանակակիրներ:

Բաղդիկի ընտրած ճիւղը բնական գիտութիւններն էր (natural sciences), այսօրուայ իմաստով՝ բնագիտութիւն (biology) եւ քիմիա (chemistry), միաժամանակ նաեւ՝ մանկավարժութիւն (pedagogy): Բարձր մտաւոր կարողութիւնը նրան դէպի գիտութիւններ էր մղել, իսկ մանկավարժութիւնը արդէն գալիս էր ուսուցչական ասպարէզին նուիրուելու նրա որոշումից, հաւանաբար դպրոցական օրերից՝ Կարապետ Պիոնեանի պէս կարող ուսուցից եւ տեսից ներշնչուած: Միշտ հիացմունքով էր խօսում նրա մասին: Երբ նիւթը դասաւանդում է դրան քաջածանօթ եւ հմուտ մանկավարժը, բնականօրէն աշակերտը այդ նիւթի սիրով է ներշնչում եւ երբեմն էլ այդ ներշնչանքով է ձեւաւորում նրա ապագայ մասնագիտութեան ընտրութիւնը:

Շատ քիչ բան գիտեմ Պրազայում անցկացրած հինգ-վեց տարիների հօրս կեանքի մասին: Միայն գիտեմ, որ Պրազայում ուսանող հայ երիտասարդների փոքրաթիւ խումբը շարունակեց իր գործունէութիւնը Հ Յ Դաշնակցութեան Պրազայի ուսանողական միութեան մէջ եւ մշակութային ու քաղաքական ձեռնարկներ կազմակերպեց: Հետաքրքիր գուգադիպութեամբ, ձեռքս անցաւ 1927 թուին Պրազայի դաշնակցական ուսանողների միութեան կողմից հրատարակուած եւ Փետրուարեան Ապստամբութեան վեցամեակին նուիրուած գրքոյկը:<sup>10</sup>

Գրքոյկի նախաբանում («Երկու խօսք») ներկայացուած է այս հրատարակութեան նպատակը, այն է՝

Փրակայի դաշնակցական ուսանողութեան անկեղծ ու սրտաբուխ յարգանքը արտայայտել Փետրուարեան Ապստամբութիւնը դարբնող հայ աշխատաւոր ժողովրդին եւ ազատատենչ երիտասարդութեան եւ անգամ մը եւս ըսել, թէ Փետրուարեան Ապստամբութեան յայտարարած գաղափարներու - Ազատ,

<sup>10</sup> Գրքոյկը ինձ պահ էր տուել Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի ժամանակի տնօրէն Հայկ Դէմոյեանը:

Անկախ, Ամբողջական ու ժողովրդավար Հայաստանի -  
իրականացման համար աշխատելու եւ պայքարելու միշտ  
պատրաստ է դաշնակցական ուսանողությունը:

Հ. Յ. Դաշնակցության Փրակայի Ուսանող. Միության  
Վարչություն

15 Փետրուար 1927

Փրակա<sup>11</sup>

Ուսանողները դժուարին պայմաններում էին ապրում:  
Ստացած կրթաթոշակը շատ չնչին էր եւ երբեմն էլ ժամանակին  
չէր հասնում, կամ՝ բոլորովին չէր հասնում: Ոմանք, երկու-երեք  
տարի տոկալուց յետոյ, դժուար կեանքին այլեւս չդիմանալով,  
վերադարձան՝ առանց ուսումն աւարտելու: Բաղդիկը եւ իր  
մտերիմ ընկեր՝ Յովհաննէս Հախնազարեանը,<sup>12</sup> միակն էին, որ

11 «Փետրուար 18» վերնագրուած այս գրքոյկը բաղկացած է մի քանի յօդուածից՝ Փետրուարեան ապստամբութեան նկարագրութիւն, դէպքերի ժամանակագրութիւն եւ վերլուծում, ապա՝ ապստամբութեան մասին փաստաթղթեր եւ նամակագրութիւն՝ «Փրկութեան Կոմիտէ»ի եւ տեղական դաշնակցական մարմինների միջեւ: Թւում է, թէ այս հրատարակութիւնը նպատակ է ունեցել դիմակայելու խորհրդահայ պատմագրութեանը, որ դէպքերը խեղաթիւրելով՝ Փետրուարեան ապստամբութիւնը ներկայացնում էր իբրեւ մի խումբ դաշնակցականների «աւանտիւրա»:

Յովհաննէս Հախնազարեանը ծնունդ էր Ագուլիսում (Գողթան գաւառ), 1900 թուականին: Եւրոպայից վերադառնալով՝ նա հաստատուել էր Թեհրան եւ դասախօսի պաշտօն էր ստանձնել պետական համալսարանում՝ միաժամանակ դասաւանդելով Քուշէշ-Դաւթեան հայոց դպրոցում: 1946 թուից մինչեւ 1964 թիւը ստանձնել էր նոյն դպրոցի տեսչի պաշտօնը: Դոքտ. Հախնազարեանը իր մահկանացուն կնքեց 1978-ին Թեհրանում: Նա ազդեցիկ եւ յարգուած մտաւորական էր հայ համայնքում եւ բարենպաստ յարաբերութիւններ ուներ պետական կրթական շրջանակների հետ: Ի միջի այլոց, որպէս մտերիմ ընկեր, նա ծնողներիս ամուսնութեան խաչեղբայրն է եղել:

12 Յովհաննէս Հախնազարեանը ծնունդ էր Ագուլիսում (Գողթան գաւառ), 1900 թուականին: Եւրոպայից վերադառնալով՝ նա հաստատուել էր Թեհրան եւ դասախօսի պաշտօն էր ստանձնել պետական համալսարանում՝ միաժամանակ դասաւանդելով Քուշէշ-Դաւթեան հայոց դպրոցում: 1946 թուից մինչեւ 1964 թիւը ստանձնել էր նոյն դպրոցի տեսչի պաշտօնը: Դոքտ. Հախնազարեանը իր մահկանացուն կնքեց 1978-ին Թեհրանում: Նա ազդեցիկ եւ յարգուած մտաւորական էր հայ համայնքում եւ բարենպաստ յարաբերութիւններ ուներ պետական կրթական շրջանակների հետ: Ի միջի այլոց, որպէս մտերիմ ընկեր, նա ծնողներիս ամուսնութեան խաչեղբայրն է եղել:

տատասկոտ ճամբան մինչեւ վերջ քայլեցին, ուսումն աւարտեցին ու վերադարձան: Բաղդիկը ստացել էր դոքտորայի աստիճան՝ բնական գիտութիւնների (աւարտաճառի նիւթ ունենալով՝ բոյսերի շնչառութիւնը եւ քիմիական նիւթերի ազդեցութիւնը այդ գործողութեան վրայ) եւ պսակաւոր արուեստից՝ փիլիսոփայութեան ու մանկավարժութեան մէջ. իսկ Յովհաննէս Հախնազարեանը՝ պատմութեան եւ փիլիսոփայութեան մէջ:

Հօրս բացակայութեան տարիներին, նրա յիշատակը մեր մէջ վառ պահելու համար, մաման մեզ՝ երեխաներիս, նրա կեանքից տխուր եւ ուրախ մանր դէպքեր էր պատմում: Այս դէպքերից մէկը աղբատ ուսանողի՝ Եւրոպայում կրած դժուարութիւնների մասին էր: Ստացած կրթաթոշակը անբաւարար էր եւ անկանոն: Յաճախ էր պատահում, որ Բաղդիկը անօթի էր դասերի գնում: Մի այդպիսի օր էր՝ երբ Բաղդիկը համալսարանի ականաւոր դասախօսների յանձնաժողովի առջեւ իր դոքտորականը պիտի պաշտպանէր: Դասախօսների անդադար հարցումների տարափի տակ, պրկուած վիճակում, Բաղդիկը յանկարծ զգում է, որ քթից արիւն է գալիս: Գլուխը սկսում է պտտել, աչքերի առջեւ սեւանում է, համարեա ուշաթափում: Մարսափում է՝ ջլինի սա էր վերջը ու պիտի տանուլ տայ տարիների տառապալից աշխատանքը: Բայց բարի դասախօսները հասկանում են: Մի բաժակ ջուր են տալիս, հանգստացնում նրան ու սպասում՝ մինչեւ Բաղդիկը ինքն իրեն վերագտնի եւ կարողանայ շարունակել:

1928 թուի յունիսին, յաջողութեամբ աւարտելով ուսումը, Բաղդիկը անմիջապէս վերադառնում է Իրան: Հայոց դպրոցներում ուսուցչի ու տեսչի պաշտօններ է վարում Ռաշտում, Ղազուինում, Թեհրանում եւ Թաւրիզում՝ միաժամանակ նուիրուելով նաեւ տեղի կուսակցական կազմակերպչական աշխատանքներին:

1931-ին լոյս է տեսում Բաղդիկի առաջին գիրքը՝ «Մանկավարժութեան հիմունքներ, Principes de pédagogie»,

հրատարակութեամբ Հայ Առաքելական Եկեղեցւոյ Թաւրիզի Առաջնորդարանի եւ արտօնութեամբ Իրանի Կրթութեան նախարարութեան: Հատորը տպաւորիչ է: Լայն ու կարելոյն չափ համապարփակ ուսումնասիրութեան երաշխիքն է տալիս օգտագործուած աղբիւրների հարուստ ցանկը՝ Փրանսերէն, չեխերէն եւ քիչ թուով էլ հայերէն մասնագիտական գրականութիւն: Նիւթերի ցանկում իւրաքանչիւր բաժնի կամ գլխի վերնագիրը բերուած է երկար բացատրութիւնով: Գրքի վերջում տեղադրուած է բովանդակութեան ամփոփում՝ Փրանսերէն եւ հայերէն լեզուներով:

Թերթում եմ այս 420-էջանոց հատորը եւ չեմ կարողանում զսպել զարմանքս եւ հիացմունքս: Հետազօտութեան ծաւալուն դաշտը, գիտական մօտեցումն ու վերլուծութիւնը՝ պատշաճ յղումներով եւ ծանօթագրութիւններով, եւ վերջապէս, գիտելիքի ընդգրկուն շտեմարան: Աշխատութիւնը սկսուում է «մանկավարժութիւն» եւ «դաստիարակութիւն» հասկացութիւնների եւ դրանց փոխ-յարաբերութեան բնութագրումներով: Ներկայացնում է դաստիարակութեան նպատակը «իդէալը»՝ բարոյական, անհատական, ընկերային եւ ազգային իմաստներով: Որպէս կիզակէտ ունի հայ ազգային դաստիարակութիւնը՝ ազգային գաղափարաբանութեան, ազգային կենսաբանական եւ հոգեբանական իւրայատկութեան շրջանակում: Քննարկում է կրթութեան երկսեռ միջավայրում առաջացած դժուարութիւնները եւ դրա հետ կապուող սեռային խնդիրները: Շեշտադրում է մարմնի եւ հոգու յարաբերութեան հարցը եւ կարելորդ մարմնամարզութիւնը:

Երկրորդ մասով քննարկում է մեթոդաբանութիւնն ու նրա անհրաժեշտութիւնը եւ տարածում իմացականութեան, զգացումների եւ կամքի դաստիարակութեան մեթոդների վրայ: Դրանց շրջանակում նաեւ ուսուցիչ-աշակերտ յարաբերութիւն,

ուսուցչի մտաւոր, ֆիզիքական եւ բարոյական յատկանիշներ: Եւ հետաքրքիր ձեւով կենտրոնանում է «Մայրենի լեզուի ուսուցումը 1-ին դասարանում» նիւթի վրայ եւ ընդլայնում: Երրորդ մասը նուիրում է հայ ազգային դաստիարակութեան եւ նրա բարենորոգման անհրաժեշտութեանը: Ախտաճանաչումներ է կատարում եւ առաջարկութիւններ ներկայացնում:

Ապահովաբար կարելի է ասել, որ այս աշխատութիւնը վեր էր ժամանակի եւ վայրի հայ իրականութիւնից, մանաւանդ՝ առաջարկում կրթական մեթոդաբանութեան եւ ազգային դաստիարակութեան տեսանկիւնից: Յիշում եմ՝ մայրս ասում էր, որ հօրս գործակիցները, նուրբ ասած, լաւ չընդունեցին գրքի հրատարակութիւնը, վերապահութիւն կար, նոյնիսկ՝ հեգնանք ու ծաղր: Հիմա հասկանում եմ, թէ ինչու:

Այստեղ մտադիր չեմ գրքի բովանդակութիւնը վերլուծելու, գիրքը գրախօսելու, բայց ուզում եմ գրքի առաջին էջի վրայ յայտնուած մի ընծայագրի մասին պատմել, որ բանալին է Բաղդիկի կեանքի՝ Եւրոպայում անցկացրած ուսանողական տարիների եւ Իրանում՝ մինչեւ Փառիկի հետ կապուելը: Ընծայագիրը պարզ մի նախադասութիւն է՝ «ՆՈՒԷՐ ԻՄ ՍԻՐԵԼԻ ԶՐԻՍՏԻՆԷԻՆ», ստորագրուած՝ հեղինակ: Առեղծուածայինն այն է, սակայն, որ մայրս մի քանի օրինակ պահել էր այդ գրքից, մենք դա ունէինք տանը, բայց բոլոր օրինակների մէջ էլ այդ էջը պատռուած էր: Երբ ես փոքր էի, մեծ հպարտութեամբ բացում էի ու թերթում գիրքը, ի հարկէ առանց բարդ ու խրթին բովանդակութիւնը կարդալու փորձն իսկ անելու: Եւ իմ անմեղ ու միամիտ հարցումին, թէ ինչո՞ւ է մի էջը պատռուած, մայրս անորոշ ու խուսափողական մի պատասխան էր տալիս, իսկ ես չէի էլ մտածում պնդել հարցումիս վրայ: Հօրս վերադարձից շատ յետոյ էր, որ մի գրադարանում գրքից մի օրինակ ձեռքս ընկաւ: Ու տեսայ չպատռուած էջը, եւ զարմանքով կարդացի «ձօնը»: Ինչո՞ւ ծնողներիս չհարցրի, թէ

ո՛վ է Քրիստինեն: Պատասխան չունեմ: Գուցէ մտածեցի՝ դա անկարելի է: Քրիստինեն երեւի հօրս անցողական սէրն է եղել: Ինչ-որ սիրային կապ, որի հետքն էլ չի մնացել:

Բոլորովին մոռացայ «Զօն»ն էլ, Քրիստինեն էլ, մինչեւ շատ տարիներ յետոյ, երբ ծնողներս երկուսն էլ վաղուց մահացած էին, մեր ընտանիքին վարկաբեկելու համար, որպէս մեղկ վրէժխնդրութիւն, ճղճիմ արարածներ մի տգեղ պատմութիւն հնարեցին ու բամբասանքի սկսեցին: Իբր թէ Քրիստինեն Բաղդիկի նշանածն էր, որ նրա ետեւից Իրան եկաւ, բայց քիչ անց Բաղդիկը յոգնեց նրանից ու նրան ետ ճամբեց Պրագա: Չգիտեմ՝ ո՛վ էր Քրիստինեն, մի վաղանցուկ սէր կամ հօրս կեանքի մի մասը: Բայց պիտի ընդունեմ, որ նրա ներշնչանքն էր եղել եւ անկասկած օգնել էր նրան, (գուցէ նոյնիսկ՝ նաեւ նիւթապէս, ինչպէս չար լեզուներն էին խօսում) դիմանալու աղքատ ուսանողի դժուարին կեանքին: Ուրեմն եւ արժանի է իր տեղն ունենալու հօրս կեանքի պատմութեան մէջ:

Չգիտեմ՝ նրանց սիրային կապը երբ է կտրուել, ու Քրիստինեն երբ է Պրագա վերադարձել: Միայն գիտեմ, որ մամային՝ Փառանձեմին, ուղղուած հօրս սիրային նամակները 1932-ի վերջերից է սկսում: Այդ ժամանակ Բաղդիկը Ղազուինի հայոց դպրոցի տեսուչն էր, իսկ Փառանձեմը եղբօր՝ Ալեքսանի ընտանիքի հետ Համադան էր տեղափոխուել: Այդ նամակները սիրատենչ են եւ յուզական: Բաղդիկը աղաչում է Փառանձեմին լուրջի առնել իր սէրը ու փոխադարձել: Ամուսնութեան առաջարկ է անում եւ թախանձում է չմերժել: Նամակները շարունակուում են երկու տարի՝ մինչեւ Բաղդիկը յաջողում է փաստել իր անխորտակելի սէրը եւ Փառանձեմի սրտում փոխադարձ զգացում վառել:

Երոպայից նոր վերադարձած հօրս յանձնուած պաշտօններին եմ նայում ու զարմանում եմ: Հայրս, իր խոստման համաձայն, իրեն Դաշնակցութեան ղեկավարութեան տրամադրութեան



տակ էր դրել եւ համեստաբար ընդունել էր որեւէ պաշտօն, որ առաջարկուել էր իրեն, որ եղել էին միշտ՝ կենտրոնից հեռու ու երբեմն՝ անյարիր իր ստացած բարձր մասնագիտութեան: Արդեօ՞ք դա դիտումնաւոր որոշում էր նրա նախկին դասընկերների կողմից՝ Եւրոպայից եկած, իրենցից մէկ գլուխ բարձր մտաւորականին հեռու պահելու՝ չէզոքացնելու: Հօրս համար անկարելւոր պաշտօն չկար: Համեստօրէն գնում էր՝ ուր որ պարտականութիւնն էր կանչում: Բայց կարծես յագուրդ տալու համար իր սիրած մասնագիտութիւնը կիրարկելու ծարաւին, Ղազուիւնում պաշտօնավարելիս, նա ի մի էր հաւաքել միջնակարգ դասարանների մի խումբ՝ աշակերտների եւ խորացուած քիմիա եւ բնագիտութիւն էր պարապում նրանց հետ: Մայրս՝ 18-ամեայ կայտառ ու կենսունակ Փառանձեմը, այդ խմբի մէջ էր՝ մինչեւ 1932-ին Համադան տեղափոխուելը: Ինչպէս երեւում է, այդ միջավայրում է Բաղդիկի սրտում առկայծել այն սէրը, որ այլեւս չպիտի յանգէր, դիմանար կեանքի անյաղթելի դժուարութիւններին եւ դառնար անսակարկ նուիրում:

Մայրս յիշում է, որ Բաղդիկը դպրոցի տեսչի իր պարտաւորութիւնների կողքին յանձն էր առել նաեւ առաջին դասարանի դաստիարակի պարտականութիւնը: Դասատուի մանկավարժական հմտութեանը չէր վստահել: Իր համար սկզբունքային էր առաջին դասարանում ճշգրիտ մեթոդով երեխայի կրթա-դաստիարակչական կեանքի հիմքը դնել: Նա փորձում էր իր այնքան եռանդով ու նուիրաբերութեամբ սովորած եւ իր հեղինակած գրքում այդքան մանրամասնօրէն բացատրած մանկավարժական սկզբունքներն ու մեթոդաբանութիւնը կիրարկել դպրոցում: Բայց յաւակնոտ ամենագէտների միջավայրում դա չէր կարող դիւրին ընդունուել: Ու քննադատում էին, հալածում: Ղազուիւնից Համադան Փառանձեմին գրած նամակներում, Բաղդիկը նկարագրում է խեղդիչ մթնոլորտը ու չարչարալից այս աշխարհում ապրելու իր միակ յոյսի աղբիւրը համարում է

Փառանձեմի փոխադարձ սերը, որին փորձում է հասնել: Յատակ է, որ տխուր ու դժբախտ մանկությունը իր խոր դորձմն էր դրել նրա հոգու վրայ եւ ներկայի անբարեացական միջավայրը աւելորդ քննադատություններն ու բամբասանքը վերքի վրայ աղ էին լցնում:

Սիրային նամակները դադարում են մի որոշ ժամանակ, կամ չեն պահուած, ու վերսկսում այս անգամ Թեհրանից, որտեղ վերջապէս փոխադրել էին իրեն: Նամակները աւելի մեղմ են եւ ապագայ միացեալ կեանքի երագանքներ են պարունակում: Ինչպէս երեսում է, սերը փոխադարձ է այլեւս:

Փառիկն ու Բաղդիկը ամուսնացան 1934 թ. Մարտ 21-ին, Թեհրանի կաթոլիկ եկեղեցում: Հայոց Առաքելական Եկեղեցին մերժեց նրանց ամուսնացնել, որովհետեւ մօրաքրոջ երեխաներ էին՝ Թամամի<sup>13</sup> եւ Եղիսապետի զաւակները. եւ Լուսաւորչական օրէնքով ամուսնացող զոյգը պիտի եօթ սերունդ (ժողովրդական ասացուածքով՝ եօթը պորտ) հեռու լինեն իրարուց: Սա իհարկէ պատճառ է եղել բամբասանքի ու հերիւրանքի, որ նեղել է Փառիկին ու արգիլել նրան՝ աւելի շուտ իր համաձայնությունը տալու: Հօրս նամակները խօսում են այդ մասին:

Բաղդիկը Թեհրանի հայոց միջնակարգ դպրոցներում քիմիա եւ ֆիզիկա էր դասաւանդում եւ ըստ երեւոյթին աշակերտները շատ էին սիրում նրան: Հայոց Ազգային Դպրեան միջնակարգ դպրոցի ժամանակի աշակերտ՝ Շահէն Պետրոսեանը Բաղդիկ Մինասեանի յիշատակին նուիրուած «Ալիք»-ի յատուկ համարում գրում է, որ այդ ժամանակ քիմիայի եւ ֆիզիկայի հայերէն դասագիրք չեն ունեցել. «Դոքտ. Բաղդիկ Մինասեանը գերմաներէն եւ չեխերէն

13 Մաման պատմում էր, որ երբ իր մայրը՝ ծնողների եօթերորդ աղջիկը, ծնում է, ծնողները յուսալքուած, անունը Թամամ են դնում, որ թուրքերէն կամ պարսկերէն նշանակում է «վերջ»: Այսինքն՝ անյոյս է, էլ տղայ ունենալու յոյսով երեխայ չենք ունենալու: Բայց ի հարկէ, Թամամը վերջինը չի լինում, էլի են երեխաներ ծնում ու էլի՝ աղջիկ: Ես Թամամ մեծմօրս չեմ տեսել: Մայրս շատ փոքր է եղել երբ Թամամը մահացել է, եւ ինքը՝ եղբոր եւ նրա կնոջ յոյսին է մեծացել:

գրքերի վրայից սահուն հայերենով՝ միաժամանակ թարգմանում-թելադրում էր .... Անչափ գոհ էի, որովհետեւ նա շատ պարզ լեզուով բացատրում էր վերոյիշեալ առարկաները»:<sup>14</sup> «Ալիք»ի նոյն համարում, Վ. Գուրգենը՝ Հայկազեան երկսեռ միջնակարգ դպրոցի 1933/34 ուսումնական տարեշրջանի աշակերտ, դրուատանքով է խօսում իր եռանդաշատ, երիտասարդ ուսուցչի մասին, որ «դասարանում աշակերտի հետ *ուսուցիչ* էր.... դրսում՝ *ընկեր*»։ Ու շատ երկար տարիներ յետոյ էլ դեռեւս յստակօրէն յիշում է «նրա խրոխտ ձայնը եւ վսեմ պատգամները՝ նոր սերնդին»:<sup>15</sup>

1936-ին, երբ հայոց դպրոցները փակուեցին Իրանում, Բաղդիկը անմիջապէս վարձուեց Կրթութեան նախարարութեան կողմից եւ ուղարկուեց Թաւրիզ՝ Ֆերդովսի միջնակարգ դպրոցում քիմիա դասաւանդելու։ Փոխադրութեան ծախսերը ամբողջովին յանձն էր առել նախարարութիւնը։ Այստեղ էլ գնահատուած էր նրա աշխատանքը։ Դա են փաստում քանի-քանի գնահատագրեր ու շնորհակալագրեր, որ գտել եմ իր թղթերի մէջ։ Այդպիսիներից է՝ 1/10/1317 (դեկտեմբեր 22, 1938) թուակիր գովեստ/նամակը՝ Ֆերդովսի դպրոցի տեսչի կողմից Ատրպատականի Կրթութեան նահանգային նախարարութեան յղուած եւ պատճէնը Դոքտ. Բաղդասար Մինասեանին ուղարկուած։

Ատրպատականի հայութիւնը դժուարին տարիներ էր ապրում։ Եւ Բաղդիկը իր եռանդն ու ժամանակը չէր խնայում նուիրելու ազգային կեանքին, նաեւ՝ ղեկավար դեր ստանձնելով Հ.Յ.Դաշնակցութեան մէջ։ Միաժամանակ քաղաքական վերլուծական յօդուածներով աշխատակցում էր Թեհրանի «Ալիք» եւ Կահիրէի «Յուսաբեր» թերթերին՝ երկուսն էլ Դաշնակցութեան պաշտօնաթերթեր։

14 Շահէն Պետրոսեան, «Ամոռանալի դէմքերից մէկը», «Ալիք» օրաթերթ, 21 օգոստոս, 1976, էջ 4, 6։

15 Վ. Գուրգեն, «Յիշողութիւններ», «Ալիք» օրաթերթ, 21 օգոստոս, 1976, էջ 4, 6։

Երկրորդ աշխարհամարտի բռնկումով դրությունը աւելի վատթարացաւ: Երկու պատերազմների միջեւ ընկած ժամանակաշրջանում, Ռեզա Շահը տնտեսական եւ քաղաքական բարեկամական կապեր էր ստեղծել Թուրքիայի եւ Գերմանիայի հետ: Դա ընդունելի չէր Մեծն Բրիտանիային, որ իր շահերը Իրանում վտանգուած էր տեսնում, մանաւանդ՝ Իրանի նաւթի իր մենաշնորհի տեսանկիւնից: Չնայած Ռեզա Շահը չէզոքութիւն էր յայտարարել, սակայն դաշնակից պետութիւնները նրան համարում էին Նացի Գերմանիայի դաշնակից եւ ճնշում էին բանեցնում երկրից արտաքսելու բոլոր գերմանահպատակներին: Դրութիւնը աւելի լարուեց, երբ 1941 թիւ, յունիսի 22-ին Գերմանիան յարձակում գործեց Խորհրդային Միութեան վրայ:

Իրանի նաւթը, աշխարհագրական դիրքը, ռազմաքաղաքական նշանակութիւնը երկրի անկախութեան համար սպառնալից վտանգ դարձան: Անգլո-Սովետ միացեալ յարձակումը Իրանի վրայ սկսուեց 1941թ., օգոստոս 25-ին՝ օդային եւ ցամաքային բոլոր ուղղութիւններով միաժամանակ: Յարձակումը Ռեզա Շահի նորաստեղծ արդիական բանակի համար յանկարծակի էր եւ անսպասելի: Եւ թշնամու զօրքը առանց լուրջ դիմադրութեան հանդիպելու առաջացաւ ու գրաւեց համարեա ամբողջ երկիրը: Թեհրանը անդադար ռմբակոծութիւնների տակ էր: Զրի եւ սնունդի պակասը նեղում էր ժողովրդին: Սովետների եւ անգլիացիների հետ բանակցելու Ռեզա Շահի փորձերը ի դերեւ էին անցել: Սեպտեմբերի կէսին դաշնակիցները գրաւեցին մայրաքաղաք Թեհրանը, ձերբակալեցին թագաւորին եւ երկրից դուրս աքսորեցին (Ռեզա Շահի աքսորի վերջին կայանը Զոհանեսբուրգն էր Հարաւային Աֆրիկայում՝ ուր եւ իր մահկանացուն կնքեց 1944-ին): Թագաժառանգ Մոհամադ Ռեզան հօր գահին նստեց եւ շուտով կարողացաւ երկիրը գրաւած ուժերի հետ պայմանագիր կնքել, ուր երաշխաւորուած էր երկրի տարածքային ամբողջականութիւնը:

Դաշնակիցները խոստանում էին պատերազմից յետոյ իրենց բանակները դուրս բերել Իրանից:<sup>16</sup>

Իրականության մեջ, Իրանը բաժանուած էր երկու ազդեցության գոտիների՝ Սովետները՝ հիւսիսում, իսկ անգլիացիները՝ Համադանից հարաւ:

Ատրպատականի նահանգը խորհրդայինների ամբողջական հսկողության տակ էր: Կառավարական մարմինները քայքայուած էին եւ անգործության մատնուած: Բացարձակ շփոթ էր տիրում: Թուրք զանգուածը, անսանձ ու անկաշկանդ, փողոց թափած, անկարգութիւններ էր անում խանութներից գողութիւն, կողոպուտ: Եւ թիրախը մեծ մասամբ հայերն էին: Այսպիսի պայմաններում շատ հայեր, նոյնիսկ դաշնակցականներ, իրենց ընտանիքներն առած աւելի ապահով վայրեր քաշուեցին: Դա, ի հարկէ, հօրս չէր վերաբերում: Նրան էլ առաջարկել էին հեռանալ, բայց նա կտրականօրէն մերժել էր: Նա պատրաստ չէր լքել Ատրպատականի ՀՅԴ Կենտրոնական կոմիտէի ներկայացուցչի իր հանգամանքն ու պատասխանատուութիւնները: Պատրաստ չէր լքել իր ժողովրդին:

Եւ, ո՛վ հեզնանք, քանի-քանի դաշնակցականներ, նոյնիսկ պատասխանատու դիրքերում գտնուող, իրենց գոյնը փոխեցին,

16 1942-ի յունուարին ստորագրուած եռակողմանի պայմանագրում նշուած էր, որ դաշնակից բանակները պիտի թողնեն երկիրը՝ ոչ ուշ քան վեց ամիս պատերազմի աւարտից յետոյ: 1943 թուականի յունուարին Գերմանիային պատերազմ յայտարարելով՝ Իրանը դաշնակիցների անդամ ճանաչուեց: 1943 թուականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Թեհրանում կայացած երեքի նշանաւոր խորհրդաժողովում, Ուինսթըն Չրչիլը, Իոսիֆ Ստալինը եւ Ֆրանքլին Դ. Ռուզուելթը վերահաստատեցին իրենց յանձնառութիւնը Իրանի տարածքային ամբողջականութեան հարցում: Յետագայում, դաշնակից բանակների դուրս բերման ժամկէտ որոշուեց 1946 թուականի Մարտ 2-ը, բայց Կարմիր Բանակը Իրանից չհեռացաւ մինչեւ դեկտեմբեր: Խորհրդային Միութիւնը զբաղուած էր իր ազդեցութիւնը աւելի ու աւելի խորացնելու Իրանում: Կազմուել էր Թուղէ կուսակցութիւնը («թուղէ» բառը պարսկերէնով նշանակում է «մասսա» կամ «զանգուած») եւ հրահրում էր ժողովրդին՝ դուրս գալ կառավարութեան դէմ: Ստալինը մօտենում էր իր նպատակին՝ Ատրպատական նահանգը անջատելու Իրանից եւ Խորհրդային Ադրբեջանին միացնելու:


Դաշնակցությունից հրաժարուեցին ու սովետներին յարեցին. բայց վստահաբար ո՛չ թե գաղափարական գետնի վրայ, այլ պարզապես ապահովութեան համար, իրենց կաշին փրկելու համար: Խորհրդային Հայաստանի հանդէպ իր հաւատարմութիւնը ցոյց տալու համար նախկին դաշնակցական ընկերը, որ օրացոյց էր հրատարակում, այդ տարի մայիս 28-ը տօնական օր նշող կարմիր շրջանակը ջնջեց եւ նոյեմբեր 29-ը կարմիր ներկեց: <sup>17</sup> Դեռ աւելի մեծ հեզմանք է այն, որ երբ սովետները դուրս եկան Իրանից եւ կարգ ու կանոնը վերահաստատուեց երկրում, այդ նոյն դասալիքները կուսակցութեան շարքերը վերադարձան, իրենց երբեմնի դիրքերը գրաւեցին եւ շարունակեցին մնալ որպէս համայնքի յարգուած ղեկավարներ:

Հօրս թղթերի մէջ Թաւրիզում հրատարակուող «Արեւելք» ձախակողմեան թերթի 1946թ. օգոստոս 15-ի համարը գտայ՝ մի քանի օրինակով պատճենահանուած: Թերթի այդ համարում հպարտօրէն ներկայացուած էին Դաշնակցությունից հրաժարուած մի շարք դաշնակցականների անուններ: <sup>18</sup> Հայրս այդ տգեղ երեւոյթի մասին չուզեց խորանալ. բայց ես վստահ եմ, որ Երեւանի ՉէԿայի բանտում հարցաքննությունների ժամանակ օգտագործել են այդ երեւոյթը եւ նեղել հօրս՝ այդ հրաժարեալ դաշնակցականների

17 Դաշնակցութեան համակիր Սփիւռքեան համայնքներում հրատարակուող օրացոյցներում մայիս 28-ը միշտ որպէս տօնական օր էր նշում: Դա այն օրն էր, երբ 1918-ին Հայաստանի անկախութիւնը յայտարարուեց: Բոլշեւիկները արհամարհում էին անկախ Հայաստանի վերածնունդը եւ 1918թ. մայիս 28-ի նշանակութիւնը: Նրանց համար տօնակատարութեան արժանի՝ Հայաստանի խորհրդայնացման օրն էր՝ նոյեմբեր 29, 1920: Ի հարկէ, յիշենք, որ Հայաստանը խորհրդային կարգեր ընդունեց 1920թ. դեկտեմբեր 2-ին: Նոյեմբեր 29-ը այն օրն էր, երբ մի խումբ հայ բոլշեւիկներ աղբրէջանցի թուրքերի եւ Կարմիր Բանակի մի յատուկ վաշտի ընկերակցութեամբ արդէն խորհրդայնացած Ադրբեջանից Հայաստան մտան եւ Հայաստանը խորհրդայնացած յայտարարեցին:

18 Թերթի ուղղագրութիւնը, ի հարկէ, հայաստանեան է: Բսկ «Հրաժարումներ Դաշնակցությունից» վերնագրով յայտարարութեան մէջ ասուած է՝ «Մենք դատապարտել ենք եւ դատապարտում ենք Դաշնակցութեանը եւ յայտարարում ենք, որ հայ ժողովրդի փրկարարը հանդիսանում է միմիայն Սովետական իշխանութիւնը ու նրա ղեկավար Կոմունիստական Կուսակցութիւնը»:

սովետներին տուած ցուցմունքները նրա երեսին տալով: Դա անպայման ՉԷԿայի գործելակերպն էր, նման դաւաճանական երեւոյթներով հեզնել, նուաստացնել ամբաստանեալին ու պարտադրել նրան խոստովանելու: Հաւանական է, որ հայրս վերադարձից յետոյ հարցաքննութիւնների ընթացքում բացայայտուած ցուցմունք տուողների մասին պրպտել էր ու «Արեւելք» կոչուած այդ աննշան թերթն էր գտել, բազմացրել ու պահել: Ի հիասթափութիւն ինձ, այդ դասալիքներից մի քանիսին ճանաչում էի: Այո՛, դրանք մեր համայնքի յարգուած մարդկանցից էին: Նրանք կեանքի դիւրին եւ ապահով ճամբան էին ընտրել այն ժամանակ՝ երբ Բաղդիկ Մինասեանը տառապում էր Սիբիրի աշխատանքային ճամբարներում:




Ղարադաղի հայկական գիւղերը (Յովհաննէս Յովսէփեան, «Ղարադաղի հայերը», հատոր 1, Ազգագրութիւն)



Մի տեսարան Ղարադաղից






ան)



Արասբարանի լեռները



Կարապետ Պիոնեան  
Թաւրիզի Թեմական Կենտրոնական միջնակարգ դպրոցի  
տեսուչ՝ երբ Բաղդիկ Մինասեանը այդ դպրոցի աշակերտ էր



Մի հին նկար Թաւրիզի Թեմական Կենտրոնական միջնակարգ դպրոցից



Բաղդիկ Մինասեանի աւարտական վկայականը՝  
Կարապետ Պիոնեանի ստորագրութեամբ



Universitatis Carolinae Pragensis-ի Բնական Գիտությունների ֆակուլտետի շէնքը  
1920-ական թուականներին



Պրագայում սովորող հայ ուսանողներ (1924).  
 Չախիգ՝ աջ, Բաղդասար Մինասեան, Անդրէ Տէր-Օհանեան,  
 Գասպար Յակոբեան, Համբարձում Գրիգորեան, Հայկ Եգանեան



Բաղդասար Մինասեան, 1927 թ. Պրագա



Česká vědecká zkušební komise pro učitelství na středních školách  
v Praze.

Číslo 2618

## VYSVĚDČENÍ

O PŘEDBĚŽNÉ ZKOUŠCE FILOSOFICKO-PEDAGOGICKÉ



Pan Baghdassar Minassian,

1902 v Karadaghu v Persii,

vytonal

u české vědecké zkušební komise pro učitelství na středních školách v Praze

### PŘEDBĚŽNOU ZKOUŠKU FILOSOFICKO-PEDAGOGICKOU

podle článku VII. zkušebního řádu z r. 1911.

Při zkoušce dány byly tyto otázky:

Poměr pedagogie a sociologie

Obsah Rousseauova *Emila*

Moderní pedagogové francouzští

Vývoj dětského myšlení

Vývoj francouzské vysoké školy

Výsledek zkoušky byl ve l m i d o b r ý

Ředitelství české vědecké zkušební komise pro učitelství  
na středních školách v Praze

dne 27. dubna 1927

*Václav Příhoda*  
examinator.



*Kaš. L. Janča*  
ředitel zkušební komise.

Բաղդասար Մինասեանի վկայականը՝ պսակաւոր արուեստից՝  
փիլիսոփայութեան ու մանկավարժութեան մէջ (ապրիլ 27, 1927)

## SUMMIS AUSPICIIS REIPUBLICAE BOHEMICAЕ-SLOVENICAE

## ET NOS

PHILOSOPHIAE DOCTOR, ARCHAEOLOGIAE ET ETHNOLOGIAE PROFESSOR PUBLICUS ORDINARIUS, SOCIETATIS REGIAE SCIENTIARUM ET ACADEMIAE SCIENTIARUM  
ET ARTIUM BOHEMICAE SOCIJES ORDINARIUS, ACADEMIAE ROMICAE, ACADEMIAE SCLAVORUM MERIDIONALIUM, ACADEMIAE BEROLICAE,  
ACADEMIAE BULGARICAE ET ACADEMIAE INSCRIPTIONUM ET LITTERARUM PARISIENSIS SOCIJES ETC.

FRANCISCUS PLZÁK.

PHILOSOPHIAE DOCTOR ET PHARMACIAE MAGISTER, CHIMIAE PROFESSOR PUBLICUS ORDINARIUS, ETC.

FACULTATIS RERUM NATURALIUM DECANUS.

Vincentius Percepel,  
R.D. plurimus experimentator prof. publ. et.

PROMOTOR RITE CONSTITUTUS.

IN VIRUM CLARISIMUM

IN VIRUM CLARISSIMUM  
*Baghdassar Minassian,*  
President of the American Oriental Society

partium et locutionum, quae "Thesaurus" noster, inchoat et communiter septem  
habet, in plantarum physiologia, in botanica, in zoologia, in agricultura, et in  
botanica, inchoat.

DOCTORIS RERUM NATURALIUM

NOMEN ET HONORES, IURA ET PRIVILEGIA CONTULIMUS IN EIUUSQUE REI FIDEM HASCE LITTERAS  
UNIVERSITATIS SIGILLO SANCIENDAS CURAVIMUS. \*

DATUM PRAGAE DIE *viicensima secunda* m. *Junii* 1728

The only  
HUTCH


 ELLIOTT & MITTELMAN

PROMOTOR SITE CONSTITUTION

85

[illegible]


2985

[illegible]

Պրագայի համալսարանի արձանագրության տետրի այն էջը ուր Բաղդասար Մինասեանի անունը նշուած է 1928-31-ր դոկտորայի կոչում ստացողների շարքում



Ռաշտի հայկական տարրական դպրոցի ուսուցչական կազմը 1928-29 տարեշրջանում



Բաղդիկ Մինասեանը՝ Ռաշտի դպրոցում իր ստեղծած քիմիայի տարրալուծարանում



Բաղդիկի եւ Փառիկի առաջին  
պաշտօնական նկարը միասին,  
Թեհրան, 1934



Նորապսակներ Բաղդիկն ու Փառիկը իրենց ամուսնութեան  
խաչեղբայր Յովհաննէս Հախնազարեանի հետ, Թեհրան (ապրիլ, 1934)






Բաղդիկն ու Փառիկը՝ երջանիկ զոյգեր Թաւրիզի մօտ գտնուող Եամ ամառանոցում (1937)



Բաղդիկը իր մօր Եղիսապետի հետ, Փառիկն ու զարմիկն՝ Քնարը կանգնած



Մի օրինակ Բաղդիկ Մինասեանի ստացած գնահատագրերից, 1/10/1317-ին (դեկտեմբեր 22, 1938) Ֆերդովսի միջնակարգ դպրոցի տեսչի կողմից Ատրպատականի նահանգային Կրթութեան նախարարութեան յղուած

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ  
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲՈՑԵՐՈՒՄ.  
ԱՌԵԲԱՆԳՈՒԱԾ ԵՒ  
ԲԱՆՏԱՐԿՈՒԱԾ ԹԱԲԻԻԶՈՒՄ<sup>1</sup>

1939 թ. սեպտեմբեր 1-ին պայթեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Հիտլերեան Գերմանիայի պատերազմական նպատակն էր կենսական տարածանք ձեռք բերել գերման ժողովրդի համար: Այդ առաջադրանքը իրականացնելու նպատակով Հիտլերը իր ռազմական մեքենան շարժման մեջ էր դրել դեպի Արեւմուտք եւ կայծակնային պատերազմի միջոցով գրաւել էր Չեխոսլովակիան, Լեհաստանը, Բելգիան, Հոլանդիան, Ֆրանսիան եւ Բալկանեան երկրները: Սակայն գերմանական պատերազմական մեքենան դէմ առաւ բրիտանական վճռական դիմադրութեան ու կանգնեց:

---

1 Ինչպէս նշել եմ նախաբանում, այս եւ յաջորդ գլուխը Բաղդիկ Մինասեանի անաւարտ յուշերն են, որ յետմահու հրատարակուեցին «Տասը տարի, տասն ամիս եւ տասնեօթ օր խորհրդային բանտերում եւ աշխատանքային ճամբարներում, 1944, 3 յունուար, 1954, 17 նոյեմբեր» գրքով: Այդ հրատարակութեան բովանդակութիւնը, որոշ յապաւումներով եւ նուագագոյն խմբագրական միջամտութիւններով, բերել եմ այստեղ՝ միշտ հարագատ մնալով հօրս գրելաոճին, հնչեղութիւն տալով նրա կարծիքներին, մեկնաբանութիւններին եւ վերլուծութիւններին: Եթէ զգացել եմ, որ ընթերցողին պէտք են յաւելեալ տեղեկութիւն եւ լուսաբանութիւն, դրանք ներկայացրել եմ տողատակի ծանօթութիւններով, կամ տեքստի մէջ [ ] նշանների արանքում:

Հիտլերն ուղղեց իր քաղաքական եւ ռազմավարական սխալը եւ 1941-ի յունիս 22-ին գերմանական մեքենան շարժուեց դէպի Արեւելք, դէպի Ռուսաստան<sup>2</sup>, որի մակերեսի եւ ընդերքի մեծ հարստութիւնը կարող էր համապատասխանել Գերմանիայի երազած կենսական տարածանքին: Գերմանական ցամաքային եւ օդային զինեալ ուժերը, կայծակնային թափով եւ համարեա թէ առանց ուժեղ ընդդիմութեան հանդիպելու, շարժում էին դէպի Խորհրդային Միութեան խորքերը: Քաղաքացիական պատերազմի ծնունդ Կարմիր Բանակը մի կողմից գերի էր ընկնում, միւս կողմից՝ նահանջում: Ռուսական օդային ուժը կարծես չէր համարձակուում օդային մարտի դուրս գալ գերման օդատորմիղի դէմ: Ժամանակի զինուորական եւ քաղաքական դէմքերը երկնային հրաշք համարեցին Ռուսաստանի պատերազմի մէջ մտնելու իրադարձութիւնը: Գերմանական գլխաւոր բանակները փոխադրուած էին ռուսական ճակատը: Այսպիսով, շունչ քաշեց ու փրկուեց Մեծն Բրիտանիան:

Պատերազմի բոցերը մօտենում էին Կովկասին: Հաւանական էր համարուում Թուրքիայի պատերազմի մէջ մտնելը եւ թուրք-գերմանական ուժերի արշաւը դէպի Անդրկովկաս: Շատ աւելի հաւանական էր համարուում նաեւ այն պարագան, որ դաշնակից ուժերը կարող էին գրաւել Իրանը, որպէսզի հնարաւորութիւն ու ճամբայ ունենային զէնք եւ ռազմամթերք ուղարկելու Ռուսաստանին՝ նպատակ ունենալով զօրացնել նրա

2 Հօրս հեղինակած յուշերում, այսինքն՝ այս գրքի 3-րդ եւ 4-րդ գլուխներում, շատ յաճախ հայրս Ռուսաստան, ռուսներ կամ ռուսական եզրոյթներն է գործածել երբ իրականութեան մէջ հարցը ամբողջ Խորհրդային Միութեան է վերաբերել, այսինքն՝ Խորհրդային Միութիւն, սովետներ, կամ սովետական: Իմ կողմից սրբագրելը ճիշտ չնկատեցի, քանի որ գիտեմ, դա պարզ սխալմունք չէ, այլ՝ բխում է ԽՍՀՄ կառոյցի ու ներքին քաղաքականութեան նրա ընկալումից: Նրա մտքում Խորհրդային Միութիւնը ամէն առումով հարազատ յաջորդն էր Յարական Ռուսաստանի, եւ ուրեմն որպէս բնագոյային արտայայտութիւն, Խորհրդային Միութիւն եւ Ռուսաստան եզրոյթները նոյնանում են նրա գրականութեան մէջ:

դիմադրությունը ընդդեմ Գերմանիայի եւ յետաձգել Ռուսաստանի պարտությունը:

ՀՅԴ Ատրպատականի Կենտրոնական կոմիտեին շատ աւելի մտահոգում էր Հայաստանին սպառնացող վտանգը, որ գալիս էր այն հաւանական ենթադրութիւնից, ըստ որում, Թուրքիան, գերմանական ուժերի օգնութեամբ, կարող է զինուորական գործողութիւններ սկսել դէպի Արեւելք՝ ստեղծելու համար համաթրքական մեծ կայսրութիւն: Դա քեմալական Թուրքիայի քաղաքական երազն էր, իսկ այդ ճամբի վրայ ընկած էր Հայաստանը, որի ոչնչացումը պիտի լինէր համաթրքական կայսրութեան ստեղծման առաջին հանգրուանը: Արդ, այդ մտահոգութիւնից ելնելով, Կ. կոմիտեն յանձնարարում է ինձ՝ հանդիպում ու խօսակցութիւն ունենալ Խորհրդային Միութեան տեղական ներկայացուցիչների հետ եւ նրանց առաջարկել մեր հնարաւորութեան սահմաններում եղած օժանդակութիւնը ի խնդիր Հայաստանի անվտանգութեան ապահովման:

Հանդիպումներն ու խօսակցութիւնները սկսում են Խորհրդային Միութեան հիւպատոսարանում բաւականաչափ նպաստաւոր մթնոլորտում եւ մտնում լաւատես ընթացքի մէջ, ինչ որ ենթադրել է տալիս, որ բարեյաջող ելքի պիտի յանգեն մեր եւ Խ. Միութեան Թաւրիզի ներկայացուցիչների միջեւ տեղի ունեցող բանակցութիւնները: Եւ իսկապէս, այս տեսակէտից շատ յատկանշական է Խ. Միութեան ներկայացուցիչ Ազարոնովի (Ահարոնեան) յայտարարութիւնը, թէ «Պիտի կոտրենք մեր եւ ձեր միջեւ գոյութիւն ունեցող սառոյցը»:

Հետագայում Հ.Յ.Դաշնակցութեան Բիւրոն հաւանութիւն է տալիս մեր տուած որոշման եւ սկսած բանակցութեան եւ յայտնում է մեզ, որ Դաշնակցութիւնը կանգնած է դաշնակիցների կողքին եւ որ Ատրպատականի մեր կազմակերպութիւնը պատրաստ պիտի լինի իր ֆիզիքական, նիւթական եւ բարոյական ուժով նեցուկ

լինելու և օգնելու Կարմիր Բանակին՝ ընդդեմ Թուրքիայի:<sup>3</sup>

Այսպիսով, մեր հանդիպումներն ու խօսակցությունները շարունակում են նաև գրաւումից յետոյ. հանդիպումներին մասնակցում էին երկու հայ սպաներ, որոնք Թաւրիզ էին եկել գրաւող բանակի հետ: Նշենք և ընդգծենք սակայն, որ մեր բանակցությունները տարբեր ընթացք է բնոյթ ունէին՝ գրաւումից առաջ և գրաւումից յետոյ: Նախքան գրաւումը խօսակցությունները տեղի էին ունենում հաւասար գետնի վրայ և ըստ փոխադարձ յարգանքի սկզբունքների. գուցէ նաեւ՝ առաջադրուած նպատակին հասնելու ձգտումով: Սակայն գրաւումից յետոյ բանակցությունները ստանում են մի տեսակ կիսահարցաքննական բնոյթ: Մեր խօսակիցները երեւան են բերում բոլշեւիկեան անհանդուրժողականութիւն, քինախնդրութիւն, կոյր ատելութիւն և անմար թշնամանք Ղաշնակցութեան հանդէպ:

Ընդհատում է ապա խզում են բանակցությունները: Խորհրդայինները մերժում են մեր օգնութեան առաջարկը, որ տրուած էր առանց որեւէ ակնկալիքի, միայն ու միայն վասն Հայաստանի ապահովութեան: Այսպիսով, ոչ միայն չկոտրուեց սառնոյցը, ոչ միայն ձինհալք չսկսուեց, ինչպէս յայտարարել էր Ագարոնովը, այլ ընդհակառակը սառնոյցը աւելի կարծրացաւ և աւելի սառեց մեր և նրանց յարաբերությունները: Այդուհանդերձ, ելակէտ ունենալով մեր հիմնական կողմնորոշումը և նրանից բխող ազգային քաղաքականութիւնը՝ Հայաստանի անվտանգութիւնը և հայ ժողովրդի ապահովութիւնը, մենք յայտարարեցինք, որ մնում ենք լոյեալ դիրքերում հանդէպ ղաշնակիցների, հանդէպ Խորհրդային Միութեան և գրաւող բանակի, մինչդեռ մի անգամ ևս հաստատուեց, որ բոլշեւիկ-համայնավարականների համար

3 ՀՅԴ 13-րդ Ընդհանուր Ժողովը 1938-ին, վերջինը պատերազմից առաջ, որոշում էր կայացրել պատերազմը բռնկելու պարագային հետեւել այն քաղաքականութեան, որ հայ ժողովրդի ապահովութեան կը սատարի:

առաջնահերթը իրենց ռեժիմն ու իշխանությունը պահպանելն է, ոչ թե երկիրն ու ազգային գերագոյն շահերը:

Գերմանիայի յառաջխաղացքի դէմ պաշտպանուող Ռուսաստանին օգնելու հարցը կենսական ու ճակատագրական կարեւորություն ստացաւ դաշնակիցների համար: Ռուսաստանին զէնք, ռազմամթերք եւ կենսամթերք մատակարարելու լաւագոյն ուղին՝ Պարսկաստանի ճանապարհով էր, որ հետագայում դաշնակիցների կողմից «Ոսկէ Կամուրջ» կոչուեց: Ուրեմն, ինչպէս նախատեսուում էր, խախտելով Իրանի չէզոքությունը, գրաւեցին երկիրը: Յարձակումը սկսուեց 1941թ. օգոստոս 25-ին: Հարաւից ներխուժեցին անգլիական զինեալ ուժերը, իսկ հիւսիսից՝ ռուսական բանակները:

Թէեւ Իրանը չէզոք քաղաքականություն էր որդեգրել, սակայն իրանական ժողովրդի մեծամասնութեան համակրանքը գերմանացիների հետ էր: Ժողովրդի մէջ գոյություն ունէին խիստ հակաանգլիական ու հակառուսական տրամադրութիւններ, որոնք դրսեւորուում էին շատ ցայտուն ձեւերով:

Նախագրաւման շրջանում իրանական ժողովուրդը տարօրինակ եւ անբացատրելի կերպով խանդավառուում էր գերմանական զինուորական յաջողութիւններով: Ոմանք, նոյնիսկ կիսապաշտօնական շրջանակի պատկանող մարդիկ, չէին թաքցնում եւ բացէ ի բաց խօսում էին այն մասին, որ շուտով պիտի գրաւեն Անդրկովկասը, տիրանան Բաքուի նաւթին եւ իրենց ռազմական սպայակոյտը հաստատեն Երեւանում:

Ոչ մի կասկած այն մասին, որ այս քաղաքական մտայնութիւնն ու երազանքները մաս չէին կազմում պետական որեւէ ծրագրի եւ կապ չունէին պաշտօնական մտայնութեան հետ: Դրանք արդիւնք էին Իրանում գտնուող գերմանացի գաղտնի եւ յայտնի գործիչների ու գործակալների քարոզչութեան՝ պարսիկ զանգուածների որոշ շրջանակներում ցանաձ սերմերի ու խայծերի: Նպատակն

էր՝ գերմանական քաղաքական ծիրի մէջ առնել պարսիկներին, հրապուրել եւ լաւագոյնս օգտագործել նրանց:

Նախագրաւման շրջանում գոյութիւն ունէր մի տեսակ եռուզեռ եւ լարուածութիւն, մասնաւորապէս՝ Ատրպատականի ու Թաւրիզի թուրք երիտասարդ մտաւորականութեան շրջանակներում: Սրանք դժգոհ էին Թեհրանի իշխանութիւնից եւ ապրում էին Ատրպատականն անջատելու տրամադրութիւններով: Իրանի հողային ամբողջութեան սպառնացող այս կրակի վրայ իւր էին լցնում միւս կողմից նաեւ ռուսները, ի հարկէ՝ իւրաքանչիւրն ըստ շահերի եւ հաշիւների:

1941 թ. օգոստոս 25-ի վաղ առաւօտեան արդէն փոխուած էին Թաւրիզի մթնոլորտն ու կերպարանքը:

Պատերազմ չէր, ոչ էլ խաղաղութիւն, սակայն կար մի բան, որ թոյլ էր տալիս մտածելու եւ ենթադրելու, որ մօտ է փոթորիկը եւ որ կանգնած ենք գալիք մի նոր կացութեան առջեւ: Թէեւ անսպասելի չէր մեզ համար այդ կացութիւնը, սակայն կարծես մենք տակաւին պատրաստ չէինք այն դիմագրաւելու: Երկրորդ համաշխարհային պատերազմի բոցերն էին, որ մօտենում էին մեզ. Կարմիր Բանակի ներխուժումն էր, նրա ներմուծելիք համայնավարական խուժանային շարժումը, որի հետեւանքներն ու տարողութիւնը դժուարանում էինք պատկերացնել:

Քաղաքի գլխաւոր փողոցով հիւսիսից դէպի հարաւ, զօրանոցից դէպի Իրան-խորհրդային սահմանը, սրինգի մեղմ ու բարակ ձայնի ընկերակցութեամբ, անցնում էր մի զինուորական միաւոր՝ իր թնդանօթներով ու զրահապատներով: Այս երթը չէր նմանում ճակատ գնացող զինուորական շարժման: Չկար ոգեւորութիւն եւ ոչ էլ խանդավառութիւն: Կարծես նրանք չգիտէին, թէ ուր են գնում եւ ինչ պարտականութիւն ունեն կատարելու: Քայլում էին դանդաղ, տխուր եւ կարծես աննպատակ:

Ինչ էր կատարում, յայտնի չէր. նշմարում էր, սակայն, մի

տեսակ մտահոգությունն էլ խուճապանման մի բան: Ես էլ էի մտահոգուած: Չէի կարողանում հասկանալ, թէ ինչ է կատարում: Դժուար էր ստուգել կացութիւնը եւ շրջան առած լուրերը: Ես մտահոգուած էի մանաւանդ նրանով, որ ընտանիքիս մի մասը (կինս՝ Փառիկը, մեն լաղչկան՝ Ռուբինայի հետ) ներխուժման նախօրէին ամառանոցից քաղաք էր եկել՝ յաջորդ օրը վերադառնալու համար, իսկ փոքր դուստրս՝ Ռուզանը, եւ հօրեղբօրս Լաւրիկը՝ Վարդուհին, մնացել էին ամառանոցում:

Փողոցում հանդիպեցի զինուորական դպրոցի տեսուչ գնդապետ Բեգլարիին եւ հարցրի, թէ ինչ է կատարում եւ ինքը ինչով է բացատրում տեղի ունեցող երեւոյթները եւ շրջան առած խօսակցութիւնները: «Մտահոգիչ ոչինչ չկայ: Զօրքը մանովը է գնում», – ասաց գնդապետը եւ արագ հեռացաւ:

Ստացածս պատասխանը չբաւարարեց ինձ: Ես միջոցների դիմեցի, որ կարողանամ երեխաներիս տուն վերադարձնել: Արագ կերպով փոխում էր կացութիւնը: Դադարում էր նաեւ քաղաքի երթելակը: Չքանում էին փոխադրական միջոցները: Զինուորական փոխադրութիւններ կատարելու համար կառավարութիւնը բռնագրաւել էր մեքենաները եւ ձիաքարշ կառքերը: Մի որոշ մասն էլ թաքցուել էր, որպէսզի զերծ մնար բռնագրաւումից:

Երկար ու դժուարին փնտռութից յետոյ, քաղաքի հեռաւոր արուարձաններում, կարողացայ գտնել երկու ձիաքարշ կառք եւ սովորական գնից մի քանի անգամ աւելի վճարելուց յետոյ ճամբայ ընկայ դէպի ամառանոց՝ Վասմինջ գիւղաքաղաքը, որ գտնւում է Թեհրան տանող ճամբի վրայ՝ մի քանի կիլոմետր Թաւրիզից հեռու:

Տեղ հասայ կէսօրից յետոյ մօտաւորապէս ժամը երկուսին: Հայ ամառանոցաւորները, ընդ որս նաեւ իմ երեխաները, ի մի հաւաքուած, անձկութեամբ սպասում էին իւրայիններին, որ քաղաքից պիտի գային եւ փրկէին իրենց: Ի տես այս տխուր



կացութեան, առաջարկեցի, որ երեխաներին տեղաւորենք կառքերի մէջ, իսկ մենք ոտքով շարժուենք դէպի քաղաք: Առաջարկս մերժուեց: Տարօրինակ էր Ջոջ Աղայի կարծիքը, թէ լաւ է որ երեխաներին ու կանանց թողնենք այստեղ, իսկ մենք՝ տղամարդիկս, կառքերով գնանք թաքնուելու որեւէ ապահով վայրում: Ամէն պարագայի մենք մի քանի բարեկամներ ու ազգականներ լեցուեցինք կառքերի մէջ եւ շարժուեցինք դէպի Թաւրիզ:

Երբ անցանք Շիրքի կոչուած լեռնային ոլորապտոյտը եւ մեր աչքերի առջեւ բացուեց Թաւրիզի դաշտավայրը, տեսանք, որ քաղաքից գաղթում է թուրք ժողովուրդը: Տեսանք նրանց երկար հոսանքը, խուճապահար փախչողների շարքը, որի ծայրը հասել էր Շիրքիի տակը, իսկ սկիզբը Թաւրիզ էր դեռ: Մարդիկ գաղթում էին ինքնաշարժերով, ձիաքարշ կառքերով եւ ոտքով: Նրանք թողել էին տուն ու տեղ եւ գնում էին: Գա՛ղթ: Ես առաջին անգամն էի տեսնում այս ահռելի եւ անգութ գազանը, որ բազում անգամ աւերել է հայի տունն ու տեղը: Ուրեմն, ներխուժող բանակը, եթէ չի մտել քաղաք, ապա շատ մօտ պիտի լինի: Կարելի է նաեւ ենթադրել, որ օղանաւերը ջմբակոծել են քաղաքը. եթէ ոչ, ինչպե՛ս եւ ինչո՞վ կարելի է բացատրել ժողովրդի խուճապահար փախուստը քաղաքից:

Ի՞նչ վիճակի մէջ են քաղաքում մնացած երեխաներս: Իմ այս ծանր մտահոգութիւններիս հիմք էր ծառայում նաեւ այն իրողութիւնը, որ տեղական թուրք բնակչութեան մի զգալի մասը լաւ տրամադրութիւն չունէր հանդէպ հայութեան՝ անհիմն ու անտեղի կերպով նրան համարելով ռուսասէր եւ բարեկամ ներխուժող բանակի: Մենք մեր կառքերով գնում էինք դէպի Թաւրիզ, մեր տները, իսկ նրանք, տուն ու տեղ լքած, փախչում էին Թաւրիզից:

Մի քանի անգամ նրանք կանգնեցրին մեր կառքերը եւ պահանջեցին մեր կառապաններից մեզ ցած թափել եւ կառքերը

տալ իրենց: «Սրանք գնում են իրենց բարեկամների մօտ (ակնարկը վերաբերում էր ռուսներին), իսկ մենք փախչում ենք նրանցից», – ասում էին գաղթողները:

Մեր կառապանները ազնիւ մարդիկ էին եւ տեղի չտուեցին: Մօտեցել էինք Թաւրիզին, երբ մի ինքնաշարժ մօտեցաւ ինձ եւ ասաց. «Դոկտոր, ո՞ր եք գնում, ո՞ր եք տանում երեխաներին: Քաղաքը հրդեհի մէջ է, աւերակ է դարձել, արիւն է հոսում, մի՛ տարէք երեխաներին»: Ասաց եւ արագ կերպով հեռացաւ: Զինուորական դպրոցի տեսուչ գնդապետ Բեգլարին էր, որ առաւօտեան ասում էր՝ ոչինչ չկայ մտահոգիչ, ռազմական մանովր: է:

Ծանր ու դառն մտահոգութիւններով շարունակեցինք ճամբան դէպի քաղաք: Քաղաքը երեւում էր արդէն, եւ մենք դիտում էինք՝ տեսնելու համար հրդեհը, աւերը, արիւնահեղութիւնը, սակայն ոչինչ չկար արտասովոր:

Համարեա քաղաքի կենտրոնում ենք, ու ոչինչ չկայ, որ համապատասխանի գնդապետ Բեգլարիի ասածներին: Ռմբակոծուած չէ քաղաքը: Ռմբակոծման հետքեր չգտանք, եթէ հաշուի չառնենք Փահլաւի պողոտայում մեր բնակարանի մօտերը ընկած փոքր ժումբը, որ չէր պայթել, միայն փոս էր գցել ասֆալտը:

Ես արդէն բաւական հանգստացել էի, երբ հանդիպեցի եղբօրս՝ Ասատուրին, որ երկմտութիւնից դրդուած դուրս էր եկել եւ գալիս էր դէպի մեզ: Նա մեզ հաւատացրեց, որ երեխաները լաւ են, տակաւին գրաւուած չէ քաղաքը, եւ հայերը զուսպ են ու զգուշաւոր:

Կը նշանակէ, թէ հարսանիքը տակաւին չի սկսել, սակայն գալիս է դըրիւ-գումնայի ձայնը:

Մեր բնակարանը գտնւում էր քաղաքի բանուկ կենտրոնում՝ Փահլաւի Պողոտայի վրայ, եւ հետեւաբար ենթակայ էր հաւանական ամէն տեսակի վտանգների: Ուստի ընկերներս, բարեկամներս ու ծանօթներս խորհուրդ տուեցին փոխադրուել

Լիլաւա կոչուած հայկական թաղամասը, որ համեմատաբար անելի ապահով էր: Տեղին ու բանական գտնելով այս առաջարկը՝ անմիջապէս փոխադրուեցինք Լիլաւա՝ Գուրգէն Բաղալեանի տունը:

Գուրգէնը եւ իր տիկինը՝ Վարդին, բարեհաճ եւ սիրալիր կերպով, մեզ հիւրընկալեցին իրենց տանը, մինչեւ որ բնակարան գտանք եւ տեղափոխուեցինք: Մեր նոր բնակարանը նոյնպէս ապահով էր համեմատաբար եւ գտնուում էր մի նեղ փակուղում, ինչպէս հայկական թաղի միւս տները, այդու հեշտ էր պաշտպանուել այնտեղ զանազան պատահարներից:

Կարմիր Բանակը, առանց նախապէս ազդարարութեան, այսինքն՝ առանց պատերազմ յայտարարելու, անցել էր սահմանը եւ գրեթէ առանց ընդդիմութեան հանդիպելու Պարսկաստան էր մտել: Կարմիր Բանակը մէկ թելով շարժում է դէպի Ռեզայիէ-Ուրմիա եւ Սալմաստ, գրաւում այդ շրջանները եւ դիրք բռնում Թուրքիայի դէմ: Նպատակն էր, հաւանօրէն, դիմագրաւել թուրք-գերմանական ներխուժումը հիւսիս-արեւմտեան Իրան եւ ապահովել Անդրկովկասի թիկունքը, Բաքուի նաւթը, ինչպէս նաեւ Պարսկաստանի վրայով օգնութիւն ստանալու ճանապարհը:

Միւս թելը շարժում է դէպի Թաւրիզ եւ յաջորդ օրը՝ օգոստոս 26-ին, «յաղթականօրէն» մուտք է գործում քաղաք եւ շարունակում իր երթը դէպի Թեհրան՝ ձգտելով մայրաքաղաք մտնել անգլիացիներից առաջ: Սակայն Թեհրան չհասած՝ դաշնակիցները հարկադրում են Կարմիր Բանակին Քարաջից (քառասուն կիլոմետր Թեհրանին մնացած) վերադառնալ եւ կանգնել Զանջանում, քանի որ Թեհրանը յայտարարուած է չէզոք գոտի:

Քօղարկուած հինգերորդ զօրասիւնի նման հրապարակ են իջնում 1938-39-ին Անդրկովկասից արտաքսուած հայ եւ թուրք գաղթականները եւ խանդավառութեամբ ու ծաղիկներով

դիմաւորում են գրաւող զօրամասերի յառաջապահներին: Կազմալուծում եւ ցիր ու ցան է լինում անգլուխ մնացած պարսկական բանակը: Ի չիք է դառնում տեղական իշխանութիւնը: Փողոց են իջնում թուրք եւ հայ խուժանն ու տականքը, որ այդ ժամանակ յայտնի էին մոհաջիր (զաղթական) անունով, եւ դառնում դրութեան տէրը:

Ռուսական օդանաւերը թռուցիկներ են ցրում եւ սպառնում «դաշնակներին», «ֆաշականներին» եւ «մուսաւաթականներին»: Խուժանավարները սրանով ազդանշան են տալիս խուժանին, որոնք գրաւոր եւ բանաւոր յայտարարութիւններով, Զիհադի (սուրբ պատերազմի) են դուրս գալիս Դաշնակցութեան եւ դաշնակցականների դէմ եւ կոչ են անում «Զարդել դաշնակների գլուխը»: Այսպէս գրաման առաջին օրից իսկ վերանում է գրաւեալ շրջանների անդորրութիւնը եւ կեանքի ու գործի ապահովութիւնը:

Ընդհուպ ընդգծենք, որ ի զուր եւ ապարդիւն են անցնում պղտոր ջրերում ձուկ որսացող խուժանավարների եւ խուժանի սպառնալիքները՝ դէմ-յանդիման գալով Հ.Յ.Դաշնակցութեան Ատրպատականի կազմակերպութեան պողպատեայ կառուցաշէնքին եւ դաշնակցականների սառնարին, կարգապահ եւ առնական կեցուածքին:

Քաղաքը գրաւելուց անմիջապէս յետոյ Կարմիր Բանակի սպայակոյտը զինուորական դրութիւն յայտարարեց եւ պահանջեց քաղաքացիներից ռուսական զինուորական իշխանութեան յանձնել իրենց զէնքերը եւ ռադիոները:

Հ.Յ.Դաշնակցութեան Կ. կոմիտէն հապճեպ խորհրդակցութիւնից յետոյ որոշեց յայտնել ռուսական ներկայացուցիչներին, որ մենք մեր զէնքերը չպիտի յանձնենք: Մեր կապի միջոցով յատուկ ժամադրութիւն նշանակուեց: Ժամադրութիւնը գիշերով էր: Ես դուրս եկայ տնից՝ հանդիպելու մեր կապին եւ նրա հետ գնալու ժամադրավայրը: Զինուորական

դրության պատճառով քաղաքը ամբողջությամբ թաղուած էր խաւարակոտ մթութեան մէջ:

Պողոտաներում կանգնած էին կարմիրքանակայինները եւ այդ տեղ էլ, գլխաւորաբար՝ նեղ փողոցներում, զինուած մոհաջիրներ:

Մեր նեղ փողոցում, ոչ շատ հեռու մեր տնից, ինձ կանգնեցրեց զոյգ հրացաններն ուսերին մի հայ մոհաջիր. մի գնդակ արձակելով օդի մէջ՝ հարցրեց. «Ո՛ր ես գնում: Դաշնականներն առաջնորդարանում ժողով ունեն, չգնաս այնտեղ»: «Լա՛ւ», – ասացի ու ճամբայ ընկայ:

Հանդիպեցի մեր կապին, եւ միասին գնացինք դէպի հայկական միւս թաղամասը՝ Ղալա, ուր գտնուում էր սպայակոյտի կայանը: Ճամբին, «Ստոյ» ասելով, մեզ կանգնեցնում էին ռուս պահակ-զինուորները: Մեր կապը նրանց ականջին փսփսում էր գիշերուայ անունը, եւ մենք շարունակում էինք մեր ճամբան:

Մտանք սպայակոյտի եւ ՉԷԿայի ժամանակաւոր հաստատութիւն-շէնքը: Մի պահակ ինձ առաջնորդեց Ագարոնովի գրասենեակը: Մենակ էր նա: Մի քանի ծիսական խօսքեր փոխանակելուց յետոյ անցայ զինուորական իշխանութեան այն յայտարարութեան, որով պահանջւում էր Թաւրիզի բնակիչներից յանձնել իրենց զէնքերը, եւ յարեցի. «Ես կարծում եմ, որ սա վերաբերում է անհատներին եւ անհատական զէնքերին: Գալով մեզ, պիտի ընդգծեմ, որ մեր կուսակցութիւնը ինքնապաշտպանութեան սահմանուած զէնք է ունեցել թէ՛ Թուրքիայում եւ թէ՛ Ռուսաստանում, բայց մենք զէնք չենք յանձնել ո՛չ ցարական Ռուսաստանի իշխանութեան եւ ո՛չ էլ սուլթանական Թուրքիոյ կառավարութեան: Այստեղ էլ զէնք ունենք վասն ինքնապաշտպանութեան եւ այդ զէնքերը ձե՛զ էլ չպիտի յանձնենք մեր յօժար կամքով. սակայն դուք դրութեան տերն էք, կարող էք բռնագրաւել մեր զէնքերը, եթէ ուզում էք: Իհարկէ, դուք այդ կարող էք անել միայն անցնելով մեր դիակների վրայով»:

Այս պահին բացուեց դիմացի կարմիր մեծ վարագոյրը, եւ դերասանական ժեստով ներս մտաւ մի բարձրահասակ եւ տպաւորիչ հայ գնդապետ եւ սեղմելով ձեռքս, ասաց. «Ողջունում եմ ձեր կեցուածքը»:

Վեր կացայ տուն գնալու համար: Ազարոնովը կարգադրեց, որ ինձ տուն հասցենն մեքենայով: Ես շնորհակալութեամբ մերժեցի մեքենան եւ խնդրեցի, որ ինձ ընկերակցի միայն մի զինուոր, որ ճամբին դժուարութեան չհանդիպեմ: Ճիշտն ասած, ես կասկածում էի, որ նրանց ինքնաշարժը, փոխանակ ինձ տուն տանելու, կարող է տանել դէպի Զուլֆա եւ այնտեղից էլ Խորհրդային Միութիւն:

Ողջ եւ առողջ տուն վերադարձայ եւ տեսայ, որ կինս անկողնում նստած աղօթում է ու լացում: Նա տագնապ էր ապրում, մանաւանդ, որ իմ տնից դուրս գալուց անմիջապէս յետոյ լսել էր հրացանի կրակոցը: Նա կարծում էր, որ ես սպանուել եմ:

Խեղճ են դաշնակցականի կանայք: Նրանք տանջւում են, տառապում, խռովք ապրում եւ տագնապում, սակայն նրանք այդ բոլորը տանում են համբերութեամբ եւ հերոսաբար: Նրանք իրական հերոսներ են:

Գրաւեալ շրջանների կացութիւնը քանի գնում, բարդանում է: Դժուար չէ նախատեսել գալիքը եւ այն նոր դրութիւնն ու անակնկալները, որոնք աննպաստ պիտի լինեն հայութեան համար:

Արդէն վաղուց Ատրպատականից հեռացել են պարսկական քաղաքական, քաղաքացիական, զինուորական եւ ոստիկանական իշխանութիւնները: Մնացել են միայն գաղտնի ոստիկանները, որոնք, ականատես ու ականջալուր, հետեւում են դէպքերին եւ երկրի ներքին կացութեան զարգացման ու տեղեկագրում են Թեհրան: Գրաւեալ շրջանների (ընդ որս նաեւ՝ Թաւրիզ) պաշտօնական տէրն ու տիրականը ռուսական զինուորական իշխանութիւնն է եւ Չէհան, որի մարզն է քաղաքական կեանքը եւ թշնամի-

հակառակորդների մարդորսությունը: Այդ գոյգ իշխանութեանց կողքին հրապարակ են իջել նաեւ հայ եւ թուրք մոհաջիրները եւ ձեռք առել փողոցի իշխանությունը: Սանձարձակ են այս տականքները եւ ձեռնամուխ են լինում անպատասխանատու արարքների: Ստեղծուած է ծանր ու անշնչելի մթնոլորտ: Թալան, կողոպուտ, յոխորտանք, հրացանաձգություն: Վերացուած է կեանքի ու գոյքի ապահովությունը: Այս խուժանի ղեկավարությունը արդէն տեղաւորուել է իր կենտրոն-հաւաքատեղում, որ գտնուում է Քարաշէնք կոչուած փողոցում: Ծանօթ են արդէն այդ «շարժման» ղեկավարները, դրանցից մէկը մեր նախկին ընկեր Դալի Ղազոն է, որ դաւանափոխ է եղել: Շրջան են առել հայկական թաղի վրայ յարձակուելու շշուկները, լուրեր են տարածուում, յայտարարություններ են կատարուում:

Թուում է, թէ ՉէԿան է հրահրում այս բոլորը եւ նպատակ ունի սարսափի տակ պահելու հայությունը, հրապարակ հանելու մեր կազմակերպությունը եւ չափելու նրա մարտական ու քաղաքական ուժը: ՀՅԴ Ատրպատականի Կ. կոմիտէն քննում է կացությունը եւ նուազ վնասներով դուրս գալու համար տալիս է մի շարք որոշումներ, որոնք պիտի փոխանցուեն շարքերին իբրեւ անվերաքննելի հրահանգներ:

1.- Շփացած խուժանի հանդէպ լինել սառնարիւն, տեղի չտալ վէճերի, բախման առիթներ չստեղծել, լինել պաշտպանողական դիրքերում, նախայարձակ չլինել, ամէն գնով պաշտպանուել յարձակումների դիմաց, եթէ ծայրայեղութեան են գնում յարձակողները եւ փորձում են գէնք գործածել:

2.- Հսկողութեան տակ առնել հայկական թաղը եւ ոչ մի գնով թոյլ չտալ, որ խուժանը մուտք գործի այնտեղ:

3.- Ռուսների կողմից կանչուելու եւ հարցաքննուելու պարագային, ոչինչ չասել ո՛չ կուսակցութեան եւ ոչ էլ նրա քաղաքականութեան մասին եւ մատնանիշ անել Կ. կոմիտէի

ներկայացուցին: Այս որոշումի նպատակն է թոյլ չտալ, որ կազմակերպութիւնը ամբոխի վերածուի, մանաւանդ՝ յաշս ռուսներին:

4.- Զէնք չյանձնել գրաւող իշխանութեան եւ ոչ ոքի:

Բացի այս կարգադրութիւններից, նոյն նիստում որոշուում է նաեւ, 1) Հսկել Առաջնորդ Մելիք-Թանգեանի եւ Առաջնորդարանի անվտանգութեան վրայ. 2) Կ. կոմիտէի անդամները եւ միւս ղեկավարները ոչ մի դէպքում չհեռանան քաղաքից, մնան քաղաքում եւ բաժանեն ժողովրդի ճակատագիրը:

Շարունակուում է Թաւրիզի ներքին կեանքի պրկուած իրավիճակը: Եռուն «գործունէութեան» մէջ է խուժանը՝ գրաւոր ու բանաւոր սպառնալիքներ ու լուտանքներ Դաշնակցութեան հասցէին: «Օձի պէս կը ջարդենք դաշնակների գլուխը», – յոխորտում են նրանք, սակայն հակառակ իրենց ամպագոռոռ սպառնալիքներին, չեն յանդգնում որեւէ դաշնակցականի կամ որեւէ հայի գլուխը ջարդել՝ իրագործելու համար իրենց «յեղափոխական» իդէալը:

Ինքնավստահ, առնական, շրջահայեաց, կարգապահ եւ սառնարիւն են դաշնակցութեան շարքերը: Այդուիանդերձ եղան թուլամորթներ ու վախկոտներ, դաւանափոխներ եւ նոյնիսկ լրտեսներ, որոնք թաքուն դաւում էին կուսակցութեան եւ հայութեան դէմ:

Կարմիր Բանակի հինգերորդ գորասիւնը, այսինքն՝ փողոց իջած խուժանը, լծուած էր լրտեսական ու լրահաւաքական գործին եւ դաշնակցականների անուանացանկը ՉէԿային յանձնելու աշխատանքին: Ըստ պատրաստուած ցանկերի, Թաւրիզի մեր կազմակերպութեան անդամների թիւը հասել էր մի առասպելական գումարի՝ 20-ից 25 հազար:

Այս կացութիւնը աւելի վատթարացնելու եկաւ մի նոր ազդակ եւս, որ պիտի գրգռէր պրոտովետ ամբոխին, խաղար խուժանի մութ



բնագրների հետ, հրահրել խառնակությանց կրակը, ամբոխին մղել թալանի, կողոպուտի եւ մարդասպանության: Այսպես աւելի ու աւելի էր պրկւում կացութեան լարուածութիւնը, թանձրանում էր մթնոլորտը եւ աւելի ծանր մտահոգութիւն պատճառում Թաւրիզի հայութեան: Այս նոր գործօնը «Վաթան Եօլնդա» (հայրենիքի ճամբին) թերթն էր, որ լոյս էր տեսնում թուրքերէն լեզուով Բաքուից եկած եւ Թաւրիզ հաստատուած Ադրբեջանական Չէհայի հրատարակութեամբ: Թերթը պարտադրաբար ծախւում էր ժողովրդի եւ դպրոցների մէջ:

«Վաթան Եօլնդա»ն նախ հետապնդում էր պարսկական Ատրպատականի անջատումը եւ նրա միացումը Խորհրդային Ադրբեջանին եւ ապա իր բոլոր համարներով յարձակւում «դաշնականների», «մուսաւաթականների» եւ «ֆաշականների» վրայ, դատապարտում նրանց որպէս գերմանական գործակալներ եւ սպառնում ոչնչացնել նրանց: Թերթի ղեկավարները նիւթ էին մատակարարում փողոց իջած խուժանին, հովանաւորում ու գրգռում նրանց, տոն տալիս նրանց անիշխանական արարքներին եւ նրանց դարձնում աւելի համարձակ եւ աւելի յանդուգն: Այս թերթի հրատարակումով առանձնապէս շեշտուեց խուժանի հակահայ ընթացքը: Աւելի յաճախակի դարձաւ հայկական թաղի վրայ յարձակուելու նրանց փորձերը: Արդարեւ, խուժանը մի քանի անգամ փորձեց, աղմուկ-աղաղակով, մտնել հայկական թաղը, սակայն ապարդիւն: Զինուած դաշնակցական տղաները, յետ էին մղում կուռ պաշտպանութեան բախուած խուճապահար ամբոխին:

Նկատի ունենալով, որ «Վաթան Եօլնդա»ն գրգռիչ գաղափարներ էր տարածում, Կ. կոմիտէն անհրաժեշտ սեպեց հանդիպել խմբագրութեան հետ եւ բացատրութիւն տալ մեր դիրքորոշման մասին, յայտնել, որ մենք բանակցութիւններ ենք վարել Խորհրդային Միութեան Թաւրիզի ներկայացուցչութեան հետ, եւ ներկայիս լոյեալ դիրքի եւ ընթացքի մէջ ենք:

Յատուկ ժամադրություն վերցնելով՝ գնացի թերթի խմբագրություն, որ գտնուում էր Փահլավի պողոտայում՝ քիչ մնացած Գոլստան պարտեզին: Զինուորական իշխանության համար բռնագրաւում մի մեծ շէնք էր դա, որի մուտքերի առջև գտնուող մայթի մի որոշ մասը փակուած էր շղթայով եւ երկու գնդացիրով: Ինձ ներս ընդունեցին եւ տարան խմբագրութեան սենեակը, որտեղ նստած էր մի աղբբէջանցի սպայ՝ կարճահասակ թուխ մազերով ու սեւ աչքերով, կարճ գլխով եւ կլոր դէմքով մի մարդ: Նա գոռոզ էր, ամբարտաւան, ունէր խիստ դէմք եւ փքուած կեցուածք: Նմանում էր այն տիպի մարդկանց, որոնք կարծում են, թէ իրենք տէրն ու տիրականն են աշխարհի եւ աշխարհի մարդիկ ենթակայ են իրենց կամքին:

Սովորական ծիսական խօսակցութիւնից յետոյ անդրադարձայ այցելութեանս նպատակին: Ասացի, որ թուրքերէն կամ ռուսերէն լաւ չգիտեմ եւ խնդրեցի, որ թոյլ տան խօսելու ֆրանսերէն եւ կամ մի թարգմանիչ բերեն: Խմբագիր սպան, ընդառաջելով իմ խնդրանքին, հեռախօսով կանչեց մի հայ սպայի, միջին տարիքի երկարահասակ, նրբակազմ, շագանակագոյն մազերով ու աչքերով, համակրելի մի մարդ էր նա եւ խօսում էր սահուն հայերէն: Հայ սպային ծանօթացրի իմ հանգամանքը եւ խմբագրութիւն գալուս նպատակը ու խնդրեցի, որ պարոն խմբագրին թարգմանէ իմ ասածները:

Թարգմանաբար խմբագրութեանը ներկայացրած իմ հարցերը կարելի է ամփոփել հետեւեալ կէտերի մէջ:

1.- Ներկայ պատերազմում Դաշնակցութիւնը, հետեւաբար եւ ամբողջ Մփիւռքը, ընդ որս նաեւ իրանահայութիւնը, կանգնած է դաշնակիցների կողքին՝ ընդդէմ Գերմանիոյ եւ նրա դաշնակիցների:

2.- Նախքան գրաւումը մեր կազմակերպութիւնը բանակցութիւններ է վարել Խորհրդային Միութեան Թաւրիզի

ներկայացուցիչների հետ եւ առաջարկել մեր ֆիզիքական, նիւթական եւ բարոյական աջակցութիւնն ու օգնութիւնը: Բանակցութիւնները շարունակուել են նաեւ գրաւումից յետոյ եւ ապա ընդհատուել:

3.- Այժմ մեր կազմակերպութիւնն ու հայերը մնում են լոյեալ դիրքերում՝ հանդէպ գրաւող ուժերի:

4.- Հակառակ այս բոլորի, ձեր թերթը հրատարակում է ոչ ճիշտ ու գրգռիչ յօդուածներ, որոնք վատ անդրադարձ են ունենում հայութեան վրայ եւ ստեղծում աննպաստ տպաւորութիւն՝ հանդէպ մեզ:

5.- Արդ եկել եմ խնդրելու ձեզ, որ վերջ տաք այդ յօդուածներին, որոնցից օգտւում են մի շարք անիշխանական եւ անպատասխանատու մարդիկ եւ խմբակցութիւններ:

Իմ բացատրութիւնները լրանալուց յետոյ խմբագիր սպան պահանջեց, որ այս բոլորը գրաւոր տամ, որ դնի թերթի մէջ: Թարգմանիչ հայ սպային ասացի. «Յայտնեցէք պարոն խմբագրին, որ ես չեմ եկել «Վաթան Եռլնդա» թերթին յօդուածներ տալու, այլ եկել եմ լուսաբանելու մեր դիրքը եւ խնդրելու, որ վերջ տրուի ոչ օգտակար յօդուածներին. իսկ եթէ նա չի հաւատում իմ բացատրութիւնների վաւերականութեանը, ապա թող ստուգի Խորհրդային Միութեան տեղիս հիւպատոսարանի հետ:

Այստեղ նշել եմ ուզում անցողակի կերպով, որ բացատրութեանս, տուած լուսաբանութիւններիս եւ պահանջադրութեանս ընթացքում հայ սպայի դէմքը պայծառանում եւ ակնյայտ ուրախութեամբ փայլում էր: Հայ մարդը, ինչ ռեժիմի տակ էլ որ ապրելիս լինի, ինչ գաղափար էլ որ դաւանելիս լինի, նա մնում է հայ եւ անբաժանելի մասնիկը՝ Մայր զանգուածի, Մայր ժողովրդի, հայութեան եւ հայկականութեան: Սակայն պիտի խոստովանեմ, որ «Վաթան Եռլանդա»ի խմբագրի հետ ունեցած իմ տեսակցութիւնը մնաց ապարդիւն: Ադրբէջանական

Չէհայի այս օրգանը շարունակեց իր գրգռիչ քարոզչությունը եւ իր հակահայ եւ հակադաշնակցական ընթացքը՝ աւելի ու աւելի թեւ ու տոն տալով խուժանին:

Արդէն ասացի, որ Ատրպատականի, մասնաւորապէս՝ Թաւրիզի մեր կազմակերպությունը, հակառակ իր գաղափարական, ազգային-քաղաքական սքանչելի կեցուածքին, հակառակ իր ամուր, հաստատուն, վճռական եւ կարգապահ պահուածքին, յամենայն դէպս իր շարքերում ունեցաւ նաեւ վախկոտներ, թուլամորթներ, սայթաքողներ, դաւանափոխներ եւ նոյնիսկ քողարկուած լրտեսներ: Մի քանի խօսք պիտի ասեմ այս տարրերի մասին, առանց սակայն յիշատակելու անունները նրանց, որոնք տակաւին ապրում են:

Այսպէս, գրաւումից մի քանի օր յետոյ ինձ մօտ եկաւ մեր տարագիր ընկերներից, Հայաստանի կռիւներին իր մասնակցությունը բերած Դալի Ղազոն [Դալի թրքերէնով նշանակում է «խենթ», ածական, որ նա ձեռք էր բերել իր ֆիդայական անվախ քաջագործությունների արդիւնքում] եւ յայտնեց, որ գնացել է Կարմիր Բանակի քաղաքական իշխանութեան համապատասխան մարմնի մօտ եւ, իր Մաուզեր ատրճանակը նրանց յանձնելով, ասել է. «Ես կռուել եմ ձեր դէմ. եւ ահա՛ այժմ ձեզ եմ յանձնում իմ զէնքը: Կ'ուզէք սպանեցէք ինձ, կ'ուզէք ներեցէք»:

Չէհան «մեծահոգություն» է արել, ատրճանակը վերադարձրել է Ղազոյին եւ ասել. «Գնա՛ ազատ ապրիր»:

Ուրեմն Դալի Ղազոն մի խոշոր թռիչքով անցնում է Ռուբիկոնը եւ փողոց իջած խուժանի հետ լծւում հակադաշնակցական եւ հակահայ արարքների:

Մեր խօսակցութեան ընթացքին պախարակեցի նրան եւ ասացի՝ այժմ շալակիր ամօթի բեռը եւ գնա՛, սակայն գիտցիր, որ բոլշեւիկները քեզ չպիտի ներեն, պիտի օգտագործեն քեզ

Դաշնակցության դէմ եւ յետոյ ոչնչացնեն քեզ:

Մի ուրիշ ընկեր, որի անունը չեմ ուզում բացայայտել, մօտենում է ինձ ու ասում. «Ես այլեւս դաշնակցական չեմ: Ես յարել եմ բոլշեւիկներին: Այլեւս ինձ վրայ մի՛նայեցէք որպէս դաշնակցականի: Ես այս յայտարարութիւնն անում եմ, որ դուք իմանաք եւ ինձ տեղեակ չպահէք կուսակցական անց ու դարձին եւ կեանքին: Ես ձերը չեմ այլեւս»: Ինձ ցաւ պատճառեց նրա դաւանափոխութիւնը, սակայն ինձ ուրախացրեց նրա ազնուութիւնը: Նա բարձրացաւ իմ աչքում, իր առաքիւնութեամբ: Նա կարող էր չբացայայտել իր դաւանափոխութիւնը եւ գործել իբրեւ լրտես ու ստացած տեղեկութիւնները հաղորդել ուր որ անկ է:

Գրաւումից յետոյ մեր կապը Թեհրանի եւ Ատրպատականի կուսակցական միաւորների հետ սուրհանդակային էր: Փոստը եւ հանրային հաղորդակցութեան միւս բոլոր միջոցները զտնւում էին գրաւող իշխանութեան հսկողութեան տակ: Մենք Բիւրոյի ներկայացուցիչ ընկ. Վարոսին պարբերաբար տեղեկացնում էինք Թաւրիզի շրջանների կացութեան, դէպքերի եւ անցուղարձի մասին: Ընդսմին նրան տեղեկացրել էինք նաեւ այն մասին, որ ըստ ստոյգ աղբիւրներից ձեռք բերած մեր տեղեկութեանց, բոլշեւիկները պիտի ձերբակալեն իրեն, ուստի լաւ կը լինի, որ հեռանայ Թեհրանից եւ գնայ դէպի մի աւելի ապահով վայր, սակայն նա պատասխանել էր մեզ, որ չպիտի հեռանայ եւ պիտի մնայ իր պարտականութեան վրայ: Այդ հարցը բովանդակող մեր երկրորդ նամակը ուշանում է, տեղ չի հասնում: Եւ վերահաս վտանգը իջնում է Հ.Յ.Դաշնակցութեան Իրանի կազմակերպութեան գլխին: Առեւանգում են Բիւրոյի ներկայացուցիչ ընկ. Վարոս Բաբայեանին:<sup>4</sup>

4 Վարոս Բաբայեանը ծնունդ էր Ալեքսանդրապոլում (Գիւմրի), 1886-ին: Վաղ տարիքից անդամակցել էր Հ.Յ.Դաշնակցութեան եւ 1918-ին բարձր պաշտօն էր վարել աշխատանքի նախարարութիւնում: 1921-ին բոլշեւիկներից փախուստ

1941 թիւ, դեկտեմբերի վերջին օրերն էին: Կինս՝ Փառիկը, պատրաստութիւններ էր տեսնում, առաջին անգամը լինելով տօնածառով դիմաւորելու Ամանորը եւ կատարելու իմ անուանակոչութեան տօնախմբութիւնը: Ես էլ որոշում ունէի զաւակներիս՝ Ռուբինայիս եւ Ռուզանիս հետ պարելու տօնածառի շուրջ: Դժբախտաբար երկար չտեսցի իմ ուրախութիւնը:

Նամակ ստացանք Թեհրանի մեր պատասխանատու մարմնից, ըստ որում, 1941 թ. դեկտեմբերի 26-ին բոլշեւիկները առեւանգել են Վարոսին եւ որեւէ տեղեկութիւն չկայ նրա ճակատագրի մասին:<sup>5</sup> Ապա մարմինը պահանջում է, որ չտարածենք լուրը:

Յուզուել եւ բորբոքուել էին մեր շարքերը: Վրէժխնդիր քայլերի դիմելու պահանջ էին անում: Ուրախացել, խանդավառուել եւ հրճում էր բոլշեւիկեան հետեւորդ խումանը:

Վասն զգուշութեան Թաւրիզի ներկայացուցիչ Ագարոնովը թիկնապահներով էր գնում իր պաշտօնավայրը: Փութացիներ յայտնելու նրան, որ առայժմ փոխվրէժի դիմելու նպատակ չունենք:

Գրաման առաջին շրջանում մի օր մեր սիրելի, առաքինի ու ազնիւ, լաւ մարդ եւ լաւ բժիշկ ընկեր դոկտ. Արմենակ Աֆթանդիլեանը, բաւականաչափ վախեցած եւ յուզուած, փողոցում հանդիպեց ինձ եւ յայտնեց, թէ երկու հայ զինուորականներ, գրկելով, իրեն տարել են հիւանդ բժշկելու: Տեղ հասնելով՝ տեսնում է, որ հիւանդ չկայ, մի քանի զինուորականներ են հաւաքուած, որոնք սկսում են հարցեր տալ Դաշնակցութեան եւ նրա քաղաքականութեան մասին: Մեր դոկտորը մերժում է պատասխանել՝ ասելով, որ ինքը բժիշկ է եւ չի հետաքրքրում

տալով՝ հաստատուել էր Թաւրիզ եւ ուսուցչական ասպարէզի մէջ մտել: 1936-ին Իրանում հայոց դպրոցների արգելափակումից յետոյ ընտանիքով փոխադրուել էր Թեհրան: Նա ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչն էր Իրանում եւ միաժամանակ վարում էր «Ալիք» թերթի հրատարակչական բաժանմունքը:

5 Ենթադրում է, որ Վարոս Բաբայեանը ձերբակալուել է խորհրդային ՆԿԱԴ-ի կողմից Թեհրանում եւ ուղարկուել է Խորհրդային Միութիւն: Դարձեալ ենթադրում է, որ նա մահացել է Մոսկուայի բանտում:

այդ կարգի խնդիրներով: Խօսքը վերջացնելուց յետոյ դոկտորը յայտնեց, որ ուզում է փոխել իր հպատակութիւնը եւ դառնալ անգլիական քաղաքացի, որպէսզի ապահով լինի: Բացատրեցի նրան, որ հպատակութեան փոփոխումը ոչ միայն չի կարող փրկել նրան, այլեւ կարող է ունենալ վատ անդրադարձում: Ասացի, որ չվախենայ եւ մենք իրեն կ'առնենք հսկողութեան տակ եւ թոյլ չենք տայ, որ վտանգուի:

Թեհրան ուղարկեցինք Հայկ Ստեփանեանին, որին հալածում եւ հետապնդում էին միայն այն պատճառով, որ մինչեւ գրաւումը նա ծառայում էր գերմանական մի առետրական հաստատութեան մէջ: Ուղարկեցինք նաեւ Օննիկ Չիթեանին, որին հալածում էր խուժանը եւ նոյնիսկ երկու անգամ անյաջող փորձեր էին կատարուել սպանելու նրան: Օննիկը մեր տարագիր ընկերներից էր եւ պատկանում էր կուսակցութեան մարտիկների խաւին: Կ. կոմիտէի խորհրդով, Թեհրան գնաց նաեւ ընկ. Դաւիթ Փափագեանը, որ անդամ էր Կ. կոմիտէի:

Յարմար նկատեցինք Թաւրիզից դուրս ուղարկել նաեւ Քրիստին, որ իր տան մէջ գնդակահարել էր իր դաւանափոխ եւ ապերախտ ընկերոջը՝ Կարոյին: Կարոն 1933 թուականին Հայաստանից Թաւրիզ էր փախել, ապրում էր Քրիստի տանը եւ ցերեկները աշխատում էր նրա խանութում: Գրաւումից յետոյ Կարոն միանում է տականքներից բաղկացած «կազմակերպութեան» եւ հրապարակ իջնում իբրեւ բոլշեւիկեան-համայնավարական քարոզիչ: Կարոն իր ընթացքով եւ իր արարքով երեսն է բերում այնպիսի ապերախտութիւն եւ ամբարտաւանութիւն, որ փորձեր է անում նոյնիսկ ոտնձգութիւններ անել Քրիստի աղջկայ հանդէպ:

Հատում եւ Քրիստի համբերութիւնը եւ մի օր, տանը, սեղանի շուրջ բոլորում ընտանիքի առջեւ Քրիստը իր տասնոցի բոլոր գնդակները պարպում է Կարոյի վրայ: Նա դուրս է գալիս տնից եւ գնում է ընկեր Արշակի մօտ, որը նոյնպէս պատկանում էր մեր

մարտական դասին: Մի քանի օր անցնելուց յետոյ Քրիստին ուղարկեցինք Համադան՝ տեղի կազմակերպութեան ղեկավար ընկեր Ալեքսան Սարգսեանի մօտ:

Աւելորդ չենք համարում նշելու, որ խուժանի կատարած Կարոյի յուղարկաւորութիւնն ու թաղումը իր ձեւով եւ բնոյթով լիովի ցուցաբերում էր այդ մարդկանց մտքի, հոգու եւ կամքի անճարակութիւնը: Քարաշէնքի փողոցում՝ իրենց կենտրոնատեղիի առջեւ, խօսել էին կրակոտ դամբանականներ, որոնց բովանդակութիւնն էր՝ «Մենք պիտի ջախջախենք դաշնականների գլուխը», մի յանկերգ, որ կրկնում էին ամէն օր, սակայն չէին համարձակուում իրականացնելու: Ապա դիակը տարել էին գերեզմանատուն, ուր դարձեալ կրկնուել էր «օձի պէս գլուխ ջարդելու» սպառնալիքը, որին ընկերացել էին օդային համագարկերը եւ կրակոցները: Յետոյ յանկարծ նրանք դուրս էին քաշել Կարոյի դիակը եւ որոշել էին յետ տանել քաղաք, որպէսզի նրա սպանութեան վրէժը լուծեն եւ ապա միայն գերեզման իջեցնեն «հերոս» ընկերոջը: Բերել էին քաղաք, դիակը իջեցրել եւ դրել Քարաշէնքի փողոցում եւ վերսկսել էին դամբանականները, «խփենք, կոտորենք, ջարդենք դաշնականներին»: ապա դաճաղը վերցրել եւ ուղղուել էին դէպի գերեզմանատուն: Ահա մի կոմիքո-ոդրերգական յուղարկաւորութիւն՝ դոնքիշոտների կազմակերպութեամբ:

Շրջաններից ստացուած տեղեկութիւնները ցոյց էին տալիս, որ դրութիւնը լաւ չէ նաեւ Ատրպատականի միւս վայրերում՝ Մարաղայում, Սալմաստում եւ Ռքզայիւում (Ռումիա կամ Կապուտան): Անիշխանութիւն, թալան, կոդոպուտ եւ հալածանք: Ահա այդ շրջանների կացութիւնը բնորոշող երեւոյթները:

Այսպէս, Մարաղայում թուրք ամբոխը ներխուժում է մեր ընկերներից դոկտ. Մելքոնեանի բնակարանը եւ թալանում, ջարդում, կոտորում ու տանում՝ ինչ որ ձեռքն է ընկնում: Գրաւող



իշխանությունը ձերբակալում է եւ դէպի Ռաշտ է տանում դոկտորի գերմանուհի կնոջը եւ նրա երկու զաւակներին՝ Նադիային եւ Սաքոյին: Դոկտորը նախապէս փախած է լինում քաղաքից: Շնորհիւ կատարուած դիմումների եւ պահանջադրութեանց՝ դոկտ. Մելքոնեանի կինը եւ երկու փոքր երեխաները ազատուում եւ անցնում են Թեհրան:

Սալմաստում եւս տիրական են անիշխանությունը, խառնակությունը, թալանը, կողոպուտը եւ մատնությունը: Մեր ստացած տեղեկագրերը եւ հասած լուրերը խօսում են երկու թրքերից եւ մի հայից բաղկացած մի խմբի սեւ արարքների մասին: Նրանք նագաններով զինուած եւ ինքնաստեղծ «օրինականութեամբ» կողոպտում են թուրք եւ հայ գիւղացիներին: Թէեւ մեռած է այդ սեւագործ խմբի հայ անդամը, սակայն մենք գիտակցաբար չենք յիշատակում նրա անունը՝ նկատի ունենալով նրա հանրային պաշտօնի բնոյթը:

Ռըզայիէում լարծուն ճամբայ էր բռնել տեղական կոմիտէի անդամներից մէկը՝ թերեւս կարենալ փրկելու համար իր մորթը: Ենթադրում ենք, որ գաղափարական եւ քաղաքական թեքում չկար նրա արարքի մէջ, միայն իր աժանագին գոյությունը պահելու հարց: Խիստ կերպով հետապնդում էր կոմիտէի ներկայացուցիչ, մեր ազնիւ, գաղափարական հաւատարիմ եւ նուիրուած ընկեր Արշակ Սինանեանը: Մի օր ռուս զինուորները շրջապատում են նրա բնակարանը, իսկ չէկիստ սպաները ներս են մտնում եւ չէկայական քաղաքավարութեամբ հարցնում են Արշակի որտեղ լինելու մասին: Տնեցիները լուր են տալիս Արշակին, որ տուն չգայ: Ընկերներից մէկի ուղեկցութեամբ Արշակը ոտքով եւ այլ միջոցներով Թաւրիզ է հասնում եւ պատմում իր փախուստի եւ ընդհանուր դրութեան մասին: Մի քանի օր յետոյ Արշակին ճամբում ենք Թեհրան:

Ընդգծենք, որ շնորհիւ մեր որդեգրած զգաստ, խոհուն եւ

լրջամիտ կեցուածքի եւ շնորհիւ մեր կրաւորական, սակայն վճռական քաղաքականութեան, տեղի չէին ունենում ծանր դէպքեր ու երեւոյթներ: Սակայն այդ խուժանի խուժանականութիւնը, նրանց գրաւոր ու բանաւոր սպառնալիքները, անպատկառ բախումները մեր տղաների հետ, նրանց գրգռիչ, լկտի եւ նուաստացուցիչ արտայայտութիւնները մեր կուսակցութեան հասցէին, ստեղծել էին մի ելեկտրականացած մթնոլորտ: Ամէն վայրկեան կարող էր պայթել այդ վիճակը եւ վերջանալ ի վնաս հայրութեան եւ մեր կուսակցութեան: Հասկանալի է, որ այս կացութիւնը ազդում էր, մասնաւորապէս՝ մեր զսպուած եւ կուսակցական խիստ կարգապահութեան տակ դրուած տղաների վրայ:

Արդ, Կ. կոմիտէն, քննութեան առնելով այս կացութիւնը, անհրաժեշտ համարեց վերջ տալ այս լարուած դրութեան եւ ստեղծել որոշ չափով աւելի տանելի պայմաններ եւ շնչելի մթնոլորտ: Այդու Կ. կոմիտէն որոշեց յայտնել Խորհրդային Միութեան Թաւրիզի հիւպատոսարանին, որ որպէս Կարմիր Բանակի համապատասխան օրգան, ինքը սանձահարի այդ անպատասխանատու խուժանին: Այլապէս եթէ խուժանը շարունակէ իր ընթացքը եւ եթէ նա փորձի սպանել մեր ընկերներից մէկն ու մէկին կամ մի հայի, ապա պարզ է, որ մենք մեր մէկի փոխարէն կը սպանենք տասը հոգու:

Յատուկ ժամադրութեամբ գնացի հիւպատոսարան, ուր ինձ սպասում էին Ազարոնովը եւ այն սպաներից մէկը, որ գրաւումից յետոյ մասնակցել էր մեր բանակցութեան: Յանուն Կ. կոմիտէի, նրանց յայտնեցի մեր որոշումը՝ ի հարկէ նախապէս նրանց ուշադրութեան յանձնելով, որ մենք շարունակում ենք մնալ բարեկամական եւ լոյեալ դիրքերում, ինչպէս ասուած է նրանց, երբ ընդհատուեցին մեր բանակցութիւնները:

Այս ազդարարութիւնն ունեցաւ իր դրական ազդեցութիւնը: Փողոց իջած խուժանը դադարեցրեց իր սպառնալիքները եւ

հայկական թաղի վրայ յարձակուելու փորձերը:

Ադրբեջանի թատերական խմբի ելոյթներից յետոյ Հայաստանից Թաւրիզ եկաւ Այվազեանի ջազ խումբը եւ մի քանի ելոյթներից յետոյ մեկնեց Թեհրան:

Մեծ խանդավառութիւն էր ստեղծուել Թաւրիզի հայութեան մէջ: Հայերը գնում էին տեսնելու հայ արուեստագէտներին եւ լսելու նրանց երգը ու ապրելու Հայաստանի շնչով: Տարօրինակօրէն սանտիմանտալ է գաղութահայը, երբ հարցը վերաբերում է Հայաստանին. տարօրինակօրէն հայրենասէր, սանտիմանտալ հայրենասէր: Հայաստանից եկող ամէն մի հայի, ամէն մի արուեստագէտի, ամէն մի գրողի կամ գիտնականի մէջ նա տեսնում է Հայաստանը եւ խանդավառում, յուզում եւ ապրում է Հայաստանով ու հայկականութեամբ: Ահա այս պատճառով էր, որ Թաւրիզի հայութիւնը, մի պահ մոռանալով պատերազմական դրութիւնը, տօնական տրամադրութեան մէջ էր այդ օրերին:

Ես չէի գնացել համերգ, նկատի ունենալով ինձ համար գոյութիւն ունեցող անապահով պայմանները, ինչպէս եւ նկատի ունենալով մանաւանդ այն իրողութիւնը, որ մեր յատուկ կապերը տեղեկացնում էին մեզ, որ ՉէԿան նպատակ ունի առեւանգելու Ատրպատականի Առաջնորդ Արքեպիսկոպոս Ն. Մելիք-Թանգեանին եւ ինձ:<sup>6</sup> Եւ ահա այս պայմաններում է, որ ինձ «հրաւիրում» են գնալ համերգի: Իրականութեան մէջ, սա հրաւեր չէր, այլ անուղղակի կերպով կատարուած մի պահանջ:

Ահա թէ ինչպէս:

Ամէն օրուայ պէս մի օր նստած էի Դաւիթի սրճարանում: Մուրճ էի խմում եւ թերթը աչքի անցկացնում: Սրճարան եկան

6 Հայրս մերժել էր Կ. կոմիտէի առաջարկը՝ թիկնապահներ տրամադրել իրեն: Եթէ գոնէ հեռուից ուղեկցողներ ունենար, առեւանգումի ականատեսը կ'ունենայինք: Չնայած, չեմ հաւատում, որ դա արժէք ունենար առեւանգիչների համար, որոնք մինչեւ վերջ ուրացան կատարուածը:

նաեւ այն երկու սպաները, որոնք գրաւումից յետոյ մասնակցում էին մեր բանակցութեանց եւ նստեցին իրենց սովորական տեղը: Իրենց ցանկութեան համաձայն, մենք իրար չէինք բարեւում: «Մենք դրսում անձանօթներ ենք», – ասել էին ինձ:

Երկու սպաներ, նախքան սրճարանից դուրս գալը, մօտեցան կասի առջեւ նստած Դաւիթի քրոջը եւ սկսեցին խօսել նրա հետ, ինչ որ սովորական բան չէր նրանց համար: Խօսակցութեան ընթացքում Դաւիթի քոյրը շատ յաճախ նայում էր ինձ: Ես հասկացայ, որ սպաների խօսակցութիւնը իմ մասին է:

Նրանց գնալուց յետոյ օրիորդը մօտեցաւ ինձ եւ ասաց. «Այդ երկու սպաները ձեր մասին էին խօսում եւ հարցեր տալիս ձեր մասին: Ես ասացի, որ ճանաչում եմ նրան, նրա անունը Բաղդիկ Մինասեան է, ունի բարձրագոյն կրթութիւն եւ քիմիայի դասատու է պետական դպրոցում: Ապա ասացին, որ իրենց կողմից խնդրեմ ձեզ, որ գնաք համերգ եւ ձեր կարծիքը յայտնէք համերգի մասին»:

Ահա Այվազեանի ջազ-համերգ գնալու իմ «հրաւերը»:

Այժմ մնում է մի խնդիր՝ գնա՞լ, թե՛ չգնալ: Եւ վերջապէս ինչո՞ւ են ցանկանում, որ ես գնամ համերգի:

Խորհրդակցեցի մի քանի պատասխանատու ընկերների հետ: Բոլորի կարծիքը նոյնն էր՝ «Եթէ չգնաս, կը մտածեն, որ վախենում ես: Լաւ է որ գնաս, սակայն նախապէս ապահովական միջոցառումների դիմելով»: Կնոջս՝ Փառիկի հետ եւ ընկերակցութեամբ Սամսոն Խաչիկեանի, գնացինք համերգ:

Առաջին արարին Սամսոնի հետ դուրս եկանք միջանցք ծխելու համար: Այնտեղ էին Ահարոնովը եւ մի ռուս սպայ: Վերջինս առանձնանալով, եկաւ մեզ մօտ եւ խնդրեց, որ թոյլ տամ ծխախոտը վառի իմ ծխախոտից:

Սա անսովոր երեւոյթ է: Կարմիր Բանակի սպաները երբեք նման բան չեն անում: Արդեօք պայմանական նշան էր ճանաչել տալու համար ինձ: Հարցը շատ էր հետաքրքրում ինձ, ուզում

էի իմանալ, թէ ինչ է անցնում-դառնում: Երկրորդ արարին գնացինք միւս միջանցքը: Այնտեղից երեւում էր բակը, ուր կար մի ինքնաշարժ մեքենայ, որի շուրջ գնում-գալիս էին Ահարոնովը եւ նոյն սպան, որ իմ ծխախոտից վառեց իր ծխախոտը: Նրանք շատ արագ էին երթեւեկում. դա զբօսանքի քայլուածք չէր երեւում:

Վերջացաւ համերգը, եւ մենք դուրս եկանք: Տակաւին բակ չհասած, մեզ միացաւ անգլիական հնդիկ մի սպայ, որ մեզ հետ, մեր կողքին քայլեց մինչեւ պողոտան, ապա նա, մի հայեացք նետելով ինձ, բաժանուեց մեզանից: Արդեօք պատահականութիւն էր անգլիական բանակի հնդիկ սպայի ընկերակցութիւնը մեզ հետ, թէ անգլիական գաղտնի սպասարկութիւնն եւս գիտէր, որ ինձ հետապնդում են ձերբակալելու եւ առեւանգելու համար: Մենք ուղեւորուեցինք դէպի տուն: Մինչեւ տեղ հասնելը մեզ միացել էին արդէն բազմաթիւ ընկերներ, որոնք, տարբեր խմբակներով, սպասում էին պողոտայի երկարութեան վրայ:

Հետագայ տեղեկութիւնները եւ փաստերը եկան ցոյց տալու, որ դա առաջին փորձն էր, որ խորհրդայինները արել էին ինձ առեւանգելու համար:

Հ.Յ.Դաշնակցութեան Բիւրոյի Իրանի կազմակերպութեան մօտ ներկայացուցիչ ընկեր Վարոս Բաբայեանի առեւանգումից յետոյ մտահոգիչ էր դարձել Թեհրանի մեր կուսակցական կազմակերպութեան վիճակը: Ղեկավար շրջանակների մէջ առաջացել էին տարաձայնութիւններ, վէճեր եւ նոյնիսկ ներհակութիւններ:

Տարօրինակն ու խիստ հակակարգապահականն այն էր, որ լայն կերպով դրսեւորուած եւ փողոց էին նետուած ներքին վէճերն ու տարաձայնութիւնները եւ հակամարտութիւնները: Բնականաբար այդ խառնակ վիճակը վնասում էր տեղի կազմակերպութեան ու նաեւ խիստ կերպով անդրադառնում մեզ վրայ, որ ապրում էինք ռուսական գրաւեալ գօտում, ուղղակի

սուինի տակ, ի համեմատություն Թեհրանի, որ չէզոք գօտի էր, եւ ուր տիրում էին համեմատաբար ազատ պայմաններ: Ելակէտ ունենալով կուսակցութեան պրէստիժը, հեղինակութիւնը եւ շահերը, մանաւանդ այն իրողութիւնը, որ այդ կացութիւնը խիստ կերպով անդրադառնում է մեզ վրայ Թաւրիզում եւ մեզ կանգնեցնում նոր դժուարութեանց առջեւ՝ Կ. կոմիտէի որոշումով ու կարգադրութեամբ, գնացի Թեհրան: Նպատակ ունէի փորձել վերջ տալ այդ վէճերին, տարաձայնութեանց եւ հակամարտութեանց, հաշտեցնել նրանց եւ վերականգնել կուսակցական կազմակերպութեան միասնականութիւնը: Ինձ ընկերակցում էր մեր մարտական սերնդին պատկանող ընկերներից գանգեգուրցի Գրիգորը:

Ըստ մեր կուսակցական չգրուած օրէնքի եւ ընկալեալ սովորութեան՝ նախ հանդիպում եւ խօսակցութիւն ունեցայ Թեհրանի Կ. կոմիտէի եւ աչքի ընկնող միւս ընկերների հետ (ի հարկէ՝ առանձին), բացատրեցի իմ առաքելութեան դրդապատճառները եւ նպատակը: Լսեցի Կ. կոմիտէի եւ անհատ ընկերների տեսակէտները խնդրոյ առարկայ կացութեան գլխաւոր դերակատարների բռնած դիրքի եւ արարքների մասին: Ապա հանդիպում ունեցայ այն երկու ընկերների հետ, որոնք առաջ էին բերել այս կացութիւնը եւ պատասխանատու էին տիրող վիճակի համար:

Մտքերի երկար փոխանակութիւն ունեցանք այդ երկու ընկերների հետ, որոնց անունը չեմ յիշատակում գիտակցաբար: Խօսեցինք Թեհրանի մեր կուսակցական կազմակերպութեան վիճակի եւ ընկերների հաշտութեան անհրաժեշտութեան եւ կազմակերպութեան միասնականութեան վերականգնման մասին: Ապա այդ երկու ընկերներից մէկը, աւելի տարեցը, յայտարարեց, թէ հաշտութիւնը եւ կազմակերպութեան միասնականութիւնը հնարաւոր են միայն եթէ գործադրուեն իր առաջադրած պայմանները, որոնք էին՝

1.- Լուծարքի ենթարկել Վարոսի գերմանոֆիլ կաբինէն, այսինքն՝ ներկայում գոյութիւն ունեցող Կենտրոնական կոմիտէները:

2.- Ստեղծել սովետոֆիլ կաբինէ, այսինքն՝ սովետոֆիլ Կ. կոմիտէներ, որոնց կը մասնակցի մի ձեռնհաս կոմունիստ:

Ես գրի էի առնում այս պայմանները, սակայն նրանց մտայնութիւնը, յայտնուած տեսակէտները եւ թելադրուած պայմանները այնքան զարմացրին ինձ, որ ես վեր կացայ իսկոյն եւ ասացի, որ ես կարծում էի, թէ խօսում եմ իմ դաշնակցական ընկերներին հետ, սակայն հիմա տեսնում եմ, որ սխալուել եմ: Այս մասին զեկուցում տուեցի Թեհրանի Կ. կոմիտէին եւ տեղի աչքի ընկնող ընկերներին եւ մեկնեցի Թաւրիզ:

Տեղ հասնելուց անմիջապէս յետոյ իմ ձախողած առաքելութեան մասին զեկոյց տուեցի Կ. կոմիտէին եւ որոշ ընկերների, ինչպէս Հայրապետ Պանիրեանին եւ Հայկակ Կոստյեանին: Իմ եզրակացութիւնն այն էր, որ ցաւ ի սիրտ, կորցնում ենք երկու ընկերներ, որոնք որդեգրել են հակադաշնակցական եւ հակակարգապահական ընթացք:

Ամէնից ցաւալին այդ երկու ընկերներից մէկի պարագան էր: Նա պատրաստուած մարդ էր եւ ունէր լաւ եւ հարուստ անցեալ մեր ազգային ազատագրական պայքարի ու ազատագրուած Հայաստանի հայացման եւ վերակառուցման աշխատանքների մէջ: Վախկոտ չէր նա, թուլամորթ եւ մորթապաշտ էլ չէր, հետեւաբար ինչպէ՛ս եւ ինչո՞վ բացատրել նրա գաղափարական վոլթ-ֆաւը: Ո՛ր էր ազդել նրա մտածողութեան վրայ: Իր շատ մօտ ընկե՛րը, որ ինքը արդէն անցել էր Ռուբիկոնը եւ ուզում էր ընկերակից ունենալ: Իր սայթաքման ճամբին երեւի փորձում էր գոհել իր ընկերոջ եւ ինքը փրկուել կուսակցական արդարադատութեան ճանկերից եւ հանրային կարծիքից, որ դեռ մինչեւ հիմա էլ դատապարտում է նրան:

Ռուսական գրաւեալ գօտում, այսինքն՝ Ատրպատականում շարունակուում էր ահով եւ վախով, երկմտութեամբ եւ անորոշութեամբ առլեցուն կեանքը: Թէեւ վերահաստատուել էր իրանական իշխանութիւնը, իր բոլոր օրգաններով, սակայն նա գուրկ էր իր շրջանն ու ժողովուրդը կառավարելու պետական իրաւունքներից ու պարզապէս ենթակայ էր գրաւող իշխանութեան կամքին եւ ցուցմունքներին: Բնակչութեան կեանքի ապահովութիւնը եւ ճակատագիրը տակաւին գտնուում էին օտար իշխանութեան ձեռքերում:

Ահա այս ժամանակամիջոցում էր, որ մի հարուած եւս հասնում է Թաւրիզի մեր կազմակերպութեան: Այս անգամ պաշտօնական ճանապարհով է կատարում եւ իրենց՝ ռուսների կողմից:

Այսպէս, 1943 թուին, գրաւող ուժի պահանջով, իրանական կառավարութեան Թաւրիզի իշխանութիւնները ձերբակալում են ընկեր Խաչատուր Գրիգորեանին եւ մի քանի օր ոստիկանական բանտում պահելուց յետոյ յանձնում են խորհրդայիններին, որոնք եւ Խաչատուրին տանում են անյայտ ուղղութեամբ: Ո՞ր են տարել նրան: Դէպի Խորհրդային Միութի՞ւն, թէ՞ դէպի պարսկական մի այլ քաղաք: Մենք սկսեցինք մեր փնտռտուքը՝ գտնելու համար կիսաառեւանգուած ընկերոջը:

Տեղում ունեցած մեր գաղտնի կապերը տեղեկացնում են, թէ Խաչատուր Գրիգորեանին տարել են Ռաշտ եւ այնտեղից էլ պիտի տանեն Խ. Միութիւն: Մեր կողմից կատարուած որոնումներն ու փնտռտուքը եկան հաստատելու լուրը:

Բարեբախտաբար, դաշնակիցների եւ Թեհրանի կառավարութեան միջամտութեան շնորհիւ, ռուսները հրաժարում են Ռաշտ հաւաքած բանտարկեալներին, ընդ որս նաեւ՝ Խ. Գրիգորեանին եւ Ա. Տէր Օհանեանին, Ռուսաստան փոխադրելու մտադրութիւնից: Մի որոշ ժամանակ յետոյ ազատւում են թուրք եւ հայ բանտարկեալները:



Խաչատուր Գրիգորեանը մահանում է ազատուելուց մի կարճ ժամանակ յետոյ՝ չկարողանալով դիմանալ բանտի մէջ իր մարմնում բոյն դրած ծանր հիւանդութեան: Խաչատուր Գրիգորեանը մեր աշխատունակ, զոհաբերող եւ նուիրուած լաւագոյն ընկերներից մէկն էր: Նա համեստ էր, լուռ ու մունջ աշխատող, փառասէր չէր, չէր սիրում երեսալ, ծափեր ստանալ, աղմկել իր տարած աշխատանքների մասին: Մեզ համար անակնկալ չէր ի հարկէ Խ. Գրիգորեանի ձերբակալութիւնը: Մեզ ծանօթ պարսիկ գաղտնի ոստիկանները մի քանի անգամ զանազան ձեւերով եւ ակնարկներով հասկացրել էին, որ խորհրդայինները պիտի ձերբակալեն Խաչատուր Գրիգորեանին: Այս մասին տեղեկացրել էինք իրեն, որ զգոյշ լինի: Նրան իբրեւ դիտողութիւն յայտնել էինք նաեւ, որ վերջ տայ խորհրդայինների հետ տեսակցութիւն ունենալուն եւ նրանց հարցերին պատասխանելուն: Այդպիսի որոշում ի հարկէ արդէն իսկ ժամանակին յայտնուել էր բոլոր ընկերներին: Այսպէս թէ այնպէս Խաչատուր Գրիգորեանը մէկն էր այն բազմաթիւ զոհերից, որ տուեց Ռաշնակցութիւնը Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքին:

Ռաշնակից զինեալ ուժերը, ներխուժելով Իրան, ինչպէս յայտարարել էին իրենք, նպատակ ունէին ապահովելու Ռուսաստան ուղարկելիք զէնք ու զրահի ճանապարհը, առանց հողային գրաւումների մտադրութիւն ունենալու: Սակայն Կարմիր Բանակի Իրան մտնելուց անմիջապէս յետոյ Ատրպատականի անջատումը, խորհրդայնացումը եւ նրա կցումը ռուսական գաղութային կայսրութեան դարձաւ ռուսական պատերազմական քաղաքականութեան հիմնական եւ անմիջական նպատակներից մէկը:

Կենսագործելու եւ իրականացնելու համար այս նպատակը Կարմիր Բանակի Թաւրիզի քաղաքական օրգանները ստեղծեցին իրենց հինգերորդ զօրասիւնը՝ ԹՈՒՂԷԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ: Նրան յանձնուեց իրականացնել Ատրպատականի անջատումը, խորհրդայնացումը եւ նրա կցումը ռուսական գաղութային կայսրութեանը: Սովետական քաղաքական օրգանները աշխատանքը ղեկավարում էին ի վերուստ, առանց երեւալու:<sup>7</sup> Այսպէս, նրանք իրենց աշխարհակալական ձեռնոցները հազցրել էին Թուրքական-համայնավարական կուսակցութեան:

Այս կուսակցութեան յարեցին Ատրպատականի, ի մասնաւորի՝ Թաւրիզի երիտասարդ մտաւորականները, ուսուցիչները, աշակերտները եւ այլ տարրեր: Ոչ մի կասկած այն մասին, որ Թուրքական-համայնավարական կուսակցութեան անդամներից շատերի համար պարզ չէր առաջադրուած նպատակի ամբողջութիւնը: Նրանք գիտէին մի բան, որ Թեհրանի կառավարութիւնը ճնշում է նրանց ազգային իղձերը եւ որ պիտի ազատուեն այդ ճնշումներից միայն Ատրպատականի անջատումով եւ նրա անկախութեամբ:

1943 եւ 1944 թուականներին արդէն սաղմնաւորուած էին եւ ձեւ ու կերպարանք էին ստանում Թուրք-համայնավարական կուսակցութիւնը եւ նրա անջատողական աշխատանքներն ու պայքարը:

Այդ աշխատանքներն աւարտում են պատերազմի վախճանին եւ Ատրպատականը հռչակում է որպէս «ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹԻՒՆ»՝ Թաւրիզ մայրաքաղաքով,<sup>8</sup> [նոյեմբեր, 1945] ինչպէս գրում էր Խորհրդային

7 Դա կատարում էր Ստալինի հրամանով եւ Ադրբեջանի Կոմունիստ կուսակցութեան առաջին քարտուղար Միր-Ջաֆար Բադիրովի անմիջական ղեկավարութեամբ:

8 Այս «Անկախ պետութեան» կամ աւելի ճիշտ ինքնավար հանրապետութեան վարչապետ դարձաւ Իրանի Կոմունիստ կուսակցութեան (չվիոթել Թուրք Կուսակցութեան հետ) հիմնադիր ապա՝ Ատրպատականի Դեմոկրատ նուիրեպների հիմնադրող (فرقه دموکرات آذربایجان) Սէյդ Ջաֆար Փիշեւարին: Հանրապետութիւնը ի հարկէ շատ կարճ կեանք ունեցաւ, հազիւ մէկ տարի: ԽՍՀՄ ուժերի երկրից դուրս գալով եւ Թեհրանի իշխանութեան Ատրպատականում վերահաստատումով

Միութեան համայնավարական կուսակցութեան օրգան *Պրաւդա*-ն:

Այդ ժամանակ եւ արդէն խորհրդային աշխատանքային ճամբարներում էի եւ այնտեղ կարդացի *Պրաւդա*-ի վերոյիշեալ ծանուցումը եւ Ատրպատականի «հայրենասէրների» մասին արուած փառաբանանքը:

Այսպէս ուրեմն, հակառակ այն բանի, որ դաշնակիցները պաշտօնական յայտարարութիւններով վստահեցրել էին, որ նպատակ չունեն հողային նուաճումներ կատարելու Պարսկաստանում, հակառակ այն իրողութեան, որ 1943 թուին Թեհրանում կայացած Ռուզվելթ-Չըրչիլ-Ստալին եռեակ համագումարը պաշտօնապէս երաշխաւորել էր Իրանի հողային ամբողջականութիւնը, երկրի Ազատութիւնը, Անկախութիւնը եւ ինքնիշխանութիւնը, այդուհանդերձ ռուսները անջատում են Ատրպատականը, անկախ պետութիւն հռչակում եւ յանձնում մի խրտուիլակ կառավարութեան: Այսպիսով, Մոսկուան անտեսում է նաեւ դաշնակիցների այն որոշումը, ըստ որում նրանք Իրանից դուրս պիտի գան պատերազմի վախճանից վեց ամիս յետոյ:

Կարծես արդէն չգրուած օրէնք է դարձել ռուսական դիւանագիտութեան համար, որ ԵՐԲ ՌՌԲՍ ԶԻՆՈՒՈՐԸ ՈՏՔ Է ԴՆՈՒՄ ՄԻ ՕՏԱՐ ՀՈՂԻ, ՄԻ ՕՏԱՐ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ, ՆԱ ԱՅԼԵԲՍ ԴՈՒՐՄ ՉԻ ԳԱԼԻՄ ԱՅԴ ՏԵՂԻՑ:

Մոսկուայի քաղաքականութեան այս գիծը շատ ցայտուն եւ փաստական ձեւով երեւան եկաւ պատերազմից առաջ, պատերազմի սկզբներին եւ պատերազմի վերջում: Այս քաղաքականութեան արդիւնքն է արդի ռուսական գաղութային ընդարձակածաւալ կայսրութիւնը, որ նմանը չունի աշխարհում:

Հպանցիկ կերպով ասենք, որ խնդրոյ առարկայ հարցի,

---

յուծարուեց նաեւ Փիշեարիի կառավարութիւնը (حکومت خودمختار آذربایجان) եւ Փիշեարին իր հետեւորդների հետ Խորհրդային Միութիւն ապաստանեց:

այսինքն՝ Ատրպատականի եւ նրա ապագայ քաղաքական ճակատագրի վերաբերեալ մեծ շահագրգռութիւն էր երեւան բերում նաեւ Թուրքիան: Պարզ է, որ թրքական այս շահագրգռութիւնը հակադրում էր ռուսական Ատրպատականեան քաղաքականութեան: Թուրքիոյ քաղաքական դեկլար շրջանակները վաղուց ի վեր ցանկանում էին եւ պատեհ առիթ էին որոնում գրաւելու պարսկական Ատրպատականը եւ այն կցելու Թուրքիային: Յաջ թուրք դեկլար շրջանակների սա կը լինէր մի կարեւոր քայլ դէպի համաթրքականութեան քաղաքական վարդապետութեան կենսագործումը: Թուրքիան պատերազմը եւ պատերազմական դրութիւնը բարեպատեհ առիթ էր համարում կարենալ կենսագործելու համար թրքական քաղաքական վաղեմի երազը՝ ստեղծել համաթրքական մեծ պետութիւնը, որի մէջ պիտի մտնէր սահմանակից թրքաբնակ եւ թրքախօս Ատրպատականը:

Ահա այս նպատակով էլ այս պատճառով էր, որ պատերազմի ընթացքում, թուրք զադունի եւ յայտնի գործակալները վխտում էին պարսկական Ատրպատականում, մասնաւորապէս՝ Թաւրիզում, եւ եռանդուն աշխատանք էին տանում մի կողմից հող պատրաստելու Ատրպատականի անջատման համար՝ յօգուտ Թուրքիայի, միւս կողմից հակազդելու համար խորհրդայինների տարած աշխատանքներին:

Վճռական կերպով կարելի է հաստատել, որ Թուրքիան եւ թրքական քարոզչութիւնն ու գործունէութիւնը աւելի հող ու համակրանք ունէին Ատրպատականի զանգուածների մէջ, քան Ռուսաստանը եւ նրա ու Թուրք-Կոմունիստական կուսակցութեան լայնածաւալ քարոզչութիւնն ու գործունէութիւնը: Պարզ ու յստակ է, ուրեմն, որ Ատրպատականի անջատման հարցում վճռական գործօնը հանդիսացաւ Ռուսաստանի քաղաքական ու գինուորական ներկայութիւնը Ատրպատականում:

Գալով մեզ եւ մեր կազմակերպութեան՝ մենք կանգնած

էինք Իրանի հողային ամբողջականության, Ազատության եւ Անկախության դիրքերում, հետեւաբար՝ մենք դէմ էինք թէ՛ ռուսական եւ թէ՛ թրքական անջատողական քարոզչության եւ գործունէութեան: Սակայն տրուած լինելով մեր իւրայատուկ պայմաններն ու տիրող կացութիւնը՝ մեր դերը շատ չնչին էր:

Յամառ կերպով շրջան առած լուրերը եւ վստահելի աղբիւրներից ձեռք բերած տեղեկութիւնները ցոյց էին տալիս, որ Թաւրիզի ռուսական քաղաքական օրգանները նոր ձերբակալութիւններ եւ նոր առեւանգումներ պիտի կատարեն՝ կարենալ հարուածելու եւ կազմալուծելու համար Թաւրիզի մեր կուսակցական կազմակերպութիւնը:

Գրաւող իշխանութեան այս անհաշտ, քինախնդիր եւ անհանդուրժողական ընթացքը մեր կազմակերպութեան եւ հայերի մէջ ստեղծել էր դժգոհութիւն, անհամբերութիւն եւ նոյնիսկ ոչ բարեկամական, ոչ լոյեալ եւ ոչ խաղաղ տրամադրութիւններ: Այդ իսկ պատճառով մեր ընկերները պահանջում էին բացատրութիւններ եւ լուսաբանութիւններ ստանալ խորհրդային քաղաքականութեան եւ նրա արարքների մասին՝ մի քաղաքականութիւն եւ մի ընթացք, որ չեն համապատասխանում մեր բարեկամական եւ լոյեալ կեցուածքին:

Կ. կոմիտէն եւ միւս ընկերները, խորհրդակցելով կացութեան մասին, անհրաժեշտ սեպեցին բացատրութիւններ պահանջել խորհրդային հիւպատոսարանից: Այսպիսով, երկրորդ անգամը լինելով, Կ. կոմիտէի որոշումով եւ յատուկ ժամադրութեամբ, 1943-ի դեկտեմբեր 15-ին գնացի հիւպատոսարան: Մէկը դրսում, փողոցի դրան մօտ, սպասում էր ինձ. նա ինձ տարաւ ներս, բակը, ուր մի ուրիշ մարդ ինձ առաջնորդեց գրասենեակ, ուր նստած էին երկու ծանօթ անձնաւորութիւնները, որոնց տեսել էի մեր եւ Խորհրդային Միութեան ներկայացուցիչների բանակցութեան ընթացքին:

Հիմնաւորելու համար մեր պահանջատիրութիւնը՝ նրանց յիշեցրի մեր բանակցութիւնները, օժանդակութեան մեր առաջարկը, որ արուած էր առանց որեւէ ակնկալիքի եւ, վերջապէս, բանակցութեան խզուելուց յետոյ էլ մեր յայտարարութիւնը, ըստ որի, մեր կազմակերպութիւնը եւ հայերը ընդհանրապէս, ի խնդիր Հայաստանի գերագոյն շահերի, մնում են լոյեալ ու բարեկամական դիրքերում: Ապա աւելացրի, որ այսու հանդերձ իրողութիւններն ու փաստերը ցոյց են տալիս, որ անցնող տարիների ընթացքում նրանց քաղաքականութիւնը չի համապատասխանել մեր լոյեալ ու բարեկամական ընթացքին: Նրանք ձերբակալել են Վարոս Բաբայեանին եւ Խաչատուր Գրիգորեանին: Ասացի, որ եկել եմ բացատրութիւն եւ լուսաբանութիւն խնդրելու այդ ձերբակալութիւնների մասին, երեւոյթ, որ վատ տպաւորութիւն է թողել թէ՛ մեր շարքերում եւ թէ՛ բոլոր հայերի վրայ: Խօսակիցս, խօսք առնելով, պատասխանեց. «Մենք չենք ձերբակալել Վարոս Բաբայեանին. գուցէ նա գտնուում է ձեր գիւղերից մէկում: Իսկ ինչ վերաբերում է Խաչատուր Գրիգորեանին, նրան ձերբակալել է ձեր կառավարութիւնը»:

Ես ասացի, որ մենք տեղեկութիւն ունենք, որ Վարոս Բաբայեանը գտնուում է Մոսկուայի բանտերում: Գալով Խաչատուր Գրիգորեանին՝ ձեր պահանջով է, որ մեր կառավարութիւնը ձերբակալել է ու յանձնել ձեզ, եւ նա այժմ գտնուում է Ռաշտի ձեր կալանաւորների մէջ:

Վերջացաւ մեր հանդիպումը ապարդիւն եւ անորոշ:

Ես վերադարձայ տուն: Ինձ յայտնեցին, որ ընկերներս սպասում են ինձ ընկեր Փանոս Ժամհարեանի տանը: Հաւաքուած էին բոլորը՝ լսելու տեսակցութեան արդիւնքը: Նրանք մտահոգ էին եւ յոռետես կացութեան մասին: Նստեցինք ընթրիքի սեղանի շուրջ, խօսում էինք եւ ուտում:

Ընկերներից մէկը՝ Հայկ Աճէմեանն, ասաց. «Ընկեր՝ Բաղդիկ,

սա քո վերջին ընթրիքն է ընկերների հետ, ինչպես Քրիստոսի վերջին ընթրիքը իր աշակերտների հետ»:

Այդպես էլ եղաւ... եղաւ այն, ինչ որ անխուսափելի էր. առեւանգեցին նաեւ ինձ:

Թէեւ անսպասելի չէր եւ միեւնոյն ժամանակ անխուսափելի էր իմ առեւանգումը, բայց եւ այնպէս հարուածը ծանր էր ինձ եւ ընտանիքիս համար:

Վաղուց գիտէի, գիտէին նաեւ ընկերներս, որ ինձ պիտի ձերբակալեն: Այս համոզման էի յանգել՝ հիմք ունենալով մի կողմից կացութիւնը, միւս կողմից վստահելի աղբիւրներից ձեռք բերած լուրերն ու հասած տեղեկութիւնները: Խօսւում էր, թէ Կարմիր Բանակի Թաւրիզի քաղաքական օրգանները որոշել են առեւանգել Ատրպատականի Առաջնորդ Արքեպիսկոպոս Ն. Մելիք-Թանգեանին եւ ինձ, կամ սպանել՝ եթէ ձախողի առեւանգման փորձը:

Այս մասին տեղեկացրել էինք Սրբազանին եւ պատուիրել մեր հսկիչ պահակներին՝ զգաստ եւ զգոյշ լինել եւ ամէն գնով խանգարել Սրբազանին առեւանգելու կամ սպանելու փորձերը:

Հիւպատոս Նաւասարդեանը շատ յաճախակի այցելութիւններ էր տալիս Մելիք-Թանգեանին: Սրբազանը մի օր շատ միամտօրէն եւ անկեղծ դժգոհութեամբ բողոքում է Նաւասարդեանին եւ ասում. «Դուք ուզում էք ինձ ձերբակալել»:

«Ո՛վ է ասել, որ ձեզ պիտի ձերբակալենք»:

Սրբազանը դարձեալ նոյն պարզութեամբ պատասխանում է. «Մեր Բաղդիկն է ասել, որ դուք պիտի ձերբակալէք ինձ եւ իրեն»:

Այսպիսով, աւելի է բարդանում կացութիւնը եւ միաժամանակ արագացնում իմ առեւանգումը:

Եւ ահա վրայ է հասնում ճակատագրական չարաղէտ պահը:

Օրը երկուշաբթի էր, ժամը 11-ին, 1944 թ. յունուար 3-ը: Դուրս եկայ Դաւիթի սրճարանից, հանդիպեցի դպրոցի քիմիական

լաբորատորիան, աշխատանքս վերջացնելուց յետոյ գնացի հանդիպելու Կ. Կոմիտէի անդամ [Ղազար] Մակունցին, որի գործարանը գտնուում էր Փահլաւի պողոտայում, Չէհայի կողքին: Չէհայի առջեւից անցնելիս, ճիշտ դրան առջեւ, մի հայ սպայ, իմ մէջքից բռնելով, ասաց. «Պարո՛ն, գնանք այստեղ: Տուեցէ՛ք ձեր զէնքը»:

«Ես զինուորական չեմ, որ զէնք ունենամ», – պատասխանեցի: Բայց այդ պահին մի ուրիշ զինուորական ինձ քաշեց եւ մտքրեց Չէհայի շէնքը:

Մի քանի րոպէ յետոյ ես գտնուում էի գրասենեակում, ուր հայ սպայի եւ իմ միջեւ տեղի ունեցաւ մի կարճ հարց ու պատասխան մօտաւորապէս հետեւեալ բովանդակութեամբ: Սպան արձանագրում էր հարցաքննութիւնը:

«Ի՞նչ է ձեր անունը եւ ազգանունը», – առաջին հարցը ուղղեց ինձ:

«Ո՛ւմ էք որոնում», – հարցրի նրան:

«Բաղդիկ Մինասեանին», – պատասխանեց նա:

«Չէք սխալուել», – ասացի:

«Ինչ փոստ եւ ինչ դեր ունէք դաշնակցական կուսակցութեան մէջ»:

«Ռուք ո՛ւմ էք որոնել եւ ձերբակալել», – դարձեալ հարցրի ես:

«Ատրպատականի Դաշնակցութեան Կ. Կոմիտէի ներկայացուցչին»:

«Չէք սխալուել», – պատասխանեցի:

«Ինչքան դրամ ունէք, դրէք սեղանի վրայ»:

Քսան եւ հինգ ռիալ դրամս դրեցի սեղանի վրայ:

«Ռուար չունէ՞ք», – հարցրեց նա:

«Այստեղ Պարսկաստան է եւ ոչ Ամերիկա», – ասացի ես՝ կռահելով նրա յետին միտքը:

Այստեղ նախնական հարցաքննութիւնը վերջացաւ եւ ինձ



առաջնորդեցին դէպի բանտ: Նախքան գրասենեակից դուրս գալը մի տոպրակ քաշեցին գլուխս՝ ծածկելու համար դէմքս եւ աչքերս: Ես բարկութեամբ հանեցի տոպրակը եւ նետեցի: Չէկիստ հայ սպան ասաց, որ չենք ուզում, որ դիմացի տներից ձեզ տեսնեն, որպէսզի դուք չվարկաբեկուէք: Ապա, հակառակ իմ կամքին, իմ վերարկուի փեշերով ծածկեցին գլուխս եւ դէմքս եւ ձեռքս բռնած, կոյր մարդու նման, իջեցրին բակը եւ այնտեղից էլ՝ մառան:

Յունուար ամիսը, Թաւրիզի ձմեռային ցրտերը եւ... հողէ յատակով մի մառան՝ խոնաւ, ցուրտ եւ առանց որեւէ կարասիի:

Ահա իմ մառան-բանտը, ուր հնարաւոր չէր ո՛չ նստել, ո՛չ պառկել եւ ո՛չ էլ քնել, որովհետեւ չկար ոչ մի յարմարութիւն: Կար միայն ու միայն մի հողէ սառն ու խոնաւ յատակ, կային նաեւ մկներ, որոնք կրծում էին ոտներս կամ ականջներս, եթէ պառկած էի:

Այսպէս օրերս ու գիշերներս անց էի կացնում քայլելով ու ծխելով: Առաջին անգամը լինելով կեանքիս մէջ՝ ունենում էի կամագրկութեան, նուաստացման եւ ստորացման դառն զգացում, եւ այդ զգացումը փոթորկում էր իմ ներաշխարհը:

Այս գիշեր ու ցերեկ խառնուած օրերից մէկի ընթացքում էր, որ դրսից լսեցի մի մանկական լացակումած ձայն, որ «պապա ջան» էր կանչում: Ես համոզուած էի, որ դա իմ Ռուբինայի ձայնն էր, որ կանչում էր իր կորած ու անյայտացած պապին:

Երեսունից աւելի տարիներ են անցնում, սակայն ես տակաւին չեմ մոռացել այդ սրտամորմոք կանչը:

Երեք օր եւ երեք գիշեր այդ մառան-բանտում ինձ պահելուց յետոյ բանտապետը ներս մտաւ եւ կարգադրեց ինձ բարձրանալ գրասենեակ: Այնտեղ հայ սպան ինձ յայտնեց. «Ջեզ ուղարկում ենք Երեւան, եւ մի քանի օրից յետոյ կը վերադառնաս տուն»:

Ապա նա իմ ներկայութեամբ, ինձ վախեցնելու նպատակով, կարգադրեց ինձ դէպի Երեւան տանող սպային. «Կը սպանես իրեն, եթէ կը փորձի փախչել»:



Վարտս Բաբայեան  
ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչը Իրանում



Հին Թաւրիզի փողոցներից



Խորհրդային բանակը կտրում է  
Իրանի սահմանը



Խորհրդային բանակի զրահապատ 6-րդ  
գորաբաժինը Թաւրիզի փողոցներում

#### Գլուխ 4

## ԵՐԵՒԱՆԻ ՉԷԿԱՅԻ ԲԱՆՏՈՒՄ. 1944, 6 յունուար – 1945, 15 ապրիլ. ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՍԻԲԻՐ

Վերջապես 1944 թիւ, յունուար 5ին Սուրբ Ծննդեան եւ իմ անուանակոչութեան օրերին,<sup>1</sup> ժամը 22-ին, մառան-բանտից ինձ ՉԷԿայի գրասենեակը տարան: Մի քանի ձեւակերպումներ կատարելուց եւ ինձ Երեւան տանող զինուորներին ու սպային որոշ կարգադրութիւններ անելուց յետոյ ինձ հազցրին ռուս զինուորի մի հին շինել, գլուխս դրեցին զինուորի մի պատռուած գլխարկ եւ նստեցրին բակում սպասող մի բեռնատար մեքենայ: Մեքենայի մէջ տեղաւորուեցին նաեւ չորս զինուորներ՝ ինքնաշխատ հրացանները բռնած, եւ մի սպայ՝ նագան ատրճանակը ձեռքին:

Դէպի երազածս, սակայն երբեք չտեսած հայրենիքս էի գնում, դժբախտաբար՝ ո՛չ իբրեւ ազատ մարդ, այլ իբրեւ կալանաւոր, «յանցապարտ» եւ հսկողութեան ներքոյ խորհրդային զինուորների:

Մեքենան շարժուեց եւ մի քիչ յետոյ կանգ առաւ Թաւրիզի երկաթուղակայարանում: Մեզ փոխադրեցին մի յատուկ կուպէ,

---

<sup>1</sup> Յիշում եմ՝ ինչպէս ամէն տարի յունուար 6-ին մեծ տօնախմբութիւն էր կազմակերպում մեր տանը: Այդ տարի եւ յաջորդական տարիներին այդ օրը սգոյ օր էր մեր ընտանիքի համար:

ուր նստեցինք կարգով եւ նոյն մարտական վիճակով:

Գնացքը շարժում էր: Հայ սպան ատրճանակը ձեռքում ննջում էր: Ես նրան ասել էի, որ ես փախչելու նպատակ ու տրամադրութիւն չունեմ, եւ ինքը կարող էր հանգստանալ: Սպան կարգադրութիւններ անելուց յետոյ քնել էր:

Երկաթուղային տոմսերը ստուգող պաշտօնեան բացեց մեր կուպէի դուռը եւ մի հայեացք նետեց ներս եւ փակեց դուռը: Ես ճանաչում էի այդ մարդուն: Նրան տեսել էի իմ ընկերներից մէկի՝ Ներսէս Պասեանի խանութում: Ես ուրախացայ, որ այդ հայ պաշտօնեան ինձ տեսաւ: Կարծում էի, որ նա այդ մասին կը խօսի Պասեանի հետ եւ դրանով կը բացայայտուի, որ խորհրդայինները գողացել են ինձ ու տարել Խորհրդային Միութիւն:<sup>2</sup>

Այստեղ նշենք, որ մարդագողութեան հիմքը դրել են խորհրդային ղեկավարները եւ ցայժմ էլ այդ կազմում է նրանց քաղաքականութեան յատկանիշներից մէկը:

Լուսաբացին գնացքը հասաւ Իրան-Խորհրդային Միութեան սահմանազուխը, այսինքն՝ Զուլֆա: Ես տեսայ Մայր Արաքսի ջրերը, որոնք ինձ յիշեցրին երկու տարի առաջ տեսած երազս:

Երազումս կնոջս ու երեխաներիս հետ գնացել էի զբօսանքի: Յանկարծ իմ առջեւ բացուեց մի կապոյտ լիճ: Անյայտացան կինս ու երեխաներս, թուաց, թէ նրանք մնացին լճի միւս ափում, իսկ ես՝ այս ափում: Որոնում եմ ու կանչում, սակայն չեմ տեսնում բալիկներիս եւ չեմ լսում նրանց ձայնը: Տխրութիւնն ու յուսահատութիւնը պատեցին ինձ: Ես այլեւս չպիտի տեսնեմ կնոջս եւ երեխաներիս: Արթնացայ քնից եւ տեսայ, որ երազ էր, ուրախացայ:

Եւ ահա երկու տարի յետոյ իրականանում է երազս: Արաքսը

2 Յստակ է, որ գնացքի պաշտօնեան հասկացել էր, թէ ինչ է անցնում-դառնում, բայց որոշել էր լռութիւն պահպանել: Մէկ անգամ եւս վախը յաղթել էր բարոյական սկզբունքներին:

ինձ բաժանեց կնոջիցս եւ երեխաներիցս: Նորից տխուր եմ եւ իսկապէս այլեւս չպիտի տեսնեմ նրանց: Դառնօրէն տխուր եմ, որովհետեւ երեխաներս որք պիտի մնան եւ տանջուեն ու չարչարուեն այնպէս, ինչպէս տանջուել ու տառապել եմ ես՝ իմ մանկութեան շրջանում:

Ռուսական Զուլֆայում տասն ժամ պիտի սպասէինք Բաքուից եկող գնացքին, որ մեզ տանի Երեւան: Այդ ժամանակամիջոցում ինձ ու իմ պահակ զինուորին մտցրին մի տնակ եւ փակեցին դրսից: Չգիտեմ՝ ինձ զբաղեցնելու համար կամ այլ նպատակով, ինձ հետ «բանտարկուած» պահակ զինուորն ասաց, թէ շատ է կարօտել միտինգները: Ես, շատ հանգստութեամբ, մի քիչ էլ հեզնական տոնով, ասացի՝ թէ կարօտելիք ուրիշ բան չկա՛ր: Լռեցինք երկուսս էլ...

Վերջապէս եկան բացեցին խրճիթ-բանտի դուռը եւ ինձ շրջապատած տարան դէպի գնացքը, որ պատրաստուում էր մեկնելու Երեւան: Արդէն գնացքի մէջ ենք, վագոնի մի անկիւնում: Ճամբորդներին չեմ տեսնում, սակայն լսելի է նրանց խօսակցութիւնը: Ճամբորդներից մէկը, արեւմտահայ, բարձր ձայնով քննադատում էր կառավարութեանը, դժգոհում կեցութեան պայմաններից եւ ծանր աշխատանքից: Սմբած էին միւս ճամբորդները, լուռ էին, չէին մասնակցում խօսակցութեան: Ո՛չ հաստատում էին եւ ո՛չ ժխտում «քննադատի» տեսակէտները: Ամենայն հաւանականութեամբ, կեանքի փորձը սովորացրել էր նրանց, որ նման բողոքողներն ու քննադատները լրտեսներ են լինում եւ նման ելոյթներով նպատակ են ունենում ՄԱՐԴՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ անելու:

Վերջապէս ուշ ժամին հասանք Երեւանի կայարանը: Վագոնից դուրս հանեցին ինձ, երբ բոլոր ճամբորդները գնացել էին: Զինուորական դրութիւն էր: Կայարանը թաղուած էր խաւարի մէջ: Երբեմն-երբեմն երեւում էին հակաֆաշիստական

յայտարարություններ: Ինձ յանձնեցին զինուորական զգեստով մի մարդու՝ իմ ապագայ քննիչին, որն ինձ տարաւ ու նստեցրեց մի ինքնաշարժի մէջ եւ ինքն էլ նստեց կողքիս:

Մի քիչ յետոյ ես արդէն ՉէԿայի բանտապետի գրասենեակումն էի:

Բանտապետի սենեակում կատարեցին սովորական արձանագրությունը ու ձեւակերպումը եւ վերցրին այն բոլոր իրերը, որոնք կարող էին գործածուել ինքնասպանութեան համար: Ապա ինձ տարան նետեցին մի խուց, որ տախտակամած էր՝ մաքուր եւ հաճելի կերպով տաք, մի դրախտ, եթէ համեմատելու լինենք Թաւրիզի իմ մառան-բանտի հետ: Բայց ես արդէն գտնուում էի ՉէԿայի բանտում: Մի հաստատություն, որ դաժանութեան եւ մարդասպանութեան հռչակ եւ անուն ունէր Բոլշեւիկ-համայնավարութեան կարճատեւ պատմութեան մէջ, հետեւաբար՝ ես ու մահը արդէն հաշտուել էինք: Ես մահուանը այլեւս չէի նայում որպէս սարսափազդու թշնամու: Ինձ համար վերացել էր կեանքն ու մահը իրարից բաժանող սահմանագիծը: Ես արդէն բացարձակապէս անտարբեր էի հանդէպ ամենակուլ մահուան, հանգիստ էի, անդորր ու խաղաղ: Չէի քնել մի քանի օրերից ի վեր, ուստի պառկեցի տախտակամածի վրայ եւ քնեցի, առանց անկողնու:

Մէկ էլ մի ուժեղ հարուած կողքիս. բանտի պահակներից մէկն էր, որ ոտքի հարուածով ուզում էր արթնացնել ինձ: Վեր կացայ դժուարութեամբ, դժգոհութեամբ եւ տքտքալով, որովհետեւ մարմինս ցաւում էր չոր տախտակների վրայ քնելուց:

«Հապա ի՞նչ էիր ուզում: Հայաստանի մետաքսից պատրաստուած անկողին պիտի տայի՞նք քեզ: Դու դաշնակ ֆաշիստ», – ասաց գաւառեցի պահակը:

- Գլխիդ կպնի քո մետաքսէ անկողինը, գոնէ մի սովորական անկողին կամ անկողնու նման մի բան, – պատասխանեցի ես:

Պահակն ինձ առաջնորդեց մի գրասենեակ, որի պատուհանները ծածկուած էին սեւ վարագոյրներով եւ այնտեղ նստած էր այն նոյն մարդը, որ կայարանից ՉԷԿա բերեց ինձ, մի մարդ, որ եղաւ իմ ապագայ հարցաքննիչը, արցախեցի Ռուբէն Ղազարեանը, որ շատ էր հպարտանում իր արցախեցի լինելու համար: Ղազարեանն ասաց, որ ինձ տանում է Պետական Ապահովութեան նախարար Մարտիրոսեանի մօտ: Ասաց, որ սա մի պատիւ էր, որ արւում էր ինձ: Ես անտարբեր էի այդ պատուի հանդէպ:

Անցանք երկար միջանցքներով եւ մտանք մի սենեակ, որի կենտրոնում դրուած էր կանաչ ծածկոցով մի սեղան, որի շուրջ նստած էին վեցը հայ գնդապետներ, իսկ մէկը նստած էր բոլշեւիկեան երկու կուռքերի՝ Լենինի եւ Ստալինի մեծադիր լուսանկարների հովանու տակ: Դա Հայաստանի Պետական Անվտանգութեան նախարար Մարտիրոսեանն էր:

Սեղանից մի քանի մետր հեռու դրուած էր մի սովորական աթոռ: Դա մեղադրեալի աթոռն էր: Գիտէի մեղադրեալի աթոռի մասին, սակայն առաջին անգամը լինելով՝ տեսնում էի այն եւ շօշափելի գաղափար կազմում դրա մասին: Պարոն նախարարը եկաւ ու տեղաւորուեց սեղանի գլխին, եւ սկսուեց հարցաքննութիւնը:

Տակաւին յոգնած էի ու դժուարութեամբ էի կենտրոնանում: Վախենում էի տանուլ տալ: Ուստի խորհում էի մի ձեւ, մի պատճառ գտնել, որ այս հարցաքննութեան պատահական հաւաքոյթը ձախողի:

Նախարար Մարտիրոսեանը կապտաչեայ էր եւ ուներ շարժուն դիմարտայայտութիւն: Գտայ իմ մանովրի պատրուակը: Ես պիտի օգտագործեմ Մարտիրոսեանի խառնուածքը: Այդ դիմագծերով մարդիկ ընդհանրապէս ջղայնոտ եւ դիւրագրգիռ են լինում: Եկաւ խաղարկութեան պահը եւ շուտ էլ եկաւ:

Պարոն նախարարը հարցերի եւ մեղադրանքների մի

տարափ թափեց գլխիս վրայ եւ մի քանի ամբաստանութիւններ անելուց յետոյ շտապ կարգով յայտարարեց. «Դաշնակցութիւն կուսակցութիւնը վնասաբեր է հայ ժողովուրդի համար եւ պիտի լուծարքի ենթարկել նրան»:

Ահա՛ լաւագոյն առիթը, որ կարող էր փրկել ինձ եւ չասել այնպիսի բաներ, որոնք կարող էին օգտագործուել իմ դէմ: Ուստի ես պատասխանեցի նախարարի «պահանջատիրութեանը»՝ ասելով, որ կուսակցութիւնները չեն ստեղծուում հրամանով եւ չեն մեռնում հրամանով: Ժողովուրդների պահանջներն ու պատմութիւնն են ստեղծում կուսակցութիւններ եւ պատմութիւնն ու իրադարձութիւններն են լուծարքի ենթարկում նրանց: Արդ, հայ ժողովուրդի կարիքներն ու հայոց պատմութիւնը ցոյց պիտի տայ, թէ որ կուսակցութիւնը պիտի վերանայ՝ Դաշնակցութիւնը, թէ՛ բոլշեւիկեան կուսակցութիւնը:

Բարկացայտ ու ջղայնացած՝ տեղից վեր կացաւ նախարարը եւ սկսեց քայլել սենեակի երկարութեամբ:

«Նաստայաշչի դաշնակ (իսկական դաշնակ): Տարէ՛ք սրան, պտտեցրէ՛ք Երեւանը, եւ մենք կը կոտրենք սրան», – ատամների տակից եւ ժուսերէն լեզուով մռլտացրեց կապտաչեայ նախարարը:

Ես հասայ իմ հետապնդած նպատակին: Ձախողեց այլ նպատակներով գումարուած սպայակոյտը, իսկ ես ուրախ էի, որ ապարդիւն անցաւ ՉէԿայի սպայակոյտի հաւաքոյթը, եւ ես տանուլ չտուեցի, չխճճուեցի հարցերի տեղատարափի բալիղների մէջ:

Իմ այս յաջողութիւնը պարտական եմ Մարտիրոսեանի սանգուիինիկ խառնուածքին:

Համաձայն պարոն նախարար Մարտիրոսեանի կարգադրութեան՝ իմ ապագայ քննիչ Ռուբէն Ղազարեանը իր մեքենայով ինձ տարաւ Երեւանը պտտեցնելու: Անցնում ենք Հայաստանի մայրաքաղաքի փողոցներով: Անցնում ենք նաեւ այն փողոցով, ուր գտնուում է սինթետիկ կաուչուկի գործարանը:



Դրսից նայում եմ գործարանին: Եւ այսպէս վերջանում է Երեւան տեսնելու իմ հարկադրական պտոյտը:

Ընդգծում եմ անկեղծօրէն, որ չստացայ մի առանձնայատուկ հրապուրիչ տպաւորութիւն, որ Մարտիրոսեանը կարողանար օգտագործել իմ հիացած ու հմայուած հոգեմտաւոր վիճակը եւ «կոտրել» «նաստայաշէի դաշնակին»:

Երբ վերադարձանք ՉԷԿա, բանտապետը ինձ տարաւ ներքնայարկում գտնուող խուցերից թիւ 3-ը եւ փակեց այնտեղ:

Ինձ այլեւս չտարան նախարարի մօտ:

Իմ խուցը տախտակամած էր, շատ նեղ, մօտ երկու քայլ լայնքով, երկարութիւնը՝ 3-4 քայլ: Չունէր որեւէ կահաւորանք, գոնէ նստելու եւ քնելու համար: Նստում էի ծալուած եւ պատի տակ դրուած «անկողնու» վրայ: Յերեկը իրաւունք չկար քնելու: Առաստաղի մէկ անկիւնում կար մի փոքրիկ անցք, որից ներս էր մտնում մի նուազ լոյս: Դէպի երկար միջանցքը բացուող երկաթեայ դուռն ունէր մի դռնակ, իսկ դա՝ աչքի չափ մի ծակ: Ծակը փակուած էր ակնոցի ապակու մեծութեամբ մի ապակիով, որով պահակը հսկում էր կալանաւորի վրայ, եւ եթէ քնած էր լինում, հայհոյանքներով արթնացնում էր եւ ապա փակում ծակը, որ «աչք» էր կոչւում:

Երկաթեայ դուռը ճռնջալով եւ մեծ դղրդոցով բացւում էր առաւօտը շատ շուտ եւ երեկոյեան, որպէսզի կալանաւորը արտաքնոց գնայ՝ իր բնական կարիքների համար: Ուտելիքները տալիս էին դռնակով, առանց բացելու երկաթեայ դուռը:

Երկաթեայ դուռը մեծ աղմուկով բացւում էր նաեւ այն ժամանակ, երբ կալանաւորին տանում էին հարցաքննութեան, որ ընդհանրապէս կատարւում էր ժամը 22-ին, երբ քնած էին լինում կալանաւորները:

Այսպիսով, ես 16 ամիս մենակեաց մնացի փակուած իմ խուցում՝ անդադար հարցաքննութիւնների տակ ու դատաւարութեան

արդիւնքին սպասելով: Որքան ծանր է ու դժուարին մենակութիւնը, մենակեցութիւնը:

Մենակեցութիւնը ինքնին մի պատիժ է պատժի մէջ: Ես մենակութեան էի դատապարտուած այդ ամբողջ 16 ամիսների ընթացքում, եթէ հաշուի չառնենք այն երեք կալանաւորներին, որոնց տարբեր ժամանակներում եւ իւրաքանչիւրը մի շաբաթից մինչեւ տասն օր ժամանակով բերեցին եւ աչք զարնող կոպտութեամբ նետեցին իմ խուցը, իբրեւ բանտային «ստուգաչ», այսինքն՝ լրտես:

Զէհայի իշխանութիւնը իր տրամադրութեան տակ ուներ յատուկ լրտեսներ կամ ստուգաչներ, որոնց ուղարկում էր այս կամ այն խուցը՝ լրտեսելու բանտարկեալներին: Այդ լրտեսներին տալիս էին մի կտոր յաւելեալ սեւ հաց եւ մախորկա (ամենացածր տեսակի ծխախոտ, որ կոչւում է *տաքակում ռուստիկա*):

Աշխատանքային ճամբարներում այս տիպի կալանաւորներին մաքրագործում էին քրէական յանցաւորները:

Տեղին է յիշատակել, որ երբ ցարական բռնապետական ռեժիմի օրօք բանտարկում են ռուս բանաստեղծ Լերմոնտովին, նա ասում է՝ գոնէ այստեղ՝ բանտում, կարող եմ ազատ խօսել. ուզում էր ասել, որ բանտերում լրտեսներ չկան: Մինչդեռ այսօր, համայնավարական ռեժիմի օրօք բանտերում եւ ճամբարներում էլ չես կարող ազատ խօսել, որովհետեւ լրտեսները վիստում են եւ բանտերում, եւ ճամբարներում:



1944 թիւ, յունուար 6-ից սկսւում են հարցաքննութիւնները երկարատեւ, ծանր, դաժան եւ հոգեմաշ, սակայն առանց ֆիզիքական տանջանքների:

Հարցաքննութեան առաջին օրն է: Ես նստած եմ մեղադրեալի աթոռին, առանց մեղադրական ակտը լսելու: Դիմացս՝ սեղանի առջեւ, նստած է իմ քննիչ Ռուբէն Ղազարեանը, որ օգնականն է

Պետական Անվտանգութեան նախարար Մարտիրոսեանի:

Սեւ ու թանձր վարագոյրներով պատած մեծ սենեակում՝ հարցաքննիչս սկսում է իր առաջին հոգեբանական յարձակումը՝ նպատակ ունենալով թուլացնել եւ գինաթափել ինձ, որպէսզի դիրքութեամբ ձեռք բերի, ինչ որ ուզում է:

Նա նախ նազան ատրճանակը գորոցից հանելով՝ դրեց սեղանի վրայ<sup>3</sup> եւ ապա բացեց ծաւալուն եւ հաստափոր թղթապանակը՝ ցոյց տալու համար ինձ, թէ որքան մեծ ու ծանր յանցանքներ եմ գործել: Կարենալ ցոյց տալու համար նրան, որ այդ մանովրները չպիտի ազդեն ինձ վրայ, ես մի փոքր հակայարձակում կատարեցի, հարցնելով՝

- Ասացէք խնդրեմ, որտե՞ղ եմ գտնուում ես:

- Դուք գտնուում էք Երեւանում՝ Պետական Անվտանգութեան շէնքում:

- Ես օտարահպատակ եմ, դուք ինչո՞ւ էք ձերբակալել եւ բերել այստեղ ու բանտարկել:

- Պատերազմ է, եւ ուժն օրէնք է, – պատասխանեց նա սառնութեամբ:

Այս մանովրներից յետոյ Ռ. Ղազարեանը սկսեց իր հարցաքննութիւնը, որը ընդգրկում էր մի շատ ընդարձակ պատմաշրջան, այսինքն՝ 1921-ից մինչեւ 1944-ը, Հայաստանի

3 Պէտք է նշել այստեղ, որ սա ընդունուած եւ կրկնուող երեւոյթ է եղել հարցաքննութիւնների ընթացքում: Ալեքսանդր Սոլժենիցինը բացատրում է՝ «1919-ից ի վեր հարցաքննիչը դիմում էր այդ մեթոդին՝ ատրճանակը գրասեղանի վրայ... սարսափազդու ատրճանակը երբեմն ուղղուած դէպի քեզ...» (տե՛ս, Aleksandr Solzhenitsyn, The Gulag Archipelago, 1918-1956: An Experiment in Literary Investigation, I-II (New York: Harper & Row, 1973, p. 97): Սոլժենիցինի այս շատ կարեւոր աշխատութիւնը Արմէն Յովհաննիսեանը (Արմէն Հովհաննիսյան) հայերէնի է թարգմանել՝ «Արխիպելագ Գուլագ, 1918-1956, Գեղարվեստական հետազոտության փորձ» վերնագրով: Թարգմանութիւնը լոյս է տեսել 6 հատորով Երեւանում, 1994-ին: Այնուամենայնիւ, ես իմ ձեռքի տակ ունեցել եմ գրքի անգլերէն տարբերակը եւ օգտուել եմ այդ տարբերակից: Ներկայ աշխատութեանս մէջ, ուրեմն, երբ հարկաւոր է եղել գրքից մէջբերում կատարել, դարձեալ անգլերէն տարբերակից տուեալ հատուածի հայերէն մօտաւոր թարգմանութիւնն եմ տուել:

խորհրդայնացման թուականից մինչև ինձ առեւանգելու տարին:

Առաջին մի քանի ամիսների ընթացքին հարցաքննությունները կատարում էին զանազան հարցերի շուրջ, առանց ձեւակերպուած ամբաստանագրի: Կարծես Պետական Անվտանգութեան օրգանը նախապէս չի կարողացել կազմել ամբաստանագիր-մեղադրական ակտը եւ փորձում է, «նաստայաշի դաշնակին» «կոտրելով», պատրաստել այդ մեղադրականը: Եւ դա միանգամայն հակառակ իրաւական եւ բարոյական իրաւանց հիմքերի վրայ դրուած օրէնքների, ըստ որոնց նախ տուեալներն ու փաստերն են ձեռք բերում եւ յետոյ միայն ձերբակալում է յանցաւոր կամ կասկածելի նկատուած անձնաւորութիւնը:<sup>4</sup>

Այս նախնական կոչուած հարցաքննութեան ընթացքում եւ հետագայում հարցաքննիչը, ընդամին նաեւ Հայաստանի ՉԷԿայի միւս պատասխանատուները երեւան բերեցին նկարագրային եւ հոգեբարոյական այնպիսի գծեր, որ չեն կարող անցնել առանց դրանք յիշելու:

Այսպէս.-

1.- Հարցաքննությունները տեղի ունեցան քաղաքավարութեան սահմաններում, առանց կոպտութեան, գռեհկութեան եւ ֆիզիքական չարչարանքների: Թէեւ ճամբարներում շատ հայեր խօսում էին հարցաքննութեան վայրագ բնոյթի մասին, սակայն ես այդ փորձը չունեցայ:

2.- Հարցաքննութեան ընթացքում մենք «պարոն» նախդիրով էինք խօսում մէկս միւսի հետ, որը առնուազն պահում էր առերեսոյթ

4 Սա ի հարկէ դատական համակարգի հօրս պատկերացումն էր: Իսկ խորհրդային Միութիւնում: Հրանուշ Խառատեանը յիշեցնում է, որ այդ ժամանակ, ԽՍՀՄ գլխաւոր դատախազ Վիշինսկու տեսութեան հիման վրայ ձեւաւորուած իրաւագիտութեամբ, ամենակարեւոր փաստը մեղադրեալի խոստովանութիւնն էր, որ շատ անգամ ստացում էր սոսկալի չարչարանքներով: «Խոստովանութիւնը» գրում էր քննիչը եւ պարտադրում մեղադրեալին ստորագրել այն: Դատավարութեան ընթացքում խօսք չէր տրուում մեղադրեալին, որպէսզի նա չիրաժարուի իր «ինքնախոստովանական ցուցմունքից»:

փոխադարձ յարգանքը:

3.- Իմ հարցաքննիչը մեր կուսակցության մասին խօսելիս չէր գործածում «դաշնակ» վիրավորական ձեւը, այլ՝ «Դաշնակցութիւն» կամ «Հ.Յ.Դաշնակցութիւն»:

4.- Որքան ես ամուր, հաստատուն, վճռական եւ համարձակ կեցուածք էի երեւան բերում, նոյնքան յարգալիր էր հարցաքննիչս: Նա պատկառանք էր ցուցաբերում հանդէպ ինձ եւ իմ կուսակցութեան՝ Հ.Յ.Դաշնակցութեան:

Շատ անգամ է պատահել, որ նա, որոշ դէպքեր պատմելով եւ օրինակներ բերելով, կարծես ցանկացել է հասկացնել ինձ, որ շարունակեմ նոյն ընթացքս ու կեցուածքս:

Այսպէս օրինակ, երբ մի անգամ ի պատասխան որոշ հարցերի ես ասացի, թէ չեմ կարող ոչինչ ասել, որովհետեւ իմ կուսակցական հասկացողութիւնը եւ կուսակցական կարգապահութիւնը թոյլ չեն տալիս, նա ասաց.

- Կարմիր Բանակի սպաներից մէկը տանջալից չարչարանքների ենթարկուեց Գեշտապոյի կողմից, սակայն նա ոչ մի գաղտնիք չտուեց:

Պատասխանեցի.

- Ի՞նչ է ցոյց տալիս ձեր օրինակը: Եթէ ՌՌԲՍը գաղտնիք չտուեց, հապա ի՞նչ էք կարծում, ես որ ՀԱՅ ԵՄ, ԵՍ ՈՐ ԴԱՇՆԱԿԱՅԱԿԱՆ ԵՄ, կը դրսեւորե՞մ իմ կուսակցութեան գաղտնիքները:

Ապա հարցաքննիչս պատմեց մի երկրորդ դէպք:

- Մի տաճիկ էինք ձերբակալել, ոչինչ չէր ասում: Մի քանի օր սոված պահեցինք նրան եւ հարցրեցինք, թէ կերակուր կ'ուտի՞: «Այո՛», – ասաց եւ կերաւ: Յետոյ պտուղ առաջարկեցինք ու կերաւ: Ապա խօսեց եւ տուեց այն բոլորը, որ մերժում էր նախապէս: Այսպէս, նա ստորացաւ մեր աչքում: Կորցրեց իր մարդկային արժանապատուութիւնը:

- Ես կարծում եմ եւ հաւատում եմ, որ Դուք ինձ չէք համեմատի

անգաղափար, անգիտակից եւ անպատասխանատու մի որկրամոլ թուրքի հետ, – ասացի ես մի քիչ էլ վիրաւորուած տոնով եւ շարունակեցի, – Դուք մեր պատմութիւնից շատ լաւ պիտի գիտենաք, որ հայը այնքան մեծ արժանապատուութեան տէր է եւ այնքան հպարտ, որ իր հոգին ու բարոյականը չի ծախի, կարենալ փրկելու համար իր ֆիզիքականը՝ իր մորթը: Ընդհակառակը, նա պատրաստ է ենթարկուելու ֆիզիքական տանջանքների, մահանալու մինչեւ իսկ, որպէսզի փրկի իր անունը, իր անհատական եւ ազգային արժանապատուութիւնը, միով բանիւ իր հոգեբարոյականը:

Բացի այս ընդհանուր նշումներից, մի քանի խօսք էլ ասեմ այն հարցերի մասին, որոնք խնդրոյ առարկայ էին դառնում այսպէս կոչուած նախնական հարցաքննութեան ընթացքում եւ որոնց շատ յաճախ եւ բազում անգամ անդրադառնում էր հարցաքննիչը, ցուցաբերելով խիստ հետաքրքրութիւն եւ շահագրգռութիւն:

Ահա՛ այդ հարցերը, որ դնում էր Ղազարեանը, իբրեւ մեղադրանք.-

1.- Դաշնակցութիւնը պայքարում է մեր դէմ եւ վնասարարական ու քայքայիչ աշխատանքներ է կատարում Հայաստանում:

Բազմիցս այս նոյն մեղադրանքին պատասխանել եմ, թէ Դաշնակցութիւնը պայքարել է ոչ թէ ձեր դէմ, այլ Խորհրդային Ռուսաստանի դէմ, որ գրաւել է Հայաստանը եւ նստել նրա վրայ: Նշել եմ նաեւ, որ այդ պայքարը եղել է մամուլային եւ ոչ թէ գործնական գետնի վրայ: Բացի այդ, Դաշնակցութիւնը չէր կարող վնասարարական եւ քայքայիչ աշխատանքներ տանել Հայաստանում, որովհետեւ Հայաստանը ամբողջ հայութեանն է: Դաշնակցութիւնը, որպէս հայ ազգայնական կուսակցութիւն, չէր կարող վնասել Հայաստանին եւ հայ ժողովրդին: Ռեժիմները փոփոխական են՝ ժամանակաւոր, անցողական, իսկ հայ ժողովուրդը եւ նրա հայրենիք Հայաստանը՝ մնայուն, մշտական

եւ յաւիտենական կատեգորիաներ:

2.- Դաշնակցութիւնը կանգնած է գերմանացիների կողքին եւ կռուում է Կարմիր Բանակի դէմ, ինչպէս ցոյց է տալիս Դրոյի եւ Նժդեհի ներկայութիւնը ռազմաճակատում, – յայտարարում է իմ քննիչը:

Իսկ ես պատասխանում եմ.

- Ընդհակառակը. Դաշնակցութիւնը կանգնած է դաշնակիցների կողքին եւ ընդդէմ գերմանացիների: Այս մասին կան պաշտօնական յայտարարութիւններ: Այս մասին ասուած է նաեւ Խորհրդային Միութեան Թաւրիզի ներկայացուցիչներին, երբ բանակցութիւն էր տարւում նրանց հետ Թաւրիզում, նախքան գրաւումը: Գալով Դրոյի եւ Նժդեհի ներկայութեան գերմանական ճակատում՝ ինչքան ես գիտեմ նրանք չէին մասնակցում պատերազմին: Նրանք նպատակ ունէին փրկելու հայ ռազմագերիներին, որոնք գտնուում էին գերմանական պատերազմական գերիների ճամբարում եւ ենթակայ էին մահուան վտանգին:

3.- Դուք Պարսկաստանում պատրաստել էիք 25-հազարանոց բանակ, որ կռուէք մեր դէմ, – ասում է Ղազարեանը:

Եւ ես պատասխանում եմ.

- Շատ տարօրինակ է, որ շատ քիչ տեղեկութիւն ունէք Հայաստանի հարեւանութեան մէջ ապրող հայութեան մասին: 80-ից 100 հազար հայութիւնից Դաշնակցութիւնը ինչպէ՞ս կարող էր կազմել 25-հազարանոց բանակ: Մենք այնտեղ ունենք զէնք ու ռազմամթերք, ինչպէս նաեւ մի քանի տասնեակ երիտասարդներ, որոնք այս կամ այն դէպքում կարող են ծառայել տեղի հայութեան ինքնապաշտպանութեան:

4.- Դուք որոշել էիք ահաբեկել Թաւրիզի մեր քաղաքական եւ զինուորական գործիչներին, – ասում է քննիչը:

Իմ պատասխանը.

- Ցարդ ահաբեկուած կամ սպանուա՞ծ է որեւէ մէկը, ի հարկէ՝

ո՛չ: Արդ, եթե ո՛չ, ապա ուրեմն մենք նման որոշում չենք առել: Եթե որոշուած լինէր՝ անպայման կը գործադրուէր, մանաւանդ դուք եւս գիտէք, որ մեր գնդակն անվրէպ է:

5.- Ովքե՞ր են ձեր Կ. կոմիտէի անդամները:

- Պարզ է, որ գիտեմ, թէ ովքեր են, սակայն կուսակցական գիտակցութիւնս եւ կուսակցական կարգապահութիւնը թոյլ չեն տալիս բացայայտել անլեզալ կուսակցութեան գաղտնիքները եւ նրա Կ. կոմիտէի անդամների անունները: Ես միակ ոչ թաքուն անդամն եմ եւ ես պատասխանատու եմ Կ. կոմիտէի գործունէութեան համար:

6.- Ի՞նչ որոշումներ է տուել ձեր վերջին Ընդհանուր Ժողովը:

- Դա էլ գիտեմ, սակայն չեմ կարող պատասխանել այդ հարցին, ճիշտ նոյն պատճառաբանութեամբ, որ նշեցի արդէն, այսինքն՝ կուսակցական ըմբռնումս եւ կարգապահութիւնս արգելում են նման հարցեր բացայայտել:

7.- Ի՞նչ կապեր ունէք անգլիացիների հետ:

- Անգլիացիները ձեր դաշնակիցներն են: Մենք կարիք չենք զգացել կապեր ունենալու անգլիացիների հետ:

Հինգ-վեց ամիս յետոյ, վերջանում է կամ ինձ թւում է, թէ վերջանում է ամէն օր տեղի ունեցող, այսպէս կոչուած, նախնական հարցաքննութիւնը: Այլեւս ինձ չեն կանչում «դապրոսի», այսինքն՝ հարցաքննութեան:

Անցնում է բաւական երկար ժամանակ, կարծում եմ՝ մօտ երկու շաբաթ եւ ահա՛ ճռնչալով բացւում է իմ երկաթեայ դուռը եւ ներս է մտնում բանտի պահակներից մէկը եւ դարձեալ ինձ «դապրոսի» կանչում:

Ինձ զարմանք է պատճառում, որ օրը ցերեկով «դապրոսի» են տանում ինձ, քանի որ ընդհանրապէս գիշերով, ժամը տասից յետոյ էին տանում հարցաքննութեան: Զարմանքս շատ աւելի մեծացաւ, երբ պահակն ինձ տարաւ մի ուրիշ բաժին:



Ինձ նկարեցին եւ մատներս դաքթիլոգրաֆի արեցին, այսինքն՝ երկու ձեռքերիս տասը մատները եւ ավերը մէկիկ-մէկիկ թաթախեցին յատուկ թանաքի մէջ եւ դրոշմեցին թղթի վրայ եւ ինձ վերադարձրեցին իմ խուցը:

Ես մտքերի մէջ ընկայ: Մտածում էի այս արտակարգ եղելութեան մասին եւ փորձում էի վերլուծել այն: Ինչո՞ւ են նկարահանման այս ձեւակերպութիւնը կատարում բանտարկութիւնիցս հինգ-վեց ամիս յետոյ. փոխանակ հէնց առաջին օրերին, ինչպէս ընդունուած է կամ ինչպէս թելադրում են բանտարկութեան օրէնքները: Արդեօք, լաւ ու բարի երեսո՞յթ է, թե՛ վատ ու չար:

Ինձ գողացել էին եւ Երեւանի ՉԷԿայի բանտում ինձ պահում էին մեկուսացած վիճակում, որպէսզի ուրիշ բանտարկեալներ չիմանան, թէ ես բանտարկուած եմ եւ գտնուում եմ Երեւանի բանտում: Այս իրողութիւնը մտահոգում էր ինձ:

Թէեւ ես հաշտուել էի մահուան հետ: Ես գտնուում էի վերջնական կորստի անդունդի եզերքին, բայց մտածում էի՝ մի օր ինձ, որպէս գողացած մարդու, անդենական աշխարհի պիտի ուղարկեն, որպէսզի երբեք ու երբեք չբացայայտուի ՄԱՐԴԱԳՈՂՈՒԹԻՒՆԸ, որ ծանր յանցանք է: Մտքերի ու դատողութիւնների այս քառսի մէջ մի ներքին մղումով լաւատեսութեան մի ներքին հոգեվիճակ ստեղծուեց իմ մէջ, եւ ես մտածեցի, թէ գուցէ ՉԷԿայի ղեկավարներն ուզում են ԼԵԳԱԼԻԶԷ անել իմ բանտարկութիւնը:

Այսպէս նկարահանումից եւ դաքթիլոգրաֆի անելուց յետոյ մի քանի օրեր ես մխրճուած մնացի մտատանջութեան քառսի մէջ՝ փորձելով յստակապէս ու ամբողջապէս ըմբռնել նոր ստեղծուած կացութիւնը եւ նրանից առաջանալիք հետեւանքները:

Անցնում է աւելի քան տասն օր, եւ ահա՛ մի օր խուլ ճռնչոցով դարձեալ բացւում է իմ խուցի երկաթեայ դուռը եւ լսում եմ «դապրոսի» դժոխաւոր կանչը: Ես դուրս եմ գալիս խցից, եւ

պահակ զինուորը տանում է իմ հարցաքննիչի գրասենեակը: Ես ըստ սովորության նստում եմ մեղադրեալի աթոռի վրայ եւ սպասում, թէ ինչ պիտի բարբառի հարցաքննիչը. չէ՞ որ վերջացած էր հարցաքննությունը եւ վաղուց էր, որ այլեւս չէի կանչում «դապրոսի»:

Երկար չտեւեց իմ սպասումը: Ռ. Ղազարեանը ծանօթէն ու հանդիսաւոր կերպով եւ պատշաճ շարժումներով կարդաց իմ մեղադրական-ամբաստանագիրը: Ընթերցումը վերջանալուց յետոյ մեծ զարմանքով դիտել տուեցի, թէ ինչու այսքան ուշ է կազմում իմ ամբաստանագիրը. չէ՞ որ այս ակտը կատարում է հէնց ձերբակալութեան առաջին օրերին. մինչդեռ շատ երկար ժամանակ է, որ ես գտնում եմ հարցաքննութեան տակ: Իմ ստացած պատասխանը կրում էր նոյն բնոյթը, նոյն տոնը այն պատասխանի, որ նա տուեց ինձ, երբ հարցաքննութեան առաջին օրը յարել էի, թէ ես օտարահպատակ եմ եւ ինչու կամ ինչ իրաւունքով են ինձ ձերբակալել եւ այստեղ բերել:

Յամենայն դէպս, հոգուս խորքի մէջ գոհ էի, որովհետեւ մեղադրականի ընթերցումը ցոյց էր տալիս, որ իսկապէս Երեւանի ՉէԿան օրինականացնում է իմ դէմ ձերբակալման ակտը եւ որ այլեւս գողացուած ապրանք չեմ:

Գալով մեղադրական-ամբաստանագրի բովանդակութեան, պիտի ընդգծեմ, որ դա պարունակում էր նոյն հարցերն ու խնդիրները, որոնք յարուցուել էին հարցաքննութեան ընթացքում եւ որոնց արդէն անդրադարձայ ժամանակին:

Պաշտօնական ամբաստանագրի պատրաստութիւնից յետոյ մի որոշ ժամանակ էլ տեւեց պաշտօնական հարցաքննութիւնը: Նոյն հարցերն էին ինձ տալիս, եւ ես տալիս էի նոյն պատասխանները, ինչ որ նախնական հարցաքննութեան ընթացքում:

Վերջապէս մի քանի ամսից վերջացաւ նաեւ պաշտօնական հարցաքննութիւնը: Ես ստորագրեցի այս հարցաքննութեան

հայերէն օրինակը, որին կցուած էր նաեւ ռուսերէն պատճէնը: Յաջորդ քայլը պիտի լինէր դատավարութիւնը անշուշտ. եւ ես սպասում էի դատավարութեան եւ նրա արդիւնքին:

Շատ երկար եւ անհամբեր սպասեցի տեղի ունենալիք դատավարութեան, սակայն ո՛չ մի տեղեկութիւն այդ մասին: Թէեւ ես կարդում էի կամ, աւելի ճիշտը, ես լսւում էի ինձ տուած գրականութիւնը, որ բաղկացած էր մեր հին գրքերից, այդուհանդերձ, ես անհամբեր էի դարձել: Մի օր հարցրեցի Ղազարեանից, թէ ինչու է ուշանում դատավարութիւնը, թէ երբ տեղի պիտի ունենայ եւ երբ պիտի պարզուի դատավարութեան արդիւնքը:

Մեծ զարմանքով լսեցի, որ իմ դատը ուղարկուած է Մոսկուա, եւ երեք հոգուց բաղկացած ՅԱՏՈՒԿ ԽՈՐՀՈՒՐԴԸ պիտի դատի ինձ եւ վճիռ արձակի, առանց իմ պաշտպան փաստաբանի, մինչեւ անգամ առանց իմ ներկայութեան եւ առանց իմ վերջին խօսքի:

Խորը եւ տխուր տպաւորութիւն թողեց իմ վրայ «Ազատ եւ երջանիկ» Հայաստանի այս իրաւագրկութիւնը:

Այո՛, այսպէս ուրեմն, «Ազատ ու երջանիկ» Հայաստանի պետութիւնը իրաւունք չունի դատելու կամ պատժելու կամ արդարացնելու Հայաստանի դէմ «յանցանք» գործած հային: Մոսկուան է, որ պիտի դատի հայ մարդուն եւ ոչ թէ Երեւանը, հայրը:

Ի՞նչ տարբերութիւն կար ուրեմն ցարական Ռուսաստանի նախկին «հայկական նահանգի» եւ ներկայ Խորհրդային, «ընկերվարական» Հայաստանի հանրապետութեան միջեւ: Վերաւորուած էր իմ ազգային արժանապատուութիւնը, ինքնասիրութիւնը, սակայն ի՞նչ արժէք ունեն բողոքը, դժգոհութիւնը, ազգային հպարտութիւնը, ինքնասիրութիւնը: Այս բոլորը քուրջի կտորներ են յաչս գաղութարար բռնակալի:

Անցան օրեր, շաբաթներ եւ ամիսներ, եւ մի օր բանտապետը

եկաւ իմ խուցը եւ յայտնեց, որ Մոսկուայի երեք հոգուց բաղկացած յատուկ խորհուրդը դատապարտել է ինձ տասը տարուայ աշխատանքային ճամբարի կալանաւորութեան ու պարտադիր աշխատանքի:

Հետագայում իմացայ, որ ինձ պիտի աքսորեն Նարիլսկ, տունդրաները, Հիւսիսային Ովկիանոսից վեց հարիւր կիլոմետր հարաւ, յաիտենական սառուցեալ գօտին:

1945 թ. ապրիլ 15-ին էր, առաւօտեան ժամը 10-ին, իմ բանտարկութիւնից 16 ամիս յետոյ, երբ վերջին անգամը լինելով, ճնշալով բացուեց իմ խցի երկաթեայ դուռը, եւ անսպասելի կերպով ներս մտաւ բանտապետը եւ յայտարարեց.

- *Սաքերայ սվեշամի*, – այսինքն՝ հաւաքիր իրերդ:

Որեւէ իր չունէի, դուրս եկայ խցից:

Խստադէմ, մռայլ եւ ջղայնոտ էր ալեքսանդրապոլցի բանտապետը, իսկ միւսը՝ կարսեցին, լուրջ, մեղմ, մարդասէր եւ բարեհամբոյր:

Բանտապետը տարաւ ինձ իր գրասենեակը եւ ասաց.

- Դու բողոքել էիր դատաւարութեան եւ նրա տուած վճռի դէմ: Քեզ ուղարկում ենք Մոսկուա, գնա՛ եւ այնտեղ ասա՛ ինչ որ ուզում ես:

Անկասկած, սա մի մեծ սուտ էր, որ շատ հեշտութեամբ գլորեց պարոն բանտապետը ի կատար ածելու համար վերից եկած կարգադրութիւնը:

Մի բեռնատար մեքենայի մէջ դնելով՝ ինձ տարան Երեւանի երկաթուղակայարանը, ուր ինձ տեղաւորեցին բանտ-վագոնի կուպէի մէջ, իսկ միւս կուպէները գրաւել էին մի վրացի ենթասպայ եւ երկու զինուորներ, որոնք պարտականութիւն ունէին ինձ հսկելու մինչեւ Ռոստով հասնելը:

Այսպէս է սկսում, ուրեմն, իմ աքսորի երկար ու ձիգ ճամբան

դէպի հիւսիսային յաիտենական սառուցեալ տունդրաները, դէպի Տայմիր թերակղզին, դէպի Նարիլսկ, դէպի անձանօթ ու անորոշ ճակատագիրը:

Մնա՛ն բարեաւ, իմ անազատ ու բռնադատուած հայրենիք  
Հայաստան, իմ սիրեցեալ ու պաշտելի երկիր – Հայաստան:  
Մնա՛ն բարեաւ եւ դո՛ւ, իմ ազատատենչ, սակայն անազատ  
հայրենիքիս ազատագուրկ մայրաքաղաք Երեւան: Մնա՛ք բարեաւ,  
հայրենիք իմ ու մայրաքաղաք իմ Երեւան: Ես գնում եմ դէպի  
մահ: Դուք մնացէ՛ք, դուք մնայուն էք մշտական: Ես անցողական  
եմ, ժամանակաւոր, իսկ դուք մշտնջենական ու յաիտենական:

Մըմնջացի իմ սրտագին մնաս բարեաւը: Շարժուեց Երեւան-  
Թիֆլիս գնացքը՝ քարշ տալով իմ բանտ-վագոնը:

Յաջորդ առաւօտեան հասանք Թիֆլիսի երկաթուղակայարանը:  
Դուրս եկան ճամբորդները եւ շտապ քայլերով գնացին դէպի  
իրենց տները, իսկ ես ու իմ բանտ-վագոնը մնացինք կայարանում:

Յուրտ էր. դողում էի ցրտից եւ յուզմունքից: Կարիք ունէի  
հոգալու իմ բնական պէտքերը, սակայն որտե՞ղ եւ ինչպէ՛ս: Ես  
կալանաւոր էի, փականքի տակ, իրաւագրկուած եւ տակաւին չէի  
վարժուած կալանաւորների համար սովորական աներեսութեան,  
գռեհկութեան եւ անմարդկային բոլոր յատկութեանց:

Թիֆլիսի եւ Բաքուի կայարաններում ռադիօ-բարձրախօսները  
աւետում էին մօտալուտ յաղթանակը եւ փառաբանում  
ժեներալիսիմուս Ստալինի ռազմական տաղանդը եւ պողպատեայ  
ձեռքը, որ փրկեց համայն Ռուսաստանը եւ ամբողջ աշխարհը  
ֆաշականութեան ճանկերից:

Մի քանի օր յետոյ հասանք Ռոստովի երկաթուղակայարանը,  
ուր կառաշարից անջատուեց իմ բանտ-վագոնը:

Իմ երեք վրացի զինեալ պահակների հսկողութեան տակ  
բաւականաչափ քայլելուց յետոյ կանգ առանք մի մեծ շէնքի  
մուտքի առջեւ: Այնտեղ պահակները, կատարած լինելով իրենց

առաքելութիւնը, ինձ յանձնեցին բանտային իշխանութեան ու վերադարձան: Ինձ մտցրին այն ընդարձակ շէնքը, որ կոչուում է Ռոստովի Բաշխիչ կայարան:

Այս շէնքը շրջափակուած է փշաթելերով եւ բարձրանիստ դիտարաններով, որտեղից զինեալ պահակները եւ ոստիկանական գայլաշները հսկում են կալանաւորների վրայ:

Ներսում կային բազմահազար դատուած, պատժուած կալանաւորներ, որոնք կամ նստած էին, կամ պառկած եւ կամ էլ շարժուում էին տեղից տեղ, սենեակից սենեակ:

Այս դժբախտների սեւ զանգուածը խօսում էր հազիւ լսելի ձայնով եւ կամ լուռ խորհում էր անտէր ու անօգնական թողած ընտանիքի մասին: Նրանց դէմքի վրայ թառել էր աշխարհի սեւ գույումը:

Թւում է, թէ հէնց այստեղից, այս Բաշխիչ կայարանից է սկսւում *հոմօ սովետիկուսի*՝ սովետական մարդու ստեղծումը, որը հանդիսանում է ժուսական համայնավարութեան եւ ժուս համայնավար տեսաբանների հիմնական իղէալը, եւ որի իրացման ի խնդիր ճիգեր էին անում համայնավար տեսաբանները, քաղաքական, ընկերային, հասարակական, մշակութային եւ տնտեսական ու քարոզչական ղեկավար շրջանակները:

Այդուհանդերձ, պիտի ընդգծեմ, որ Ռոստովի կալանաւորական Բաշխիչ կայարանի այս ընդհանուր, դաժան եւ տխուր իրականութեան մէջ, ինձ համար գոյութիւն ունէր մի միսիթարական եւ անդորր երեւոյթ: Դա այն էր, որ ես այլեւս մենակ ու մեկուսացած չէի: Մարդկանց մէջ էի, մարդկանց հետ էի, խօսում էի նրանց հետ:

Բանտային երկարատեւ մենակեցութիւնը եւ մեկուսացումը խիստ ու ծանր կերպով ազդել էին ինձ վրայ: Այլեւս չէի կարողանում դիմանալ բանտային մենութեան ու մեկուսացման ստեղծած հոգեբարոյական վիճակին եւ դրա արդիւնք՝ ծանր կոշմարներին:

Այժմ չկայ այդ կոշմարը: Ես հանգիստ էի եւ ուրախ, սակայն ես նախազգում էի, վախենում էի, որ կարճատեւ պիտի լինեն այս անդորր պահերը եւ նորից պիտի ենթարկուեմ մենութեան եւ մեկուսացման կոշմարին:

Իմ չար բախտից չուշացաւ այդ պահը: Իրականացաւ իմ նախազգացումը:

Անցել էին մի քանի օրեր, երբ լսեցի բանտային պաշտօնեայի ինձ ծանօթ ազդարարութիւնը՝ «Կալանաւոր Մինասեան, սաբերայ սվեշչամի»:

Ես դուրս եկայ: Բաժանուցի սեւաբախտ Սեւ զանգուածից: Պաշտօնեան ինձ տարաւ բանտի դուռը, ուր կանգնած էր ՉԷԿայի տխրահոջակ եւ սարսափազդու «ՍԵՒ ԱԳՌԱՒ»ը, այսինքն՝ մի բեռնատար սեւ մեքենայ, որը գործածուում էր սահմանուած վայրը տանելու մահուան դատապարտուած բանտարկեալին:

Բարձրացայ եւ տեղաւորուեցի «Սեւ ագռաւ»ի մէջ: Այնտեղ կանգնած մի 18-20 տարեկան ռուս աղջիկ, խօսքն ուղղելով ինձ, սաղիստական հրճուանքով ասաց.

- ԳՆԱՎ ՖԱՇԱԿԱՆ, ԱՅԼԵՒ ՍԱՐԵՒԻ ԼՈՅՍ ՉՊԻՏԻ ՏԵՍՆԵՍ:<sup>5</sup>

Ինձ թուում է, թէ ռուս կինը աւելի հակուած է դէպի սաղիզմը, քան ռուս տղամարդը: Ռուս կանայք կարծես աւելի դաժան են լինում:

Շարժուեց մահուան կառքը եւ մի քիչ յետոյ կանգ առաւ Ռոստովի երկաթուղակայարանում:

Ինձ հանեցին փակ ինքնաշարժից եւ տեղաւորեցին մի բանտ-վազոնի մէկ կուպէում, որի միւս երկու կուպէներում տեղաւորուած էին իմ պահակները՝ բաղկացած մի ենթասպայից եւ երկու

5 Յիշենք, որ հայրս արդէն բաւական վարժուած էր ռուս լեզուին: Ինչպէս ինքն էր յետոյ ասում՝ չեխերէնը մեծապէս օգնել էր իրեն արագ սովորելու մէկ այլ սլաւոնական լեզու:

զինուորներից: Վրացի զինուորներին փոխարինել էին կալմիկ<sup>6</sup> զինուորներ:

Մարդատար կառավարին կապուած բանտ-վագոնը շարժուեց դէպի Մոսկուա:

Միքանիօրից յետոյ հասանք Մոսկուայի երկաթուղակայարանը, ուր անջատեցին իմ բանտ-վագոնը եւ տարան տեղաւորեցին Մոսկուայի ապրանքային երկաթուղակայանի մի անկիւնում:

Թէեւ ես համոզուած էի, որ իմ դատը վերաքննելու խնդիր չկայ, որ մի կարմիր սուտ էր Երեսանի Չէհայի հերթապահ՝ ալեքսանդրապոլցի բանտապետի յայտարարութիւնը, սակայն իմ մէջ դեռ ապրում էր մի յոյսի նշոյլ: Իրապէս դաժան սուտ էր ասուածը: Յնդեց իմ մէջ գոյութիւն ունեցած յոյսը: Պարզ էր արդէն, որ եթէ քաղաք տանելու եւ դատս վերաքննելու հարց լինէր, ինձ ուղղակի կերպով քաղաք կը տանէին եւ ոչ թէ երեք օր կը պահէին ապրանքային կայարանում:

Այսպէս մի քանի օր սպասումի տառապանքից յետոյ նոյն բանտ-վագոնով ինձ ճամբեցին դէպի Կրասնայարսկ շրջանի Կրասնայարսկ նաւահանգիստը, որ գտնուում է Ենիսէյ գետի ափին:

Ենիսէյ գետը սկիզբ է առնում կենտրոնական Սիբիրից՝

6 Կալմիկները մոնղոլական ցեղերին են պատկանում եւ մեծ մասամբ ապրում են Կասպից ծովի հիւսիսում: Կրօնով բուդդայական են: Տե՛ս Viktor Korlov, The Peoples of the Soviet Union (Bloomington: Indiana University Press, 1988): 1943-ի դեկտեմբերին ՆԿՎԴ-ի գործակալները խուժում են կալմիկների բնակավայրերը եւ ամբողջ ընտանիքներ արտաքսում են իրենց տներից: 1944-ին ԽՍՀՄ այլ վայրերից եւս հաւաքում են կալմիկ ողջ բնակչութիւնը եւ միւս կալմիկների հետ միասին տեղահանելով՝ ցրում են Սիբիրի, Ուրալի եւ Ղազախստանի տարբեր վայրեր: Գայեանէ Շագոյեանը ինձ յիշեցնում է, որ կալմիկներին հաւաքել են նաեւ բանակից, եւ անհաւանական է, որ 1945-ին կալմիկ զինուորներ եղած լինեն: Շագոյեանը ենթադրում է, որ հայրս շփոթել է դրանց ազգութիւնը բազմաթիւ կալմիկների հետ, ում հանդիպել է աքսորավայրում, կամ՝ սրանք բացառութիւն են եղել: Այս վերջին վարկածին հակուած եմ հաւատալու նաեւ ես:

Յաւելեալ բացատրութեան կարգով, ըստ Գայեանէ Շագոյեանի, 1956 թ. մարտի 17-ի որոշմամբ, կալմիկները «րեաբիլիտացում» են (արդարացում, վերականգնում են) եւ իրենց հայրենիքն են վերադառնում, որը այսօր առանձին հանրապետութիւն է Ռուսաստանի դաշնութիւնում՝ Էլիստա մայրաքաղաքով:



Բայկալ լճի մօտերքում, ձգում դէպի հիւսիս եւ, անցնելով Տայմիր թերակղզուց, թափում է Հիւսիսային սառուցեալ ովկիանոս, Կարա ծովը:

Ենիսէյ գետն ունի 3800 կիլոմետր երկարութիւն: Այս գետը նաւարկելի է յունիսի վերջերից սկսած մինչեւ օգոստոսի վերջերը, այսինքն՝ մօտաւորապէս մէկ ու կէս կամ երկու ամիս: Մնացած տասն ամիսները սառած է եւ նաւարկելի չէ:

Սառցահալքի այս ընթացքում է, որ Կրասնայարսկ նաւահանգստից Տայմիր եւ Նարիլսկ են փոխադրում կալանաւորների նոր խմբեր, կենսամթերք, հագուստ, շինարարական նիւթեր, փայտ, գործիքներ, գործարանային եւ արդիւնաբերական մեքենաներ եւ յարակից պիտոյքներ, ինչպէս նաեւ չէկայական պաշտօնեաներ եւ զինուորականներ:

Ռուսական մայրցամաքը Տայմիր թերակղզու հետ կապող Ենիսէյից յետոյ մի քանի խօսք էլ ասենք Կրասնայարսկ Բաշխիչ տարանցիկ կայարանի մասին:

Համեմատաբար նոր է Կրասնայարսկ քաղաքը, որ ընկած է Արեւմտեան Սիբիրում՝ Ենիսէյի ափին: Մետաղագործական քաղաք է եւ ունի 483 հազար բնակչութիւն:

Ուշ գիշեր էր, որ գնացքը հասաւ Կրասնայարսկ գետային նաւահանգստի մօտ գտնուող երկաթուղակայանը: Իմ կալմիկ ուղեկից-պահակները դուրս հանեցին ինձ բանտ-վագոնից եւ տարան յանձնեցին տեղի բանտ-ճամբարի պատասխանատու պաշտօնեային, ստացան համապատասխան ընկալագիրը եւ գնացին իրենց գործին: Բանտային պաշտօնեան ինձ ներս տարաւ եւ բանալիով բացեց մի բարաքի դուռ եւ ներս նետեց ինձ ու նորից փակեց դուռը:

Մի անգամ եւս ականատես եղայ «Սոցիալիզմի հայրենիքի» մէջ գոյութիւն ունեցող մարդկային թշուառութեան՝ ֆիզիքական, հոգեկան եւ բարոյական ողբերգութեան:

Պառկած ու քնած էին այս մարդիկ եւ ես քայլում էի, մտածում այս ողբերգական տեսարանի մասին:

«Հը, ի՞նչ ես մտածում, ի՞նչ ես որոնում: Այստեղ Գրանդ հոթել չկայ: Պառկիր եւ քնիր», – ասաց մի կալանաւոր՝ զգալով իմ մտամոլոր վիճակը, գիտակցելով կարծես, որ ես անձանօթ եմ այսպիսի կացութեան:

Լոյսը բացուեց: «Քնից» վեր կացան բռնակալ ռեժիմի դժբախտ զոհերը եւ խումբ առ խումբ մօտեցան բարաքի անկիւնում դրուած «պարաժ» տակառին՝ գոհացում տալու իրենց բնական պահանջներին:

Դուռը բացուեց, ներս մտան մի քանի պաշտօնեաներ՝ ստուգելու համար, թէ գիշերուայ ընթացքին փախչողներ չեն եղել արդեօք:

Հերթապահ կալանաւորներից մի քանի հոգի «պարաժ»ը տարան դուրս եւ պարպեցին:

Օդը մաքրուեց որոշ չափով եւ շնչելի դարձաւ:

Ապա հերթը հասաւ ձկան գլխից պատրաստուած սուփին եւ երեք հարիւր գրամ սեւ, խմոր եւ աւազախառը հացին: Կերան կալանաւորները, փառք տուեցին Աստծուն եւ անիծեցին ռեժիմին եւ մարդկութեան առաջնորդ ու հայր Ստալինին:

Ես արդէն ծանօթացել էի բանտակիցներին հետ: Բոլորն էլ արեւմտեան ուկրաինացիներ էին, թունդ ազգայնականներ, հակառուս, հակասովետ: Կողմնակից էին Ուկրաինայի ազատութեան եւ անկախութեան ու չէին հաւանում ռուսական ուկրաինացիների քաղաքական կեցուածքը:

Մոսկուայի յատուկ խորհուրդը նրանց դատապարտել էր 25 տարուայ տաժանակիր աշխատանքի, եւ նրանք պահուում էին յատուկ ռեժիմի տակ:

Զարմանալի էր, որ ինձ խառնել էին իրենց հետ, փակել միեւնոյն բարաքում: Մտածում էի, որ ես եւս տաժանակիր

աշխատանքի էի դատապարտուել, սակայն Երեւանի ՉԷԿան ինձ չէր յայտնել, պարզապէս խաբել էր, ստել էր՝ ասելով, որ ինձ ուղարկում են Մոսկուա՝ վերաքննութեան ենթարկելու իմ դատավարութիւնը:

Երկարել են մօրութենքս, բրդոտել ենք, տհաճ ու ջղայնացնող է առաջացած զգացողութիւնը: Պէտք է սափրուել, սակայն ի՞նչպէս եւ ինչո՞վ, երբ բանտարկեալի մօտ չեն թողնում որեւէ իր, որ կարող է միջոց ծառայել ինքնասպանութեան կամ ուրիշին վնասելու համար:

Կեցութեան պայմանները հնարագէտ են դարձնում մարդուն, եւ նա գտնում է միջոցներ, թէկուզ շատ նախնական, շատ կոպիտ եւ վտանգաւոր:

Ահա՛ մի կալանաւոր, որ «գիւտ» է արել: Կոտորուած ապակու մի կտորով եւ սառը ջուր քսելով սափրում է կալանաւորներին եւ իբրեւ վարձ նրանցից իւրաքանչիւրից ստանում է 50 գրամ հաց:

Մարդկանց երեսից աւելի շատ արիւն է թափում, քան մազ: Հերթը ինձ հասաւ: Իմ երեսը ներկուեց: Բաւական տեսեց, մինչեւ կարողացայ կանգնեցնել հոսող արիւնը:<sup>7</sup>

---


7 Այստեղ վերջանում է հօրս յուշերի գրառումը, երբ դեռ նա տեղ չէր հասել: Իր մահից յետոյ, նրա ձեռագրերի խուրձի մէջ փնտրեցի՝ գտնելու համար իր ճամբի շարունակութիւնը՝ մի օր իր յուշերը ամբողջական վիճակում հրատարակելու համար: Յաջորդ գլխում ընթերցողին կ'առաջնորդեմ այս ճամբորդութեան ընթացքին:



ԿաԳԷԲԷՅԻ շէնքը Երեւանի Նալբանդեան փողոցում  
Շէնքը կառուցուեց Կոմիսար Արամայիս Երզնկեանի հրամանով, որովհետեւ հին շէնքում  
այլեւս տեղ չկար բոլոր քաղբանտարկեալներին տեղաւորելու համար (Երզնկեանը ինքը  
1937-38 թուականների ստալինեան մաքրագործումների զոհ դարձաւ)



Խորհրդային Հայաստանի Ներքին գործերի նախարարութեան (ՆԿԱՂ) շէնքը 1936-ին



Կրասնոյարսկից Նորիլսկ ճամբան՝ Ենիսեյ գետի վրայով



Նորիլսկը՝ աշխարհի քարտեզի վրայ



Նորիլագի մի խումբ կալանաւորներ



Կալանաւորները Նորիլսկում պղինձի  
հանքարդիւնաբերութեան շէնքն են կառուցում (1949)



Նորիլսկի ճամբարը (Նորիլագ), 1951 թուականին

## Գլուխ 5

# ՊԱՏՈՒՄԸ ԻՐ ԼՐՈՒՄԻՆ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՃԳՆԱՆՔՈՎ. ԿԵԱՆՔԸ ՍՏԱԼԻՆԵԱՆ ԳՈՒԼԱԳՆԵՐՈՒՄ

Հօրս ձերբակալման եւ դատապարտման վերաբերեալ ՀՀ Ազգային անվտանգութեան ծառայութեան պատասխան նամակ-տեղեկանքը ինձ չգոհացրեց:<sup>1</sup> Միայն աւելի համոզուեցի, որ հօրս թղթապանակը դեռ ԿաԳէՔէյի արխիւներում է գտնուում, եւ ինձ յղուած տեղեկագիրը անփութօրէն կազմած ամփոփումն է եղածի:

Շարունակեցի հետեւել գործին: Օգտագործեցի մեր ծանօթութիւններն ու կապերը Հայաստանում: Արդիւնքը չուշացաւ: Մէկը խոստացաւ թղթապանակի բովանդակութիւնը պատճենահանել տալ ու ինձ բերել: Անձկութեամբ սպասեցի:

Արդէն յոյսս կտրել էի: Մէկ տարի անցել էր, եւ այս գրքի անգլերէն բնագիրը համարեա պատրաստ էր, երբ մի հաստ թղթածրար ստացայ: Ուղղակի ապշել էի, բայց եւ սիրտս խայտում էր ուրախութիւնից: Ի խորոց սրտի շնորհակալ եմ այդ տեղեկութիւնները հայթայթողից:

---

<sup>1</sup> ՀՀ ԱԱԾ-ի 2016, ապրիլ 6 թուակիր տեղեկագիրը ստացել էի ի պատասխան իմ 2016 թ. մարտ 29-ի դիմումին: Մանրամասնութիւնների համար տե՛ս Գլուխ 0, տեղեկագրի պատճենը՝ Գլուխ 0-ի վերջում:



Առաջին փաստաթուղթը 1944, յունուար 3 թուականն էր կրում՝ Բաղդիկ Մինասեանի ձերբակալութեան առաջին փաստը, որ լրացուած էր ձերբակալութեան ընթացքում՝ մարմնական խուզարկութեան ընթացքում: Խուզարկութիւնը, ըստ արձանագրութեան, տեղի էր ունեցել ժամը 11:00-11:30 Թաւրիզ, ՉէԿայի շէնքում:

«Խուզարկութեան արձանագրութիւն» վերնագրուած թերթիկը վրացերէն էր, տողատակերում ռուսերէն. իսկ թերթիկը լրացուած էր ռուսերէնով: Ճակատում բերուած էին խուզարկող սպաների անունները՝ լիազօրուած աւագ օպերատոր՝ ՕԿՌ սմեր<sup>2</sup> 15 Կ. Կ. Սուլթանեան, ներկայութեամբ աւագ լէյտենանտ Մոքիվանիի եւ աւագ սերժանտ Կլոշկովի: Ստորեւ՝ առաջին էջի տակում, արձանագրութեան մօտաւոր թարգմանութիւնը հայերէն.

Համաձայն ձերբակալութեան օրդերի թիւ [չկայ] թուական [չկայ], Մինասեան Բաղդիկ Խաչատուրի (ղոքտոր), խուզարկութեան ժամանակ բռնագրաւուած է.

1. Գրպանի գրառութիւնների գրքոյկ – 2 հատ
2. Տարբեր փաստաթղթեր եւ նամակներ – 14 թերթ
3. Թերթ «Լուսաբեր» հայերէնով – թիւ 188 10/XI/43 թ.
4. Թերթ «Հայրենիք» հայերէնով – թիւ 9387 29/III/43 թ.

Բոլոր հարցումներով խուզարկման մասին դիմել զօրամաս 54719:

Արձանագրուած է նաեւ հագուստ-կապուստի իւրաքանչիւր առարկայ եւ 29 ռիալ ու 50 դինար դրամ: Առանձին թերթի վրայ հօրս ստորագրութիւնն է եւ իր ձեռագրով մի երկտող, ուր նշուած է թէ 29 ռիալ եւ 50 դինարը իրեն հետ է վերադարձուել յունուար

2 Սմերշ (СМЕРШ - Смерть шпионам – մահ լրտեսներին) կոչուածը հակալրտեսական կազմակերպութիւն էր (քանակային հակահետախուզութեան գլխաւոր վարչութիւն), որ հիմնուել էր Ստալինի հրամանով 1942-ին: Կազմակերպութիւնը լուծարուեց 1946-ին:



6-ին: Դա վստահաբար այն թուականն է, երբ բանտարկեալին ՉէԿայի շէնքից հանել եւ դէպի Երեւան են ուղարկել:

Երկրորդ փաստաթուղթը՝ «Հարցաքննութեան փրոթոքով» վերնագրուած եւ 1944, յունուար 8-ի թուակիր, Բաղդասար Մինասեանի առաջին հարցաքննութիւնն է Երեւանում: Փաստաթուղթը ռուսերէնով է: Ռուսերէնով է նաեւ նամակագրուիլը, որի թարգմանութիւնն է «Հայկական ԽՍՀ», տակում՝ «Ժողովրդական Կոմիսարիատի Ներքին գործերի Պետական Անվտանգութեան վարչութիւն»: Երկու էջանոց այս հարցաթերթը բաղկացած է 20 հարցումից, որ ռուսերէնով է, բայց պատասխանները արձանագրուած են հայերէնով: Յաջորդ 5 էջում բերուած է նաեւ պատասխանների ամբողջական տարբերակը, իսկ վերջում՝ հորս ստորագրութիւնն ու երկտողը, որ հաստատում է իր տուած ցուցմունքներին հարազատ գրառումը: Հարցախոյզի տակ ստորագրել են Քննչական բաժնի պետը՝ Պետական Անվտանգութեան վարչութեան պալկովնիկ (անունը անընթեռնելի) եւ տեղակալը՝ նոյն բաժնի կապիտան (անունը անընթեռնելի):

Հարցումները վերաբերում են կալանաւորի կենսագրութեանը, տեղեկութիւններ են պարունակում նրա ընտանիքի անդամների մասին: Այն հարցին, թէ նա երբ է ինքն իրեն դաշնակցական համարել, հայրս պատասխանել է, թէ դպրոցական տարիներից, երբ 1919-ին Դաշնակցական աշակերտական միութեան է միացել եւ շարունակել է Հ Յ Դաշնակցութեան Պրագայի ուսանողական միութեան մէջ. իսկ Դաշնակցութեան շարքերն է անցել 1928-ին Ռաշտում: Մանրամասնօրէն պատասխանուած են Դաշնակցութեան կառոյցին վերաբերող հարցերը: Բայց երբ հարցումը դեկավարութեան անունների մասին է, միշտ պատասխանը նոյնն է՝ մարմինները զաղտնի են, բացայայտուած է միայն ինքը՝ որպէս Կենտրոնական կոմիտէի ներկայացուցիչ:

Ի պատասխան նոյն թեմայով կրկնուող հարցումներին, հայրս բացատրել է, որ 1941-ին պատերազմական արտակարգ իրավիճակի պատճառով Շրջանային Ժողով չի գումարուել, ուր եւ պիտի ընտրուէր Կենտրոնական կոմիտէն: Բիւրոյի ներկայացուցիչ Վարոս Բաբայեանը նշանակել է Կենտրոնական կոմիտէի կազմը եւ իրեն՝ որպէս մարմնի ներկայացուցիչ:

Արձանագրութեան համաձայն՝ հարցաքննութիւնը սկսուել է ժամը 1:00-ին եւ ընդհատուել (այսինքն՝ ոչ աւարտուել) ժամը 4:35-ին: Դա, պարզ է, գիշերուայ ժամեր են: Արդէն դա էր սովորութիւնը՝ գիշերային ժամերին երկարատեւ, կրկնուող հարցաքննութիւններ: Եւ բանտարկեալը պիտի դիմանար՝ առանց ցերեկուայ ժամերին քնելու առիթն ունենալու: Դա արգիլուած էր:

Հայրս իր յուշերում գրում է, որ իր պաշտօնական հարցաքննութիւնը, լուսանկար ու մատնահետք, կատարուել է բանտարկութեան օրուանից վեց ամիս յետոյ միայն: Թղթապանակի մէջ է երեք էջանոց այդ հարցախոյզը՝ դարձեալ ռուսերէնով եւ հէնց ռուսերէնով լրացուած: Փաստաթուղթը կրում է «Կալանաւորի հարցաթերթ» վերնագիրը: Յատկանշական է հարցաթերթի ճակատին մանր տառերով ռուսերէնով տպագրուած ազդարարութիւնը. «Հարցաթերթը լրացնելու համար կալանաւորին փոխանցելը արգելուում է: Լրացուում է կալանաւորի խօսքերից եւ ստուգուում փաստաթղթերով»: Հարցաթերթը 14 հարցումներից է բաղկացած՝ դարձեալ կենսագրական տեղեկութիւններ իր եւ իր ընտանիքի մասին, ներքեւում՝ աջ ձեռքի ցուցամատի մատնահետք եւ լուսանկար՝ դիմացից եւ կիսադէմ: Հարցաթերթը հաւանաբար կազմուել էր Մոսկուա ուղարկուելու համար: Դրան հաւանաբար պիտի կցուէր հարցաքննիչի կողմից առաջարկուած դատավճիռը՝ առ ի հաստատում:

Ամենից ուշագրաւ փաստաթուղթը մէկ էջի վրայ երկու սիւնականոց ռուսերէնով գրուած, 1944, սեպտեմբեր 2 թուակիր

դատավճիռն էր՝

**ՔԱՂՈՒԱԾՔ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ Թիւ 37**

Յատուկ Խորհրդակցութիւն կից Խորհրդային Միութեան  
Ներքին գործերի ժողովրդական կոմիսարի

Ձախ սիւնակ

Լսել են

203. գործ թիւ 10907/ՆԿԳԲ ՀՍՍՀ

Մեղադրեալ Մինասեան Բաղդասար (Բաղդիկ) Խաչատուրի  
1902 թ. ծ. բնիկ Կարադաղի շրջան (Իրան). հայ. իր խօսքերից  
Իրանի քաղաքացի բարձրագոյն կրթութեամբ:

Մեղադրում է Հայկական ՍՍՀ օրէնսգրքի յօդուած 19-65, -61,  
-63 եւ -68-ի համաձայն:

Աջ սիւնակ

Վճիռ են կայացրել

Մինասեան Բաղդասար (Բաղդիկ) Խաչատուրի՝ որպէս  
հակայեղափոխական լրտեսական կազմակերպութեան  
պատկանող եւ տեռորիստական միտումներ ունեցող,  
ազատագրելու ուղղիչ աշխատանքային ճամբարում տասը տարի  
ժամկետով՝ հաշուելով ժամկետի սկիզբը 11 մարտի 1944թ:

Ներքեւում մեքենագրուածը՝ «ՆԿՎԴ Հայկական ՍՍՀ թիւ  
8/4-39800 17/IX/44 թ.», ցոյց է տալիս դատավճռի՝ Հայաստան  
հասնելու թուականը:

Փաստաթուղթը կրում է ԽՍՀՄ Ներքին գործերի ժողովրդական  
կոմիսարին կից Յատուկ Խորհրդակցութեան քարտուղարութեան  
պետի ստորագրութիւնն ու կնիքը:<sup>3</sup>

3 Խորհրդային Միութեան Ներքին գործերի ժողովրդական կոմիսարին կից  
Յատուկ Խորհրդակցութիւնը կեանքի էր կոչուել 1922-ին: Նրան վերապահուած

Ըստ երեւոյթին, կամ ինչպէս «Քաղուածք» բառն է ենթադրում, այս մի քանի տողը Հայաստանից առաջարկուած դատավճռի բովանդակութեան ամփոփագիրն է:

Բայց այս կարճ ու կտրուկ փաստաթուղթը ինչե՛ր է պարունակում եւ ինչ անպատասխան հարցերի առջեւ կանգնեցնում մտածողին: Նախ՝ դատավճիռը կայացուած էր սեպտեմբեր 2-ին եւ Երեւանում ստացուել էր սեպտեմբեր 17-ին: Ուրեմն ինչո՞ւ էին սպասել մինչեւ յաջորդ տարուայ ապրիլը՝ հօրս վճռորոշուած աշխատանքային ճամբարը ուղարկելու համար: Եւ յետոյ դատավճռի դէմ գրած 1945, մարտ 21 թուակիր հօրս բողոք նամակը, որին շուտով կ'անդրադառնամ (ի միջի այլոց, նամակի թուականը գուգատիպում է Բաղդիկի եւ Փառիկի ամուսնութեան 11-ամեակին... Ո՛վ դառը հեգնանք) ցոյց է տալիս, որ դատավճռի մասին նրան այդ ժամանակ էին միայն յայտնել: Արդեօք դատավճիռների ծանր կուտակո՞ւմը, թե՛ ուրիշ նկատառումներն էին այս յետաձգումին պատճառ դարձել: Դժբախտաբար, պատասխանը երբեք չենք ունենայ:

Դատավճռի մէջ հօրս յանցանքները թուարկող մի շարք, ինձ անծանօթ, դատական յօդուածների թուեր է նշուած: Դրանք ի՞նչ յանցանքներ են, որոնց համար այդքան ծանր պատժի էր ենթարկուել հայրս: Ներքեւում բերուած բացատրութիւնը

---

իրաւունքները նմանում էին Յարական կայսրութիւնում 1882-ից 1917-ը գործող Ներքին գործերի նախարարութեան Յատուկ Խորհրդակցութեան իրաւունքներին: Յատուկ Խորհրդակցութիւնը իրաւունք ուներ, առանց նոյնիսկ ամբաստանեալի ներկայութեան, արգելափակելու կամ արստրելու նրան: Այս մարմինը Ստալինի օրօք նպատակ ուներ թելթելացնել պետական դատարաններում կուտակուած հսկայ թուով գործերը՝ դատելու հակայեղափոխականի կամ հասարակութեան համար վտանգաւորի պիտակը կրող անհատներին, որոնց Ստալինը վճռել էր ոչնչացնել: Ժամանակի ընթացքում մարմնի անուան եւ իրաւունքների սահմանումների մէջ փոփոխութիւններ կատարուեցին: Օրինակ՝ 1940-ին, ՆԿՎԴ-ի այս մարմինը իրաւունք ստացաւ բռնագրաւելու ամբաստանեալի կալուածքն ու ունեցուածքը, իսկ 1941-ին՝ զինուորական արտակարգ իրավիճակի պայմաններում, ամբաստանեալին գնդակահարելու որոշում կայացնելու իրաւունք տրուեց:

պատկանում է Հայաստանի Ազգային արխիվի տնօրեն Ամատունի Վիրաբեանին.

1938 թ. ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 19-րդ յօդուածի համաձայն՝ Ձեր հօր նկատմամբ կիրառուել է 65, 61, 63 եւ 68 յօդուածները:

19-րդ յօդուած – եթէ յանցագործութիւնը չի հասցուել մինչեւ վերջ, ապա դատարանը կիրառում է այն յօդուածները, որոնք նախատեսուած են տուեալ բնոյթի յանցանքների համար:

61-րդ յօդուած – Միջազգային բուրժուազիային ինչ-որ ձեռով աջակցելու համար, որի նպատակն է կոմունիստական հասարակարգի տապալումը:

63-րդ յօդուած – լրտեսութիւն, այսինքն՝ պետութեան կողմից պահպանուող գաղտնի տեղեկութիւնների հաղորդում օտարերկրեայ պետութիւններին, հակայեղափոխական կազմակերպութիւններին:

65-րդ յօդուած – խորհրդային իշխանութեան ներկայացուցիչների նկատմամբ ահաբեկչութեան իրականացում:

68-րդ յօդուած – ամէն տեսակ կազմակերպական գործունէութիւն, որ ուղղուած է քրեական օրենսգրքի սոյն գլխով նախատեսուած յանցագործութիւնների նախապատրաստման կամ իրականացման համար:

Իրականութեան մէջ, սրանք բոլորն էլ շինծու ամբաստանութիւններ էին՝ համապատասխան երկարաձիգ գիշերային հարցաքննութիւնների ընթացքում կրկնուող հարցումների, որոնց հայրս պատասխանել էր համբերութեամբ եւ միշտ լրջմտօրէն: Այս յօդուածների շարանը ցոյց է տալիս, որ ՆԿԱԴ-ն փորձել էր որեւէ հնարքով Դաշնակցութեան վզին փաթաթել համայնավար վարչակարգի դէմ որեւէ դաւադրութիւն եւ յանցանքը հօրս վերագրել:

Եւ վերջապէս, թղթապանակի վերջին փաստաթուղթը՝ «Բանտարկեալ Դոքտ. Բ. Մինասեան»ի 21 մարտ, 1945 թուակիր չորս էջանոց բողոք-նամակը «Քննչական բաժնի պետ պարոն Ռ. Ղազարեանի միջոցով Պետական Անվտանգութեան պարոն Կոմիսարին, ընդ որում նաեւ ՀՍՍՌ- կառավարութեան»։ Այս թուականին, հայրս արդէն մէկ տարի, երկու ամիս եւ 18 օր արգելափակուած էր Երեւանի ՉէԿայի բանտի մենակեաց խուցում։ Դատավճռի մասին նոր էին յայտնել իրեն եւ համակ յուսահատութիւն արտայայտող այս նամակով նա մի վերջին ճիգով փորձում էր հակադարձել իր վրայ բարդուած, չգործուած յանցանքներին, իր անմեղութիւնը փաստել։

Մի՞թէ այդքան միամիտ էր, որ դեռեւս հաւատ էր ընծայում սովետական դատաիրաւական համակարգին, թէ՛ սա յուսահատ մարդու վերջին փորձն էր՝ անկարելիին ապաւինելու։ Նա կրկնում է այն, ինչ անգամներ յայտնել էր հարցաքննութիւնների ընթացքում.

...մեր կուսակցութեան քաղաքական դիրքաւորումը պարզ ու որոշ էր. մեր քաղաքական գործունէութիւնը սկսում եւ վերջանում է այն կոնկրետ հրահանգով, որով մեզ կարգադրում էր տեղի Սով. ներկայացուցչի հետ բանակցութեան մէջ մտնել եւ տեղական կազմակերպութեան ուժերը տրամադրել յաւարտ պատերազմի։

Սրա՞ համար եմ դատապարտուած։

Իմ անմեղութիւնը այլ կերպ չէի կարող ապացուցել քան իմ ազնուութեամբ եւ անկեղծութեամբ, որ Երեւան բերեցի ամբողջութեամբ։

Եւ այսպէս, մէկ առ մէկ անդրադառնում է իր վրայ անտեղի բարդուած յանցանքներին ու կրկնում՝ «Սրա՞ համար եմ դատապարտուած»։

Ինչո՞ւ եմ դատապարտուած: Մի՞թե նրա համար, որ ապրելով օտարության մէջ, հայրենիքիս համար ունեցած եմ լաւագոյն ցանկութիւններ եւ իղծեր, որից ժողովրդին տուած եմ իմ միտքն ու էներգիան – թէկուզ քիչ (քննութեան յայտնի են իմ աշխատութիւնները՝ լոյս տեսած եւ պատրաստութեան մէջ), որ չեմ մոռցել գերմանօթրքական սպանող կամ սպասում էի նոր սպանդ (գուցէ միայն Մերձաւոր Արեւելքի), որ պիտի գար նոյն կողմից ինչ որ նախորդը: Մեր ամբողջ պատմութեան մէջ առաջին դէպքն է, որ հայը չի այրում համաշխարհային հրդեհից:

Սրա՞ համար եմ դատապարտուած եւ իմ ընտանիքը մատնուած անլուր տանջանքի .... Մտածելի է արդեօ՞ք մի ամբողջ ընտանիք կորստեան մատնել եւ այն էլ հայկական իշխանութեան ձեռքով: Ո՞ւմ մեղադրեն: Ո՞ւմ զանգատուեն:

Նամակի մէջ հայրս թախանձում է հանել իրեն այդ դժոխային բանտախցից, մի տեղ տալ աշխատելու՝ ազգի սիրոյն, մինչեւ որ իր դատին վերաբերող խնդիրները կը լուծուեն: Բացատրում է իր քայքայուած առողջական ու հոգեկան վիճակը: Ապրելը անտանելի է այլեւս: Որպէս օտար երկրի քաղաքացի, անարդար է համարում իր բանտարկութիւնը եւ խնդրում է իրեն հետ ուղարկել Իրան: Բայց միշտ ազնիւ է ու անկեղծ: Չի ստում: Միշտ հաւատարիմ է մնում իր սկզբունքներին: Ուզում է հաւատալ սովետական արդարադատութեանը. սակայն զգալի է կասկածը, յուսալքութիւնը, հոգեկան տուայտանքը: Նոյնիսկ նամակի արտաքին տեսքն է խօսում այդ ամէնի մասին: Ձեռագիրը հազիւ է կարդացում: Տողերը անհաւասար են ու դէպի վար են թեքում: Բառերը երբեմն անաւարտ են մնում, կամ տառերը գծի են վերածում: Պէտք չէ ձեռագրագէտ լինել՝ տեսնելու համար տասննէջորս ու կէս ամիս մենախցում բանտարկուած մարդու ձեռագրի կրած գահավէժ փոփոխութիւնը:

Այս գլխի վերջում հօրս ձեռագրից երեք օրինակներ եմ ներկայացրել՝ առ ի համեմատութիւն: Առաջինը դեկտեմբեր, 1933-

ին Թեհրանից գրած նամակն է Փառանձեմին՝ կոկիկ ու ընթեռնելի: Երկրորդը՝ վերը յիշուած նամակի առաջին էջն է՝ բանտախցից ՀՍՍՀ Պետական Անվտանգութեան կոմիսարին ուղղուած: Իսկ երրորդը, շուրջ տասնեւէկ տարուայ աքսորից վերադառնալուց յետոյ գրուած, որ ցոյց է տալիս աւելի սուր վատթարացում՝ նոյնիսկ երկրորդի համեմատութեամբ: Ձեռագիրը ազատութեան մէջ այլեւս չբարեկաւուեց: Աղէտալի փորձութեան ազդեցութիւնը յալիտեան դրոշմուած մնաց նրա ձեռագրի վրայ, ինչպէս եւ հոգու:

*The Secrets of Your Handwriting: Your Personality in Your Penmanship* (Ձեր ձեռագրի գաղտնիքները, ձեր անհատականութիւնը՝ ձեր գրութեան մէջ) աշխատութեան հեղինակ Ալլան Քանուէյը (Allan Conway) վկայում է. «Մարդկանց ձեռագիրը ընդհանրապէս փոխում է կեանքի ընթացքում... Ձեռագիրը անպայման փոխում է, եթէ մարդը մի ծանր փորձութիւնից է անցնում: Ժամանակ անց, որոշ ձեռագրեր բնականին են վերադառնում, բայց որոշներն էլ այդպէս աղաւաղուած են մնում»: Հրէական Ողջակիզումը վերապրածների մի խմբի ձեռագրերը ուսումնասիրելով՝ նա գրում է. «Երբ կեանքում մի առանցքային փոփոխութիւն է տեղի ունենում, մարդ փորձում է նոր դրութեան հետ հաշտուել ու յարմարուել: Այս համակերպումը դառնում է մի մասը նրա անհատականութեան, նաեւ՝ ձեռագրի»: Հօրս պարագայում, պիտի աւելացնեմ, որ նրա այլեւս անընթեռնելի դարձած ձեռագիրը ո՛չ միայն ցուցանիշն էր նրա նոր իրավիճակի հետ յարմարուելուն, այլ նաեւ արձագանքում էր տեւական անձկութիւն ու տագնապ, մոլեգին ցատում՝ ընդդէմ անարդարութեան:

Պետական Անվտանգութեան կոմիսարին գրած նամակը նպատակին չէր ծառայել: Հազիւ մի ամիս անց՝ ապրիլ 15-ին, բանտապահը, հօրս բանտախցի դուռը բացելով, արհամարհանքով ու յեզնանքով յայտնել էր նրան. «Ռու բողոքել



էիր դատավարութեան եւ նրա տուած վճռի դէմ: Քեզ ուղարկում ենք Մոսկուա, գնա՛ եւ այնտեղ ասա, ինչ որ ուզում ես»: Եւ այսպէս, նրան աքսոր ուղարկեցին՝ տաժանակիր աշխատանքով քաւելու չգործած յանցանքները:

ԱՄԾ-ից ինձ վստահեցրին, որ հօրս թղթապանակի ամբողջ պարունակութիւնը պատճէնահանել եւ ինձ են տուել, բացի մէկ փաստաթղթից: Այդ փաստաթուղթը՝ հօրս ձերբակալելու համար ՉէԿային անհրաժեշտ ցուցմունք-մեղադրագիրն էր: Բայց ո՛վ էր տուել այդ անհրաժեշտ ցուցմունքը: Ո՞վ էր Յուդայի համբոյր դրոշմել հօրս երեսին: Ինձ թւում է, հայրս գիտէր, թէ ով է եղել այդ դաւաճանը: Հաւանաբար իր գաղափարակից ընկերներից մէկը: Չգիտեմ: Չխօսեց այդ մասին: Բայց կարող եմ պատկերացնել, թէ որքան ցաւ է զգացել, երբ հարցաքննիչը նրա կամքը կոտրելու նպատակով մատնիչի անունն է նրա երեսին շարտել: Նոյն խողովակով, որ թղթերն էի ստացել, խնդրեցի այդ մէկն էլ տալ ինձ: Մերժեցին. ասացին՝ դա որոշում է: Ասացին՝ նախապէս բացայայտուած է եղել նաեւ ցուցմունք տուողի անունը, բայց դա շատ անգամ աղէտ է գործել, ընտանիքներ կործանել, որովհետեւ դաւաճանը ընտանիքի անդամ կամ մտերիմ մէկն է եղել: Ու ես հաւատում եմ դրան: Դա սովորական երեւոյթ էր ստալինեան բռնաճնշումների տակ ճգնուած Հայաստանում:

ԱՄԾ-ում պահուած եւ հիմա իմ տրամադրութեան տակ գտնուող թղթերը հօրս Երեւանի բանտարկութեան 16 ամիսների մասին կարելոր տեղեկութիւններ են, թէկու՞՞ ոչ ամբողջական: Բայց ի՞նչ գիտեմ նրա սիբիրական աքսորից, սառցապատ Նորիլսկի աշխատանքային ճամբարի նրա կեանքի մասին: Ինձ համար անհնարին է այդ տեղեկութիւնները ստանալու համար կեանքիս այս հանգրուանին մինչեւ սիբիրները հասնել ու անորոշ մթնում հօրս կեանքի մասին փշուրներ գտնել:

Ուրեմն՝ վերադարձ իր անաւարտ յուշերի հրատարակութեան

համար գտածս յաւելեալ նիւթերին, որ «Որպէս լրացում» վերնագրով, իմ բացատրութիւններով տեղադրել էի այդ հրատարակութեան վերջում: Քանի որ այդ հրատարակութիւնը այլեւս գտանելի չէ, եւ այս գրքի 3-րդ եւ 4-րդ գլուխները միայն իր գրչին պատկանող անաւարտ յուշերն են ներկայացնում, կ'արժէ «Որպէս լրացում» վերնագրուած իմ այդ մի քանի էջն ամբողջովին ընդօրինակել այստեղ: Բայց նախապէս պիտի ընթերցողիս ներողամտութիւնը խնդրեմ, քանզի ներկայ հայերէն տարբերակի մէջ պատումի յարակցութիւնը պահելու եւ ընթերցողին հունի մէջ դնելու համար Գլուխ 0-ում գրառումներ եմ կատարել եւ բացատրութիւններ տուել, որոնց նմանակը կարող է երեւալ վարը բերուած ընդօրինակումիս մէջ: Ուրեմն,

### ՈՐՊԷՍ ԼՐԱՅՈՒՄ

Իր մահից մէկ տարի առաջ միայն ձեռնարկեց գրի առնել բանտի ու աքսորի իր յուշերը: Նիւթը շատ ցաւոտ էր. յիշատակները այնքան կենդանի էին երեւակայութեան մէջ, որ դրանց թղթին յանձնելը նշանակում էր դարձեալ ապրել բաժանումի ու տառապանքի տարիները: Յիշում եմ՝ չէր սիրում խօսել աքսորում իր կրած չարչարանքների մասին: Ամէն անգամ, երբ որեւէ առիթով սկսում էր մի դրուագ պատմել, կարծես միանգամից մոռանում էր շրջապատը, ամբողջ էութեամբ փոխադրւում էր այն սառուցեալ դժոխքը, որ Սիբիր է կոչւում՝ տասը տարիների իր տաժանքի վայրը: Արիւնը խուժում էր դէպի գլուխը, երեսը կարմրում էր, եւ իր բարձր ու լայն ճակատի վրայ մի կապոյտ երակ ուռչում էր, բարձրանում: Վախից ընդհատում էինք իրեն, չէինք թողնում, որ շարունակի. չլինի թէ կաթուածահար լինի:

Աքսորից վերադարձի առաջին տարիներին պայքարել էր՝ վերագտնելու իր հոգեկան եւ ֆիզիքական առողջութիւնը, որ զոհ էր տուել տաժանակիր աշխատանքի ճամբարներում. փորձել էր

կամուրջ նետել դեպի անցեալի բնականոն կեանքը ու լեցնել այն վիճի՝ թե՛ տնտեսական եւ թե՛ ընկերային, որ ստեղծուել էր որպէս արդիւնք իր տարիների բացակայութեան: Կամքի ուժով յաջողել էր. առօրեայ զբաղումների մէջ էր թաղել ցաւոտ անցեալը: Պետական եւ հայոց միջնակարգ դպրոցների աւարտական դասարաններում քիմիա էր պարապում, «Ալիք» օրաթերթի էջերում կանոնաւոր կերպով յօդուածներ էր ստորագրում՝ Բագին կամ Ատրուշանեան գրչանուններով, հանրային դասախօսութիւններ էր կարդում, դաստիարակչական եւ կազմակերպչական պարտականութիւններ ստանձնած՝ կուսակցական գործչի հանգամանք ունէր, ընդ որում՝ նաեւ շրջաններ էր ճամբորդում, եւ եթէ ազատ ժամանակ էր մնում, աշխատում էր իր մի ծրագիրը իրագործել՝ Հայոց Պատմութեան եւ Հայ Դատի պայքարի մասին մի հանրամատչելի աշխատութիւն արտադրել: «Հայաստան, հայ ժողովուրդ եւ հայկական դատ» աշխատութիւնը լրացրեց մահից մի քանի ամիս առաջ միայն, բայց հրատարակուեց յետմահու:

1960-1971-ը վարեց «Ալիք»ի խմբագրապետի պաշտօնը: Այդ ժամանակաշրջանում էր, որ մի անգամ եւս ի յայտ բերեց համեստ ու ուղղամիտ կուսակցականի ու տքնաջան աշխատողի իր կերպարը: Մնաց անզիջող հակառակորդը խորհրդային վարչակարգի եւ խորհրդային կառքին լծուած Հայաստանի դեկավար-կամակատարներին: Արդարեւ, այդ տարիների «Ալիք»ի խմբագրականները յաճախ թիրախ էին դառնում Երեւանի ռադիոյի յարձակումներին: Վերջերս Հայաստանում մէկին հանդիպեցի, որ ճանաչում էր հօրս իր գրութիւնների գծով. ինքը այն առանձնաշնորհեալներից էր եղել, որ ի պաշտօնէ կարդացել էր «Ալիք»ը՝ Դաշնակցութեանը քննադատելու համար նիւթեր փնտրելու եւ նրա դէմ թշնամական յօդուածներ գրելու նպատակով: Ասում էր՝ այդ օրերին թաքուն հաճոյքով էր կարդում խորհրդային

վարչակարգի եւ Հայաստանի խոցելի երեւոյթների՝ հօրս հատու քննադատութիւնները: Ասում էր, թէ իր յօդուածներն այնպիսի զգուշութեամբ էր խմբագրում, որ մատնանշուած «խոցելի կէտերը» իրականութեան մէջ Դաշնակցութեան քօղարկուած պրոպականդան էին դառնում:

Իր մահից մէկ տարի առաջ միայն ձեռնարկեց գրի առնելու բանտի ու աքսորի իր յուշերը: Եւ ժամանակ չունեցաւ վերջացնելու...  
(*Յասպաւում եւս այս պարբերութեան շարունակութիւնը, որ Աւստրալիայի իր շրջագայութեան է վերաբերում եւ արդէն նոյնութեամբ յիշուած է Գլուխ 0-ում:*)

Ծրագրել էր իր յուշերը երեք մասով գրել: Առաջինը միայն լրացրեց՝ Ատրպատականի գրաւումից առաջ եւ յետոյ, մինչեւ իր առեւանգումը, Երեւանի իր մենակեաց բանտարկութիւնը, հարցաքննութիւններ եւ դատավճիռ: Երկրորդ մասը միայն ուրուագծուած է: Դրա առաջին գլխից միայն մի քանի էջ կայ որպէս մանրամասնութիւն, որ հասնում է մինչեւ Կրասնոյարսկի բաշխիչ կայանը՝ Ենիսէյի ափին. իսկ երկրորդ գլխից իր ձեռագրերի կոյտի մէջ կարողանում եմ գտնել միայն այդ գլխի վերնագիրը եւ ուրուագիծը՝

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ  
ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ՍԱՌՈՒՅԵԱԼ ԳՕՏՈՒՄ՝  
ՏԱՅՄԻՐ ԵՒ ՆԱՐԻԼՍԿ

*Ուրուագիծ Երկրորդ Գլխի*

*Բնութագրումը Տայմիր թերակղզու եւ Նարիլսկ շրջանի տունգուզների եւ նենեցների երկիր: Յուրտ ու սառնամանիք, խիստ ու դաժան կլիմա, գիշերը եւ ցերեկը քեւեռային լուսացրում: Ռուսական մայր ցամաքը Նարիլսկի հետ կապող*

Ենիսեյ գետը նաւարկելու տարեկան միայն մէկ-երկու անգամ մնացած ժամանակը սատած է այդ Հիւսիսային ովկիանոս թափուող գետը: Քարածուխը եւ մետաղները կազմում են այդ շրջանի ընդերային հարստութիւնը: Բազմաթիւ եւ բազմազան ազգերի, ժողովուրդների եւ ցեղերի պատկանող միլիոնաւոր կալանաւորներ պարտադրական աշխատանքներ են կատարում կեցութեան եւ աշխատանքային ծանր պայմաններում: Մարդկայնութիւնից պարպուած ու անմարդկայնացած, կոտորացած ու գոռեկացած կալանաւորների յարաբերութիւնը մէկը միւսի հետ՝ դաժանութիւն, բռնութիւն, բռնակալութիւն, ստեղծութիւն, գողութիւն պատառի ու ծխախոտի յափշտակում եւ վերջապէս ընդհանուր եւ միասնական ստեղծութիւն հանդէպ իշխանաւորի եւ իշխանութեան: Սովետները նոր մարդ են ստեղծում՝ Homo Sovieticus, ի հարկէ, ըստ պատկերի իւրեանց: 1948 թուին քրէականներին բաժանում են քաղաքականներից: Քաղաքական կալանաւորների համար հաստատում են յատուկ ռեժիմային ճամբար, այսինքն՝ զատուդարատվենի աստի ռեժիմի յագեր: Քաղաքականների մէջքին եւ ծնկին փակցնում են մի յատուկ թիւ, որով քաղաքական կալանաւորի ամբողջ անձնաւորութիւնը եւ անհատականութիւնը վերածւում են մի սոսկական թուի:

Երկրորդ գլխից այլեւս ոչինչ չեմ գտնում: Չգիտեմ՝ եթէ պիտի գրէր իր անցկացրած տաժանքի մասին: Պիտի գրէ՞ր արդեօք, թէ որքան գիշերներ քաղցած էր պառկել, որովհետեւ իրեն զրկել էին հացից, հիւանդ ու թոյլ էր, չէր կարողանում իր վրայ դրած աշխատանքի «նորմ»ը լրացնել: Քանի քանի անգամ կողոպտուել է հացից ու ծխախոտից: Արդեօք պիտի գրէ՞ր, թէ ֆիզիքական ծանր աշխատանքից եւ սննդի պակասից մի օր ուշաթափ ընկել էր հէնց դաշտում աղիւս կրելիս: Հիւանդանոց էին փոխադրել իրեն:

Յետոյ դեղնախտ էր ստացել: Երբ մէկ ամիս յետոյ ապաքինուել էր, բժիշկը՝ ինքն էլ քաղաքական կալանաւոր, խոստովանել էր, որ յոյս չէր ունեցել, թէ կարող է փրկել նրան: Յաճախ յիշում էր Սիբիր աքսորուած Աղասի Խանջեանի մօտիկ գործակիցներին: Առիթ էր ունեցել երկար խօսելու նրանց հետ: Պիտի գրէ՞ր այդ մասին:

Երրորդ մասից գտնում եմ վերնագիրը՝ «ՄԵՌԱՒ Խ. ՄԻՈՒԹԵԱՆ ՉԱՐԱԳՈՐԾ ԱՍՏՈՒԱԾԸ»: Ուրեմն երկրորդ մասը միայն պիտի յատկացուէր աքսորի իր յուշերին եւ երրորդ մասով անդրադառնար իր ազատութեանը: Ձեռագրերի մէջ ցրուած գտնում եմ երրորդ մասի առաջին եւ երկրորդ գլուխների ուրուագիծը՝

#### ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՈՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵԱՆՔԻՆ  
ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՀՈՎԵՐ ԵՆ ՓՉՈՒՄ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՄԲՈՂՉ  
ՏԱՐԱԾՔԻ ՎՐԱՅ

*Ուրուագիծ Առաջին Գլխի*

*1953 թիւ մարտ 3-ին, Կրեմլեան պալատում մեռաւ, խեղդեցին կամ սպանեցին, յամենայնդէպս մեռաւ յառաջադէմ մարդկութեան ինքնակոչ առաջնորդ «Հայր» Ստալինը: Վերացան երեսուն տարիներ տեւող ահն ու սարսափը: Կեղծ ու հարկադրական սուգի մէջ միարձուած ու կոկորդիլոսի արցունքներ թափող խորհրդային քնակչութիւնը սկսեց թարմ ու կենսաբար օդ շնչել: Ազատուելու եւ ապրելու յոյսը շոյեց նաեւ երեսունհինգ միլիոնից աւելի քաղաքական ու քրէական կալանաւորների սեւ զանգուածին, որ անտարբեր կերպով կանգնած էր կեանքն ու մահը իրարից բաժանող սահմանագծի վրայ: Ըամբարի վարչութիւնը լուսանկարում է օտարահայտոսկ*

կալանավորներին եւ վերատուգման ենթարկում նրանց թղթածրարները: Շրջանառության մէջ են մտնում լաւ ու վատ, չար ու բարի շշուկներ, լուրեր ու տեղեկութիւններ: Այսպէս, ասում են, թէ օտարահպատակ կալանավորներին իրենց երկիրը պիտի ուղարկեն: Ոմանք էլ պնդում են, թէ նրանց պիտի տանեն կոտորելու: Այս ճգնաժամային օրերին Մոսկուայից ճամբարներ են գալիս բարձրաստիճան սպաներ ու յայտարարում են, թէ վերջացաւ առաւ-փախաւի իշխանութիւնը: Օտարահպատակ բանտարկեալներին պիտի ուղարկենք իրենց տները, իրենց երկրները:

Որոշ չափով պարզւում է կացութիւնը, մեղմանում մտահոգութիւնը, որովհետեւ տրամաբանական են արուած յայտարարութիւնները եւ համապատասխան յետ-ստալինեան հաւանական կացութեան եւ նոր իշխանութեան որդեգրելիք քաղաքականութեան սակայն խախտում է մեր հաւատքը: Չենք հաւատում բարձրաստիճան սպաների յայտարարութեանը:

#### ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

#### ԴԷՊԻ ԱԶԳՏՈՒԹԻՒՆ, ԴԷՊԻ ՏՈՒՆ

#### Ուղումագիծ Երկրորդ Գլխի

Լրանում են նախապատրաստական աշխատանքները: Բաւականաչափ յստականում է օտար կալանավորներին ազատելու եւ իրենց երկրները ուղարկելու հարցը, թէեւ չի վերանում կասկածը: Ճամբարի իշխանութիւնը կարգադրում է յանձնել անկողիները եւ պատրաստ լինել մեկնելու համար: Նարիսկի ճամբարների բոլոր օտարահպատակներին կենտրոնացնում են մէկ կէտում եւ լեցնում գնացքի մէջ Ենիսէյ գետով դէպի Կրասնոյարսկ, ուր կալանավորներին

քաժանում են ըստ ազգության եւ ըստ իրենց երկրների աշխարհագրական դիրքի եւ տարբեր գնացքներով տանում՝ չինացիներին, ճապոնացիներին եւ մոնղոլներին դէպի հարաւ, գերմանացիներին, ֆրանսացիներին, իտալացիներին եւ բալկանցիներին դէպի արեւմուտք, Մոսկուա. իսկ պարսկահպատակներին դէպի հարաւ-արեւմուտք, Թուրքմենստան, Աշխաբադ:

Այստեղ, յատուկ ճամբարում, կենտրոնացում էին պարսկահպատակները, թուով 500-600 հոգի, որոնք սպասում էին Երան վերադառնալու համար: Երանահպատակների մեծ մասը կամաւոր կերպով փախել էր խորհրդային «դրախտ»՝ լաւ ապրելու համար. մի ուրիշ մասը կամաւոր քաղաքական կալանատուրներ էին, որոնք մասնակցել էին Ատրպատականի քրդական շարժումներին եւ որոնք բոլորն էլ հիւրասիրուել էին բանտերով եւ աքտորներով:

Բաւական ժամանակ սպասում էինք տուն վերադարձին. սակայն 1953 թ. օգոստոս 19-ին, Թեհրանում տեղի ունեցաւ Մոսադեղի ձախ ու պրո-սովետ իշխանութեան անկումը: Կալանատուրներին առաջնորդող սպան յայտարարեց, որ մեզ չեն յանձնելու Երանի կառավարութեան: Իրենց ճամբարները պիտի վերադառնան այն կալանատուրները, որոնց պատժի ժամանակամիջոցը վերջացած չէ. իսկ նրանք, որոնք ազատուած են, կարող են մնալ Խորհրդային Միութեան մէջ եւ ապրել իբրեւ խորհրդային քաղաքացիներ:

Վերադառնում ենք այն ճամբարները, որտեղից մեզ բերել են:

Գնացքը բանտ-վազոններով եւ բաց-վազոններով կանգ առաւ Ուզբեկիստանում, ուր մեզ տեղաւորեցին մի ճամբարում: Սպասում ենք: Արդեօք նորի՞ց տունդրաները, նորի՞ց դաժան



ու տաժանակիր կեանք:

Անցնում են սպասմամբ եւ անորոշությամբ լի օրերը եւ ճամբարի պետը յայտարարում է, թէ համաձայնության ենք եկել Բրանի կառավարության հետ եւ ձեզ պիտի տանենք սահմանազուխ եւ յանձնենք ձեր կառավարության: Մի քանի օր յետոյ գնացքի մէջ ենք եւ գնում ենք դէպի Աշխաբադ ու այնտեղից էլ Բրան-Ռուսական սահմանը:

Սահմանում կարդում են մեր անունները, նախ որոս սպան եւ սպա իրանցի սպան եւ մենք անցնում ենք Բրան: Ինձ անհանգստացնող մի դէպք՝ իրանական սպան ուշացնում է իմ անունն ընթերցումը: Մի քանի անուն անցնելուց յետոյ, որոս սպան յիշեցնում է, որ իմ անունը չի կարդացել: Պարսիկ սպան ներողութիւն ասելով կարդում է իմ անունը եւ ինձ ընդունում:

Վերջանում է իմ տազնապը եւ ես ազատ շունչ քաշելով ոտք եմ դնում պարսկական հողի վրայ: Վերջանում է պարսկահպատակ կալանատուրների յանձնման եւ ընդունման արարողութիւնը: Այսպիսով, 1954 թիւ, յուլիսին փակւում է տասուլէս տարիների իմ քանտարկության, աքսորի, ճամբարների դառն ու տխուր կեանքիս պատմութիւնը:

Մանրամասնութիւնները գրի առնում չեն: Եղածը ուրեմն ամբողջութեան մէկ երրորդն է: Բայց հէնց դա էլ հետաքրքիր է, մանաւանդ այսօր, երբ հէնց ինքը՝ Հայաստանի մտաւորականութիւնը մերկացնում է ստալինեան ռեժիմի հայ դեկավարների ապագգային եւ հայավնաս կեցուածքը, երբ խօսում է ադրբէջանական անբարոյ եւ հակահայ քաղաքականութեան մասին, նրա պարսկական Ազադբայջանի (Ատրպատականի) հետ միանալու ախորժակների եւ Թուրքիոյ գրգռութիւնների մասին: Կարծես՝ պատմութիւնը կրկնում է: Թուրքը չի փոխուել...

Պատեհ առիթի էի սպասում ձեռագրերը թէկուզ կիսատ,

հեղինակի կողմից չխմբագրուած վիճակում տպագրութեան յանձնելու:

Դաշնակցութեան հարիւրամեայ գործունէութեան ոգեկոչման տարին է. սրանից աւելի պատեհ առիթ չի կարող լինել՝ յիշելու Դաշնակցութեան մէկ հաւատաւոր անդամին, որ միշտ կանգուն մնաց իր գաղափարի մէջ, չզիջեց ոչ մի փշուր իր հաւատից ու սկզբունքներից, եթէ անգամ իր երիտասարդ տարիներն էր, որ պիտի գոհէր հայ ժողովրդի թշնամիների բիրտ քաղաքականութեան: Ուրեմն Դաշնակցութեան հարիւրամեակի առիթով, թող որ այս հաւատաւոր զինուորի կեանքի մի կարճ դրուագն էլ գայ աւելանալու հայ ժողովրդի ազատութեան եւ անկախութեան համար տարուած պայքարի հազարաւոր նուիրեալների ոսկետառ պատմութեան»:

Սրանով աւարտում է «Ռուբինա Փիրումեան, ապրիլ, 1990, Լոս Անջելէս» ստորագրուած «ՈՐՊԷՍ ԼՐԱՅՈՒՄ» վերջաբանը, որ կցել էի հօրս անաւարտ յուշերին»:

«Տասը տարի, տասն ամիս եւ տասնեօթ օր խորհրդային բանտերում եւ աշխատանքային ճամբարներում, 1944, 3 յունուար – 1954, 17 նոյեմբեր». հայրս այսպէս պիտի վերնագրեր իր յուշերի ամբողջական հատորը, որի բովանդակութեան մի փոքր մասը եւ մնացեալի կառոյցն ու ուրուագիծն ունենք: Այստեղ բերուած այդ ընդարձակ ուրուագիծը թոյլ է տալիս պատկերացնելու ամբողջութիւնը, փաստացի, անանձնական եւ շիփ-շիտակ, առանց գեղարուեստական յօրինուածքների, ստեղծագործական զարդարանքների եւ զգացական զեղումների: Նրա գիտնականի միտքը դա էր թելադրում: Այդ ընդարձակ ուրուագիծը, որի հետ նաեւ հօրս հազուադէպ պատմածները, դարձան իմ բանալին, որով պիտի փնտռէի ստալինեան գուլագների յուշագրութիւնների մէջ նոյն թեմաների նկարագրութիւններ՝ ասելու այն, ինչ որ

հայրս ժամանակ չունեցաւ ասելու: Յուսամ, որ այս մօտեցումը, բացի հօրս քսորական կեանքի պատմութեան ընդլայնման ուղղակի նպատակից, կարողանայ ընդլայնել այդ սեւ տարիների պատմութեան սահմանները եւս, որպէսզի ընթերցողը կարողանայ Բաղդիկ Մինասեանի ողիսականը, նրա ճակատագիրը կիսող իր կալանակիցների հետ միասին, ստալինեան բռնաճնշումների համատեքստում ընկալել:

Նախքան Սիրիւր քսորուելը հայրս 16 ամիս արգելափակուած մնաց Երեւանի Չէֆայի նկուղային բանտախցերից մէկում: Ահռելի տանջանք, մարմինն ու հոգին ջարդելու սոսկալի պատժամիջոց: Բայցեւայնպէս, հաւատարիմ իր սեղմ ու հաւասարակշռուած գրելառճին, պարզապէս գրում է. «Ո՛րքան ծանր է ու դժուարին մենակութիւնը, մենակեցութիւնը: Մենակեցութիւնը ինքնին մի պատիժ է պատժի մէջ»: Բայց ի՞նչ ազդեցութիւն թողեց այդ մենակեցութիւնը նրա հոգեկան առողջութեան վրայ: Ժլատ է: Չի բացում, միայն՝ «Բանտային երկարատեւ մենակեցութիւնը եւ մեկուսացումը խիստ ու ծանր կերպով ազդել էին ինձ վրայ: Այլեւս չէի կարողանում դիմանալ բանտային մենութեան ու մեկուսացման ստեղծած հոգեբարոյական վիճակին եւ դրա արդիւնք՝ ծանր կոշմարներին»: Աւելի մանրամասնութիւններ չկան: Ես կարդացել էի, որ այս բանտախցերը՝ մի երկու քայլ լայնքով ու այդքան էլ երկայնքով, ձմեռանը սոսկալի ցուրտ են լինում: Կարդացել էի, որ ոջիլներով, առնետներով եւ այլ գարշաճճիներով լի այս խուցերում հնարաւոր չի երկար մնալ. կը կորցնես թէ՛ ֆիզիքական եւ թէ՛ հոգեկան առողջութիւնդ: Միայն վտանգաւոր յանցագործներին, ծայրագոյն քաղաքական հակառակորդներին եւ տեռորիստներին էին այս ահռելի բանտախուցերում արգելափակում:<sup>4</sup> Հայրս ո՛ր

4 David Hosford, Pamela Kachurin and Thomas Lamont, *GULAG: Soviet Prison Camps and Their Legacy* (ԳՈՒԼԱԳ. Խորհրդային բանտային ճամբարները եւ դրանց աւանդը) (Cambridge, Massachusetts: Davis Center for Russian and Eurasian Studies, Harvard

ծանր յանցանքի համար էր այս պատժին արժանացել: Ի՞նչ երկարեայ կամք էր պետք՝ դիմանալու ու այդ խուցից ողջ դուրս գալու համար:

Սիբիրական աքսորի ընթացքում Սուրեն Ղազարեանը մի որոշ ժամանակ մեկուսարանում էր անցկացրել, «ճգնաւորութիւն» արել: Ու նկարագրում է, թէ ինչպէս էր աշխարհից կտրուած, մարդկանցից մոռացուած այդ անկիւնում երկար, անվերջանալի օրերը անցկացնում ու ճգնում մենակութիւնից չխենթանալ: Նրա համար ամենից անտանելին անցեալի յիշողութիւնների յորձանուտն էր օրուայ ընթացքին: «Չկայ աւելի մեծ տանջանք, քան այն, որ կեանքի դաժան ու ծանր օրերին յիշում ես անցած երջանիկ օրերը»:<sup>5</sup>

Հայրս 16 ամիս ժամանակ ունէր անցեալի տխուր եւ ուրախ օրերի մասին մտածելու: Բայց դա շատ անձնական է: Չի գրում այդ մասին: Յիշում եմ, սակայն, որպէս անվնաս յիշողութիւն, որ կարելի էր մեզ պատմել, առանց մեզ եւ իրեն խոր ցաւ պատճառելու, հայրս ծիծաղելով ասում էր, որ շատ անգամ է կարօտով յիշել նարդիի խաղը մայրիկիս հետ, եւ ինչպէս միշտ Փառիկն էր յաղթողը: Ինքն էր խաղը մամային սովորեցրել, բայց այս սկսնակը ե՛րբ էր սովորել միշտ յաղթել, եւ դրանից որքա՛ն էր ուրախանում: Ուրախ էր նաեւ ինքը: Մի օր ուրախ տրամադրութեան մէջ, հարց տուեց, «Փառի՛կ, ճիշտն ասա, խարդախութի՛ւն էիր անում»: Ու մաման պատասխանեց ծիծաղելով. «Դու այնքա՛ն ազնիւ էիր եւ այնպէս վստահութիւն ունէիր իմ հանդէպ»:

Պապան երբեմն «Սեւ ագռաւ»ի մասին էր պատմում, այս սարսափազդու սեւ մեքենան, որ նրան Ռոստովի Բաշխիչ

---

University, 2006), էջ 18.

5 Սուրեն Ղազարյան, «Դա չպետք է կրկնվի», Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1988, էջ 197: Բնագիրը ժուսերեն է եւ հրատարակուել է Երևանում, հայերեն տարբերակի հրատարակութիւնից երկու տարի անց՝ 1990-ին:

կայանից գնացքի կայարանն էր փոխադրել: Հետաքրքիր է, որ գուլագի յուշագրություններից շատերի մէջ է նկարագրուել «Սեւ ագռաւը», «Չոռնի վառոնը», «Սեւ Մարիան»: Դա ցոյց է տալիս, թէ թէկուզ կարճ ճամբորդութիւնը այդ կառքում որքան խորն է ազդել կալանաւորի վրայ: Սուրէն Ղազարեանին այդ մեքենայով Թիֆլիսի Մետեխի բանտն էին փոխադրել, «Մի շքեղ ատոբուս, վարագոյրներով ծածկուած լուսամուտներով»:<sup>6</sup> Իհարկէ, տեսքը խաբուսիկ էր: Մեքենան սեւ էր եւ պատուհաններ չունէր: Դրանք նկարուած էին:

Ստալինեան մաքրագործումների թեժ ժամանակաշրջանում ձերբակալութիւնները մեծ մասամբ կատարուում էին գիշերով, որպէսզի բնակչութիւնը չզգայ, թէ ինչ յաճախականութեամբ է դա կատարուում, եւ չսարսափի: Սովեթնիցիները ասում է՝ ամէն ինչ լաւ էր հաշուած՝ գիշերը ձերբակալութիւն, ցերեկը միտինգ ու ցոյց. «Նոյն այդ ասֆալթապատ փողոցով, որ Սեւ Մարիան էր գիշերը անցել, ցերեկով երեխաների խմբեր էին անցնում, ուրախ ու անհոգ երգելով, ծաղիկներ ու դրօշներ ծածանելով»:<sup>7</sup> Ասում են, Բ. աշխարհամարտից յետոյ, Սեւ երկաթէ բարձր կողերով այս մեքենաները ներկուած էին լինում, մէկին հանրակառքի տեսք տալու, միւսին հաց բաժանող մեքենայի, մէկ ուրիշին՝ մսեղէն փոխադրողի: Մեքենաները ծպտուած էին երթեւեկում, որպէսզի մարդիկ ձերբակալութիւնների մասին չիմանան:<sup>8</sup> Այս մեքենայով սկսուեց իօրս աքսորի ճամբան: Բայց աքսորը՝ նոր չարչարանքի սկիզբ, վերջ դրեց նաեւ նրա մենակեաց բանտի տառապալի փորձութեանը:

Յատկապէս 1937-1938 թթ. ստալինեան մաքրագործումներից մնացած յուշագրութիւնները խօսում են այն մասին, թէ նախքան

6 Նոյն տեղում, էջ 91:

7 Solzhenitsyn, Gulag Archipelago, էջ 7:

8 Նոյն տեղում, էջ 528: Տե՛ս նաեւ Hosford եւ այլք, *GULAG*, էջ 17

աշխատանքային ճամբարներ ուղարկուելը ձերբակալուածներին խցկում էին մի ընդհանուր բանտում, սոսկալի խռնուած, այնքան որ բանտարկեալները չէին կարող պառկել, քնում էին նստած՝ պատին յենուած կամ ուրիշ բանտարկեալի հետ մէջք մէջքի: Հայրս այս խճողուած բանտերի փորձը ունեցել էր նախ Ռոստովի եւ յետոյ Կրասնոյարսկի տարանցիկ, բաշխիչ կայաններում: Բայց հետաքրքիր է, որ մենակութիւնը այնքան էր տանջել հօրս, որ այս երկու բանտերում էլ աւելի լաւ էր զգացել իրեն: «Ռոստովի կալանաւորական Բաշխիչ կայարանի այս ընդհանուր, դաժան եւ տխուր իրականութեան մէջ, ինձ համար գոյութիւն ունէր մի միայնութեան եւ անդորր երեւոյթ: Դա այն էր, որ ես այլեւս մենակ ու մեկուսացած չէի: Մարդկանց մէջ էի, մարդկանց հետ էի, խօսում էի նրանց հետ»:

Աքսորի երկար ու տառապալից ճանապարհը վերջապէս հօրս իր վերջին կայանը հասցրեց՝ Նորիլազ, Նորիլսկի լագեր, աշխատանքային ճամբարների համալիր: Դա մէկն էր գուլագի համակարգի բազմաթիւ ճամբարներից, ուր «1934-ից 1953 թուականները 1.053.829 մարդ է զոհուել»:<sup>9</sup> Բայց թուերը չեն կարող աղէտի ահագնութիւնը պատկերել: Դրանք միայն պաղ ու անարիւն վիճակագրութիւններ են, որ անգութ բռնակալին ոչինչ չեն ասում: Ստալինը ինքն էր ասել. «Մի անձի մահը ողբերգութիւն է, միլիոններինը՝ վիճակագրութիւն»:

Գուլագների ուսումնասիրութեանը նուիրուած կոթողային աշխատութեան հեղինակ Անն Ափրլբամը (Anne Applebaum) մի ամբողջ գլուխ է նուիրում աշխատանքային ճամբարների զոհերին

9 Այս թիւը առնուած է խորհրդային արխիւներում կատարուած ուսումնասիրութիւնից: Տե՛ս J. Arch Getty, Gábor T. Rittersporn եւ Viktor N. Zemskov, "Victims of the Soviet Penal System in the Pre-war Years: A First Approach on the Basis of Archival Evidence, (խորհրդային դատական համակարգի զոհերը նախապատերազմեան շրջանում, առաջին փորձ՝ հիմնուած արխիւային փաստերի վրայ), *American Historical Review*, հոկտեմբեր 1993 (98/4), էջ 1024:

Եւ այդ գլուխը սկսում է այդ ճամբարներից մէկի վերապրող Նինա Գագէն-Թորնի (Nina Gagen-Torn) զգայացունց բանաստեղծութեամբ, որ այնքան պարզ բայց հարազատ արտայայտիչն է կալանաւորի ապրումների: Պիտի փորձեն թարգմանել.

Ի՞նչ է նշանակում գերյոգնութիւն,  
 Ի՞նչ է նշանակում տաժանք.  
 Ամէն շարժում սարսափելի է  
 Շարժումը թելերիդ ու ոտքերիդ,  
 Անտանելի քաղց, հաց եւ տենչում.  
 Սիրտդ «հաց, հաց» է տրոփում:  
 Հեռու, հեռու մթին երկնքում  
 Արեւն է անտարբեր շրջում:  
 Շունչդ բարակ սուլոց է  
 Օդը մինուս հիսուն աստիճան:  
 Ի՞նչ է նշանակում մեռնել,  
 Սարերը նայում ու լուռ են մնում:<sup>10</sup>

Սա էր գուլագը բոլոր նրանց համար, որ ճամբարի տաժանքի ու զրկանքի պայմաններում, ողորմելի կեանք ապրեցին:

Քիչ առաջ յիշածս ամերիկացի ուսումնասիրող խումբը՝ Դէյվիդ Հոսֆորդ (David Hosford), Փամելա Քաչըրին (Pamela Kachurin) եւ Թամըս Լըմանթ (Thomas Lamont), գուլագը նկարագրում է որպէս

բանտային ճամբարների ցանց, որ Խորհրդային Միութեան մէջ յայտնուեց 1929-ից եւ հիմնականում ծառայեց ժողովրդի վրայ բացարձակ հսկողութիւն հաստատելու, քան՝ ոճրագործներին պատժելու նպատակին: Անմեղ միլիոնների արգելափակումը գուլագներում համարւում է քսաներորդ դարի ամենացնցիչ երեւոյթներից մէկը:

<sup>10</sup> Anne Applebaum (Pulitzer մրցանակի դափնեկիր), *GULAG, A History* (ԳՈՒԼԱԳ. Մի պատմագրութիւն), (New York: Anchor Books, 2004), էջ 334.

Անլի կսկծալի է նոյն ուսումնասիրությունում մեջքերուած յուշագրող Ժաք Ռոսսիի (Jacques Rossi) նկարագրութիւնը.

Գուլագը կեանքի էր կոչուել մարդկութեանը վերածելու՝ հնազանդ, հիւծուած, զարշահոտ արարածների մի զանգուածի, որ միայն իրենք իրենց համար են ապրում, միայն մտածում են՝ ինչպէս մեղմացնել սոսկալի քաղցի տեսական տառապանքը, միայն վայրկեանի մէջ են ապրում, միայն մտածում են՝ ինչպէս խուսափել քացիներից, ցրտից ու դաժան բռնութիւնից:

Նոյն ուսումնասիրութեան մէջ կարդում ենք, որ ըստ 1990-ի *Moscow News*-ի մէկ տեղեկութեան, 1931-ից մինչեւ 1953 թուականը 3.778.234 հոգի ձերբակալուել է որպէս հակայեղափոխական. գնդակահարուել են 786.098-ը:<sup>11</sup>

Ալեքսանդր Սոլժենիցինի *One Day in the Life of Ivan Denisovich*-ը (Մէկ օր Իւան Դենիսովիչի կեանքից) (1963) եւ *Gulag Archipelago*-ն (Արխիպելագ Գուլագ) (1973) պատուհան էին դէպի նախապէս անյայտ սարսափելի իրականութիւնը: Սոլժենիցինը Կարմիր Բանակի սպայ էր եղել, երկու անգամ մեղալով պարգեւատրուել էր: Նա ձերբակալուել էր 1945-ին, երբ ծառայում էր Արեւելեան Պրոսիայում: Պատճառը՝ իր մի ընկերոջ հետ ունեցած նամակագրութեան մէջ նրանք երկուստեք քննադատել էին «Իմաստունների իմաստուն» Ստալինի ռազմական քաղաքականութիւնը եւ անարգ խօսքեր էին ասել նրա հասցէին. եւ իբրեւ թէ գրաքննութիւնից խուսափելու համար նրան ծածկանունով «Պախան» էին կոչել, որ հրոսակախմբի կամ աւագակախմբի առաջնորդ է նշանակում:<sup>12</sup> Սոլժենիցինին եւ ընկերոջը Մոսկուա էին բերել, ութ տարուայ ազատազրկման էին դատապարտել եւ Սիբիրի աշխատանքային ճամբարներն

11 Վերի երեք մէջքերումները տե՛ս David Hosford եւ այլք, *GULAG*, էջ 1, 24, 1:

12 Solzhenitsyn, *Gulag Archipelago*, էջ 134:



ուղարկել: Սակայն, երբ 1953-ին նրա բանտարկության ժամկետը լրացել էր, նրան չէին ազատել, թոյլ չէին տուել տուն վերադառնալ, այլ ուղարկել էին Ղազախստանի գիւղերից մէկը՝ իբրեւ յախտեան աքսորական: Սոլժենիցինը ներում ստացաւ, կամ աւելի ճիշտ՝ արդարացուեց 1956-ին:

Գուլագների նրա բացայայտումը ուղղակի ցնցեց Արեւմուտքը, նրա առջեւ բացեց ուղղիչ ճամբարներում տիրող սարսափելի իրականութիւնը եւ թէ ինչ անմարդկային մեթոդներով էին առանձնացրել եւ ոչնչացրել բոլոր նրանց, ովքեր Ստալինի քաղաքականութեանը դէմ լինելու կասկածի տակ էին եղել:

Աքսորական կեանքի շատ մանրամասնութիւններ գուլագներից վերապրած խորհրդահայ մտաւորականների յուշերում էլ են արձագանք գտել: Յուշեր, որ գրուեցին 1960-ականներին, դրանցից շատերը գգրոցների մէջ թաղուեցին ու աշխարհ եկան միայն 1980-ականների վերջերից սկսած:

Հայ եւ օտար յուշագրութիւնների ընդմիջից եւ կարողացաւ հօրս աշխարհը թափանցել, պատկերացնել նրա աներեւակայելի կեանքը բանտում ու աքսորում: Այս յուշագրութիւններից կամ ինքնակենսագրութիւններից մէկի հեղինակն է Գուրգէն Մահարին՝ խորհրդային ճամբարներում քաղաքական բանտարկեալի իր կեանքի նկարագրութեամբ:<sup>13</sup> Եւ իրապէս ապշեցուցիչ են եւ

13 Գրիգոր Աճեմեանը՝ Գուրգէն Մահարու որդին առաջին ամուսնութիւնից, բանտային եւ աքսորական կեանքի մասին հօր ստեղծագործութիւնները՝ համառօտ ինքնակենսագրական, արձակ, բանաստեղծութիւն, նամակներ, հաւաքել եւ հրատարակել է 850 էջից բաղկացած մի հատորում, որ «Միբիրական» է վերնագրուած:

Մահարու մահուանից յետոյ, նախքան «Միբիրական»ի հրատարակութիւնը, նրա երկրորդ կինը՝ Անթոնինա Մահարի Պալիտայտէն, ռուսերէնով գրի է առնում իր եւ ամուսնու կեանքի պատմութիւնը: Աշխատանքը պատրաստ էր 1972-ին, բայց ինչ-ինչ նկատառումներով հրատարակուեց 2003-ին միայն: Գործի հայերէն թարգմանութիւնը «Իմ ողիսական» վերնագիրն է կրում:

Գուրգէն Մահարու առաջին կինը նրա ձերբակալութիւնից յետոյ հրաժարուել էր ամուսնուց. դա ստալինեան մաքրագործումների տարիներին հալածանքից ու ձերբակալութիւնից խուսափելու միակ ճամբան էր: Տարիներ յետոյ Միբիրում

զագրելի դեռ նոյնիսկ դէպի աքսոր «ճամբորդութեան» նրա տուած մանրամասները կեղտոտ բեռնատար վագոնների եւ վագոններում կենդանիների պէս խռնուած աւելի կեղտոտ կալանաւորների մասին: Ճամբար հասնելուն պէս կալանաւորի հագուստները հանել էին պատառոտելով ու բոլորի ներկայութեամբ մերկացրել, «բժշկական քննութիւն» էին անցկացրել եւ յետոյ բոլորին մի հասարակաց բաղանիք լցրել. յետոյ տուել էին բանտարկեալի յատուկ համագգեստները, բոլորը նոյն չափով կարուած, որ մէկին փոքր էր եկել, միւսին՝ մեծ:

Սուրէն Ղազարեանն էլ է նկարագրում այն վիրաւորանքն ու նուաստացումը, որին ենթակայ էր եղել ձերբակալութեան առաջին վայրկեանից: Ճամբարում բանտարկեալներին դրսի ձիւնոտ ցրտում մերկացրել էին ու հրամայել քայլել դէպի դիմացի շինութիւնը: Սուրէնին թուացել էր, թէ դէպի մահ են գնում: Բայց բանից դուրս է եկել, որ շինութիւնը, այսպէս կոչուած, բաղանիք էր Սոլովեցկու ճամբարում, ուր նա իր առաջին հասարակաց լոգանքը պիտի ընդունէր:<sup>14</sup> Վստահ եմ, որ հայրս էլ է նման նուաստացնող վերաբերմունքի ենթարկուել: Պատկերացնում եմ նրա զգացումները նման իրավիճակներում:

Գուրգէն Մահարին նկարագրում է, թէ ինչպէս յանկարծակիի է եկել եւ ինչ խոր յուսահատութիւն է ապրել, երբ տարիներ աքսորում ապրած, առաջին անգամ ինքն իրեն հայելու մէջ է տեսել: Հայելին անգտանելի մի բան էր ճամբարում, որտեղի՞ց էր այդ մի կտոր կտորած հայելին գտնուել, որ պիտի մատնէր տարիների չարչարանքի ու անբաւարար սնունդի գործած աւերը նրա դէմքի ու մարմնի վրայ:

---

Գուրգէնը հանդիպել էր իրենից շատ երիտասարդ Լիտուացի Անթոնինային եւ ամուսնացել նրա հետ:

14 Ս. Ղազարյան, «Դա չպետք է կրկնվի», էջ 115-117: Սոլովեցկու կղզիախումբը գտնուում է Սպիտակ ծովում, Արխանգելսկի մօտ եւ խորհրդային աշխատանքային ճամբարներից առաջիններից է:

Երբ հայրս վերադարձաւ, այնքան հիւծուած էր, ծերացած ու անճանաչելի: Ե՛րբ էր առաջին անգամ ինքն իրեն հայելում տեսել: Ի՞նչ զգացում էր ունեցել:

Մի յուզիչ տեսարան է Մահարու նկարագրած «մեծ ուրախութիւնը»: Նոր Տարուայ երեկոյ էր, եւ Աշոտ դային տանից կապոց էր ստացել՝ «երկու գմռուած շշերով հալած իւղ, շաքար, երշիկ, տաք գուլպաներ, հինգ տուփ «Մասունցի Դաւիթ» ծխախոտ, երկու կտոր վարդագոյն, անուշահոտ օճառ, լուցկի... Ընթրիքից յետոյ մենք քաղցր թէյ խմեցինք .... Աշոտ դային լուռ էր, մտքերով տարուած, յետոյ սկսեց մեղմ ձայնով ««Մայր Արաքսի» երգել»:<sup>15</sup> Որքա՞ն ժամանակ էր՝ կուշտ չէին կերել, քաղցր թէյ չէին խմել: Ճամբարում շաքարը չտեսնուած բան էր: Բայց գոնէ միասին էին «տօնում» Նոր Տարին, իրար հետ կիսում տանից ստացած բարիքը: Քանի-քանի Նոր Տարի գիշերներ է հայրս անցկացրել, քաղցած, միայնակ, մոռացուած, առանց տանից կապոց ստանալու յոյսի:

Շատերի յուշերում եմ կարդացել, որ կալանաւորները երբեմն ծանրոցներ էին ստանում, մեծ մասամբ՝ տաք հագուստեղէն, ծխախոտ, շաքար, երշիկեղէն: Դա օրհնութիւն էր ստացողի համար, բայց դրան հետեւում էր մի տխուր տեսարան բարաքներում: Ծանրոց ստացողի շուրջ էին հաւաքւում խեղճ, տխուր ու նախանձկոտ հայեացքներով կալանաւորները՝ մի փշուր ուտելիք ստանալու կամ ուրիշի ծխած մախոռկայի արձակած ծուխը ներս քաշելու յոյսով: Ըստ երեւոյթին, ծխախոտը հազուադիւս եւ շատ փնտռուած մի բան է եղել ճամբարներում, աւելի կարեւոր, քան հացը: Հայրս ծխում էր եւ շատ: Արդեօք ծխախոտի համար ի՞նչ էր գոհում կամ ո՞րն էր աղաչում:

Հայրս առիթ չունեցաւ այս մանրամասնութիւնները գրի առնելու: Բայց կարդացէ՛ք վերապրած ու տուն վերադարձած

15 Գուրգեն Մահարի, «Սև մարդը», տէն «Միբիրական», էջ 172:

քաղբանտարկեալների յուշերը, ինչպէս Սուրէն Ղազարեան, Գուրգէն Մահարի, Սուրէն Յովհաննիսեան, Վալտեր Արամեան եւ ուրիշներ, եւ կը տեսնէք, թէ ինչպէս էր կեանքը բարաքներում, տաժանակիր աշխատանքի ճամբարներում: Կալանաւորները խարդախում էին, խաբում, ուրիշների վրայ լրտեսում ու ցուցմունք տալիս՝ բանտապահից մի աննշան շնորհ, նոյնիսկ հարիւր գրամ յաւելեալ հաց ստանալու համար: Խաբէութիւն, կողոպուտ, սպանութիւն. դա բարաքների սովորական կենսաձեւն էր: Եւ եթէ չկարողանայիր դիմանալ դժուարութիւններին, քաղցին եւ սոսկալի ցրտին, ու կեանքիդ բարակած թելը կտրուէր, թաղումը պերճանք էր, որին չէիր արժանանայ: Մերկացնում էին քեզ, քո հագուստները տրւում էին մէկ այլ կալանաւորի, եւ քեզ նետում էին ընդհանրական գերեզմանում, ի հարկէ՝ առանց դագաղի:

Զարեհ Ճգնաւորեանի *Enemy of the People: Armenians Look Back at the Stalin Terror*, 1998-ին արտադրած փաստաւաւերագրական ֆիլմում<sup>16</sup> մի նախկին բանտարկեալ նոյնն է վկայում: Ու աւելացնում է, որ Երբեմն, որոշ պայմաններում, սնունդն ու վառելիքը կտրուկ նուազում էին, մանաւանդ՝ պատերազմի տարիներին կամ ընդհանրապէս հեռու ընկած ու ձմռան սառնամանիքին անհասանելի ճամբարներում: Դրա հետեւանքով կալանաւորների մէջ մահացութիւնը սոսկալի աճ էր արձանագրում: Մարդը մեռա՞ծ էր արդէն, թէ՞ դեռ կիսամեռ: Բանտապահը պիտի ստուգէր: Բայց մեթոդը սարսափելի էր... Եթէ բանտապահը ձեռքին մուրճ ունէր, մուրճով խփում էր բանտարկեալի գլխին, եթէ ձեռքինը ճիպոտ էր, ճիպոտով բոթում էր նրա փորին: Փաստուելուց յետոյ, որ մարդը մեռած է, մի փայտի կտոր՝ վրան մարդու անունն ու թիւը գրած, կապում էր դիակի ոտքի բթամատին, ապա դիակը տարւում ու

16 Զարեհ Ճգնաւորեանի այս ֆիլմի հայերէն տարբերակը անուանուել է «Կոչեմ ապրողաց» եւ հասանելի է առցանց՝ <https://vimeo.com/99905238> կայքում

ընդհանուր փոսի մէջ էր նետուում:<sup>17</sup> Կոլիմայի աշխատանքային ճամբարում, ուր Վահրամ Ալազանն էր իր «պատիժը» կրում, «թաղումը» տարբեր արարողութեամբ էր կատարում, մանաւանդ՝ երբ նորից սնունդի եւ վառելիքի պակասը տագնապալի էր դառնում ու մեռնողների թիւը հսկայ չափերի էր հասնում (Ալազանի ձեռքն էր ընկել 1942 թուի յունուար-փետրուար ամիսներին Կոլիմայի ճամբարում մահացածների ցանկը: Հաշուել էր 6000 հոգի միայն երկու ամսում): Այդքան մեռել թաղելը դիւրին չէր: Եւ հնարագետ բանտապահները գտել էին ձեւը. կալանաւորների մէջ մեռելները թաղելու «կոնկուրս» էին յայտարարել՝ «երկու մեռել թաղողին տրուում էր մէկ տուփ մախորկա»: Այստեղ, դիակի սրունքին կապուում էր «մետաղեայ մի թիթեղ, որի վրայ գրուած էր նրա պատժի չափը, ժամկէտը եւ գործի համարը»: Եւ վագքը սկսւում էր՝ որքան կարելի էր շտապ դիակները սահնակի վրայ բարձած դէպի «գերեզման» սահեցնելով, կամ դիակի վզին պարան կապած փողոցներում քարշ տալով: «Ո՛ւմ հարազատն էին, ինչպիսի՞ պետական գործիչներ կամ տաղանդներ թաղեցինք: Չիմացանք»: Ալազանը ճանաչել էր մէկին՝ «դիարանի հսկիչ փիլիսոփայութեան դոկտոր, պատկառելի ծերունին էր»:

Եւ սուր հեզմանքով Ալազանը Ստալինի հանրայայտ արտայայտութիւնն է կրկնում. «Ի՛նչ խօսք, Կոլիմայում «մարդը ամենաթանկ կապիտալն էր»»:<sup>18</sup>

Իրօք որ, կալանաւորի կեանքը ո՛չ մի արժէք չունէր

17 Այս եզակի արժէք ներկայացնող 58 րոպէ տետրութեամբ ֆիլմը, որի մասին ակնարկ եղաւ այս հատորի նախաբանում, բացւում է Մոսկուայում, մի «սրտաճմլիկ» տեսարանով՝ Ստալինը դագաղի մէջ, ծաղիկներով շրջապատուած, ու լսւում է մի աղիողորմ, մի արցունքախառն ձայն՝ ռուսերէնով. «Միբելի՛ ընկերներ, դժուար է այսօր բառերով արտայայտել զգացումները մեր կուսակցութեան, մեր ժողովրդի եւ ամենայն առաջադէմ մարդկութեան: Ստալինը ոչ եւս է»: Ֆիլմը անմիջապէս փոխադրւում է Երեւան, ու երեւում են տխուր, արցունքոտ դէմքեր, սգաւոր հայեր՝ ծեր, թէ երիտասարդ:

18 Վահրամ Ալազան, «Տառապանքի ուղիներով», Երևան, «Խորհրդային գրող», 1990, էջ 136-137:

գուլագներում: Ճգնաւորեանի ֆիլմում մի նախկին կալանաւոր պատմում էր, թէ իրենց կարգադրուած էր մի նեղ ճանապարհ կառուցել՝ ճամբարից մինչեւ գնացքի կայարանը՝ բարձած ձիերով տեղի կանաչեղէնը եւ խոտաբոյսերը գնացքի կայարան փոխադրելու համար: Բայց այդ կլիմայական ծանր պայմաններում եւ աշխատանքի երկար ժամերով, ձիերը չէին դիմանում: Ուրեմն որոշում է, որ կալանաւորները բեռը քաշեն, որովհետեւ եթէ մի ձի սատկէր, ճամբարի վարչութիւնը վերին մարմինների կողմից պատասխանատուութեան կ'ենթարկուէր, իսկ եթէ կալանաւորը չդիմանար, ընկնէր ու մեռնէր, պարզապէս մի պաշտօնական հարցաթերթիկ լրացնելով՝ հարցը կը փակուէր: «Ձիերը արժէք ունէին, մարդիկ՝ ոչ»:

Նոյն ֆիլմում մի ուրիշը պատմում էր, թէ ինչպէս Սիբիրի ամխահանքերից մէկում, ուր աշխատում էր ինքը, հանքի մի մասը փլում է, եւ 250 կալանաւորներ թաղում են փլատակների տակ: Փրկուածները սկսում են փորել՝ աղէտեալներին ազատելու համար: Գործը երկար է տեւում: Պէտք էր աւելի խորը փորել: Հսկիչները արգելում են շարունակել: Օրուայ աշխատանքը տուժում էր: Նորմը չէր լրանալու: Բոլորին յետ՝ իրենց օրուայ աշխատանքին են ուղարկում եւ անփութօրէն զեկուցում ամխահանքում տեղի ունեցած պատահարի ու 250 զոհերի մասին:

Յարգանք չկար ո՛չ ապրող, ո՛չ մեռած եւ ո՛չ էլ կենդանի մեռածների հանդէպ: Այս վերջիններին «ֆիթիլ» էին կանչում, այսինքն՝ պատրոյգ, վառուող մոմի պէս մինչեւ վերջ վառուող, կամ «դոխողիագի», որ «դոխողիտ» (քայլելով հասնել) բայից է: Դա հեզնական արտայայտութիւն էր, իմաստը՝ «մեռնողները վերջապէս սոցիալիզմին են հասնում»: <sup>19</sup>

Տարօրինակ է, որ այս զագրելի իրողութեան ականատես,

19 Applebaum, *GULAG*, մէջբերուած է Jacques Ross -ից, էջ 334-335:

գուլագի տաժանքին ու անմարդկային վերաբերմունքին ենթակա մարդիկ կային, մանաւանդ՝ հին բոլշեւիկներ, որոնք դեռ հաւատում էին կոմունիզմի յաղթանակին: Նրանց կարծիքով՝ մարդկային արարմունքն է եղծանել կոմունիզմի իրական կերպարը: Գուրգէն Մահարին գրում է, որ իր բանտակից Անդրէյ Սլաւինը հաւատում էր, թէ ինքը կոմունիզմի համար է կռուում, թէկուզ՝ Սիբիրի ճամբարներում. «Երբ ես փակում եմ աչքերս եւ ուզում եմ պատկերացնել կոմունիզմը, առաջին հերթին լոյսեր եմ տեսնում, լոյս ու լուսաւորութիւն, լոյս ոչ միայն քաղաքներում ու գիւղերում, փողոցներում եւ տներում, լոյս եւ մարդկանց սրտերում, մարդկանց սրտերում»:<sup>20</sup>

Նման մարդկանց մտայնութեան մէջ կոմունիստական գաղափարախօսութիւնը վեր էր ամէն ինչից եւ պատժարանի վայրագ վերաբերմունքը, ամենօրեայ չարչարանքը չէին կարող դա շեղել: Նրանք իրենց կոմունիզմի յաղթանակի համար տարուող պայքարի նահատակներ էին համարում: Դրանցից մէկն էր Պետիկ Պետրոսեանը՝ Էջմիածնի գաւառային կոմիտէի քարտուղար, այժմ՝ «ներքին բանտի տասներորդ խցիկի բնակիչ»: Բանտապահը կանչել էր նրա անունը: Գնդակահարութեան էին տանում:

...յանկարծ չորացաւ, մահուան նման գունատուեց, չոեց զայրոյթով լցուած աչքերը եւ ձայնի ամբողջ հզօրութեամբ սկսեց երգել «Ինտերնացիոնալը»: Երգ, որ բանտերում երգելը խստիւ արգիւտւած էր: Եւ այնպէս եղաւ, որ ամբողջ խցիկը ձայնակցեց նրան: Բանտը թնդաց, եւ Պետիկ Պետրոսեանը, կարծես քայլերգի հնչիւնների տակ, հերոսաբար դուրս եկաւ խցիկից:<sup>21</sup>

20 Մահարի, «Նախօրյակին», տե՛ս «Սիբիրական», էջ 109:

21 Տե՛ս Վալտեր Արամյան, «Կոլիմա», Երևան, Հայ գրողների միութեան հրատարակչություն, 2006, էջ 17-18: Վէպ պիտակուած, բայց իրական դէպքերի եւ երեւոյթների իրապաշտ այս պատումը, որ որոշ չափով էլ ինքնակենսագրութիւն կարելի է համարել, բանտային եւ ճամբարային կեանքի կենդանի նկարագրութեամբ,

Վահրամ Ալազանը երբեք չկորցրեց իր հաւատը դէպի կոմունիզմ եւ Կոմունիստական կուսակցութիւն: 18 տարի խորհրդային բանտերում եւ սիբիրեան ճամբարներում անցկացնելուց յետոյ, երբ Ալազանը վերադարձաւ Հայաստան, նրա համար ամենից մեծ հպարտութիւնն ու երջանկութիւնը Կոմունիստ կուսակցութեան շարքերում վերականգնուելն էր:<sup>22</sup>

Այս տեսակէտը կամ համոզումը միանգամայն հակասում է հօրս քաղաքական դաւանանքին, որ իր ցցուն արտայայտութիւնն է գտել իր յուշերի մէջ: Եթէ Խորհրդային Հայաստանից կամ ընդհանրապէս Խորհրդային Միութիւնից մեզ հասած սիբիրական յուշագրութիւնների մէջ կոմունիստական գաղափարախօսութեան դէմ չկայ որեւէ քննադատութիւն (բացառութիւն է Սոլժենիցինը), ապա հայրս իւրաքանչիւր առիթով փորձեց ցոյց տալ այդ գաղափարախօսութեան (կամ այն, որ ի գործ է դրուած Խորհրդային կայսրութիւնում) ապականուած, աղաւաղուած, սնանկացած, ոչ գործնական եւ նոյնիսկ անբարոյ բնոյթը:

Մէկ այլ ընդհանրական գիծ է անցնում Խորհրդային բլոկից մեզ հասած յուշագրութիւններում: Ստալինեան բռնաճնշումների զոհ բանտարկեալների մէջ միշտ հանդիպում ես այն համոզմունքին, որ «Ժողովուրդների հայր» Ստալինը տեղեակ չէր, թէ ինչ ահաւոր վիճակ է տիրում բանտերում ու աշխատանքային ճամբարներում, թէ ինչպէս են տրորում մարդկային ամենատարրական իրաւունքները: Եթէ Ստալինը

---

բանտարկուած, աքսորուած, գնդակահարուած հայ հանրայայտ մտաւորականների ու կոմունիստ ղեկավարների մասին բերուած տեղեկութիւններով, մեծարժէք շտեմարան է եղել ինձ համար: Միեւրոյն իրաւիս արեւելքում գտնուող Կոլիմա կոչուող այս տխրահռչակ ճամբարին նուիրուած «Կոլիմա» վէպը հրատարակուեց յետմահու: Ե՛րբ էր գրուել այս գործը, որ, իմ կարծիքով, պակաս չէ Սոլժենիցինի գործերից:

22 Վահրամ Ալազանը «Տառապանքի ուղիներով» իր յուշերը աւարտում է 1955-ին Կոմունիստական կուսակցութեան շարքերում վերականգնուելու ցնծալի առիթը արձանագրելով (էջ 239): Յատկանշականն այն է, որ «Տառապանքի ուղիներով»ը գրուել է 1961-ի եւ 1965-ի ընթացքում, բայց հրատարակուել է 1990-ին:



իմանար, պիտի արգելեր, պիտի հրամայեր ազատ արձակել անմեղ, առանց որեւէ պատճառի կամ սխալմամբ բանտարկուածներին: Հին բոլշեիկ եւ փորձուած չէկիստ Սուրէն Ղազարեանը անգամներ նամակ էր գրել Կոմունիստական կուսակցութեան Կենտրոնական կոմիտէին, ներկայացրել իր անտանելի վիճակը եւ բացատրել, որ իր արգելափակումը սխալութեան արդիւնք է եւ ինքը միշտ ու ամենայն հաւատարմութեամբ ծառայել է կուսակցութեանը: «Ես կարծում էի, թէ իմ դիմումը մեծ ազդեցութիւն պիտի գործի, թէ այդպիսի բովանդակութեամբ դիմումը տեղ հասնելուն պէս անպայման կը զեկուցուի իրեն՝ Ստալինին»:<sup>23</sup>

Մի բարձրաստիճան ռուս դատախազ Կոլիմա տանող տարանցիկ ճամբարում համոզուած յայտարարում էր. «Ինձ գրպարտեցին ժողովրդի թշնամիները: Եթէ Ստալինը իմանայ, որ ես այստեղ եմ, ինձ կ'ազատի»: Մի քանի օր յետոյ «Երեւի առաջնորդն իմացաւ նրա մասին, եւ նրա դիակը հանեցին տախտակամածի տակից, յանձնեցին երրորդ արխիւին՝ մշտական, անվտանգ պաշտպանութեան իրաւունքով»:<sup>24</sup>

Ի հարկէ, բանտարկեալների մէջ կային իրապաշտներ, նոյնիսկ՝ հաւատացեալ բոլշեիկներ, որոնք խորացել էին ստեղծուած իրադրութեան մէջ: Դրանցից մէկը Սերգէյ Բեսսոնովն էր, որ մի որոշ ժամանակ Սոլովեցկի բանտային համալիրում Սուրէն Ղազարեանի հետ բանտակից էր եղել: Հետաքրքրասիրութիւնից ելնելով՝ փորձեցի փնտրել ու ճանաչել Սերգէյ Բեսսոնովին, որին Սուրէն Ղազարեանը մի քանի էջ էր յատկացրել: Չգտայ: Միայն Wikipedia-ում նրա անունը՝ Սերգէյ Ալեքսեւիչ Բեսսոնով, ընդգրկուած էր քսան հին բոլշեիկների ցանկում, որոնք դատապարտուել էին Բուխարինի դատավարութիւնների ընթացքում՝ 1938-ին: Ըստ Ղազարեանի՝

23 Ղազարյան, «Պա չպետք է կրկնվի», էջ 129-130:

24 Արամյան, «Կոլիմա», էջ 54:

Բեսսոնովը խորհրդային դեսպանատան խորհրդական է եղել Բեռլինում: Նա այդ քսան ամբաստանեալների մեջ այն քչերից էր, որոնք չգնդակահարուեցին: Բեսսոնովը 15 տարի աքսոր էր ստացել: Ղազարեանը նկարագրում է նրան որպես շատ գիտակ, զարգացած, բարի եւ լուսատես մարդ: Լուսատես լինելով հանդերձ՝ նա իրապաշտ էր եւ չէր հաւատում, որ բանտարկեալների դիմում-նամակները որեւէ բան կը փոխեն:

«Դուք լաւ չէք պատկերացնում, թէ ինչ խորութիւն ու մասշտաբներ ունի ստեղծուած իրադրութիւնը: Շատ ջրեր կը հոսեն, մինչեւ որ արդարութիւնը վերականգնուի: Դուք շարունակ զանազան դիմումներ էք գրում, լաց լինում, որ անմեղ գոհեր էք, խնդրում էք վերանայել ձեր գործերը, վերականգնել արդարութիւնը, եւ այլն: Չէք ուզում հասկանալ, որ ձեր դիմումները ոչ ոք չի կարդում, ձեր արցունքները ոչ ոքի պէտք չեն եւ ոչ ոքի գույթը չեն շարժում, որ յաճախ այդ դիմումները յղում էք այն մարդուն, որը գուցէ անձամբ մեղաւոր է այն ամէնի մէջ, ինչ որ կատարում է»: Նա Լաւրենտի Բերիային եւ Նիկոլայ Եժովին համարում էր բախտախնդիրներ եւ այս մաքրագործումների պատասխանատուներ:<sup>25</sup>

Վահրամ Ալազանն էլ էր Ստալինին գրել, բացատրել էր, թէ ինքը ով է, թէ անտեղի է բանտարկուել եւ թէ ինչ անմարդկային վերաբերմունքի, ծեծ ու ջարդի է ենթարկուել հարցաքննութեան ժամանակ:<sup>26</sup> Բայց Դալստրոյ բանջարաբոստանային ճամբարը այնքան մեղմ էր համեմատ Օխոտսկ ծովի մօտ գտնուող տխրահռչակ Մագադանի ճամբարներին:<sup>27</sup> Եւ յետոյ, վերջին

25 Ղազարյան, «Դա չպէտք է կրկնվի», էջ 152-153:

26 Ալազան, «Տառապանքի ուղիներով», էջ 100:

27 Մագադանի ճամբարներից մէկում է աքսորուած եղել Աղասի Խանջեանի կինը՝ Ռոզա Վինգբերգը: Նա, իմանալով հարեւան ճամբարում գտնուող հայ կալանաւորների մասին, գաղտնի նամակ է ուղարկում նրանց՝ չլուսահատուել,

կայանը՝ 600 կիլոմետր, բուք ու բորանի միջով, արկածալից ճամբորդություն դեպի հիւսիս՝ Կոլիմայի ուրանի հանքերը, դեպի Բուդուգեշակ, որ թունգուս լեզուով «մահուան հովիտ» է նշանակում: Այդտեղ ցուրտն ու սառնամանիքը 70 աստիճանի է հասնում եւ Ալազանի վկայութեամբ 9000-10.000 կալանաւորներ ամէն օր կիլոմետրեր դեպի հանքեր ու ետ էին քայլում: Տխուր է կարդալ անունները Ալազանի հետ դատապարտուած հայ կալանաւորների, շատերը՝ յայտնի մտաւորականներ, արուեստագէտներ:

Յիշում եմ երբեմն, երբ հայրս տրամադրուում էր Սիբիրի իր չարչարանքների մասին խօսել, յիշում էր նորմա կոչուող կալանաւորներին պարտադրուած սոսկալի ծանր աշխատանքի չափը, որ պիտի լրացնէին իւրաքանչիւր օր: Եւ դա միշտ անիրականանալի էր մնում հօրս համար: Իսկ պատիժը աներեւակայելի էր: Հէնց Նորիլսկում տաժանակիր աշխատանքի դատապարտուած մի կալանաւոր, որ պարտականութիւն ուներ այդ սառուցեալ գօտում կառուցուող շէնքի հիմքերը փորել, այսպէս է նկարագրում. «Գործիդ տասներկու ժամը լրանալուց յետոյ քեզ փոսից դուրս էին քաշում, բայց միայն եթէ լրացրել էիր նորմադ: Եթէ ոչ, հէնց մնում էիր փոսում»:<sup>28</sup> Ըստ երեւոյթին, նորման այնքան բարձր էր նշանակում, որ նոյնիսկ ամենից ուժեղ եւ առողջ կալանաւորները հազիւ էին լրացնում, ինչ մնաց՝ թոյլերն ու հիւանդները: Գիշերուայ ցրտում փոսի մէջ թողնելը սոսկալի պատիժներից էր. աւելի սովորական էր ճաշից զրկելը: Իրականութեան մէջ կալանաւորին հասնող ուտելիքի չափը որոշուում էր ըստ նրա լրացրած աշխատանքի քանակի: Հայրս երբեք չէր հասցնում ուտելիքի լրիւ չափը ստանալ:

սոկալ, քաջ մնալ, որովհետեւ «շուտով կը գայ այն օրը, որ կուսակցութիւնը մեզ բոլորիս կ'արդարացնի եւ հայրենիք կը վերադարձնի»: Տե՛ս նոյն տեղում, էջ 111:  
28 Applebaum, *GULAG*, էջ 193:

Կալանավորները բաժանում էին տարբեր աշխատանքային խմբերի՝ ըստ կարողության: Ամենից ուժեղ, առողջ ու երիտասարդ կալանավորները ստանում էին ամենից ծանր աշխատանքը, բայց եւ լաւ էին կերակրւում: Այս օրէնքը կարելի էր ուզած ձեւով շրջանցել: Ըստ Նորիլսկի կալանավոր Լէոնիդ Թրասի (Leonid Trus)՝ «Պարզապէս, բրիգադավարը ինքն էր որոշում, թէ իր բանուորներից ով է արժանի աւելի վարձատրուելու ու լաւ սնունդ ստանալու»: Իսկական չափանիշը կաշառքն ու գլխատրին մատուցած ծառայութիւնն էր:<sup>29</sup>

Հայրս՝ թոյլ ու հիւանդ, երբեք չէր կարողացել նորման լրացնել, երբեք չէր կարողացել սնունդի լրիւ բաժինը ստանալ, որ մի կտոր աւագախառն ու թերաթուխ սեւ հաց էր (150 գրամ՝ ըստ Սովժենիցինի) եւ մի թաս ձկան ջրիկ ապուր: Ի հարկէ, հայրս յիշում է, որ ապուր կոչուածի մէջ ձկան նշոյլ չկար: Ձկան կտորները ստանում էին բանտապահները, վարչութեան աշխատակիցներն ու պահակները: Ասում էր՝ «մենք ուրախութիւն էր եթէ մեր բաժնի մէջ մի փոքրիկ ձկան գլուխ էր գտնւում»:

Նախկին կալանավոր Գուսթաւ Հըրլինգը (Gustav Herling) յիշում է առաջին, ստորին կարգի սնունդ ստացող բանտարկեալների շարքը (այս կարգին պատկանողները ուժեղ ու կարող բանտարկեալների ստացածի կէսն էին ստանում): «Խոնջանքից ու տեւական քաղցից հիւծուած ու դադրած, բարակած սրունքների վրայ օրօրուելով՝ առաջ էին շարժւում, նւում ու քրթմնջում, մի քիչ աւելի ուտելիք խնդրում եւ ազահութեամբ նայում էին երկրորդ եւ երրորդ կարգի կալանավորների լեցուն թասերին»:<sup>30</sup>

Սովժենիցինի Իւան Դենիսովիչ Շուխովն էլ է վկայում, թէ որքան մենք էր անարդարութիւնը ճամբարում, որ անարդար էր նոյնիսկ

29 Նոյն տեղում, էջ 357:

30 Hosford եւ այլք, *GULAG*, էջ 23:

սնունդի բաշխումը:<sup>31</sup> Ճամբարում կալանաւորներն էլ իրենք իրենց մէջ դասակարգեր ունէին. ամենից բարձր դասակարգը խուլիգաններն էին, ովքեր կարող էին իրենց պէս կալանաւոր՝ ճամբարի խոհարարներին ու բանտապահներին կաշառել եւ նախքան սովորական կալանաւորներին հասնելը կերակուրի մեծ մասը յափշտակել: Իսկ սովորական կալանաւորները միշտ տուժողներն էին՝ խուլիգանների խղճին ապաւինող: Հայրս չէր անի. կաշառելու ո՛չ միջոցն ունէր, ո՛չ էլ ունակութիւնը: Ո՛վ գիտի, քանի-քանի գիշերներ քաղցած է պառկել, որովհետեւ միւսների պէս չէր կարող խարդախել կամ աղերսել:

Սնունդի ողորմելի չափաբաժինը, որ բանտարկեալին սովահարութեան եզրին է պահում, նրան տեսական տանջանքի ենթարկելու հնուց եկած պատժամիջոց է: Բայց սովետները ամէն տեսակ տանջանք միախառնելու եւ աշխատանքային

31 Aleksandr Solzhenitsyn, *One Day in the Life of Ivan Denisovich* (New York: Frederick A. Praeger, 1963). Իմ օգտագործած այս հրատարակութիւնը մէկն է 1963-ին լոյս տեսած երեք թարգմանութիւններից: Այս աշխատութեան մէջ Սոլժենիցինը, օգտուելով աշխատանքային ճամբարում իր առօրեայ փորձառութիւնից, ստեղծում է իրականութեան այնքան հարագատ, արժանահաւատ կերպարը՝ գործի հերոս Իւան Դենիսովիչին: Նա մի պարզ ժուռ բանուոր է, որ Բ. աշխարհամարտին Կարմիր Բանակում ծառայելիս գերի է ընկնում գերմանացիներին, բայց կարողանում է պատերազմական գերիների ճամբարից փախչել եւ իր բանակային միաւորին վերադառնալ: Բայց այստեղ նրան ամբաստանում են իբր Գերմանիայի լրտես ու տասը տարի ուղղիչ ճամբարներում ազատագրկման են դատապարտում: Պիտի ասել, որ պատերազմի ժամանակ դա սովորական երեւոյթ էր: Եթէ գերի ընկած զինուորը որեւէ կերպով վերադառնում էր Խորհրդային Միութիւն, որքան էլ որ պատերազմում իր քաջութիւնն ու նուիրումը ապացուցած լինէր, անմիջապէս ձերբակալում էր՝ որպէս դաւաճան, լրտես: «Դու պէտք է քո վերջին գնդակով քեզ սպանէիր եւ թշնամու ձեռքը չընկնէիր», – տրամաբանում էր հարցաքննիչը: *Gulag Archipelago* (Արխիպելագ Գուլագ) աշխատութեան մէջ Սոլժենիցինը բացատրում է, որ զինուորի գերի ընկնելը ինքնին համարում էր «սովետական զինուորական ուժին հասցում ավերակութեան... Ըստ ստալինեան արդարադատութեան՝ այդ զինուորները տուն վերադարձին պիտի գնդակահարուէին: Դա նշանակում էր, որ տասը տարի ազատագրկումը ուղղակի «մարդկային» էր» (էջ 61): Նոյն աշխատութեան մէջ Սոլժենիցինը մէկ այլ պատճառ է տալիս, թէ ինչու սովետի նախկին գերիները պիտի ձերբակալուէին. «Ապուշն էլ կը հասկանայ .... նրանք ազատագրկում էին, որպէսզի իրենց գիտելը չվերադառնային ու Եւրոպայի մասին չպատմէին: Ինչ որ աչքը չտեսնի, սիրտը չի ուզի» (էջ 243):

ճամբարների առօրեան դարձնելու վարպետներ էին: Կալանաւորներին սովահարութեան ենթարկելու մեթոդին ակնարկելով՝ Սոլժենիցինը գրում է. «Որքան հին է, որքան նախնադարեան: Միակ նորութիւնը դրա մէջ այն էր, որ կիրարկւում էր սոցիալիստական հասարակութեան մէջ»:<sup>32</sup>

Առօրեայ չարչարանքների կողքին կար նաեւ բանտապահին վերապահուած, առանձնաշնորհեալ մի պատժամիջոց, որ նա ի գործ էր դնում, եթէ կալանաւորը իրեն չենթարկուելու նշաններ ցոյց տար: Նա կարող էր քեզ տուփի մէջ դնել: Դա մի շատ նեղ ու ցուրտ խուց էր, որ բանտարկեալները «սառնարան» անունն էին տուել, բեթոնէ յատակով, քարէ պատերով, առանց պատուհանի: Օրեր այդ խուցի մէջ անցկացնելը ուղղակի մահաբեր էր: Բարաքում ունեցածդ թեփով լցրած ներքնակն ու բարակ, կեղտոտ վերնակն անգամ չէիր կարող հետդ վերցնել: Անկողին արգիլուած էր: Ճաշաբաժինդ էլ կիսւում էր:

Հայրս մի անգամ ակնարկեց այդ խուցի ու իր կրած տաժանալից պատժի մասին: Ասում էր՝ կտուրը կաթում էր, ու սառը ջուրը կաթիլ-կաթիլ գլխիս էր կաթում, եւ ոչ մի ձեւ չկար դրանից խուսափելու: Քանի՞ օր էր մնացել այդտեղ. չասաց: Բանն այն է, որ կտուրը չէր կաթում: Սոլժենիցինը բացատրում է, որ այդ խուցի առաստաղին մի սարքաւորում էր միացւում, որից կաթիլ-կաթիլ սառը ջուր էր կաթում բանտարկեալի գանգի վրայ: «Դասական պատժամիջոց», – յարում է Սոլժենիցինը:<sup>33</sup>

Բարբարոս բանտապահի առաւելագոյն դատավճիռը շատ լուրջ օրինազանցումների պարագայում տասը օր էր: Եւ ինչպէս Իւան Դենիսովիչն է ասում.

32 Solzhenitsyn, Gulag Archipelago, էջ 115:

33 Նոյն տեղում, էջ 114: Սա Սոլժենիցինի թուած 31 պատժամիջոցների ցանկում 25-րդն է:

Եթե դատապարտուած էիր այդ խուցի մէջ տասը օր մնալու եւ եթէ կարողացել էիր լրացնել տասն օրը, նշանակում էր, որ քայքայուած ու կործանուած էիր ամբողջ կեանքիդ տնտղութեանը: Թոքախտ կը բռնէիր եւ հիւանդանոցներից դուրս չէիր գայ այլեւս: Իսկ եթէ քեզ 15 օր պահէին, արդէն մեռած ու թաղուած էիր:<sup>34</sup>

Սուրէն Յովհաննիսեանը նման մի իրադրութիւն է նկարագրում Թիֆլիսի Մետեխի բանտի մութ ու խոնաւ մի նեղ խուցում. «Այս խուցերի առաստաղից շարունակ ջուր էր կաթում: Այս խուցերում պատիժ կրող տարաբախտ կալանաւորները գրկուած էին տաք ճաշից եւ որեւէ տեսակի սանիտարական յարմարութիւնից»:<sup>35</sup>

Հետաքրքիր գուգադիպութեամբ՝ իմ ուշադրութիւնը Սուրէն Յովհաննիսեանի յուշերին նրա դատեր՝ Քնարիկ Մանեշեանի մի յօդուածը հրաւիրեց, “A Glimpse into the Life of the Armenian DPs in Europe” (Հպանցիկ հայեացք հայ DP-ների կեանքին Եւրոպայում) (*Armenian Weekly, 2016 Magazine, dedicated to the 101st anniversary of the Armenian Genocide*): Յօդուածը նկարագրում էր Բ. աշխարհամարտի արդիւնքում Սովետական Միութիւնից գաղթած/գերի ընկած ժողովրդի (DP, displaced persons, բնակափոխ անձինք) համար Գերմանիայում կազմակերպուած ճամբարների կեանքը, ուր եւ ծնուել էր ինքը: Բայց աւելի կարեւոր, Մանեշեանը ակնարկում էր այն երկար խօսակցութիւններին, որ ունեցել էր հօր հետ՝ Սիբիրի նրա տխուր անցեալի մասին: Առիթ, որ փախցրել էի ես:

1929-ին Սուրէն Յովհաննիսեանը պատկանում էր

34 Solzhenitsyn, *One Day in the Life of Ivan Denisovitch*, էջ 194:

35 Suren Oganessian, *Under Stalin's Sun: Reflections, 1920-1945* (Ստալինի արեւի տակ. Մտորումներ 1920-1945), հայերէնից թարգմանել է Ջէյմզ Թաշճեանը (Los Angeles, 1981), էջ 23: Սուրէն Յովհաննիսեանի յուշերի հայերէն բնագիրը՝ ««Երջանիկ կեանքը» ստալինեան արեւի տակ», հրատարակուել է «Հայրենիք» ամսագրում, 1966, նոյեմբերից դեկտեմբեր թուրում: Ես իմ ուսումնասիրութեան համար օգտագործել եմ անգլերէն տարբերակը:

ապստամբների երեւանեան մի գաղտնի կազմակերպութեան: Յաջորդ տարին նա ձերբակալուում է Լենինականում (Գիւմրի), երբ քաղաք է հասնում այլախոհական գաղտնի գրականութիւն բաժանելու: Նա ուղարկուում է Թիֆլիս՝ Մետեխի բանտը, մէկ տարի յետոյ՝ Տաշկենտ, եւ վերջապէս՝ Սիբիրի Զիրլախտ ճամբարը: 1935 թուի ապրիլ 17-ին, սաստիկ փոթորկոտ եղանակից օգտուելով, նա յաջողում է փախչել: Նրա յուշերում նկարագրուած է այդ վտանգներով լի ճամբան մինչեւ Գանձակ, որ այն ժամանակ Կիրովաբադ էր կոչւում (ներկայի Գեանջան Ադրբեջանում), 2200 կիլոմետր տարածութիւն՝ չորս ամսում:<sup>36</sup> Սուրէնը ապրում ու աշխատանքի է անցնում կեղծ թղթերով, մինչեւ 1942-ին Կարմիր Բանակում զինուորական ծառայութեան է կանչւում: Նա գերի է ընկնում Գերմանիայում եւ որոշ ժամանակ ստրուկի պէս աշխատում է պատերազմական գերիների ճամբարներում: Պատերազմից յետոյ կարողանում է ԽՍՀՄ վերադառնալուց խուսափել եւ մնում է գաղթականների ճամբարում մինչեւ 1952-ին իր նորակազմ ընտանիքի հետ Ամերիկա է փոխադրւում:

Սուրէն Յովհաննիսեանի յուշերը կարեւորում են այն տեսանկիւնից, որ նկարագրուածը ոչ միայն իր առօրեայ կեանքն է, այլ նաեւ տարբեր ազգութիւնների, տարբեր մտաւոր, ընկերային ու տնտեսական խաւերի պատկանող իր բանտակիցներից շատերի պատմութիւնը, նրանց ունեցած նախկին դիրքն ու պաշտօնը եւ այդ դաժան պատժին արժանի՝ գործած «յանցանքը»: Յովհաննիսեանի յուշերն էլ նոր կայծ էին՝ հօրս կեանքի պատմութեան մի անկիւնը լուսաւորող:

Խաբել, խարդախել, գողանալ, սովորական երեւոյթներ էին ճամբարում: Դրանք էին միակ միջոցը՝ անմարդկային պայմաններին դիմակայել կարողանալու համար: Հայրս

<sup>36</sup> Նոյն տեղում, էջ 77:



հաստատում էր դա: Բայց բանն այն է, որ դա ճամբարներին յատուկ երեւոյթ չէր, այլ՝ տարածուած էր ամբողջ Խորհրդային Միութիւնում, միայն ճամբարներում աւելի խտացած ու շեշտաւորուած: Ափըլբամը գրում է. «ճամբարներում, թէ դուրսը կարելի է տեսնել աշխատանքային նոյն թափափուածութիւնը, նոյն յանցաւոր բիրոկրատիան, նոյն կաշառակերութիւնը, եւ մարդկային կեանքի նկատմամբ նոյն դաժան անտարբերութիւնը»:<sup>37</sup> Աշխատանքային նորմաների մէջ խարդախութիւն անելը «տուֆտա» էր կոչուում, իսկ առանց դրան, ինչպէս Նորիլսկի կալանաւոր Լէոնիդ Թրասն է վկայում, «ոչինչ հնարաւոր չէր»:<sup>38</sup>

Հարցաքննութիւնների ընթացքում բանտարկեալին բիրտ ու անողորմ չարչարանքի ենթարկելը սովորական էր, բոլորի յուշերում նկարագրուած: Հայրս պատմում էր, թէ ինչպիսի ահաւոր պատմութիւններ է լսել ճամբարում: Բայց հետաքրքիր է, որ ինքը միշտ պնդում էր, թէ իրեն տանջելով չեն հարցաքննել: Իմ ուսումնասիրութիւնից ելնելով՝ կարող եմ ենթադրել, որ Սովետի հարցաքննիչները, որոնք իրենց հմտութեամբ եւ գազանային վերաբերմունքով, իմ կարծիքով, թուրքից պակաս չէին, դաշնակցականներին այդքան ծանր չարչարանքի չէին ենթարկում: Վալտեր Արամեանը գրում է.

Քննիչները դաշնակցականներին ծեծի չէին ենթարկում, ֆիզիքական չարչարանքների չէին դիմում. ծեծում, ջարդում էին տրոցկիստներին, աջ ու ձախ թեքում ունեցողներին: Առհասարակ, այդ ժամանակաշրջանում դաշնակցութեան հետ կապուած լարուածութիւնը խցիկում տեղի էր տալիս, որովհետեւ Վիշինսկու ասելով՝ ժողովրդի իսկական, ամենակատաղի

37 Applebaum, *GULAG*, էջ xxviii:

38 Նոյն տեղում, էջ 358: Ափըլբամի լեհ բարեկամը դիտել է տալիս. «Դու կարծում ես՝ կալանաւորներն են դա հնարել: Ամբողջ Խորհրդային Միութիւնն է տուֆտա կատարում»: Տեն նոյն տեղում, էջ xxviii:

թշնամին Տրոցկին էր եւ տրոցկիստները:<sup>39</sup>

Սա որոշ չափով գոհացուցիչ բացատրություն է, բայց կայ նաեւ այս երեւոյթի մի ուրիշ երեսը, որ դիտել տուեց Հայաստանում Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի գիտաշխատող բարեկամուհիս Գայեանէ Շագոյեանը: Ասում էր՝ բանտարկեալ հայ մտաւորականին չարչարում էին, որպէսզի խոստովանի, թէ ինքը դաշնակցական է կամ Դաշնակցութեան հետ կապեր ունի: Եթէ մարդը դաշնակցական էր, էլ ի՞նչ չարչարել: Սա էլ մասամբ ճշմարիտ պատասխան: Բայց քննիչը կարող էր չարչարանքի ենթարկել դաշնակցական կալանաւորին ցուցմունքներ տալու, գաղտնիքներ բացայայտելու: Բոլոր պարագաներում, եթէ դաշնակցականները, ասենք, ֆիզիքական չարչարանքի չէին ենթարկուում, յամենայնդէպս, նրանց վիճակը աւելի լաւ չէր: Քո եւ քո ընտանիքի ճակատագրի անորոշութեան պատճառած ցաւի վրայ գալիս էր աւելանալու հոգեկան տառապանքը, երբ քեզ ստորացնում են, քո ինքնութիւնը, քո անհատականութիւնն ու արժանապատւութիւնը, քո հաւատամքը ցեխի են քաշում, երբ ձերբակալութեանդ առաջին վայրկեանից կտրում են քո յարաբերութիւնը ընտանիքիդ հետ, աշխարհի հետ: Դեռ աւելին, առօրեայ բանտային կեանքի չարաշուք պայմանները՝ մկներով ու զգուելի միջատներով լցուած, կեղտոտ բանտախուցեր, եւ ընդհանրական խուցերի զարշահոտ պարաշան՝ բանտարկեալը իր բնական պէտքերը հենց բանտախցում, բոլորի ներկայութեամբ հոգալու համար: Այս պայմանները ստեղծող իշխանութիւնն ու նրա պաշտօնեաները բացարձակ արհամարանք էին տաժում հակայեղափոխական, ժողովրդի թշնամի ճանաչուած կին, թէ տղամարդ կալանաւորի հանդէպ: Կար նաեւ իշխանութեան

39 Արամյան, «Կովիմա», էջ 13:

տնտեսական քաղաքականությունը՝ նուազագույնի իջեցնելու բանտերին ու աշխատանքային ճամբարներին յատկացուած բիւտճէն. իսկ ձերբակալութիւնների աճող թիւը անցնում էր նոյնիսկ Ստալինի հիւանդ երեւակայութեան սահմանները: Բոլոր պարագաներում՝ արդիւնքը արդարացնում էր միջոցները: Բանտարկեալին հոգեբանական տառապանքի ենթարկելը թուլացնում էր նրա կամքը, բարոյալքում, կոտորում անմարդկային պայմաններին ու վերաբերմունքին դիմակայելու կարողութիւնը ու դիւրացնում քննիչի գործը. բանտարկեալը տեղի էր տալիս ու յանձնում:

Երկար, կրկնուող գիշերային հարցաքննութիւնների պատճառած անքնութիւնը ունակ է հոգեկան ճնշուածութիւն եւ նոյնիսկ լսողական պատրանք առաջացնել: Ես այսպիսով եմ ուզում բացատրել նաեւ Թաւրիզի ՉէԿայի նկուղային խուցում հօրս լսած աղէխարշ ճիչը: Այդ սեւ ու մութ, անպատուհան խուցի մէջ, անքուն, գիշեր ու ցերեկ իրար խառնած հայրս մի երեխայի ձայն էր լսել, որ «Պապա ջա՛ն» էր կանչում: Հաւատացել էր, որ ես եմ, կորած հօրս եմ կանչում, ու տառապել էր՝ աքսորի երկար տարիներին, այդ ճիչը սկանջին: Արդե՞՞ք լսողական պատրանք էր դա: Ըստ երեւոյթին, նման աղէտալի պայմաններում այս հոգեկան խանգարումը հազուադէպ չէ: Սուրէն Ղազարեանը յիշում է իր բանտակից Սերգէյ Բեսսոնովի պատմածը, թէ ինչպէս Մոսկուայի Բուտիրսկոյ բանտում լսել էր աղջկայ ձայնը՝ «Մամա՛, մամա՛, ես էլ եմ այստեղ»: Նա երկար ժամանակ տառապում էր՝ մտածելով, որ ձերբակալուած են նաեւ կինն ու աղջիկը: Ու Ղազարեանը եզրակացնում է. «Ո՛վ գիտէ, գուցէ լսողութեան պատրանք էր»:<sup>40</sup>

Հոգեբանական տանջանքը աւելի խոր հետեւանք ունէր, քան ծեծն ու ջարդը, խոստովանութիւն կորզելու համար՝ զինուորի

40 Ղազարյան, «Պա չպետք է կրկնվի», էջ 151:

հաստ, երկարաճիտ կօշիկների քացիները, եղունգներ քաշելը: Վահրամ Ալազանը նկարագրում է իր չարչարանքը Երեւանի ՆԿՎԴ, ՉԷԿայի բանտում, նոյն բանտում, ուր հայրս էր եղել: Նրա քննիչը՝ Եղբայր Նիկողոսեանը, որ իր լաւ բարեկամի զաւակն էր, փորձում էր չարչարելով խոստովանել տալ Ալազանին, որ օրագիր է պահում: Նա նպատակ ունէր ձեռք բերել այդ օրագիրը, գուցէ կարողանար այնտեղ Ստալինի եւ Բերիայի դէմ պարսաւանք եւ Տրոցկու գովք գտնել ու դրանով լրացնել մեղադրեալի թղթածրարը: Ալազանը ուրացել էր: Բայց անօգուտ: Նիկողոսեանը չէր խնայում նոյնիսկ հօր լաւ բարեկամին: Հրամայում է Ալազանին կանգնեցնել պատի տակ, 48 ժամ առանց հացի ու ջրի: Անդադար հարուածում են գլխին ու կրծքին: Ընթացքում, մի քանի անգամ ուշաթափում է դժբախտը ու վայր ընկնում, բայց գլխին ջուր են լցնում, զգաստացնում ու շարունակում են ծեծել: «Ահա թէ ինչ դարձրեց ստալինեան էպոխան մարդկանց: Այն միամիտ ու անմեղ երիտասարդին գազան էր դարձրել, ոչ միայն ինձ, այլեւ հարազատ հօրը նա այդպէս կը ջարդէր»:<sup>41</sup>

Իրօք որ, զագրելի են նման չարչարանքները: Բայց մի՞թէ նոյն չափ տանջալից չէին Երեւանի ՉԷԿայի բանտում անց կացուող,

41 Ալազան, «Տառապանքի ուղիներով», էջ 34: Մի քանի շաբաթ մենակեաց բանտում պահելուց յետոյ նրան ընդհանրական խուց են տեղափոխում: Այդտեղ նա ականատես է լինում իր բանտակիցների կրած տառապանքին, դրանց մէջ Գրիգոր Վարդանեանը, արեւմտահայ, ՀՕԿի (Հայաստանի Օգնութեան կոմիտէ) նախագահ: 1921-ին Երեւանում կեանքի կոչուած այս կոմիտէն իրականութեան մէջ ԽՍՀՄ վարչակարգի կամակատարն էր Սփիւռքում: 1937-ին, երբ այդ կոմիտէն այլեւս պէտք չէր Ստալինին, լուծարուեց, անդամները հրաւիրուեցին Հայաստան եւ լրտեսութեան մեղադրանքով ձերբակալուեցին:

Ալազանի բանտակիցների մէջ էր նաեւ Խմբապետ Շաւարշը՝ յեղափոխական ֆեդային, որին Եղիշէ Չարենցը «Խմբապետ Շաւարշը» վերնագրով մի բանաստեղծութիւն էր նուիրել: Ալազանը նրան յիշում է որպէս սրամիտ եւ կատակասէր մարդ, որ մի անգամ «իր ամրակուռ ձեռքը իմ ուսին դնելով, ուղիղ աչքերիս մէջ նայելով, ասաց, -Քեզ 20-30 տարի էլ որ տան, դեռ քիչ է: Ինչո՞ւ Շաւարշ ջան, հարցրի ես: -Որովհետեւ, այսքան տարի Մեր հայրենիքի եւ Մայր Արաքսի պէս ազգային մի բանաստեղծութիւն չգրեցիր: Միշտ սրանց կոխողն ու տրակտորը գովեցիր, հիմա ինձ ասա, հացդ կերա՞ր» (էջ 48):

ամբողջ գիշերը տեղող հարցաքննությունները: Վահրամ Ալազանը սարսափով է գրում այդ գիշերային հարցաքննությունների եւ բանտային ստուգումների մասին:<sup>42</sup> Հայրս յիշում է, որ երբ այդ հարցաքննություններից սոսկալի յոգնած ու դադրած իր խուցն էր վերադառնում, իրաւունք չունէր քնելու: Յերեկով քնելը արգելուած էր: Եւ եթէ ուժասպառ փլուէիր խուցում, բանտապահը քեզ կ'արթնացնէր՝ կամ դռնակից ներս մի հայիոյանք գոռալով, կամ դուռը կը բացէր ու քացով կ'արթնացնէր: Սոլժենիցինը 31 պատժամիջոցների իր ցանկում առաջինն է դասում գիշերային հարցաքննությունները, որ բանտարկեալի կամքն ու դիմադրութիւնն է կոտորում, որովհետեւ «գիշերը, քնից ընդոստ վեր թռած ու հարցաքննութեան կանչուած, չունի իր սովորական պահուածքը, ինքն իրեն տիրապետելու եւ տրամաբանելու կարողութիւնը: Այդ պայմաններում աւելի անպաշտպան եւ խոցելի է»:<sup>43</sup> Երկարաձգուած հարցաքննությունների ժամանակ անքնութիւնը հիւանդութեան է վերածւում. «Կարելի է ասել, որ անքնութիւնը տարածուած պատժամիջոց էր օրգաններում: Որպէս մէկը բազմաթիւ պատժամիջոցների, անքնութիւնն էլ դարձաւ Անվտանգութեան ծառայութիւնների մի անքակտելի մասը»:<sup>44</sup>

Տանջալից հարցաքննություններն ու կրկնուող, անիմաստ հարցումները ձեւեր էին բանտարկեալին այնքան յոգնեցնելու, որ ծնկի գայ եւ խոստովանի: Բայց ի՞նչը խոստովանի: Հայրս յիշում է, որ Երեւանի ՉէԿայի բանտում մի խոստովանագիր տուեցին ստորագրելու: Դա ընդգրկում էր հարցաքննությունների ընթացքում իր դէմ հնչած բոլոր տեսակի ամբաստանությունները: Իր տուած բացատրությունները, անմեղութիւնը ցոյց

42 Նոյն տեղում, էջ 88:

43 Solzhenitsyn, *Gulag Archipelago*, էջ 103:

44 Նոյն տեղում, էջ 112:

տուող փաստարկությունները, ամբաստանությունների իր դիմադարձությունները ոչ մի դեր չէին ունեցել եւ չէին ներառուել իր ստորագրած խոստովանագրի մէջ:

Վալտեր Արամեանի «Կոլիմա» վէպում Գրիգորի հարցաքննություն-տանջանքը Երեւանի բանտում լրիւ երեք օր տևեց.

Մի գիշեր Աթենքից ներգաղթած Գրիգորին տարան վեր՝ քննութեան: Երեք օր անց ետ բերին: Այդքան մազառատ գլխին ոչ մի մազ չէր մնացել: Լերկ մաշկի վրայ արեան չորացած հետքեր էին: Երբ ուշքի եկաւ, ասաց.

-Ծեծեցին, ստիպում էին ինչ-որ թուղթ ստորագրել: Մի օր էլ ինչ-որ սարք բերին քննիչի սենեակ, գլխիս մազերը պինդ կապեցին մի անհասկանալի առարկայից եւ վեր բարձրացրին, մինչեւ առաստաղ: Մազերս քոքահան եղան, եւ ես ընկալ յատակին: Այլեւս ոչինչ չեմ յիշում ....

Մի քանի օր անց նրան մէկ էլ տարան քննութեան եւ նա այլեւս չվերադարձաւ:<sup>45</sup>

Ինչպէս երեւում է, Գրիգորը ստորագրել էր թուղթը եւ ուղարկուել էր իր ճակատագրին՝ կա՛մ աքսոր, կա՛մ զնդակահարություն:

Սուրէն Ղազարեանի յուշերում իրար են յաջորդում իր եւ իր բանտակիցների երկարաձիգ չարչարանքով թաթախուած հարցաքննութեան տեսարանները, ու կրկնուող անհեթեթ հարցումներ՝ անհիմն եւ շինծու ամբաստանություններից բխած: Որքա՛ն նման հօրս փորձառութեան: Երանի հայրս աւելի բացուէր, աւելի պատմէր այդ հարցաքննությունների ու հետեւող անքննութեան պատճառած տառապանքի մասին: Բայց

45 Արամյան, «Կոլիմա», էջ 14-15:

միւս կողմից, ամիսներ շարունակ միայն հարցաքննութիւնների ընթացքում էր, որ նա մարդու երես էր տեսնում, խօսում էր, լսում:

Այս տաղտկալի հարցաքննութիւնները, բանտարկեալին չարչարելով խոստովանութիւն կորզելը եւ երկար ու ձիգ ամբաստանութիւնների ցանկը, որ բանտարկեալը պիտի ստորագրէր, բխում էր ՆԿՎԴ-ի մի անհասկանալի հարկադրանքից՝ նախքան բանտարկեալի ճակատագրի վերաբերեալ որոշում կայացնելը, նրա թղթածրարը պիտի լրացուէր թէկուզ սուտ փաստաթղթերով: «Տարօրինակ իրողութիւն է, որ որքան խիստ էր խորհրդային իշխանութիւնների պահանջը՝ այդ գրաւոր խոստովանագիրը անպայման ամբաստանեալի թղթածրարում ունենալ: Շատ պարագաներում բանտարկեալի ճակատագիրը արդէն որոշուած էր, բայց այդ սուտ փաստաթուղթը պիտի ստորագրուէր. եթէ պէտք էր՝ երկարատեւ չարչարանքի տակ»:<sup>46</sup>

Դատական համակարգերում ընկալեալ գործընթացը ենթադրում է, որ «խոստովանութիւնը» արձանագրուելուց եւ «մեղադրական ակտը» կազմուելուց յետոյ գործը դատարանին յանձնուի: Բայց ստալինեան բռնատիրական վարչակարգի ժամանակաշրջանում այդ վերջին փուլը զեղչուած էր: Որոշ պարագաներում բանտարկեալի ճակատագիրը հէնց հարցաքննիչն էր որոշում: Այլապէս՝ դատավարութիւնը տեղի էր ունենում ամբաստանեալի բացակայութեանը, շատ անգամ՝ Մոսկուայում, Տրոյկայի միջոցով, ինչպէս հօրս դէպքում, եւ վճիռը լինում էր կան անմիջապէս գնդակահարութիւն, կան աքսոր դէպի Սիբիրի աշխատանքային ճամբարներ: Հայրս զարմանքով էր իմացել, որ իր գործը Մոսկուա է ուղարկուած եւ դատավճիռը կայացուած՝ առանց իր ներկայութեան: Երեւի մտածել էր, որ իր պարագան բացառութիւն էր: Բայց դա ընդհանրացած երեւոյթ

46 Hosford եւ այլք, *GULAG*, էջ 18:

էր, ինչպէս Սոլժենիցինն է բացատրում, «Տրոյկան՝ փակ դռների ետեւում գործող երեքի յանձնաժողովը, կեանքի էր կոչուած դատարանները մշտապէս շրջանցելու համար»:<sup>47</sup> Սոլժենիցինը նոյնիսկ բացայայտում էր 1945-ին Մոսկուայում գործող Տրոյկայի անունները: Դա նոյն տարին էր, երբ հէնց Մոսկուայում հօրս դատավճիռն էր կայացւում: Նոյնե՛րն էին. Գլեր Բոքի, Վուլ եւ Վասիլէւ: Դրանց գրչի անտարբեր շարժո՛ւմն էր հօրս եւ մեր ընտանիքի աղէտալի ճակատագիրը սահմանել:

Եւ այսպէս, իմ յիշողութեան մէջ դրոշմուած հօրս պատմած դրուագները գալիս են միախառնուելու իմ ուսումնասիրութիւնների արդիւնքում ձեռք բերած տեղեկութիւններին՝ լրացնելու համար հօրս կեանքի պատմութիւնը, նրա անողոք ու անզիջում պայքարը անարդարութեան դէմ:

---

47 Solzhenitsyn, Gulag Archipelago, էջ 281:



# ჩხრეკის ოქმი ПРОТОКОЛ ОБЫСКА

ქალ. ნაბრის „3“ ნოვემბრ თვე 1944 წ.  
 გორ. სტ. ინჟინერ-მშენებლის ОКР სივნი 15-ე კვ. სუფიანაძე  
 შსს ორგანოს დასახელება და თანამშრომლის გვარი — наименование органа НКВД и фамилия сотрудника

ანახმად ორდერისა № \_\_\_\_\_ ოთ „\_\_\_\_“ \_\_\_\_\_ თვე 19\_\_\_\_ წ.  
 დაფუძნებული ორდერისა \_\_\_\_\_  
 დასაფუძნებელი სტ. лейтенанта Маивани и ст. сержанта Киселидзе  
 დასაფუძნებელი პირთა გვარები, სახელები, მამის სახელები და მართები,  
 фамилии, имена, отчества и адреса понятых лиц,

როგორცავე უკვეთი შენობა შენობების — занимающих данное помещение или его домашних

გაბეჭდილებული რა საბ. სსრ საბრ. კოდ. დრ. წესების \_\_\_\_\_ მუხ. მოვალდებუნი გახსნის  
 руководствуясь ст. ст. \_\_\_\_\_ врем. правил УПБ ГССР

შეიძინა Мужик სახლი № \_\_\_\_\_ ბინა № \_\_\_\_\_  
 произвел обыск в доме кв.

ქალაქი \_\_\_\_\_  
 ად. უკ.

დაკავებული თანახმად ორდერისა Михасян Багдик Хатагурович  
 согласно ордера задержан \_\_\_\_\_  
 (доктор) \_\_\_\_\_  
 გვარი, სახელი და მამის სახელი — фамилия, имя и отчество

ანხრეკისას ამოღებული იქნა შემდეგი:  
 Изъято при обыске следующее:

1. Записные. Карманные книжки — 2 штук.
2. Разные документы и переписка — 14 штук.
3. Газета „Исабер“ на арм. языке № 188 от 10/XI 43г.
4. Газета „Айрени“ на арм. языке № 19387 от 23/III 43г.

«საოქრობის არდასაფუძნის» ქადასაქოქი ათაჟინ ღო  
 ღრაგოად ღ ღერქასაქოქისან როაქტინ მარამასკან საოქრობისან რნაგვოინ

АРМЯНСКАЯ ССР

Народный Комиссариат Внутренних Дел. Управление Государственной Безопасности

Протокол-допроса

И делу № \_\_\_\_\_

1944 г. 21 октября мес. 8 дня. Я, Трунц И.Н. (должность, наимен. орган, фамилия)

Трунц И.Н. допросил в качестве Секретаря

1. Фамилия Рубинштейн

2. Имя и отчество Рубинштейн (Рубинштейн) Рубинштейн

3. Дата рождения 1902 г.

4. Место рождения Город Рубинштейн (Рубинштейн)

5. Место жительства Город Рубинштейн (Рубинштейн) Город Рубинштейн

6. Нац. и гражд. (подданство) Рубинштейн Рубинштейн Рубинштейн

7. Паспорт \_\_\_\_\_  
(когда и каким органом выдан, номер, кат. и место приписки)

8. Род занятий Рубинштейн Рубинштейн Рубинштейн  
(место службы и должность)

9. Социальное происхождение Рубинштейн  
(род занятий родителей и их имущественное положение)

10. Социальное положение (род занятий и имущественное положение)

а) до революции \_\_\_\_\_

б) после революции \_\_\_\_\_

11. Состав семьи Рубинштейн (Рубинштейн) Рубинштейн (Рубинштейн) Рубинштейн  
(близкие родственники, их имена, фамилии, адреса и род занятий)

30 человек Рубинштейн Рубинштейн Рубинштейн Рубинштейн Рубинштейн

Рубинштейн Рубинштейн Рубинштейн Рубинштейн Рубинштейн Рубинштейн Рубинштейн Рубинштейн Рубинштейн Рубинштейн

Рубинштейн Рубинштейн Рубинштейн Рубинштейн Рубинштейн Рубинштейн Рубинштейн Рубинштейн Рубинштейн Рубинштейн

Рубинштейн Рубинштейн Рубинштейн Рубинштейн Рубинштейн Рубинштейн Рубинштейн Рубинштейн Рубинштейн Рубинштейн

Երևանի ՉԷԿայի բանտում առաջին հարցաքննության 7-էջանոց արձանագրության առաջին էջը

# 14. СОСТАВ СЕМЬИ

| Степень<br>родства | Фамилия, имя и отчество     | Год<br>рожде-<br>ния | Место<br>рождения                                  | Место жительства,<br>работы и должность |
|--------------------|-----------------------------|----------------------|----------------------------------------------------|-----------------------------------------|
| Отец               | Микаел Хачатур Вага         | 1870                 | с. Ога<br>Кагара                                   | умер 6/1910.                            |
| Мать               | Микаел Эгисани              | 1875                 | —                                                  | умер 1939.                              |
| Жена<br>(муж)      | Микаел Французен<br>Эгисани | 1910                 | г. Казань, г. Тавриз<br>(Иран) — в настоящее время |                                         |
| Дети               | Микаел Рудина               | 1936                 | Тавриз                                             | Тавриз                                  |
|                    | — Рудан                     | 1940                 | —                                                  | —                                       |
|                    | — Вадим (Вадимов<br>сестра) | 1929                 | Кагара                                             | Тавриз (в настоящее время)              |
| Братья,<br>сестры  | Микаел Ваагн Хачатур        | 1904                 | с. Ога<br>Кагара                                   | Тавриз, ранее<br>Иран                   |
|                    | Кагари Микаел Хачатур       | 1899                 | —                                                  | Тегран — в настоящее время              |
|                    | Вагари Сирак Хачатур        | 1907                 | —                                                  | — — в настоящее время                   |

Место для фотокарточки



Отпечаток указательного  
пальца правой руки

(при отсутствии его последующего  
пальца — с соответствующей помет-  
кой). Пальцевый узор должен быть  
ясным и полностью прокатанным  
(от одной кромки ногтя до другой)




Личная подпись  
(арестованного)

*Handwritten signature*

Վեց ամիս բանտարկությունից յետոյ արձանագրուած «Կալանաւորի հարցաթերթ»ի վերջին էջը  
ամբաստանեալի նկարով, մատնահետքով եւ ստորագրութեամբ





Ամբաստանեալ Բաղդասար Մինասեան



13 July 1933. St. Ignace.

for the purpose of 'charity'.

let those people who have the  
of such of our wages for doing  
of ourselves, or possibly the  
people of, or with ourselves - to get a  
little to be able to live more  
better of the city.

[illegible]

Hierzu fügen Sie ein Stk. so zu net,  
7 mangelnde Sätze in aus was  
Sätze fügen, so ist das best.  
Verrath und nicht

Aphana, 21. Sept. 1945.  
 Beschreibung eines p. y. b. b.  
 1. 2. 3. 4. 5. 6. 7. 8. 9. 10. 11. 12. 13. 14. 15. 16. 17. 18. 19. 20. 21. 22. 23. 24. 25. 26. 27. 28. 29. 30. 31. 32. 33. 34. 35. 36. 37. 38. 39. 40. 41. 42. 43. 44. 45. 46. 47. 48. 49. 50. 51. 52. 53. 54. 55. 56. 57. 58. 59. 60. 61. 62. 63. 64. 65. 66. 67. 68. 69. 70. 71. 72. 73. 74. 75. 76. 77. 78. 79. 80. 81. 82. 83. 84. 85. 86. 87. 88. 89. 90. 91. 92. 93. 94. 95. 96. 97. 98. 99. 100. 101. 102. 103. 104. 105. 106. 107. 108. 109. 110. 111. 112. 113. 114. 115. 116. 117. 118. 119. 120. 121. 122. 123. 124. 125. 126. 127. 128. 129. 130. 131. 132. 133. 134. 135. 136. 137. 138. 139. 140. 141. 142. 143. 144. 145. 146. 147. 148. 149. 150. 151. 152. 153. 154. 155. 156. 157. 158. 159. 160. 161. 162. 163. 164. 165. 166. 167. 168. 169. 170. 171. 172. 173. 174. 175. 176. 177. 178. 179. 180. 181. 182. 183. 184. 185. 186. 187. 188. 189. 190. 191. 192. 193. 194. 195. 196. 197. 198. 199. 200. 201. 202. 203. 204. 205. 206. 207. 208. 209. 210. 211. 212. 213. 214. 215. 216. 217. 218. 219. 220. 221. 222. 223. 224. 225. 226. 227. 228. 229. 230. 231. 232. 233. 234. 235. 236. 237. 238. 239. 240. 241. 242. 243. 244. 245. 246. 247. 248. 249. 250. 251. 252. 253. 254. 255. 256. 257. 258. 259. 260. 261. 262. 263. 264. 265. 266. 267. 268. 269. 270. 271. 272. 273. 274. 275. 276. 277. 278. 279. 280. 281. 282. 283. 284. 285. 286. 287. 288. 289. 290. 291. 292. 293. 294. 295. 296. 297. 298. 299. 300. 301. 302. 303. 304. 305. 306. 307. 308. 309. 310. 311. 312. 313. 314. 315. 316. 317. 318. 319. 320. 321. 322. 323. 324. 325. 326. 327. 328. 329. 330. 331. 332. 333. 334. 335. 336. 337. 338. 339. 340. 341. 342. 343. 344. 345. 346. 347. 348. 349. 350. 351. 352. 353. 354. 355. 356. 357. 358. 359. 360. 361. 362. 363. 364. 365. 366. 367. 368. 369. 370. 371. 372. 373. 374. 375. 376. 377. 378. 379. 380. 381. 382. 383. 384. 385. 386. 387. 388. 389. 390. 391. 392. 393. 394. 395. 396. 397. 398. 399. 400. 401. 402. 403. 404. 405. 406. 407. 408. 409. 410. 411. 412. 413. 414. 415. 416. 417. 418. 419. 420. 421. 422. 423. 424. 425. 426. 427. 428. 429. 430. 431. 432. 433. 434. 435. 436. 437. 438. 439. 440. 441. 442. 443. 444. 445. 446. 447. 448. 449. 450. 451. 452. 453. 454. 455. 456. 457. 458. 459. 460. 461. 462. 463. 464. 465. 466. 467. 468. 469. 470. 471. 472. 473. 474. 475. 476. 477. 478. 479. 480. 481. 482. 483. 484. 485. 486. 487. 488. 489. 490. 491. 492. 493. 494. 495. 496. 497. 498. 499. 500. 501. 502. 503. 504. 505. 506. 507. 508. 509. 510. 511. 512. 513. 514. 515. 516. 517. 518. 519. 520. 521. 522. 523. 524. 525. 526. 527. 528. 529. 530. 531. 532. 533. 534. 535. 536. 537. 538. 539. 540. 541. 542. 543. 544. 545. 546. 547. 548. 549. 550. 551. 552. 553. 554. 555. 556. 557. 558. 559. 560. 561. 562. 563. 564. 565. 566. 567. 568. 569. 570. 571. 572. 573. 574. 575. 576. 577. 578. 579. 580. 581. 582. 583. 584. 585. 586. 587. 588. 589. 590. 591. 592. 593. 594. 595. 596. 597. 598. 599. 600. 601. 602. 603. 604. 605. 606. 607. 608. 609. 610. 611. 612. 613. 614. 615. 616. 617. 618. 619. 620. 621. 622. 623. 624. 625. 626. 627. 628. 629. 630. 631. 632. 633. 634. 635. 636. 637. 638. 639. 640. 641. 642. 643. 644. 645. 646. 647. 648. 649. 650. 651. 652. 653. 654. 655. 656. 657. 658. 659. 660. 661. 662. 663. 664. 665. 666. 667. 668. 669. 670. 671. 672. 673. 674. 675. 676. 677. 678. 679. 680. 681. 682. 683. 684. 685. 686. 687. 688. 689. 690. 691. 692. 693. 694. 695. 696. 697. 698. 699. 700. 701. 702. 703. 704. 705. 706. 707. 708. 709. 710. 711. 712. 713. 714. 715. 716. 717. 718. 719. 720. 721. 722. 723. 724. 725. 726. 727. 728. 729. 730. 731. 732. 733. 734. 735. 736. 737. 738. 739. 740. 741. 742. 743. 744. 745. 746. 747. 748. 749. 750. 751. 752. 753. 754. 755. 756. 757. 758. 759. 760. 761. 762. 763. 764. 765. 766. 767. 768. 769. 770. 771. 772. 773. 774. 775. 776. 777. 778. 779. 780. 781. 782. 783. 784. 785. 786. 787. 788. 789. 790. 791. 792. 793. 794. 795. 796. 797. 798. 799. 800. 801. 802. 803. 804. 805. 806. 807. 808. 809. 810. 811. 812. 813. 814. 815. 816. 817. 818. 819. 820. 821. 822. 823. 824. 825. 826. 827. 828. 829. 830. 831. 832. 833.

Բաշկաւս էր Լուսաւորաւս 41  
 Իրաքաւս իջի:  
 Կոչոյրաւորաւս Զաւթաւս էր  
 Կարօր Բաւաւս-Դաւթաւս Կոչոյր  
 Կէշ Կ, Զիւրաւորաւս Կէշ Կոչ  
 Զոյաւորաւս, Զիւրաւս Զոչաւորաւս  
 Երբ:  
 Երբ Կէշ Կոչոյրաւս, ոչ Զաւ  
 Զաւաւս Կոչ Կոչի, ինչ Զաւ  
 Կոչի Զոչ Կոչաւորաւս Զ  
 Կոչի Կոչ Կոչաւորաւս,  
 Կոչ Զաւաւս Կոչաւորաւս Կոչ  
 Կոչ Զաւաւս Կոչի Կոչաւորաւս  
 Կոչ:  
 Կոչ Կոչ Զաւաւս Կոչաւորաւս  
 Կոչաւորաւս Կոչաւորաւս  
 Կոչ Կոչ Զաւաւս Կոչաւորաւս, Կոչ  
 Կոչաւորաւս Կոչաւորաւս:  
 Կոչաւորաւս Կոչ Կոչաւորաւս Կ  
 Կոչաւորաւս Կոչաւորաւս Կոչաւորաւս,  
 Կոչաւորաւս Կոչաւորաւս, Կոչաւորաւս,  
 Կոչ Կոչաւորաւս Կոչ Կոչաւորաւս

Հօրս ձեռագրի կրած փոփոխությունները  
Վերը՝ Փառանձեմին գրած նամակից, 1933

Նեկեքեի աջում՝ Մի էջ իր դէմ արձակուած դատաւճռի դէմ գրած բողոք-նամակից, 1945, աւելի քան 14 ամիս բանտարկութիւնից յետոյ

ՆԱԽԵՄԻ ԺԱՄԽՈՒՄ՝ ՇՈՒՐՑ 11 տարի աքսորից վերադարձից յետոյ

Գլուխ 6

## ԳՈՒԼԱԳԻ ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ԼՈՒՍԱԴՈՐԵԼ ՀՕՐՍ ԿԵԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄՈՒԹ ԱՆԿԻՒՆՆԵՐԸ

Նորիլսկ: Անն Ափըլբամը այն անուանում է նոր սերնդի աշխատանքային ճամբարներից ամենից զարհուրելին, որտեղ կալանաւորները,

ոչ միայն նիկել պեղեցին, այլ նաեւ կառուցեցին հանքանիւթը մշակելու գործարանը եւ հանքերին զուգահեռ ելեկտրակայանը: Յետոյ Նորիլսկ քաղաքը կառուցեցին, ուր հանքերն ու գործարանները կառավարող ՆԿՎՂ-ականները պիտի ապրէին.... Մինչեւ 1940 թ. կալանաւորների թիւը ճամբարներում 19.500 էր, որ առաւելագոյնի հասաւ 1952-ին՝ 68.849 կալանաւորներով:<sup>1</sup>

Հաշուարկուած է, որ Միբիրի հարուստ հանքերը ամենաշահաւէտ կերպով օգտագործման դնելու համար աշխատանքի են լծուել շուրջ 500.000 կալանաւորներ, ովքեր

---

1 Applebaum, *GULAG*, էջ 113:

ստորուկի պէս ճգնելով՝ Գուլագի աշխատանքային ճամբարներն ու հանքարդիւնաբերութեան զարգացման համալիրներն են կառուցել: Դա սովետական փլուզումը տնտեսութիւնը վերականգնելու Ստալինի փայլուն գաղափարն էր՝ անհրաժեշտ ենթակառուցող կանգնեցնելու համար գործի դնել փորձ ու անփորձ, նոյնիսկ բանուորական աշխատանքից շատ հեռու կալանաւորներին: Կիրարկուած մեթոդը որքա՞նով էր արդիւնաւէտ եղել: Արդեօ՞ք բռնութեամբ շահագործուած աշխատանքը կարողացել էր փրկել սովետական տնտեսութիւնը: Կարելի է ասել՝ որոշ չափով, որովհետեւ սովետական իշխանութիւնը այդ հիւժուած, կիսաքաղց մարդկային էակներին աշխատանքի էր լծել առանց վարձատրելու, ամենանուագագոյն ծախքով՝ ոչ բաւարար սնունդ եւ անողոր կլիմային ոչ յարմար, անբաւարար հագուստեղէն, աշխատանքի երկար ժամեր եւ դժնդակ պայմաններ, այսինքն՝ ազատ աշխարհի համար անընդունելի իրավիճակ: Այդ «բանուորների» կեանքը կախում էր բանտապահի քմայքից: Նա կարող էր ուզած պահին, արժանի կամ ոչ, մի յաւելեալ պատիժ նշանակել ու կալանաւորի դժոխային կեանքը աւելի զարհուրելի դարձնել: Հայրս մէկն էր այդ բազմահազար դժբախտներից, որոնցից շատերը չկարողացան դիմանալ դժոխային պայմաններին, մարեցին՝ առանց ազատութեան լուսաբացը տեսնելու:

Այն օրերին, երբ այս գրքի անգլերէն բնագրի վրայ էի աշխատում, Հայաստանում պատմաբան գործակից ընկերներից՝ Յարութիւն Մարութեանից իմացայ, որ Նորիլսկի բանտային ճամբարների նախագիծը պատկանում է Մագմանեան ազգանունով մի հայ ճարտարապետի: Ասացին՝ զարմանալու բան չկայ. բոլոր ճամբարների ու շրջապատի կառուցապատման պլանաւորումն ու նախագիծն այդ կողմերն աքսորուած մասնագէտ կալանաւորների գործն է: Այս հայ ճարտարապետի մասին հետաքրքրութիւնս ինձ «Հայկական Սովետական



Հանրագիտարան» տարաւ: 7-րդ հատորում գտայ նրան՝ Միքայել Մազմանեան, 1899-ին Թիֆլիսում ծնուած: Մահացել է Երեւանում 1971 թուականին: Նորիլսկի նախագիծը հպանցիկ յիշուած է նրա ստեղծագործությունների շարքին: Ինչ որ ծիծաղելի թուաց ինձ, նրա կեանքի զանազան փուլերի թուարկումն էր: 1930-1935 նրա՝ Երեւանի Շինարարական Ինստիտուտի ղեկավարի պաշտօնը նշելուց յետոյ տեղեկություն չկայ մինչեւ 1954: Այդ թուականից սկսել է ղեկավարել Երքադսովետի Գործկոմի ճարտ. Յատակագծային Արուեստանոցը: Չի յիշուած, թէ այդ բացակայ տարիներին Մազմանեանը, ստալինեան մաքրագործումների գոհ, Միքիրում էր անցկացնում: Ինչպէս երեւում է, Ստալինի մահից յետոյ ազատուել ու հայրենիք է վերադարձել: Ի՞նչ կարելի է ասել. դա էր խորհրդահայ պատմագրությունը:

Վերջերս ստեղծուած հետաքրքրութեան եւ կատարուած ուսումնասիրությունների բարիքների մասին դարձեալ իմ ուշադրությունը հրաւիրեց Յարութիւն Մարութեանը՝ ուղարկելով MediaMax-ի (Մեդիամաքս) փետրուար 12, 2015 թ. հարցազրոյցը Մազմանեանի թոռնուհի Լիլիթ Տէր-Մինասեանի հետ:<sup>2</sup>

Կառուցապատման շարունակական ծրագրեր էին իրագործում Նորիլսկում՝ նորանոր բարաքներ եւ ճամբարային կառոյցներ, բնակելի շէնքեր եւ ակումբներ «ազատ» գործաւորների

2 Աննա Բուբուշյան, «Մազմանյանի նամակը Նորիլսկից», <https://mediamax.am/am/news/pahoc/13166/>

Ըստ այս աղբիւրի ճարտարապետ Միքայել Մազմանեանը 1939 թուականին ձերբակալուել է անհիմն մեղադրանքներով եւ իբր «նացիոնալիզմի եւ տրոցկիստաբոլխարիներէն խմբին անդամակցելու համար» (ասում են Եղիշէ Չանենցի հետ նրա մտերմութիւնը կարեւոր գործօն է եղել): Նրան աքսորել են Նորիլսկ, որտեղ մնացել է 18 տարի: Նորիլսկում Միքայել Մազմանեանը եւ իր հետ աքսորուած Գեորգ Քոչարը ստեղծել են Նորիլսկի եւ Դուդինկայի գլխաւոր յատակագծերը: 1951 թուականին նրան յաջողուել է կազմակերպել կնոջ՝ հանրապետութեան վաստակաւոր արտիստուհի Վարդուշ Ստեփանեանի մէկ ամսեայ ճամբորդութիւնը Նորիլսկ: Մօրը ընկերակցել է նրանց կրտսեր աղջիկը Ռուզանը, ով 3 տարեկան էր եղել երբ հօրը ձերբակալել են եւ հօրից ոչինչ չէր յիշում (որքան նման իմ քոյր Ռուզանին): Ստալինի մահից յետոյ Մազմանեանը վերադարձել է Երեւան:

համար: Բայց շինարարական գործիքներն ու սարքաւորումները այնքան հնաոճ ու նախնական էին: Սովորական բահեր՝ սառոյց կապած հողը փորելու, ձեռնասայլակ՝ աղիւս եւ այլ շինանիւթ տեղափոխելու (Նորիլսկում աղիւսի գործարան է եղել), դոյլ կամ կողով՝ շինանիւթը ելարանով վեր քաշելու համար: Հայրս այս շինհրապարակներում բանուորութիւն էր անում: Արդեօք հանդիպե՞լ է ճարտարապետ Միքայէլ Մազմանեանին:

Հայրս պատմում էր Նորիլսկի դաժան կլիմայի մասին, սոսկալի խիստ ձմեռներ՝ զերոյից շատ ցածր ջերմաստիճանով, եւ թէ ինչպէս կալանաւորներին պարտադրում էին աշխատել այդ ահռելի պայմաններում առանց բաւարար տաք հագուստի եւ կօշիկի: Փորձեցի Նորիլսկի մասին տեղեկութիւն գտնել համացանցում: Արդիւնքը սարսափազդու էր: Wikipedia-ն՝ առաջին կայքը, որին սովորաբար դիմում ես պարզ հարցերի մասին տեղեկութիւն քաղելու համար, գրում է. «Հաւանաբար ամենից սոսկալի ճամբարային համալիրները կառուցուել էին Բելեռային գօտու հիւսիսում՝ Կոլիմայում, Նորիլսկում եւ Վորկուտայում: Խորհրդային Միութեան ճամբարներում կալանաւորները աշխատում ու մեռնում էին....»: Համացանցում գտածս մէկ այլ յօդուածում՝ “Life in the Freezer” («Կեանքը սառցարանում»), հեղինակը բացատրում է. «Տարուայ երկու ամիսը քաղաքը բելեռային գիշերի մէջ է ընկղմուած, 24 ժամ մութ է: Իսկ ամառը 24 ժամ լոյս է լինում: Յօդուածի հեղինակ ֆոտոլրագրող Քարոլայն ՄըքԳուայը (Caroline McGuire) նկարագրում է իր կեցութիւնը այդ քաղաքում՝ 250 մայլ (400 կիլոմետր) Բելեռային գօտուց դէպի հիւսիս:<sup>3</sup> Ըստ հեղինակի՝ տարուայ միջին ջերմաստիճանը

3 Caroline McGuire, “Life in the Freezer: Inside the northernmost city on earth whose residents endure -55°C temperatures and two months of total darkness every year” («Կեանքը սառցարանում՝ երկրագնդի ամենից հիւսիսային քաղաքում, որի բնակիչները տոկում են -55 ցրտին եւ տարեկան երկու ամիս բացարձակ մթանը»), Daily Mail (Լոնդոն), յունուար 26, 2016, թիւ 3:

մինուս 10 սանտիգրադ է:<sup>4</sup> Քաղաքը տարին 130 օր ձիւնամրրիկի մէջ է, երկու ամիս՝ բեւեռային գիշերուայ բացարձակ մութի մէջ, եւ ամառը՝ լոյս ամբողջ 24 ժամ: Այս երեւոյթն իր բացասական ազդեցութիւնն է թողնում բնակիչների ֆիզիքական եւ հոգեկան առողջութեան վրայ, պատճառ է դառնում անհանգստութեան, նեարդայնութեան, քնկոտութեան եւ անքնութեան: Եւ դա polar night syndrome (բեւեռային գիշերի ախտանիշ) է կոչում:

«Յուշագրողներ, բանաստեղծներ եւ վիպագիրներ փորձել են նկարագրել, թէ ինչ է նշանակում ցուրտ-սառնամանիքի մէջ աշխատել», գրում է Ափրլբամը եւ Եանուս Բարդաք (Janusz Bardach) անունով մի վերապրողի բառերով այսպէս է նկարագրում, «եթէ մերկ ձեռքով մետաղի դիպչէիր, կաշիդ կը պոկուէր: Պետքարան գնալը վտանգաւոր էր, եւ եթէ փորհարութիւն ունենայիր, կարող էիր ձիւնի մէջ թաղուել ու մնալ»: Բարաքներում էլ այդքան տաք չէր: Քազիմիրզ Ջարոդը (Kazimierz Zarod) յիշում է մի առաւօտ, որ արթնացել ու չի կարողացել գլուխը բարձրացնել: Մի կտոր լաթը, որով գլուխն ու ականջներն էր փաթաթել, սառոյց էր կտրել ու կպել էր մահճակալի փայտէ յատակին:<sup>5</sup>

ՄըքԳուայրը նշում է, որ Նորիլսկը շրջակայ բնակավայրերին միացնող ցամաքային ճանապարհներ չունի: Ստալինի օրօք դէպի Նորիլսկ ճանապարհը այնքան վտանգաւոր էր, որ «մահուան ճամբայ» էր կոչում: Կրասնոյարսկի տարանցիկ կայանում հաւաքուած կալանաւորներին Ենիսէյ գետի վրայով նաւերով փոխադրում էին մինչեւ Դուդինկա (շուրջ 7 օր տեւող ճամբորդութիւն), այնտեղից էլ՝ գնացքով մինչեւ Նորիլսկի

4 Միջին ջերմութիւնը բարձր է, որովհետեւ ամառը, չնայած կարճ, բայց ջերմութիւնը կարող է մինչեւ 30 աստիճան հասնել: Դարձեալ ըստ ՄըքԳուայրի՝ ամառը, չնայած փրկութիւն է սաստիկ ձմեռների սառնամանիքից յետոյ, բայց մոծակների յարձակումը եւ ամենուրեք խորը ցեխի մէջ քայլելու դժուարութիւնը ամառները դարձնում են նոյն չափով անտանելի:

5 Applebaum, *GULAG*, էջ 223:

մօտակայքը, ապա՝ ոտքով մինչեւ ճամբար: Նորիլսկի ճամբարային համալիրը, որ Նորիլագ էր կոչում, գործել է 1935 թ. յունիս 25-ից սկսած եւ փակուել է 1956 թ. օգոստոս 22-ին: Ասում է, թե այդ ժամանակաշրջանում շուրջ 400.000 կալանաւորներ են անցել այդ տխրահռչակ ճամբարային համալիրից, որոնցից 300.000-ը քաղաքական բանտարկեալներ են եղել:

Genocide, A Comprehensive Introduction (Ցեղասպանութիւն. Մանրամասն ծանօթացում) աշխատութեան մէջ, Ադամ Ջոնզը (Adam Jones) Ադամ Հոբսայլդից (Adam Hochschild) եւ Լէօ Բուփրիից (Leo Kuper) յաջորդաբար մէջբերումներ կատարելով, Բելենային գօտուց հիւսիս գտնուող երեք ճամբարային համալիրների մասին գրում է.

Կոլիմայում զոհուած կալանաւորների թիւը քառորդ միլիոնից մէկ միլիոն է գնահատուում. այսօր ցանցառ բնակչութեամբ այդ շրջանում «սառած հողում փորուած ծանծաղ զանգուածային գերեզմաններում թաղուած կալանաւորների կմախքների թիւը գերազանցում է ապրողների թւին»: Ռուսների պատմական յիշողութեան վրայ քանդակուած մէկ այլ անուն՝ Նորիլսկն է, որ «կենտրոնն է աշխատանքային մի քանի ճամբարների եւ Կոլիմայից աւելի մահաբեր է»: Կայ նաեւ Վորկուտան՝ իր սոսկալի ռեժիմով. նացիստական ճամբարների պէս «հիւծող», «սովամահ» անող:<sup>6</sup>

Հայրս նպատակ ուներ գրել Նորիլագը բնորոշող այդ իւրայատուկ երեւոյթների մասին եւ թէ ինչպէս էին աշխարհի այս ծայրամասում, աշխարհից կտրուած ու մարդկութեան կողմից մոռացուած կալանաւորները եւ «ազատ» բնակիչները դիմակայում այդ պայմաններին: Նա վկան էր եղել այդ բոլորի, իսկ ես՝ միայն մի ուսումնասիրող, որ այդ դժոխային ճամբարը

6 Adam Jones, *Genocide, A Comprehensive Introduction* (Ցեղասպանութիւն. Մանրամասն ծանօթացում) (London and New York: Routledge, 2006), էջ 129:

պատկերացնելու եւ արձանագրելու համար իմ հօր եւ ուրիշների փորձառութեան վրայ պիտի յենուեմ: Կարո՞ղ եմ, արդեօք, տալ ամբողջական պատկերը այդ զագրելի իրականութեան:

Սովժենիցինի Իւան Դենիսովիչը վկայում է, թէ ինչպէս կալանաւորները պարտաւոր էին աշխատել նոյնիսկ եթէ դուրսը սառնոյց էր, ձիւն ու փոթորիկ: Ասում է՝ աղիւս շարելիս պիտի արագ աշխատէին, որպէսզի շաղախը չսառչէր եւ անգործածելի չդառնար: Դաժան է, անմարդկային, բայց այդ ցրտում պիտի շարժուէին արագ, աշխատէին արագ, թէկուզ եթէ մատները սառած էին, ձեռնոցները չէին պաշտպանում, թէկուզ եթէ կօշիկները այնքան հին էին ու պատառոտուած, որ ձիւնը անարգել մատների արանքն էր մտնում: Պիտի շարժուէին, եթէ չէին ուզում փետանալ, սառչել, ընկնել ու մեռնել: Միայն այն օրերին, երբ ջերմաստիճանը 50-ից էլ ցած էր իջնում եւ բուքն ու բորանը աջքերը կուրացնում էին, ու ոչինչ չէր երեւում, կալանաւորներին իրաւունք էր տրուում ներսում մնալ: Դա մեծ բարիք էր: Նախ՝ որ նման եղանակներին փոխադրական միջոցներն էլ չէին աշխատում եւ ուրեմն ուտեստ չէր հասնում ճամբար եւ խոհանոցը չէր մատակարարում: Բացի այդ, ներսում կալանաւորներին զանազան գործերի էին լծում ու կիրակին էլ աշխատեցնում էին՝ «չաշխատած» օրուայ փոխարէնը հանելու: Իրողութեան մէջ, աշխատանքի ծանրութիւնն ու աշխատանքային օրուայ երկարութիւնը բանտապետի կամ ճամբարի վարչութեան ողորմութիւնից էր կախուած: Որոշ ճամբարներում աշխատանքի ժամերը եղել են օրը 11 ժամ եւ ամսուայ մէջ միայն երեք օր ազատ:

Տաք հագուստեղէնն ու կօշիկները բեւեռային ցրտի պայմաններում դաշտային աշխատանքի համար առաջնահերթ անհրաժեշտութիւններ էին: Ճամբարներում կալանաւորին յատկացուածները բաւարար չէին: Կօշիկներն էլ, որ քիչ դէպքում էին ճիշտ ոտքի չափով, մեծ մասամբ թաղիքից էին կարուած, թրջում էին ու սառնոյց կապում: Միայն տնից ուղարկուածները

տաք էին ու հանգիստ: Դա էլ հագուադէպ էր՝ եթէ բանտարկեալը ընտանիք ունէր, եթէ ընտանիքը միջոցներ ունէր, եթէ ընտանիքը համարձակութիւնն ունեցել էր բանտարկեալի հետ կապ պահել, չուրանալ նրան, ինչպէս լինում էր յաճախ: Նման իրավիճակում մէկը միւսից կօշիկ եւ հագուստ գողանալը սովորական երեւոյթ էր բարաքում:

Իւան Դենիսովիչը ութ տարի էր անցկացրել այդ ահռելի պայմաններում: Գոյութիւնը քարշ տալու ձեւը գտել էր՝ մանր-մունր ծառայութիւններ՝ ի դիմաց վարձատրութեան. օրինակ՝ մի կալանաւորի փոխարէն երկար ժամեր դրսի ցրտում շարքի մէջ կանգնել, կամ տնից ստացած նրա ծանրոցի վրայ հսկել, որ ուրիշները չգողանան: Ամէն տեսակի ծառայութիւն՝ մի ծխախոտ, մի կտոր երշիկ ստանալու յոյսով: Պարզապէս անկարելի էր բանտային օրապահիկով գոյատեւել: Հայրս աքսորի ամբողջ տարիներում միայն մէկ կապոց ստացաւ:

Լաւ յիշում եմ, հօրիցս տարիներ լուր չունէինք, չգիտէինք՝ ո՛ր է, կենդանի՞ է, թէ՛ սովետները վերացրել են նրան: Ու յանկարծ մի բացիկ ենք ստանում: Թեհրանի Խորհրդային Միութեան (ռուսական) դեսպանատնում էր ստացուել:<sup>7</sup> Բացիկը գրուած էր ռուսերէնով, կարմիր թանաքով, մաքուր ձեռագրով, որ վստահաբար հօրս ձեռագիրը չէր, բայց գրուած էր հօրս կողմից, հօրս անունով: Բացիկը թուական չունէր. իսկ յղման ու ստացման թուականը նշող կնիքները անընթեռնելի էին: Ի՞նչ պայմաններում էր գրուած: Հիմա, որ բաւական գիտեմ ճամբարային կեանքի ու պայմանների մասին, կարող եմ ասել, որ առաջին հերթին, շատ

7 Ընթերցողին չփոթեցնելու համար գրեմ, որ Թեհրանում քչերն էին Խորհրդային Միութեան դեսպանատուն ճանաչում: Դա ռուսական դեսպանատունն էր: Ինչպէս նաեւ Թեհրանում ճանաչում էին ռուսական հիւանդանոց եւ ոչ թէ սովետական հիւանդանոց: Ժողովրդական ընկալմամբ Ռուսաստանն էր տէրը, մնացեալ 14 հանրապետութիւնները՝ նրա ոչ թէ «անկախ» հանրապետութիւններն էին, ինչպէս ներկայացւում էր, կամ արբանեակները, ինչպէս ընկալւում էր դրսում, այլ Մոսկուայի հպատակները: Տէն Գլովի 3-ի ծանօթ. 2-ը:

քներին էր թողատրուում նամակ գրել: Արդէն թուղթն ու մատիտը արգելուած, անգտանելի պիտոյքներ էին ճամբարում: Վալտեր Արամեանի «Կոլիմա»-ում մի քաղբանտարկեալ տուն նամակ ուղարկելու համար իր մէկ օրուայ սնունդի լրիւ բաժինն էր տուել մի մարդասպան ոճրագործ կալանաւորի, ով յայտնի չէ, թէ ինչ միջոցներով էր թուղթ ու մատիտ ձեռք ձգել:<sup>8</sup> Հայրս ի՞նչ էր գոհել, որ կարողանայ մի լուր ուղարկել տուն:

Բացիկում հայրս հաղորդում էր, որ ինքը լաւ է, բայց մեզանից ոչ մի լուր չունի եւ երկմիտ է: Խնդրում էր մանրամասն մեր մասին նամակ գրել (բայց ժուսերէնով, որ շուտ հասնի) ու նկար ուղարկել: Խնդրում էր նաեւ տաք ներքնաշորեր, բրդէ գուլպայ եւ ծխախոտ ուղարկել: Նոյն բացիկում մի քանի տող կար եղբօրը՝ Ասատուրին ուղղուած: Նրան էլ խնդրում էր, որ մեզ օգնի, ուշադիր լինի մեզ եւ եթէ կարող է, մի քիչ դրամ ուղարկի իրեն: Բացիկը գալիս էր Նորիլսկից՝ «Կրասնոյարսկի կրայ, պասեօլով»<sup>9</sup> Նորիլսկ, պոչտ. Եաշիկ 224/բ.» (Красноярский край, посёлок Норильск, почт. ящик 224/б.):

Ի հարկէ, մեծ էր մեր ուրախութիւնը. գոնէ գիտէինք, որ նա ողջ է եւ ուր է գտնուում: Բայց կասկածը անխուսափելի էր, եւ մեր շրջապատում շատերն էին համոզուած, որ բացիկը խաբէութիւն է, որ հայրս չի գրել, եւ մօրս խորհուրդ էին տալիս չխաբուել, չունեցած դրամը չծախսել, անձանօթ հասցէի վրայ ծանրոց չուղարկել: Ես շատ փոքր էի մօրս խորհուրդ տալու համար, բայց յիշում եմ՝ ուրախ էի, որ մայրս չհամոզուեց: Ալմաստ հօրաքրոջս բնակարանում մեզ մի սենեակ էր յատկացուած (մենք այդ ժամանակ արդէն Թեհրան էինք տեղափոխուել), եւ այդ սենեակի

<sup>8</sup> Արամեան, «Կոլիմա», էջ 27:

<sup>9</sup> Այդ ժամանակ Նորիլսկը դեռ աւան էր (ժուսերէնով՝ посёлок): Հիմնադրուած էր 1929-ին եւ 1935-ին ընդարձակուել էր այդտեղ ուղարկուող տաժանակիր աշխատանքի դատապարտուած բազմահազար կալանաւորներին տեղաւորելու համար: Նորիլսկը քաղաքի կարգավիճակ ստացաւ 1953-ին:

միակ արժեքաւոր իրը յատակին փռուած Թաւրիզից բերուած պարսկական գորգն էր՝ միակ յիշատակը մեր անցած ուրախ ու ճոխ կեանքի: Մայրս ծախեց գորգը եւ մի մեծ կապոց պատրաստեց՝ տաք հագուստ, պահածոյ ուտելիք, ծխախոտ, մամայիցս նամակ, ի հարկէ՝ ռուսերէնի թարգմանուած, եւ անշուշտ՝ նկարներ: Կապոցն ուղարկուեց ռուսական դեսպանատան միջոցով: Դա միակ կապոցն էր, որ հայրս պիտի ստանար տնից, եթէ ստանար: Մենք այլեւս լուր չառանք իրենից, բայց գոնէ վստահ էինք, որ ճիշտ ենք վարուել:

Տարիներ յետոյ, երբ հայրս վերադարձաւ, պատմեց մեզ, որ ճամբարի վարիչներից մի արդար ու ազնիւ մարդ (որի նմանը հազուագիւտ է ճամբարում) հօրս բարութիւն էր արել եւ այդ նամակը գրել ու ուղարկել էր ռուսական դեսպանատուն: Հայրս ստացել էր կապոցը, եւ դա իր համար յաւելեալ մտատանջութեան առիթ էր դարձել տարիներ շարունակ, մինչեւ վերադարձը: Իրեն հասած կապոցը, որի մէջ ի հարկէ ո՛չ նամակ կար, ո՛չ նկար, քրքրուած էր, թալանուած, մէջը շատ բան չէր մնացել. բայց դա ոչինչ, բնական էր: Հօրս համար զարմանալին եւ տառապանքի աղբիւր դարձածը կանացի մի ներքնաշորն էր կապոցում. ուրեմն, եզրակացրել էր, Փառիկին էլ են ձերբակալել, եւ սրանով մերոնք ուզում են դա ինձ հասկացնել:

Հօրս մտատանջութիւնը անտեղի չէր: Նախադէպերը շատ էին, եւ հայրս գիտէր, թէ ինչպէս անմեղ մարդկանց վրայ «ժողովրդի թշնամի» պիտակը կ'պցնելով՝ ձերբակալում էին, բանտարկում, ու հետեւից էլ կ'նոջը՝ որպէս ամուսնու մեղսակից: Որոշ դէպքերում էլ ձերբակալուածի ունեցուածքը գրաւում էին, տնից հանում էին ընտանիքին ու փողոց նետում, կամ մի քնձռոտ սենեակ տրամադրում՝ թէկուզ եթէ բազմանդամ էր ընտանիքը: Եւ իրօք, ստալինեան մաքրագործումների տարիներին, քանի՛-քանի՛ ընտանիքներ կործանուեցին այդպէս: Քանի՛-քանի՛ որբեր



կառավարության «խնամքին» յանձնուեցին ու մեծացան ամօթով, անդադար նախատինքի տակ, որ իրենք «ժողովրդի թշնամու», «դաւաճան լրտեսի» կամ «հակայեղափոխականի» զաւակ են: Եւ կարելու չէր, թէ զաւակը ուրացել է ձերբակալուած հօրը, կինը՝ ամուսնուն, կամ ընտանիքը պաշտօնապէս հրաժարուել է նրանից: Միեւնոյն էր, ընտանիքը գրկանքի ու տառապանքի էր դատապարտուած:<sup>10</sup> Ուսուցիչներն այդ երեխաներին սովորեցնում էին ատել բանտարկուած ծնողին. հաւատացնում էին նրանց, որ հակառակ միւս երեխաներին, որոնց ծնողները հերոսներ են՝ Ստալինի կողքին կանգնած, իրենց ծնողները եղել են Հիտլերի կողմնակիցներ: Եւ դա ահարկու մի բան էր երեխայի համար եւ պատճառ, որ միւս երեխաները ատեն նրան:

Նման իրողությունները, պարզ է, պիտի ազդէին մեծացող սերնդի վրայ ու իրենց արձագանքը գտնէին գրականության մէջ: Արշակի գրականությունը ապացոյց է դրան: «Գնչուիի» վէպի հերոս Հրաչ Սիմոնեանի մանկությունը ստալինեան բռնաճնշումների դաժան տարիների յիշողություններով է թաթախուած: Հրաչի հօր ձերբակալությունից եւ գնդակահարումից յետոյ համարեա ամէն օր մայրը հագցնում էր փոքրիկ տղային ու հետը ժողովի տանում «որպէս իր համար վահան, որպէս պաշտպան»:

Որովհետեւ, եթէ մայրս ժողով չգնար, կը հաստատէր իր վարքով, որ իմ գնդակահարուած հօր թշնամությունը առաջնորդի նկատմամբ կիսում է, եւ իրեն էլ կը տանէին... ինձ տանում էր, որպէսզի իրեն չտանէին եւ ժամանակաւորապէս, որովհետեւ նա շատ էր գեղեցիկ, եւ ընդմիշտ, որովհետեւ իմ հօր կինն էր եղել...<sup>11</sup>

10 Տխուր օրինակ է Վահան Թորոպենցի ընտանիքի պարագան: Նրանով հանդերձ, որ կինը՝ Լուսինը, հրաժարուել էր ամուսնուց, նրան էլ են ձերբակալում: Նրանց զաւակը՝ Լետինը, երիտասարդ խոստումնալից արուեստագէտ, ընկնում է Կերչի կլոււմ 1943-ին:

11 Արշակ (Սերգէյ Արշակյան), «Գնչուիին», Երևան, «Վարք» հրատարակչություն,

Ռեւիկ Յարութիւնեանի հօր՝ Գուրգէն Յարութիւնեանի ձերբակալութիւնից եւ բանտարկութիւնից մէկ շաբաթ անց նրա մայրն է ձերբակալուում ու բանտարկուում է Երեւանի ծայրամասում ախոռների մէջ: Այդտեղ նախքան աքսորելը պահում էին ձերբակալուածների կանանց, ինչպէս՝ Խանջեանի, Չարենցի, Աճառեանի եւ այլ մտաւորականների կանայք:<sup>12</sup> Գայեանէ Շագոյեանը եւս գրում է այդ սովորական դարձած երեւոյթի մասին, երբ ամուսնու ձերբակալութիւնից յետոյ նոյն անհիմն ամբաստանութիւնները կնոջ գլխին էին փաթաթում եւ նրան էլ էին ձերբակալում:<sup>13</sup>

Ի հարկէ, պարզ է, մայրս չձերբակալուեց, կամ հօրս օրինակով չառեւանգուեց: Դրութիւնը այլ էր Իրանում: Վերջապէս Կարմիր Բանակն էլ դուրս եկաւ երկրից, եւ կենտրոնական իշխանութիւնը դարձեալ իրադրութեան տէրը դարձաւ: Բայց հայրս չէր կարող դա իմանալ: Որտեղի՞ց իմանար: Իր ձեռքն ընկած *Պրաւդա* թերթի մի հին համարում սարսափով կարդացել էր, որ Ատրպատականում Խորհրդային Միութեան հովանաւորութեան տակ կեանքի է կոչուել Ադրբեջանի ժողովրդական կառավարութիւնը: Ուրեմն խորհրդային կարգերը այնտեղ էլ պիտի բռնանային:

Հօրս ստացած կապոցը իր այդ քրքրուած վիճակով դաս էր նրա համար՝ այլեւս երբեք տանից կապոց չխնդրել: Վերջապէս

1995, էջ 20: Վէպը հրատարակման էր ներկայացուել 1977-ին, բայց մերժուել էր: Հեղինակի գործերի հրատարակութիւնը հնարաւոր էր դարձել 1995-ից սկսած:

12 Տե՛ս Հրանուշ Խառատյան, Գայանէ Շագոյան, Հարություն Մարության և Լևոն Աբրահամյան, «Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում. պատմություն, հիշողություն, առօրյա», Երևան, ՀՀ ԳԱԱ, «Գիտություն» հրատարակչություն, 2015, էջ 330: Ռեւիկ Յարութիւնեանը պատմում է, թէ ինչպէս իրենց բնակարանն ու տան իրերը գրաւում են եւ իրեն ու փոքրիկ քրոջը հանում տնից: Մօրաքրոջ ապրած շէնքի նկուղում նրանց մի խոնաւ ու կիսամութ սենեակ են տալիս: Յետոյ մօրաքրոջն էլ են հանում ու բոլորին միասին փողոց նետում: Հարցազրոյցը վարել է Լևոն Աբրահամեանը (էջ 330-342):

13 Գայանէ Շագոյան, «Կինն ու տղամարդը որպէս բռնաճնշումների թիրախ», նոյն տեղում, էջ 192-195:

ինքը մի վտանգաւոր միջավայրում էր գտնուում, ուր գողութիւնն ու ոճրագործութիւնը առօրեայ դէպքեր էին: Գողանում էին իր բաժին հացը կամ ծխախոտը, եւ եթէ փորձէր բողոքել կամ դիմադրել, ծեծի էին քաշում: Քանի՛-քանի՛ անգամներ կողոպտուել ու խոշտանգուել էր այսպէս, մանաւանդ՝ նախքան քրեական եւ քաղաքական բանտարկեալներին իրարուց առանձնացնելը:

Վահրամ Ալազանը պատմում է, թէ ինչպէս ծխելու բուռն ցանկութիւնը ճամբարի ճաշարանում մղել էր նրան իր վերջին տասը ռուբլիանոցը զոհելու: Իր ծխախոտը ծախող քրեական կալանաւորը վերցրել էր փողը եւ առանց ծխախոտը տալու փախել, անյայտացել: Ալազանը վազել էր ետեւից, չէր կարողացել գտնել նրան: Երբ վերադարձել էր ճաշարան, ո՛չ իր ճաշը կար, ո՛չ էլ հացը: Մի ուրիշ կալանաւոր էլ դրանք էր գողացել: «Ահա, թէ ինչ օրի էին հասցրել քրեականները քաղաքականներին: Այս բոլորն արուած էր նրա համար, որ քաղաքականները տանջուէին ու մղկտային»: Մի անգամ էլ քրեականները սպառնում են սպանել Ալազանին՝ կարծելով, որ նա Ստալինի ազգակից է (դա ցոյց է տալիս ատելութեան չափը Ստալինի դէմ): Ալազանը հազիւ է կարողանում համոզել, որ ինքը հայ է, իսկ Ստալինը՝ վրացի, եւ սրանք տարբեր ազգեր են: Քրեականների համար նոյնն էր, երկուսն էլ «զուեր» (зверь՝ գազան) էին: Կովկասցիներին գազան էին համարում ու վախենում էին նրանցից:<sup>14</sup>

Սովորաբար ծանր ոճիրների, մարդասպանութեան կամ բռնաբարութեան համար աքսորուած քրեականները իշխում էին քաղաքականների վրայ, ծեծում ու խոշտանգում: Բանտապետները անտարբեր էին: «Քաղաքական կալանաւորները քրեականների շարունակական վախի տակ էին ապրում: Այդ ոճրագործների մէջ չկար բարոյականութիւն, քաղաքավարութիւն կամ որեւէ

14 Ալազան, «Տառապանքի ուղիներով», էջ 134:

մարդկային վերաբերմունք: Սպառնալիքի տակ պարտադրում էին քաղաքականներին՝ կատարել իրենց իւրաքանչիւր պահանջն ու ցանկութիւնը»:<sup>15</sup>

Սնունդի պակասն ու ծանր աշխատանքը հիւծել էին հօրս: Եւ մի օր՝ աշխատանքի վերջին ժամերին, աղիւսով բռնուած ծանր սայլակը քարշ տալիս ընկնում է եւ ուշաթափւում: Սայլակը շուռ է գալիս, եւ մի աղիւս ընկնում է ոտքին ու ոսկորը ջարդում: Նրան տեղափոխում են ճամբարի հիւանդանոցը, ուր նա վարակւում է դեղնախտով: Հիւանդութիւնը աւերում է նրա լեարդը, որ իր կեանքի վերջում իր մահաբեր ազդեցութիւնն է ունենում: Մի ամիս բուժուելուց յետոյ հայրս արձակւում է հիւանդանոցից: Բժիշկը, ինքն էլ քաղաքական կալանաւոր, խոստովանում է, որ նրան փրկելու յոյս չի ունեցել, բայց իր կարելին է արել՝ լաւագոյն բուժումը տալու: Հայրս նրան յիշում էր որպէս իր պահապան հրեշտակը, որ երկրորդ կեանք էր պարգեւել իրեն, որ ապրի ու դիմակայի դժուարութիւններին ու իր ընտանիքի գիրկը վերադառնայ:

Այս գրքի վրայ աշխատելիս անընդհատ մի միտք էր տանջում ինձ: Ինչո՞ւ այսքան քիչ են հայ վերապրողների յուշագրութիւնները, առաջին դէմքով գրուած վկայութիւնները, մանաւանդ՝ վկայութիւններ Նորիլսկից: Արդե՞օք վախը այնքան ծանր էր նստած սրտերում, որ չգրեցին, նոյնիսկ՝ անկախութեան ժամանակաշրջանում: Կամ, գուցէ, Նորիլսկի դժոխային ճամբար աքսորուածներից քչերը ազատուեցին ու վերադարձան: Կարդացածս յուշերից շատերը նկարագրում են կեանքը Սոլովեցկու, Մագադանի, Մառինսկի, Կոլիմայի եւ այլ ճամբարներում: Նորիլսկ կոչուած աշխարհի այդ ծայրամասում չկա՞ր մի հայ, որ վերադառնար ու իր յուշերը յախտենականութեան

15 Hosford եւ այլք, *GULAG*, էջ 24:

յանձներ: Միքայել Մազմանեանից մնացած յիշատակներն էլ խօսում են այն մասին, որ նա աւելի ազատ պայմաններում է եղել ու իր մասնագիտությամբ է զբաղուել եւ տաժանակիր աշխատանքի ճամբարում չի եղել:

Ստալինեան բռնապետության այդ սեւ տարիների մասին հետաքրքրությունը շարժուել է Հայաստանում: Յօդուածներ են լոյս տեսնում, ուսումնասիրական աշխատանքներ են տարւում արխիւներում, որ վաղուց արդէն բացուել են: Այս ուսումնասիրությունների առաջին հունձքերից է Արմենակ Մանուկեանի «Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում, 1920-1953» աշխատությունը, որ լոյս տեսաւ Երեւանում 1999 թուականին, ապա՝ մի տասնամեակ անց՝ Գրիշա Սմբատեանի «Երկաթէ վարագոյրից այս կողմ» (Երեւան, 2009): Ես այստեղ դիտարկեալ դուրս եմ թողնում այս թեմայով Սփիւռքում լոյս տեսած աշխատությունները: Դրանք, ի հարկէ, հասանելի չէին Հայաստանի հային: Եթէ նոյնիսկ ժողովուրդը տեղեակ լինէր, իշխանությունը այդ գրությունները պիտի ներկայացնէր որպէս հակայեղափոխական տարրերի անհիմն ու թշնամական քարոզչություն: Ռուս պատմաբանները սակայն հէնց առաջին առիթը օգտագործեցին ու գորբաչովեան *պերեստրոյկա*-ն հռչակուելուն պէս արխիւների փաստաթղթերին դարձան: 1989-ն լոյս տեսած Դմիտրի Վոլկոգոնովի *Stalin: Triumph and Tragedy*-ն (Триумф и трагедия. Политический портрет И. В. Сталина),<sup>16</sup>

16 Դմիտրիյ Անտոնովիչ Վոլկոգոնով (Дмитрий Антонович Волкогонов) (1928–1995): Կարմիր բանակի բարձրաստիճան զինուորական, Կոմունիզմի եւ Ստալինիզմի նուիրեալ գործիչ, Վոլկոգոնովը՝ Բորիս Ելցինի խորհրդականի իր հանգամանքով ազատ մուտք ունէր ԿաԳէԲէյի արխիւներում: Այդ ուսումնասիրությունների արդիւնքում էր, որ, տեսնելով Ստալինեան վարչակարգի իրական դէմքը, որ նախապէս ներկայացուած էր եղել միանգամայն խեղաթիւրուած, յուսախաբուեց եւ կեանքի վերջին 10 տարիները նուիրեց բացայայտելու եւ հրապարակելու իրականությունը: Վերոյիշեալ աշխատությունը նրա առաջինն է. դրան հետեւեցին երկու հատորներ՝ Լենինի եւ Տրոցկու մասին:

իմ գիտցածով, առաջիններից էր, ուր փորձ էր կատարում փաստագրել սովետական պատժարաններում տիրող սոսկալի իրականությունը:<sup>17</sup> Դրան հետեւեցին այլ ուսումնասիրություններ եւս, որոնք նոյնպէս անմիջապէս թարգմանուեցին անգլերէնի եւ հրատարակուեցին: Բայց չմոռանանք Արեւմուտքի տրամադրութեան տակ եղած առաջինները՝ Ռաբբրո Բանքուեսթի (Robert Conquest) *The Great Terror: Stalin's Purge of the Thirties* (Մեծ տէռորը. Ստալինի 30-ականների մաքրագործումները) (1968) եւ Սոլժենիցինի *One Day in the Life of Ivan Denisovich*-ը (1963), որ բացայայտում ու լուսարձակի տակ էին առնում ստալինեան Գուլագն ու ընդհանրապէս կեանքը Ստալինի լուծի տակ կքող Խորհրդային Միությունում, եթէ Արեւմուտքը ցանկանար իմանալ:

Նախապէս յիշածս «Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում. պատմություն, հիշողություն, առօրյա»-ն (2015) այս թեմայով Հայաստանում աշխատասիրուած վերջիններից է: Գործը արդիւնք է այս բնագաւառը ուսումնասիրող չորս գիտնականների համադրուած աշխատանքի, ընդգրկում է ստալինեան հալածանքների զոհ դարձած կամ Գուլագներից վերապրած քաղբանտարկեալների սերունդների վկայություններն ու նրանց հետ կատարուած հարցազրոյցները: Իրենք՝ նախկին քաղբանտարկեալները, մահացած են վաղուց: Նրանց զաւակները կամ թոռներն են պատմում՝ ինչ որ յիշում են: Դա քիչ է, ուշացել

17 Ցայժմ կատարուած բոլոր ուսումնասիրություններով հանդերձ, դեռեւս հնարաւոր չէ տալ ճշգրիտ թիւը Ստալինի հալածանքների զոհ սովետական քաղաքացիների: Ինչ վերաբերում է մահացողների թուին՝ գնդակահարուած կամ ճամբարներում մեռած, տարբեր աղբիւրների տուած տեղեկությունները տարբերում են: Ըստ ԿաԳէԲԷյի հաղորդագրութեան (1990)՝ 1930-1953 թուականներին երեք քառորդ միլիոնից մէկ միլիոն քաղաքական բանտարկեալներ մահուան են դատապարտուել: Ըստ *The Black Book of Communism*-ի (Stéphane Courtoise et al., 1999) մինչեւ 20 միլիոն մահ՝ յեղափոխությունից մինչեւ 1980-ականները, ի հարկէ, բացի պատերազմներում զոհուածներից: Իսկ Անն Ափրլբամը մէջբերում է Otto Poh -ի *The Stalinist Penal System*-ում (1997) նշուած թիւը՝ 2.749.163 մահ՝ 1929-1953, որ, իր կարծիքով, բաւարար չի կարելի համարել (տե՛ս Applebaum, *GULAG*, էջ 578-584):

ենք: Գնահատելի է գործը, բայց ափսոս, որ մենք ազգովին ուշացած ենք միշտ:

Թղթատում եմ գիրքը եւ յուրախություն ինձ վերջապէս գտնում եմ Նորիլսկ աքսորուած երկու քաղբանտարկեալի պատմութիւններ. Սամսոն Մարտիրոսեան (որի որդին՝ Վոլոդիան է վկայում) եւ Աբէլ Օրդուխանեան (որի դուստրը՝ Իռէնն է խօսում): Երկուսն էլ 1937-ին են աքսորուել: Մարտիրոսեանը վերադարձել է տասը տարուայ աքսորի ժամկէտն աւարտելուց յետոյ: Օրդուխանեանը ցմահ բանտարկութեան է դատապարտուած եղել, բայց Ստալինի մահից յետոյ ներում է ստացել եւ ազատուել: Հարցազրոյցները վարել է գրքի համահեղինակներից Յարութիւն Մարութեանը:

Բանն այն է, որ Սամսոն Մարտիրոսեանն աքսորի իր վերջին հինգ տարին է Նորիլսկում անցկացրել եւ այն էլ՝ ոչ ճամբարում, այլ դրսում, որպէս «ազատ» բանուոր: Վոլոդիան վկայում է, որ նա լուռ մարդ էր, մանաւանդ՝ չէր սիրում իր չարչարանքի տարիների մասին խօսել: Եւ Վոլոդիան ափսոսում է, որ չի հարցրել ու շատ բան չգիտէ:<sup>18</sup> Ուրեմն կարելոր յիշողութիւն չկայ Նորիլսկի մասին: Հնարաւոր էլ չի, որ հօրս հանդիպած լինի:

Վոլոդիան խոստովանում է, որ ինքը շատ երիտասարդ էր եւ հետաքրքրուած չէր անցեալի պատմութիւններով: Դժբախտաբար, շատ ընդհանրացած երեւոյթ է սա: Մի՞թէ ես էլ նոյնը չէի: Մի՞թէ չէի կարող աւելի հարց տալ հօրիցս ու աւելի իմանալ:

<sup>18</sup> Վոլոդիայի մեծ հայրը, այսինքն՝ Սամսոնի հայրը՝ Ալեքսանը, երկու անգամ է ձերբակալուել: Նախ՝ 1929-ին՝ Նժդեհի հետ ունեցած իր կապերի պատճառով (այսինքն՝ կապ Դաշնակցութեան հետ): Աքսորից վերադարձել է 1937-ին եւ երկրորդ անգամ ձերբակալուել եւ գնդակահարուել է անմիջապէս: Ալեքսանի եղբայրն էլ, որպէս դաշնակցական, նոյն տարին ձերբակալուել եւ գնդակահարուել է: Վոլոդիայի փոքր հօրեղբօրը արտաքսել են Կարմիր Բանակից Դաշնակցութեան հետ կապեր ունենալու համար: Վոլոդիայի հարցազրոյցը տե՛ս «Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում, պատմություն, հիշողություն, առօրյա», էջ 286-305:

Վոլոդյան մի հետաքրքիր դեպք է պատմում Սամսոնի կեանքից, որ արժէ յիշատակել այստեղ: Մի օր՝ 1962-ին, աշխատանքից վերադարձին, Սամսոնը տեսնում է ամբողջ գիւղը հաւաքուած հրապարակում: Տրակտոր են բերել, ուզում են Ստալինի արձանը վար բերել, բայց ոչ ոք չի համարձակում ճոպանը արձանի վզին անցկացնել: Տուէք ինձ, ասում է, ես տասը տարի տանջուել եմ Սիբիրում ոչինչի համար: Ես ցած կը բերեմ դրան: Ու ճոպանը Ստալինի արձանի վզին է կապում, միւս ծայրը տրակտորին միացնում, քաշում տապալում է արձանը:<sup>19</sup>

Արէլ Օրդուխանեանը իր ցմահ աքսորն էր ապրում Նորիլսկում, հօրս տարեկից, եւ 18 տարի նոյն ճամբարում: Ազատուել է նոյն ժամանակ: Հաւանականութիւնը շատ է, որ հանդիպել են իրար: Հայրս ասում էր, թէ ճամբարում պատմում էին, թէ բանտարկեալին ինչ չարաքանքների էին ենթարկում խոստովանութիւն կորզելու համար: Արդեօ՞ք Արէլը պատմել էր նրան, թէ ինչպէս մարմինը «դարձել էր մտէ մոխրաման». քննիչը ծխախոտ էր յանգցնում նրա մարմնի վրայ: Այրուածքների հետքերը երբեք չվերացան: Ու դեռ դա բաւական չէր, «ասեղներ էին մտցնում եղունգների տակ»: Բայց նա երկաթէ մարդ էր: Մեղադրագիրը չստորագրեց, դրա համար էլ ցմահ աքսոր էին տուել նրան: Արէլը պատմել էր իր դատերը՝ Իռէնին, որ բարաքներում կալանաւորներին սոված էին պահում: Ու մի օր էլ Մոսկուայից մի յանձնաժողով է գալիս: Հաւաքում են բոլորին ու հարցնում, թէ գոհ են ամէն ինչից, եւ Արէլը համարձակում է պատասխանել. «Գուցէ աւելի լաւ է մեզ միանգամից գնդակահարել, քան թէ այսպէս դանդաղօրէն սովամահ անել»:<sup>20</sup> Արէլը երբեմն կապոց էր ստանում տանից: Արդեօք, մի փոքր բաժին տալի՞ս էր հօրս, որ միայն մի անգամ կապոց ստացաւ՝ քրքրուած, կողոպտուած, ու իմացաւ, որ չպիտի այլեւս կապոց խնդրի:

<sup>19</sup> Նոյն տեղում, էջ 295-296:

<sup>20</sup> Արէլ Օրդուխանեանի մասին վկայութիւնը տե՛ս նոյն տեղում, էջ 314-320:



Աբելի աղջիկն ու թոռը վկայում են, որ նա սովետական կարգերի մասին երբեք չէր խօսում: Երբ մէկը Ստալինի մասին վատ բան էր ասում, իր պատասխանն էր. «Անտառը որ հատում են, շէպկաներ [տաշեղներ] են թռչում»: Ու երբ վիճում էին ու ապացուցում, թէ «դո՛ւ էիր շէպկան, թէ՛ Բակունցը, ինքը չէր սիրում էդ խօսակցությունները»: Աբել Օրդուխանեանը այն կալանաւորներից էր, որ հաւատում էր Ստալինի արդարութեանը: Վստահ էր, որ Ստալինը չգիտէ իր մասին. եթէ իմանայ, իր գործը կը կարգադրի: Իռէնը վկայում է, որ նա Սիբիրից նամակ է գրել Ստալինին. «Պապան շատ մանրամասն բացատրում էր այդ նամակում, որ իր նկատմամբ մեղադրանքը բացարձակապէս անիմաստ է»: Եւ իրօք, ստալինեան հալածանքների տարիներին ձերբակալուած եւ բանտարկուած կամ Սիբիր աքսորուած շատ կալանաւորներ մինչեւ վերջ էլ չիմացան, թէ ինչ յանցանքի համար են դատապարտուած: Նոյնիսկ Ստալինի մահից յետոյ համաներումի շնորհիւ ազատուած ու տուն վերադարձած, շատերը չկարողացան գտնել իրենց ամբաստանութեան բուն պատճառը եւ կամ ով էր մատնիչը, իրենց դէմ ցուցմունք տուողը: Ազատ արձակուելու պահին էլ նրանց մի արտօնագիր էր տրուել. դատաւճռի, ազատագրկման ժամկէտի կամ ազատ արձակման մասին ոչ մի պաշտօնական վկայական: Իսկ նրանք, ովքեր մնացին ու մեռան ճամբարներում, նրանց մասին ոչ մի լուր: Այդպէս էլ նրանց ընտանիքները չիմացան, թէ իրենց սիրեցեալը՝ հայրը, ամուսինը, զաւակը, ինչ յանցանքի համար էր ձերբակալուել, գնդակահարուել՝ էր, թէ՛ աքսորուել:

1980-1990-ական թուականներին, երբ համեմատական ազատութեան մէջ արխիւները բացուեցին, ու երբ իրենք թիապարտները այլեւս չկային, նրանցից շատերի ընտանիքները փորձեցին ճշմարտութիւնը բացայայտել: Տեղի ունեցաւ նաեւ զանգուածային արդարացում: Որոշների թղթածրարները

բացուեցին, եւ ենթական յետմահու անմեղ ճանաչուեց: Այնուամենայնիւ, այստեղ էլ հայերը զգուշաւոր մնացին, պէտք չէր գլուխը գլխացաւանքի տակ դնել: Գուցէ տխուր փորձն էր դա թելադրել: Չէ՞ որ տեսել էին 1929-ի հալածանքները, 1937-1938-ի մաքրագործումները եւ 1949, յունիս 14-ի զանգուածային աքսորը դէպի Ալթայ՝ հարաւային Սիբիր:<sup>21</sup> Աքսորեալներին փոխադրող

21 1949 թուի զանգուածային աքսորը արդիւնքն էր Ստալին-Բերիա գաղտնի համաձայնութեան եւ դրան հետեւող հրամանագրի: Դա վերաբերում էր Հարաւային Կովկասի երեք հանրապետութիւններին եւ հիւսիսային Կովկասում բնակուող հայերին: Տուժողների մէջ էին Յունաստանից, Թուրքիայից եւ ընդհանրապէս Միջինարեւելեան երկրներից ու նոյնիսկ Ամերիկայից ներգաղթած ընտանիքներ: Հրամանը գործադրուեց ամենայն վայրագութեամբ, մարդկային արժանապատուութեան հանդէպ կատարեալ արհամարհանքով, կոխկրտելով ամէն իրաւունք: Ընտանիքներին կէս ժամ ժամանակ էին տալիս պատրաստուելու: Ապա բոլորին ծեր, երիտասարդ ու երեխաներ, լցնում էին բեռնատար վագոններ եւ ճամփու դնում դէպի անյայտ տեղանք, յաւիտենական աքսոր (մեծ մասամբ՝ Ալթայ, Հարաւային Սիբիր): Աքսորուածները մեղադրում էին դաշնակցական, կուլակ, լրտես կամ լեզիոնական եղած լինելու համար, մի խօսքով՝ «ժողովրդի թշնամի» կամ «հայրենիքի դաւաճան»: Սերո Խանգաղեանի կարծիքով՝ «արտաքսուել են ոչ պակաս 100.000 հայեր: Աքսորուածների մէջ շատ յոյ կանայք, շատ ու շատ նորաձիւներ են եղել: Մի այդքան հայ էլ արտաքսել են Վրաստանից, Ադրբեջանից, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզից» (տես Սերո Խանգաղեան, «Արիւնոտ վարագոյրը դեռ չի պատռուել» յօդուածը, տպագրուած «Գրական թերթ»ում, 1989, թիւ 8, արտատպուած «Բագին» ամսագրում, Բէյրութ, 1989, թիւ 7-12, էջ 7-9):

«Բագին»-ի նոյն համարում արտատպուած են 1949-ի զանգուածային աքսորի մասին մի քանի յօդուածներ, դրանց մէջ՝ Անտոն Քոչինեանի յիշողութիւնները այդ չարաշուք օրուանից (էջ 3-6): Յօդուածը՝ «Հայրենիքը փշալարի մէջ» վերնագրով, տպագրուած է եղել «Գրական թերթ»ում, 1989, թիւ 3: Քոչինեանը, ով յետագայում Հայաստանի Կոմունիստ կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի առաջին քարտուղար դարձաւ (1966-1974), մասնակցել էր աքսորի կազմակերպման եւ կիրարկման գործին Գիւմրիում: Քոչինեանը գրում է. «Դա իսկական բարբարոսութիւն էր այն հայրենասէր մարդկանց հանդէպ, ովքեր թողած իրենց տունն ու ունեցուածքը, հայրենիքի կարօտով տոգորուած, երկրագնդի բոլոր ծայրերից եկան Սովետական Հայաստան. բայց դեռ ոտքը մայրենի հողի վրայ չդրած՝ աքսոր ուղարկուեցին»:

1949-ի աքսորի մասին յաւելեալ տեղեկութիւններ կարելի է գտնել, օրինակ՝ հետեւեալ հրատարակութիւններում՝ Արմենակ Մանուկյան, «Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում 1920-1953», Երևան, «Առեքնսում», Անի, 1999), Արմինէ Կ. Կունդակչեան, «Հայրենադարձների բռնաճնշումները ստալինյան ժամանակաշրջանում», Երևան, հեղինակային հրատարակչություն, 2010: Այս խնդրին նուիրուած վերջին աշխատանքներից է 2017-ին լոյս տեսած յօդուածների և փաստաթղթերի ժողովածուն. Депортация армян 14 июня 1949 года: сборник документов и материалов / Сост. Н.Н. Аблажей; Отв. ред. Н.Н. Аблажей, Г. Харатян,

գնացքի ճակատին փակցուած էր Ստալինի մեծադիր նկարը՝ ցոյց տալու համար, որ «ճամբորդները» կամաւորներ են եւ ցանկութիւն են յայտնել Սիբիրում աշխատելու: Ո՛վ հեզմանք: Այս ամէնը տեսնելով, հայերի համար անհաւանական չէր թւում, որ այս բոլորը կարող են մի օր կրկնուել: Այնուամենայնիւ, շատ բնական է, դեռ ուշացած, եւ քաջալերելի, որ ստալինեան բռնաճնշումների զոհերի սերունդները իրենց նախնիներին մերժուած արդարութեանը հետամուտ լինեն, իրենց ընտանիքի պատմութեան վրայ ծանրացած արատը մաքրեն: Սակայն, նորից, հայը զգուշաւոր է, եւ այդ տխուր անցքերի պատասխանատուները եւ պատասխանատու կազմակերպութիւնը դեռ մնում են անպարտ:<sup>22</sup>

Ստալինի մահից յետոյ ազատ արձակուած քաղբանտարկեալներից ոմանք տուն վերադառնալու նիւթական միջոցները չունէին: Նրանք մնում էին տեղում եւ աշխատում որպէս ազատ բանուորներ, մանաւանդ՝ եթէ երկար ժամանակ էին աքսորում ապրել եւ այլեւս իրենց սպասող հարազատներ չունէին, կամ եթէ աշխատանք էին գտել եւ դրամ էին վաստակում, եւ վերջապէս, եթէ տեղացի մի լաւ կին էին գտել, որ համաձայնուել էր իր տանն ընդունել նախկին կալանաւորին:

Վալտեր Արամեանի հերոս Եանը ազատուել եւ երկար դեգերումներից յետոյ վերջապէս տուն էր վերադարձել: Բայց ազատ արձակուելու պահին նրան «խորհուրդ» էին տուել ընտանիք կազմել եւ գնալ՝ ուր որ ուզում է, բայց ոչ Հայաստան: Ստալինի մահից յետոյ օրէնքները փոխուեցին, եւ նա կարողացաւ Երեւան հասնել, բայց՝ տայգայից իրեն նուէր մնացած ռուս կնոջ եւ երեխաների հետ: Նա իրեն այնպէս լաւ ու ազատ էր զգում

---

Новосибирск: Наука, 2016.

22 Այս ուղղութեամբ առնուած միակ դրական քայլը եղաւ այն, որ անկախ Հայաստանի պառլամենտը 1999 թուին, յունիս 14-ը 1949-ի աքսորի զոհերին նուիրուած յիշատակի օր նշանակեց:

Երեւանում, աւելի, քան երբ արձակուել էր ճամբարից: Բայց մի բան կար, որ փնտրում էր միշտ.

Գուցէ հիմա նրա կարօտած սիրտն է այդպէս երամը կորցրած սագի նման մենակ թռչում երիտասարդական տարիների վաղուց արդէն անհետացած արահետների վրայով եւ ինչ-որ բան է փնտրում, մոռացուած, կորցրած մի բան, որն այլեւս չի գտնելու: Այդ նրա երիտասարդական տարիներն են, որ կորան բանտերի ճանապարհներին բեղաւոր առաջնորդի կամքով՝ անթիւ այլ կեանքերի հետ միասին».<sup>23</sup>

Ես երբեք չհարցրի հօրս, թէ ինքը ինչպէս էր զգում այդ մասին. փնտրո՞ւմ էր արդեօք իր երիտասարդութիւնը, որ կորցրել էր անդառնալի:

Իռէն Օրդուխանեանի հարցազրոյցը կարդալիս կարծես իմ եւ քրոջս պատկերն էի տեսնում ու մեր վերաբերմունքը նոր ազատուած ու տուն վերադարձած մեր հօր նկատմամբ.

...էս վերջերս անընդհատ յիշում եմ պապայիս. մեղաւոր եմ զգում իր առաջ: Որովհետեւ մենք՝ ես ու քոյրս սկիզբը էնքան վատ վերաբերուեցինք իր հետ: Ահաւոր.... Մենք էլ գիտէ՞ք ինչու էինք այդպէս՝ մեզ մօտ խանդ կար մեր մամայի պատճառով... Կարինէն [փոքր քոյրը] նոյնիսկ հոգեկան խանգարման նման մի բան ստացաւ .... Դէ յետոյ էլ հակամարտութիւնը շարունակուում էր, բայց քիչ քիչ թեթեւանում էր: Յատկապէս երբ տեսանք, թէ ինչպէս նա սիրեց մեր երեխաներին՝ գժի պէս. որ մեզ չէր մեծացրել, իր ողջ սէրը տուեց թոռներին... Հիմա, երբ փորձում եմ վերլուծել, թէ ինչու էինք այդպէս մեզ պահում... մտածում եմ, թէ գուցէ մենք անգիտակցաբար մեր «վրէժն» էինք հանում մեր պապայից մեր սարսափելի մանկութեան համար:<sup>24</sup>

23 Արամյան, «Կոլիմա», էջ 237:

24 «Ստալինեան բռնաճնշումները Հայաստանում. պատմութիւն, յիշողութիւն, առօրեայ», էջ 317-318:

Իռենի վերլուծական մտորումները ինձ օգնեցին լուսաբանելու մեր ընտանիքի սկզբնական շրջանի բարդ յարաբերությունները: Արդեօ՞ք մենք էլ, յատկապէս՝ Ռուզանը, Իռենի եւ իր քրոջ նման մեր վերաբերմունքով մեր վրէժն էինք լուծում հայրիկի բացակայութեան պատճառով մեզ բաժին ընկած տխուր ու դժուարին մանկութեան համար: Ո՛չ, մերը այդքան սուր բնոյթ չունէր: Կեանքի յանկարծական փոփոխութեան եւ տանը մի տղամարդու/հօր ներկայութեան հետ մեր վարժուելը երկար չտւեց: Շուտով սկսեցինք սիրել նրան ու գնահատել նրա խորհուրդներն ու բուռն ցանկութիւնը՝ ամէն ձեւով օգնելու մեզ, դիւրացնելու մեր կեանքը: Մեր գլուխները լեցուած չէին նրան թշնամի տեսնելու պետական գաղափարախօսութեան քարոզութեամբ:

Հօրս արքայական կեանքի պատմութիւնը լրացնելու իմ փնտռտուքի մէջ մի բան անգտանելի էր մնացել ու հանելուկային: Հայրս պատմել էր, որ նախքան դէպի հիւսիս արքորելը իրեն գործի էին դրել մի ինչ-որ քիմիական տարրալուծարանում, ուր թէ՛ ապրելու պայմանները եւ թէ՛ կլիման անհամեմատ աւելի լաւ էին, քան Բելեռային գօտու հիւսիսում գտնուող աշխատանքային ճամբարը: Այդ «դրախտային» կեանքը, սակայն, կարճ էր տւել: Մի օր յանկարծակի նրան հանել էին գործից եւ հիւսիս ուղարկել: Իր կարծիքով՝ դեկավարութիւնը անդրադարձել էր, որ իր ներկայութիւնը այդտեղ վտանգաւոր էր. որեւէ ժամանակ, եթէ ուզէր, կարող էր իր տրամադրութեան տակ գտնուող քիմիական նիւթերով տարրալուծարանը պայթեցնել: Թշնամուն մի այդպիսի զգայուն պաշտօն վստահելն ուղղակի վտանգաւոր էր: Իր թղթերի, գալիք գլուխների մանրամասն ուրուագծուած նիւթերի ցանկում չկարողացայ որեւէ յիշատակում գտնել այդ տարրալուծարանի մասին: Կարծում եմ՝ Կրասնոյարսկի բաշխիչ ճամբարում կալանաւորների կարողութիւնն ու մասնագիտութիւնը դատելիս,

իմանալով, որ նա քիմիկոս է, առանց մտածելու, պարզապես պահանջից դրդուած եւ արհեստավարժ աշխատողի պակասի պայմաններում, նրան այդ գործին էին ուղարկել: Չկարողացայ գտնել, թէ որտեղ էր այդ գործարան-տարրալուծարանը, ուր հայրս ասում էր՝ զգայուն սարքեր/գործիքներ էին արտադրում: Երեւի մի տեղ՝ հարաւային Սիբիրում: Առեղծուածին մօտեցայ երբ երկրորդ անգամ, աւելի մեծ կենտրոնացումով Սոլժենիցինի *Gulag Archipelago*-ն կարդացի: Այնտեղ էր, Սոլժենիցինի նկարագրած *շարաշկա*-ներից կամ «դրախտ-կղզիներից» մէկում: Գուլագի ցանցում ցրուած այդ «կղզիներում» յոյժ զաղտնի նախագծերի վրայ գործի էին դրում քաղբանտարկեալներ, ովքեր կենսաբանութեան, ֆիզիկայի, քիմիայի կամ միջուկային ճարտարագիտութեան մասնագէտներ էին:<sup>25</sup> Միայն այդքանը գտայ: Ըստ երեւոյթին, այդ ճամբարները բանտարկեալների համար աւելի տանելի պայմաններ ունէին:

Մեր գրականութիւնն ու բանաւոր պատմութիւնը վկայում են եւ ընդհանրապէս տիրում է այն տպաւորութիւնը, որ 1937-1938-ի ստալինեան հալածանքներն ու մաքրագործումները Հայաստանում ի գործ դրուեցին աւելի խիստ ու աւելի վայրագօրէն, քան Խորհրդային Միութեան որեւէ այլ արբանեակ-հանրապետութիւնում: Ձերբակալութիւններն ու գնդակահարութիւնները համեմատաբար աւելի մեծ թիւ էին կազմում, քան որեւէ այլ հանրապետութեան մէջ, ներառեալ Ռուսաստանը: Սիլվա Կապուտիկեանի խօսքերով՝ «1937 թի՛ն: Մեր հանրապետութիւնում աշխատել ենք հնձել բոլորից շատ ու բոլորից խորը»:<sup>26</sup> Թէ որքանով է այս համոզումը իրականութեան

25 *Gulag Archipelago*, էջ 590:

26 Սիլվա Կապուտիկեանի յօդուածը հրատարակուած է եղել «Գարուն» ամսագրում, Երեւան, 1994, թիւ 10, էջ 22, արտատպուել է «Բագին» ամսագրում, 1995, թիւ 7-8-9,

համապատասխանում, դա լուրջ հետազոտության է կարօտում: Կարելուրն այն է, թե՛ առկա էր այդ տպաւորութիւնը եւ դրա բերած հոգեբանական ազդեցութիւնը:

Մատնութիւնը տարածուած երեւոյթ էր ամենուրեք: Վախից, նախանձից կամ պարտադրանքի տակ, շինծու մեղադրանքներով մարդիկ մատնում էին հարեւանին, գործակցին, երբեմն էլ անմեղօրէն՝ ընտանիքի անդամին: Ձերբակալուում էին նոյնիսկ հին բոլշեւիկներ, Կոմունիստ կուսակցութեան երբեմնի ղեկավարներ՝ կուսակցական յեղափոխական գործիչներ, ովքեր իրենց անդուլ գործունէութեամբ եւ նուիրումով ցարական կայսրութեան ամբողջ տարածքում բոլշեւիկեան մենատիրութեան հաստատմանն էին սատարել, նոյնիսկ ոմանք ի սէր այդ զաղափարի տարիներով ցարական բանտերում էին անցկացրել: Սուրէն Ղազարեանը յիշում է բանտախուցերում իր հանդիպած այդ հին բոլշեւիկներից մի քանիսին:<sup>27</sup>

Դարձեալ ըստ տիրող այդ նոյն համոզման, այդ սեւ տարիներին համեմատաբար աւելի մեղմ քաղաքականութիւն էր գնում Վրաստանում եւ Ադրբեջանում: Սուրէն Յովհաննիսեանն էլ է վկայում, «բոլոր ազգերը ներկայացուած էին աքսորուածների համայնքում: Իրականութեան մէջ իմ հինգ տարուայ աքսորի ընթացքում ես հանդիպել եմ միայն մէկ վրացու, բայց՝ ոչ մի ադրբեջանցու»:<sup>28</sup> Ըստ երեւոյթին, վրացիներն ու ադրբեջանցիները վայելում էին Ստալինի եւ Բերիայի կողմնակալութիւնը, իսկ նախով հարուստ Ադրբեջանի ժողովրդին սիրաշահել էր պետք: 1938-ից սկսած սփիւռքեան, կամ աւելի ճիշտ՝ դաշնակցական մամուլում հնչել են նմանատիպ դիտարկումներ: Արշամ Խոնդկարեանը (Ա. Աթան), օրինակ՝ իր խոր մտահոգութիւնն էր

էջ 60:

27 Ղազարյան, «Դա չպետք է կրկնվի», էջ 10:

28 Սուրէն Յովհաննիսեան (Oganessian), էջ 23:

արտայայտում յատկապես Հայաստանի մտաւորականութեան, գրողների ու բանաստեղծների դէմ իրականացուող հալածանքների նկատմամբ, «Խորհրդային եւ ոչ մէկ հանրապետութեան մէջ գրագէտների ու գրականութեան դէմ սկսած հալածանքներն այն ծաւալն ու խստութիւնը չունեցան, ինչ որ Հայաստանում... Նրանց բուն ճակատագիրը մեզ յայտնի չէ... ակներեւ է սակայն այն փաստը, որ նրանք բոլորը անէացել են իբրեւ գրական մշակներ...»:<sup>29</sup> Ի հարկէ, նման դիտարկումները խորհրդային մամուլի կողմից անտեսւում էին արհամարհանքով կամ ընդունւում թշնամական հակադարձութեամբ: «Խորհրդային Հայաստան» թերթը 1937-ի դէպքերի մասին հետեւեալ գնահատականն էր տալիս. «Ժողովուրդների առաջնորդ ընկ. Ստալինի ղեկավարութեամբ եւ անմիջական օգնութեամբ Հայաստանի բոլշեւիկները ջախջախեցին հայ ժողովրդի ամենառոխերիմ թշնամիներին՝ նողկալի դաշնակցական, տրոցկիստական-բուխարինական, բուրժուական-նացիոնալիստական դաւաճաններին»:<sup>30</sup>

Շշուկներ էին շրջանառւում, որ 1936-ին Ստալինն ու Բերիան գաղտնի համաձայնութեան են եկել՝ Հայաստանից հայերին Սիբիր ուղարկելու. այդպիսով, բնակչութեան թիւը 700.000-ից իջեցնելով, պիտի արդարացնէին Հայաստանը Վրաստանին կցելու իրենց ծրագիրը: Թէկուզ եթէ դրանք անհիմն շշուկներ լինէին, սակայն յստակ ցուցանիշն էին այն վախի ու կասկածի, որ այդ ժամանակ տիրում էր Հայաստանում:

Աղասի Խանջեանի<sup>31</sup> սպանութեան յաջորդող խառն ու շփոթ

29 Արշամ Խոնդկարեան (Ա. Աթան), «Հայրենիք», 1938, նոյեմբեր, էջ 151:

30 «Խորհրդային Հայաստան», 1938, մարտ 21: Արտատպւում է «Բազին» ամսագրում, 1995, թիւ 7-8-9, էջ 58:

31 Խորհրդային Հայաստանի Կոմունիստ կուսակցութեան առաջին քարտուղար (1930-1936) Աղասի Խանջեանի վայելած ժողովրդականութիւնը եւ ազգային շահեր պաշտպանելու նրա միտումները դուր չէին գալիս ժամանակի Անդրկովկասեան Մարզկոմի առաջին քարտուղար Լաւրենտի Բերիային: Խանջեանը իր վարքագծով սպառնալիք էր Ստալին-Բերիա համաձայնութեան,



տարիներին ուժն էր տիրապետողը: Ով կարող էր, սպառնում ու ճնշում էր միսին, իր անձնական շահի կամ վրեժխնդրության համար իր դիրքն էր չարաշահում եւ իր կաշին փրկելու համար քծնում ու շողոքորթում էր աւելի բարձրին: Անմեղ մարդիկ մեղադրում էին որպէս լրտես, Հայր Ստալինի վեհ գաղափարներին դաւաճանող, տրոցկիստ կամ ազգայնական դաշնակ կարծեցեալ ընդյատակեայ կազմակերպությունների անդամ: Խանջեանի սպանութիւնից յետոյ գումարուած Հայաստանի Կոմունիստ կուսակցութեան առաջին հանդիպմանը, 1936, հոկտեմբեր 2, կրակոտ ճառեր արտասանուեցին, եւ Խանջեանը ներկայացուեց որպէս այդ երկու ընդյատակեայ կազմակերպությունների ղեկավարողը: Խանջեանին փոխարինած Ա. Ամատունին ամբաստանում էր նրան, իբր՝ նա «հաշտուողական վերաբերմունք էր ցուցաբերում դաշնակների ու նացիոնալիզմի արտայայտություններին...» եւ, խօսքը միւս գնդակահարուած մտաւորականներին ու բոլշեւիկ ղեկավարներին յղելով, համոզուած յայտարարում էր, թէ «նրանք ճանապարհ էին բացում դաշնակների առջեւ»:<sup>32</sup>

Աւելորդ է ասել, որ Խանջեանը Դաշնակցութեան անդամ չէր, բայց գիտէր պատմութիւնը: Ա. Ամատունին «Խորհրդային Հայաստան»ում հրատարակած մի զեկոյցում յիշում է Դրաստամատ Սիմոնեանի խոստովանութիւնը ՉէԿայում, իբր

---

նրանց վարած քաղաքականութեան եւ նպատակների դէմ: Եւ 1936, յուլիս 9-ին, Բերիայի գրասենեակում եւ նրա գնդակով գետին փռուեց Խանջեանը, ով իբրեւ Հայաստանի պատուիրակութեան նախագահ Թիֆլիս էր եկել՝ մասնակցելու Մարգկոմի նախագահութեան ժողովին: Խանջեանի սպանութիւնը ծածկելու համար լուր տարածուեց իբր նա ինքնասպանութիւն է գործել: Հալածուեցին, բանտարկուեցին ու գնդակահարուեցին բոլոր նրանք, ովքեր վիճարկեցին այդ անհաւանական վարկածը: Իրականութիւնը բացայայտուեց Ստալինի մահից եւ Բերիայի դատավարութիւնից յետոյ:

32 Ա. Ամատունու ելոյթը մէջբերուած է Գաբրիէլ Լազեանի «Հայաստան եւ Հայ Դատը հայեւոս յարաբերութիւնների լոյսին տակ» աշխատութեան մէջ, Կահիրէ, «Յուսաբեր»ի հրատարակչութիւն, 1957, էջ 337: Յատկանշական է, որ ինքը՝ Ա. Ամատունին, եւ այդ ժողովին հակախանջեանական ելոյթներ ունեցած շատ կոմունիստներ աւելի ուշ իրենք էլ ստալինեան մաքրագործումների զոհ դարձան:

Խանջեանը ասել է իրեն. «Ի հարկէ, մի որեւէ բան պատահելիս՝ ես եւ դու կը փախչենք եւ հայ ժողովրդի տէրը կը դառնայ դաշնակցութիւնը»:<sup>33</sup>

Վահրամ Ալազանը գրում է. «Ներքին գործոց ժողկոմ Խաչիկ Մուղդուսու դժոխային մեքենան գործի անցաւ, մէկը միւսի ետեւից բանտ էին նետում նրանք, ովքեր ափսոսում էին Խանջեանին»։ Ըստ Ալազանի՝ յուլիսի վերջին Մուղդուսին հպարտօրէն զեկուցում էր, որ այդ գծով «Հայաստանում բանտ է նետուել մօտ եօթ-ութ հարիւր մարդ»։<sup>34</sup> Տխրահեռակ Մուղդուսին Բերիայի կամակատարն էր Հայաստանում, որ ինքն էլ ձերբակալուեց, երբ Ստալինը սկսեց մաքրագործել Բերիայի գործակիցներին։ Այդ մարդիկ իրեն պէտք չէին այլեւս։ Եւ Խանջեանի սպանութեանը յաջորդող այդ երկու տարիների ընթացքում ամբողջ Խորհրդային Միութեան տարածքում հազարաւորներ ձերբակալուեցին, գնդակահարուեցին, բանտարկուեցին, աքսորուեցին։ Դա Ստալինի քաղաքական մեծ մաքրագործումն էր։

Հայրս յիշում էր աքսորում ունեցած իր խօսակցութիւնը Աղասի Խանջեանի մի քանի մօտիկ գործակիցների հետ, ովքեր աքսորուել էին նրա սպանութիւնից յետոյ։ Դժբախտաբար, հայրս դրանց անունները չտուեց, կամ գուցէ տուեց, բայց մենք, անհոգ ու անուշադիր, մտքում չպահեցինք։ Հայրս ասում էր, որ բացատրել է նրանց, թէ ինչ է Դաշնակցութիւնը եւ ինչ դիրքորոշում ունի հանդէպ Խորհրդային վարչակարգը Հայաստանում։ Նա հպարտ էր նրանց տուած պատասխանով՝ «Մեզ դատապարտել են իբրեւ դաշնակցականներ, երբ մենք չգիտէինք անգամ, թէ ինչ է Դաշնակցութիւնը։ Բայց եթէ Դաշնակցութիւնը այն է, ինչ դու ներկայացնում ես, հպարտ ենք, որպէս դաշնակցական մեղադրուած լինելու համար»։ Երեւի թէ հայրս հպարտութիւն

<sup>33</sup> Նոյն տեղում։

<sup>34</sup> Ալազան, «Տառապանքի ուղիներով», էջ 5։

ներշնչող այս հագուադեպ թուլեների մասին կը գրէր: Ո՞վ էին այս մարդիկ, ազատուեցի՞ն, արդեօք, թե՞ չդիմացան, մեռան ու թաղուեցին անյայտ ու անանուն գերեզմանափոսերում:

1937-ի մաքրագործումները երեւի թէ Հայաստանում եւ ամբողջ Խորհրդային Միութիւնում Ստալինեան բռնաճնշումների գագաթնակէտն էին: Բայց իրականութեան մէջ ինձ համար 1937-ը մի խորհդանշան է միայն: Մաքրագործումները ո՛չ սկիզբ ունէին, ո՛չ վերջ: Միբիւրի աքսորավայրերը գոյութիւն ունէին դեռ Յարական Ռուսաստանում: Գուլագի համակարգը 1918-ին՝ Լենինի օրօք հաստատուեց: Ստալինը ընդարձակեց եւ կատարելագործեց այն: Անտեղի ու անարդար ձերբակալութիւններով եւ աքսորով ստեղծեց վախի ու կասկածի մի մթնոլորտ, որ շարունակուեց իր մահից յետոյ, զոնէ մինչեւ Բերիայի գնդակահարումը: Եւ դա հասարակական վարքագիծ դարձաւ: Անն Ափրլբամը, պատերազմի եւ գաղափարախօսութեան յարաբերութեան հենքի վրայ, վերլուծում է այս աշխատանքային մահաշուք ճամբարների ընթացքը՝ ծնունդից մինչեւ փլուզում, եւ եզրակացնում. «Մեծ տեռորը իր ազդեցութիւնը թողեց ճամբարների թէ՛ պահակների եւ թէ՛ կալանաւորների մտածելակերպի վրայ»:<sup>35</sup> Եւ կառավարական համակարգը հէնց այդ մտածելակերպի վրայ հաստատուեց:

Յատկանշական է, որ նոյնիսկ Խրուշչովի իշխանութեան օրօք տիրող համեմատական ազատութեան մթնոլորտում, երբ մարդիկ համարձակութիւն էին գտել անցեալի հարցերը բարձրաձայնելու, ինքնագրաքննութիւնն ու զգուշաւորութիւնը դարձեալ աւելի խիստ էր Հայաստանում: Մարդիկ դեռեւս վախենում էին այդ զգայուն նիւթի մասին գրել կամ խօսել: Դա մնացել էր հնուց: «Հայաստանի այդ շրջանի ղեկավարները դարձել էին Անդրերկրկոմի եւ

---

35 Anne Applebaum, *GULAG*, էջ 93:

կենտրոնի հիւր կամակատարները», – գրում է Արմենակ Մանուկեանը՝ ակնարկելով կենտրոնի իշխանութեան նկատմամբ հայ բոլշեիկ ղեկավարների հիւր հնազանդութիւնը:<sup>36</sup> Եւ այդ վերաբերմունքը շարունակուել էր հակաստալինեան շարժումից էլ անդին՝ մինչեւ 1980-ական, 1990-ական թուականները, երբ վերջապէս կապանքներն արձակուեցին:

Ուրեմն, երբ խրուչչովեան մեղմ քաղաքականութիւնը՝ ձնհալքը յետքայլ կատարեց, եւ ուժի տիրապետութիւնն ու բարձրաւորին քծնելը դարձեալ կենսաձեւ դարձաւ, Հայաստանը պատրաստ էր: Հայաստանի Գրողների միութեան կոմունիստների ֆրակցիան դռնփակ նիստում որոշեց 1937-ի բռնաճնշումների մասին ոչինչ չհրատարակել: Դրանից յետոյ արդէն գուլագներից վերապրած նախկին կալանաւորների յուշագրութիւնները հրատարակութեան թոյլտուութիւն չստացան:

Նայիրի Զարեանի ինքնակենսագրական վէպը՝ «Հարդագողի ճամբան», որի մէջ միայն հպանցիկ ակնարկ կար ստալինեան բռնաճնշումների մասին, հրատարակութեան էր ներկայացուել 1963-ին եւ մի քանի անգամ յետ ու առաջ գրաքննութեան ենթարկուելուց յետոյ հրատարակութեան թոյլտուութիւն էր ստացել: Նոր քաղաքականութեան արդիւնքում թոյլտուութիւնը յետ վերցուեց եւ գրքի հրատարակութեան վրայ արգելք դրուեց:<sup>37</sup>

Ստալինեան բռնաճնշումների մասին գրելն ու խօսելը դեռ երկար ժամանակ թաքու մնաց Հայաստանում: Սիլվա Կապուտիկեանը վկայում է. «1937 թուականի եւ դրան յաջորդող տարիների մասին... ես էլ եմ գրել: Գրել եմ դեռեւս 1973 թուականին «Խճանկար հոգու եւ քարտէզի գոյներից» գրքի վրայ աշխատելիս:

36 Մանուկեան, «Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում, 1920–1953», էջ 56:

37 Զարեանի «Հարդագողի ճամբան» հրատարակուեց 1989-ին: Այնուամենայնիւ, մի քաղուածք այդ վէպից, որ ստալինեան բռնաճնշումներին էր ակնարկում, «Ծանօթ պողոտայ» վերնագրով, 1964-ին հրատարակուեց «Գրական թերթում»

Մակայն այդ հատուածները գրաքննութեան անառարկելի միջամտութեամբ դուրս մնացին գրքից»:<sup>38</sup>

Սուրէն Ղազարեանն առաջիններից էր Հայաստանում, որ գրեց գուլագների ամբողջական, սարսափելի պատկերը ներկայացնող իր յուշերը: Բնագիրը ռուսերէն էր եւ «Это не должно повториться» (Դա չպետք է կրկնուի) վերնագիրն էր կրում: 1967-ին Ղազարեանը հրատարակութեան խնդրանքով գործն ուղարկեց «Новый мир» պարբերականին, Մոսկուա: Բայց ուշացել էր: Անցել էր այդ նիւթը հանդուրժող քաղաքականութեան ժամանակաշրջանը: Սանձերը քաշուել էին նորից: Թերթի խմբագիր Ալեքսանդր Տուարդովսկու պատասխան նամակը ցուցանիշն է Խորհրդային Միութիւնում տիրող մտայնութեան: Նամակում նա գովում էր Ղազարեանի քաջութիւնն ու վճռականութիւնը, որով նա կարողացել էր դիմանալ աքսորի չարչարանքներին, վերապրել ու պատմել ի լուր աշխարհի: Նա դրուատում էր հեղինակի գրելաոճը, մտքերի յստակութիւնն ու արտայայտիչ, վառ պատկերաւորումը: Այնուամենայնիւ, այդ օրերին այդպիսի գործ հրատարակելը հնարաւոր չէր տեսնում: Տուարդովսկին դատապարտում էր Ղազարեանի նկարագրած պատժամիջոցները եւ աւելացնում. «Եւ նա, ով մարտնչում է յանուն մոռացութեան, յանուն «վէրքերը չբանալու», – այդպիսիք կան մեր մէջ, – նա կամայ թէ ականայ նեղ օրուայ համար պահում է այդ «ձեւերն» ու «մեթոդները»»: Տուարդովսկին, յամենայնդէպս, վստահեցնում էր, որ կգայ այն օրը, երբ Ղազարեանի յուշերը եւ նման շատ գործեր լոյս աշխարհ կը տեսնեն: Սուրէն Ղազարեանի յուշերը երկու տասնամեակ յետոյ հրատարակուեցին:<sup>39</sup>

38 Տե՛ս Միլվա Կապուտիկյան, «Էջեր փակ գգրոցներից», Երևան, «Ապոլոն» հրատ., 1997, էջ 10: «Ճանկար հոգու եւ քարտեզի գույներից» աշխատութիւնը, որին ակնարկում է հեղինակը, հրատարակուել է 1975-ին Երեւանում եւ պարփակում է նրա յուշերն ու տպաւորութիւնները 1962-63 եւ 1974 թուերին արտասահման կատարած իր ճամբորդութիւններից եւ սփիւռքահայ համայնքներին տուած այցելութիւնից:

39 Տուարդովսկու նամակը հայերէն թարգմանութեամբ ընդգրկուած է ռուսերէն

Յիշենք, որ Սոլժենիցինի «Один день Ивана Денисовича»-ն (Մէկ օր Իւան Դենիսովիչի կեանքից) 1962-ին տպագրուել էր նոյն պարբերականում, նոյն խմբագրի օրօք: Բայց ժամանակներն արագ փոխուեցին: Սանձարձակ արագութեամբ ընթացող հակաստալինեան շարժումը կասեցուեց: 1964-ին Խրուշչովը պաշտօնանկ եղաւ: Խորհրդային Գրողների միութիւնը սուր քննադատեց Սոլժենիցինի 1967-ին հրատարակութեան համար ներկայացրած «Ракочный корпус»-ը (Cancer Ward) եւ մերժեց այն հրատարակել: Յատկանշական է, որ բացի «Один день Ивана Денисовича»-ից եւ մի քանի ակնարկից, Սոլժենիցինի բոլոր գործերը արտասահմանում են հրատարակուել: Եւ երբ 1970-ին նրան Նոբելեան մրցանակն էին պարգևում, նա չհամարձակուեց այն ստանալու համար երկրից դուրս գալ, որովհետեւ գիտէր, որ վերադարձին իրեն ներս չեն ընդունի:<sup>40</sup> 1974-ին ի վերջոյ Սոլժենիցինին արտաքսեցին Խորհրդային Միութիւնից: Նա քսան տարի ապրեց Արեւմուտքում՝ Խորհրդային քաղաքացու իր իրաւունքը պահելով: 1994-ին վերադարձաւ Ռուսաստան, ուր եւ մահացաւ 2008-ին: Ինձ համար շատ սիրելի այս գրողը հետաքրքիր զուգադիպութեամբ ծնուել էր 1918, դեկտեմբեր 11-ին՝ իմ ծննդեան օրը, 18 տարի ինձանից առաջ:

Գորբաչովեան պերեստրոյկայի ժամանակներից սկսած եւ յատկապէս երբ 1989-ին Մոսկուայում հիմնուեց Мемориал ընկերակցութիւնը, եւ նորաբաց արխիւների ուսումնասիրութիւններն իրենց արդիւնքը տուեցին, աշխարհի առջեւ բացուեց մինչեւ այդ թաքցուած սոսկալի իրականութիւնը:

բնագրի «Դա չպետք է կրկնվի» վերնագրով հայերէն տարբերակի 1988-ի հրատարակութեան մէջ:

40 Յիշենք Доктор Живаго-ի (Դոքտոր Ժիւագո) հեղինակ Բորիս Պաստերնակին, ում պարտադրեցին մերժել 1958-ին նրան առաջարկուած Նոբելեան մրցանակը:

Աելի մեծ յաճախականութեամբ սկսեցին հրատարակուել գուլագներից վերապրածների յուշագրությունները: Այլեւս պարզ դարձաւ այդ դժոխային պատժարանների նպատակը, կառոյցը, գործելակերպը, մթնոլորտը, որ աւելի դիւային էր, աւելի սարսափելի, քան Նացիների հնարած եւ գործադրած սպանութեան միջոցները մահուան ճամբարներում: Զանգուածային ոչնչացման այդ հաստատութիւններում մահը վարկեանական էր: Նացիստական ճամբարների տնտղութիւնը մի քանի տարի էր՝ Հիտլերի իշխանութեան օրօք միայն, իսկ գուլագը երկարատեւ էր, մահը երկարաձգուած. կալանաւորները մեռնում էին մի քիչ ամէն օր:

Եւ իրօք, կոթողային աշխատասիրութիւն էր վերջերս Մոսկուայում հրատարակուած *Istoriia stalinskogo GULAGa: Konets 1920-h - pervaya polovina 1950-h godov Sbornik dokumentov v semi tomakh*-ն (Ստալինեան Գուլագի Պատմութիւն, 1920-ի վերջերից սկսած մինչեւ 1950-ականի առաջին կէսը, փաստաթղթերի հաւաքածու եօթ հատորով): Այս փաստաթղթերը բացայայտում են բռնաճնշման եւ պատժի խորհրդային քաղաքականութիւնը, ինչպէս եւ կեանքի մանրամասնութիւնները բանտային ճամբարներում: Ու դեռ սա քիչ է եւ ուշացած: Այլեւս հնարաւոր չէ դատել իսկական յանցագործի եւ նրա մեծ ու փոքր մեղսակիցների հսկայածաւալ ոճիրը մարդկութեան դէմ:

Այո՛, կարելոր է յիշել եւ բացէ՛ք բաց խօսել պատմութեան այդ սոսկալի ժամանակահատուածի մասին: Ինձ համար կարելոր է մանաւանդ այդ պատմութիւնը Հայաստանում, երբ Ստալինն ու նրա գործակալը՝ Բերիան, Կովկասում հայ ժողովրդին համարեցին իրենց շահերին սպառնացող վտանգ եւ արմատախիլ բնաջնջեցին մեր ազգային, մտաւորական վերնախաւը: Ստալինեան մաքրագործումները Հայաստանում փշրեցին մեր ժողովրդի մտաւոր կարողականութիւնը, որ պիտի մշակէր

ազգային շահերին հետամուտ ապագայ ղեկավար-մտավորական սերունդ: Արմենակ Մանուկեանի բառերով՝

Այսպիսով, 1930-ական թուականների ստալինեան բռնությունները Հայաստանում լուրջ հարուած հասցրին նաեւ քաղաքական մտքին եւ սոցիալապէս ակտիւ խաւերին, որն իր բացասական ազդեցութիւնը թողեց յետագայ տարիներին: Դա ճակատագրական եղաւ նաեւ նոր սերնդի ձեւավորման առումով: Կտրուեց ազնիւ, նուիրուած կադրերի պատրաստման գործընթացը եւ ճանապարհ բացուեց բոլոր տեսակի պնակալէզների, քծնողների, մարդկային և ազգային դէմքը կորցրածների բարձրացման ու ղեկավար պաշտօններ գրաւելու համար:<sup>41</sup>

Այսօր աշխարհը գիտէ ստալինեան 30-ամեայ բռնաճնշումների մասին՝ հալածանքների, բանտարկութեան, գնդակահարումների եւ աքսորի մանրամասնութիւններ: Ի հարկէ, երբեք հնարաւոր չէ ամբողջական պատկերացում ունենալ: Իսկ յատկապէս Հայաստանում տեղի ունեցածի մասին դեռ շատ բան կայ անելիք, մանաւանդ որ բաց են արխիւները եւ աւելի տրամադրելի:

Նրանով հանդերձ, որ իրողութիւնը բացայայտուած է, ինչո՞ւ նախկին Խորհրդային Միութեան հանրապետութիւնների ղեկավարները այսօր չեն հաշուի նստում անցեալի հետ. գոնէ ձեռնարկեն ստալինեան բռնաճնշումների զոհերի յիշատակին կոթողներ կառուցել: Արդեօք, դեռ ուժի դիրքերո՞ւն է ԿաԳէԲէն: Գուրգէն Մահարին դառը հեզնանքով նկարագրում է իր տեսած առաջին յուշարձանը, որ ճամբարի պահակներն էին կանգնեցրել.

Թող գայ այն օրը, երբ քաղաքների հրապարակներից եւ մեն ու փոքր կայաններից կը վերանան ժողովուրդների երկրային,

41 Մանուկյան, «Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում, 1920–1953», էջ 59:



սանձարձակ Հօր մեծ ու փոքր արձանները: Սակայն հուր ու յախտեան թող կանգուն մնայ այն արձանը, որի ստեղծումը ես տեսայ, եւ որը հիմա էլ կանգնած է սառցէ ոտներով իմ սրտի վրայ: Այդ պատահեց բեւեռում, յախտեանական սառույցների դաժան գօտում: Մահուան ճամբարից դուրս, ճամբարից տեսանելի սառցէ մի բարձրութեան վրայ կանգնեցրին երիտասարդ կալանաւորին, դոյլերով ջուր կրել տուին ու ողողեցին նրան: Զուրն արագ սառեց եւ բարձրութեան վրայ կանգնած մնաց մարդկային ձեւերով սառցէ մի յուշարձան: Մահացած եւ մահացող միլիոնաւոր կալանաւորների յիշատակը յաւերժացնող միակ յուշարձանն էր դա:<sup>42</sup>

Ուշադրութեան արժանի է Խորհրդային Միութեան փլուզումից քիչ առաջ կեանքի կոչուած Մեմորեալ Ընկերակցութեան գործունէութիւնը, որի առաջին նախագահը Խաղաղութեան Նոբելեան մրցանակի դափնեկիր Անդրէյ Սախարովն էր: 1989-ից մեծ թափով սկսած աշխատանքը՝ յուշարձանների նախագիծ, փաստաթղթերի հաւաքում, կարծես քաղաքական ճնշման ենթարկուելով կասեցուեց: Անցեալը մոռացութեան տալը դարձեալ քաղաքական վարքագծի մաս կազմեց: Իսկ Հայաստանո՞ւմ: Հարց ու փորձ արի, եթէ նման մի յուշարձան կար, պիտի գնայի եւ իմ յարգանքս մատուցէի հօրս ճակատագիրը կիսող ստալինեան բռնաճնշումների զոհերի յիշատակին: Իմ բարեկամ եւ գործակից Յարութիւն Մարութեանի բացատրութիւնը լսելով՝ զգացի, որ Հայաստանում էլ նոյնն է, ինչ որ միւս հանրապետութիւններում, յատկապէս՝ Ռուսաստանի Դաշնութիւնում: Ուրեմն, ժողովրդի բուռն խնդրանքով, 1970-ին Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 50-ամեակին նուիրուած յուշահամալիրի տարածքում յուշարձաններից

42 Տե՛ս «Միբիրական», էջ 329, «Ծաղկած փշալարեր» վիպերգից:

մէկի վերնամասում մի գմբեթաձեւ կառոյց աւելացուեց եւ յուշարձանախմբի մուտքին գրուեց «Յիշատակ հայ բռնադատուած զոհերի»։ Իսկ յուշարձանի վրայ քանդակուած է Եղիշէ Չարենցի «Ամբոխները խելագարուած» բանաստեղծութիւնից մի հատուած. «Բոլոր նրանց հոգիներին արեւաւառ,-/Կեանքի՛, մահի՛ այս ամենի աղջամուղջում/Ողջակիզուող հոգիներին – ողջո՛յն, ողջո՛յն», որ յստակօրէն դարձեալ բոլշեւիկեան յեղափոխութեան է յղում:<sup>43</sup> Ըստ Յարութիւն Մարութեանի՝ կան նաեւ այլ յուշարձաններ, որոնք կան անձնական նախաձեռնութիւններ են՝ Ստալինի զոհ ծնողի, տատիկի կամ պապիկի յիշատակին, կամ հաւաքական՝ ի յիշատակ, օրինակ, նոյն գիւղից զոհուածների:<sup>44</sup>

«Մեզ զգուշացնում են չխօսել այդ մասին», գրում է Սոլժենիցինը. որովհետեւ ամէն անգամ, երբ սանձերը թուլանում են, ինչպէս պատահեց Խրուշչովի օրօք, ստալինեան սարսափելի պատժամիջոցների մասին փաստերի ու ապացոյցների գլխապտոյտ յորձանքը սահմանն անցնում է: «Եթէ սկսենք միլիոնների տառապանքը յիշել, մեզ կասեն՝ պատմութեան հեռապատկերը խախտում ենք: Եթէ յամառօրէն մեր բարոյական վարքագծի էութիւնը փնտրենք, կասեն՝ դա մեր նիւթական յառաջդիմութիւնը կը մթնեցնի»:<sup>45</sup>

Հայրս սկսեց գրել այդ մասին՝ զոնէ հային ճանաչել տալու համար, թէ ինչ էր խորհրդային վարչակարգը, թէ ինչ էր արել Ստալինը, երբ տիրում էր միլիոնաւոր մարդկանց վրայ, ովքեր շղթայուած ապրում էին վախի ու սարսափի մթնոլորտում,

43 Յուշարձանը բացում է տարին մէկ անգամ յունիս 14-ին: Յուշարձանի վրայի յաւելումը կատարել է նոյն համալիրի ճարտարապետ Զիմ Թորոսեանը, որ որդին է 1937-ին բռնադատուած Պետիկ Թորոսեանի:

44 Լ. Աբրահամյան, Գ. Շագոյան, «Պատմագրութեան եւ հիշողութեան միջև. Խորհրդային Հայաստանի բռնաճնշումների հուշարձանացումը»: Տե՛ս «Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում. պատմություն, հիշողություն, առօրյա», էջ 258-268:

45 Solzhenitsyn, *Gulag Archipelago*, էջ 94:

կամ՝ ապրում էին աստիճանական մահը՝ առանձնացուած, մարդկութեան աչքից հեռու, տաժանակիր աշխատանքի ճամբարներում: Հայրս գիտէր, թէ ով է Ստալինը: Դաշնակցութիւնը գիտէր, թէ ով է Ստալինը: Դեռ 1931-ին Դաշնակցութեան պաշտօնաթերթ «Դրօշակ»ը իր պատկերաւոր բնութագրումն էր կատարել. «Խորհրդային Միութեան մէջ ամենանշանաւոր քիմիկոսը Ստալինն է: Նա կարող է մարդուն վերածել աղբի, ինչպէս վարուեց Տրոցկու վերաբերմամբ, բայց աղբից էլ կարող է մարդ շինել, ինչպէս արաւ Միկոյեանին»:<sup>46</sup> Հայրս իր յուշերը գրել էր սկսել, երբ սփիւռքահայ որոշ ղեկավարներ, յետստալինեան փոփոխութիւններին հաւատ ընծայելով, փորձում էին սովետների հետ մերձեցման քաղաքականութիւն վարել եւ հօրս ազդարարում էին այդպէս խստօրէն ջննադատել սովետներին:

Հօրս քաղաքական վերլուծութիւններն ու խմբագրականները «Ալիք»ում ցոյց են տալիս, թէ ինչպէս կ'ընդունուէր նրա յուշագրութիւնը, եթէ կարողանար վերջացնել եւ 1970-ի վերջերին հրատարակել այն, եթէ առիթն ունենար ցոյց տալու Երկաթէ վարագոյրի յետեւ թաքնուած սովետական դիւային դատական համակարգը եւ կիրարկուող սարսափելի, անմարդկային պատժամիջոցները: Դրսի աշխարհը շատ քիչ գիտէր, նախընտրում էր չիմանալ, չտեսնել էր ձեւացնում: Սովետական փայլուն քարոզչութիւնը քողարկում էր իրականութիւնը: Սովետական գաղափարախօսութիւնը՝ ընկերային հաւասարութիւն, արդարութիւն բոլորին հաւասարապէս, շարունակում էր գրաւել դիւրահաւատներին: Աշխարհը գովաբանել էր Խրուշչովի

46 «Դրօշակ»ի 1931, թիւ 12, էջ 318: Այս մէջբերումը տնէ «Բագին», 1995, թիւ 7-8-9, էջ 75: Հանրայայտ կոմունիստ Անաստաս Միկոյեանը Ստալինի մօտիկ գործակիցն էր, ինչպէս ասում են՝ նրա աջ ձեռքը, մանաւանդ՝ երբ պէտք էր գլուխ բերել նրա սեւագործ ծրագիրները, երբ պէտք էր խորացնել քաղաքական ճնշումները, հալածանքն ու բանտարկութիւնը Հայաստանում: Նրա այցելութիւնները Երեւան միշտ նախասկիզբն էին չարաշուք դէպքերի: Մեծ էր նրա դերը Հայաստանում իրագործուող 1937-1938-ի մաքրագործումների մէջ:

բարեփոխումներն ու նրա քննադատությունը ընդդեմ Ստալինի ստեղծած «անհատի պաշտամունք»ին: Հայրս չէր հաւատում այդ բոլորին: Չէր հաւատում, որ կարելի է մէկ անձի վերագրել երեսուն տարիների ընթացքում կատարուած վայրագ գազանութիւնները, միլիոնների չարչարանքը գուլագներում: Սիլվա Կապուտիկեանը իրաւացիօրէն «անհատի պաշտամունք» ձեւակերպումը կոչել էր խրուշչովեան մեղմաբանութիւն՝ ստալինեան բռնապետութեան արհաւիրքը քօղարկելու միջոց: Կապուտիկեանը գրում է, որ Խրուշչովի գալով «կեանք մտաւ «անհատի պաշտամունք» շատ անմեղ ձեւակերպումը երեւի մարդկութեան պատմութեան մէջ մեղքերով ամենից ծանրաբեռ ժամանակաշրջանի մասին»: Բայց ինքը՝ Սիլվա Կապուտիկեանն էլ է վկայում, որ այդ ժամանակաշրջանի ոճրագործութիւնները բացայայտող հաւաքները, որ պիտի «անհատի պաշտամունք» մեկնաբանուէին, սահմանից անցան ու ճնշուեցին հէնց Խրուշչովի կողմից:<sup>47</sup> Իրականութեան մէջ յանցաւոր էին նաեւ մեծ ու փոքր դահիճները, ովքեր ամենաանբեւեակայելի միջոցներով չարչարեցին անմեղ մարդկանց եւ սարսափ տարածեցին ամենուրեք: Ստալինը մեղադրուեց, Բերիան ու մի քանիսն էլ գնդակահարուեցին, սակայն Ազգային Անվտանգութեան հազարաւոր գործակալներ ազատութեան մէջ մնացին, չամբաստանուեցին:

Եւ երբ խրուշչովեան մեղմ քաղաքականութեան ժամանակաշրջանը իր աւարտին հասաւ, արդեօք աշխարհը հարց տուե՞ց, թէ ինչու հին բոլշեւիկների վերականգնումն ու անմեղ մտաւորականների արդարացումը, որ այդքան եռանդով էր սկսուել, չարունակուեց: Մանձերը քաշուեցին եւ գործընթացը կասեցուեց: Կարգախօսի եւ մտածելակերպի վերածուեց «հին վերքերը չբացենք» արտայայտութիւնը:

47 «Էջեր փակ գգրոցներից», էջ 35:

Անն Ափրիբամը նման մտածելակերպի էր հանդիպել 1990-ականներին՝ դեպի նախկին բանտային ճամբարները կատարած հետազոտական իր ճամբորդության ընթացքում: Նա վկայում է, որ մարդիկ նախընտրում էին իր հետ խօսակցութեան չբռնուել, մանաւանդ երբ նա խօսք էր բացում ստալինեան հալածանքների մասին. «Ինչո՞ւ այդ ցաւոտ նիւթի փոխաբէն Խորհրդային Միութեան յաղթանակների եւ ձեռքբերումների մասին չես խօսում»: Ես էլ նոյն փորձն եմ ունեցել Հայաստանում՝ Խորհրդային Միութեան փլուզումից առաջ եւ յետոյ: Ստալինեան բռնաճնշումների մասին բաց, բայց զգոյշ քննարկումը Հայաստանում Խրուշչովի իշխանութեան հետ սկսուեց ու նրա անկումով էլ վերջ գտաւ: Կարծես մարդիկ մղուած էին հաւատալու, որ «պէտք չէ անցեալը քրքրել, այլ՝ հայեացքը ուղղել դեպի ապագայ»: Արդէն նրանց վարժեցրել էին այդպէս մտածել ոչ շատ հեռու անցեալում Հայոց Եղեռնի, հայկական ջարդերի ու կոտորածների մասին: Եւ եթէ մէկը համարձակուի էր այդ աղէտալի անցեալի մէջ խորանալ, նրան մագոխիստ էին անուանում: Ինձ այդպէս կոչեց Խորհրդային Հայաստանից մեր համալսարանը այցելութեան եկած մի շատ ճանաչուած մտաւորական, երբ իմացաւ, որ Հայոց Ցեղասպանութեան ուսումնասիրութեամբ եմ զբաղւում:

Милый брат Тарас!  
 Я пишу тебе, надеюсь, тебе  
 понравится, Краснодранский брат. Я  
 пишу тебе, тебе пишу о делах твоих  
 о всех делах. Тарасу по почте  
 написать о себе и о других.  
 Хорошо будет если получишь  
 от Капитана, Гейде тебе  
 и передал тебе письма и по  
 по почте, табак.  
 Ты же напиши на письмо  
 и напиши мне скоро جواب  
 Криво и много тебе и  
 Гейде  
 Твой брат  
 Милый брат Асатур.  
 Тарасу письмо Тарас и Гейде, и  
 напиши, тебе буду о тебе написать  
 к тебе. Очень прошу тебе переписать  
 меня, но в большой сумме написать  
 не могу.  
 Твой брат  
 Милый брат. Краснодранский брат, надеюсь  
 понравится тебе.

ПОЧТОВАЯ КАРТА  
 Карту Ивану Тарасу  
 Ивану Тарасу  
 Пилаван  
 КАРТА Асатуру Миласу  
 для Тараса  
 1900  
 22478  
 Краснодранский брат, надеюсь  
 понравится тебе.

АДРЕС  
 ПОЧТОВОГО  
 М

ПРОСЬБА  
 ПОСЛАТЬ

ПОСЛАТЬ



Князь, Бискупъ, Губернаторъ  
Университета, Академикъ  
Бискупъ, Губернаторъ

Կրկնատարի շրջան,  
Կորիզի ասան. փայտակի 224/8  
Կրկնատի Բ.

28. *Prunella vulgaris* L.

Եւ իւրաքանչեւ անոցն եւ զսկսեալ եւ ի  
զբանտեանք զքանիւ անբնիկ գիշերս: Զե-  
րոր անտեմ լուծեալսն անցանքսն զայն  
անհանգիստ եւ չոր եւ երեսնեանք հաւաց:

Die Arbeit ist hauptsächlich reinver-  
eitelnd, und unproduktiv, aber ganz gewiss  
in der Kämpferpersönlichkeit Spurens;

Կատարելով արդիվ ուսուցիչի պարտա-  
նքը մեր հասարակությունը:

Sept heures pour tout le long la baptême est  
fin. P. 2000/10

[illegible]

ար քրմի փոխարկեր, բայց քննար գու-  
նը անարդիւնա կամ չի:

See Perry 7/13

Իմ հայրիկ. Կրանիստեպիլ ջրբուհ, ևս-  
Ռուսի զիւղ (поселок), փայտ արկղ 224  
Ը ժողովուրդիկ.

Բացիկի բովանդակության հայերեն թարգմանությունը



Քոյրս Ռուզանը եւ ես 1945-ի վերջերին  
Այս նկարի ետեւում հայրս գրել էր.  
Նոյնից ուղարկել են ինձ. սակայն ինձ չեն տուած:  
Բաղդիկ  
1955, 22 փետրուար  
Թեհրան






Մտալինի արձանը Մոսկուայում ու ետեւում՝ նրա զոհերի յիշատակին կանգնեցում յուշակոթողը



Նորիլսկում կանգնեցում «Գողգոթա» յուշակոթողը



Գուլագի յուշարձան Պետրոգրադում  
Борцам за свободу (Ազատության համար պայքարողներին)



Յուշարձան Ղափանի առաջաձոր գիւղում  
«Անմեղ մեղաւորների յիշատակին»



Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատման 50-ամեակին նուիրուած յուշահամալիրի  
այն յուշարձանը որ բռնադատուածների յիշատակին յատկացուեց

## ՄԵՆՔ՝ ԵՐԿՈՒ ՈՐԲԵՐ, «ՈՐԲԵՒԱՅՐԻ» ՄՕՐՍ ՀԵՏ

Մենք անհայր մեծացող երկու որբ աղջիկներ էինք, եւ մայրս՝ որբեւայրի մի կին, միայնակ մայր: Մենք Սովետի հալածանքների մնացորդացն էինք:

Երջանիկ ամուսնություն եւ երկու փոքրիկներ, ընտանեկան ուրախ, ջերմ ու հոգատար մթնոլորտ: Ու յանկարծ մի օր մենք մենակ ենք, գիշերը պիտի անցկացնենք վախի ու տագնապի մէջ: Հայրս տուն չի եկել:

1944 թուի յունուար 3-ն էր:

Շատ բան չեմ յիշում այդ փոթորկալից օրերից. փոքր էի, հազիւ 7 տարեկան: Բայց զգում էի այն անբացատրելի թախիծը, որ մութ ստուերի պէս պարուրեց մեր կեանքը, մեր տան մթնոլորտը, եւ չվերացաւ ամբողջ տասնեւեկ տարի... Երկա՛ր ժամանակ:

Մի անօգուտ, անարդիւնք փնտռտուք սկսուեց հօրս գտնելու համար: Նրանով հանդերձ, որ կասկած չկար, թէ ով է պատասխանատուն, բայց պէտք է իմանայինք, թէ ինչ է պատահել նրա հետ: Արդեօք սպանե՞լ են, առեւանգե՞լ, բանտարկե՞լ, աքսորե՞լ:

Ասատուր հօրեղբայրս եւ մի քանի դաշնակցական ընկերներ, ովքեր դեռ մեր շուրջն էին, մօրս խորհուրդ տուեցին դիմե՛լ ուր որ կարելի է, բացատրել ամուսնու անյայտացման մասին եւ նրան գտնելու համար օգնություն խնդրել: Բացատրեմ, որ այդ

օրերին շատ ընկերներ զգուշության համար նախընտրում էին մի քիչ հեռու մնալ մեր ընտանիքից. Թավրիզում տիրող վախի մթնոլորտում խորհրդային վարչակարգի թշնամու ընտանիքի հետ յարաբերելը վտանգաւոր էր: Դու էլ քեզ ձերբակալության վտանգի տակ էիր դնում: Հիմա, երբ կարդում եմ ստալինեան սարսափի տարիների մասին, Խորհրդային Միութիւնում էլ նոյն մթնոլորտն էր տիրել: Ձերբակալուածների ընտանիքները մնացել էին մենակ, մեկուսացած, անօգնական: Խորն էր եղել այդ իրողության հոգեբանական ազդեցութիւնը, որ իր հետեւանքներն էր թողել ու չէր վերացել Ստալինի մահին յաջորդող համաներումից յետոյ անգամ: Ի հարկէ, մեր վիճակը Երկաթէ վարագոյրի յետեւում տիրող իրողության համեմատ շատ աւելի լաւ էր: Գոնէ ուժի մէջ էր Իրանի կառավարութիւնը, թէկու՞ թոյլ այդ օրերին, մանաւանդ՝ ոչ այնքան ազդու Ատրպատականի նահանգում: Բայց կարելի էր դիմել կառավարութեանը: Ու մայրս սկսեց հարցուփորձը:

Մօրս թղթերի մէջ պահուած են պատճէնները նրա դիմումնագրերի՝ Կրթութեան նախարարութեան, նոյնիսկ՝ Իրանի Ֆոլզիէ թագուհուն: Պահուած է նաեւ որպէս պատասխան մօրս ուղարկուած պատճէնը 16/12/1322 (մարտ 7, 1944) թուակիր նամակի, որ Կրթութեան նախարարութիւնը գրել է Ատրպատականի ոստիկանութեանը: Նամակում յանձնարարուած է մանրամասն հետախուզութիւն ձեռնարկել՝ գտնելու Դոքտոր Բաղդասար Մինասեանին, որ կորած է համարում, եւ արդիւնքի մասին զեկուցել նախարարութեան եւ Դոքտոր Մինասեանի կնոջը: Կայ նաեւ նախարարութիւնից Ատրպատականի նահանգային նախարարութեան գրուած մի նամակ, ուր յանձնարարում է Մինասեանի ամսական աշխատավարձը նրա կնոջը վճարել: Տարօրինակ է, սակայն, իօրս աշխատավարձը՝ մեր ընտանիքի միակ եկամուտը, կտրուեց այն օրից, երբ հայրս բացակայեց դպրոցից, եւ երբեք չվերականգնուեց: Նախարարութեան

յանձնարարութիւնը ի դերել էր անցել:

Մայրս ծեծեց ամէն դուռ, բայց անօգուտ: Աւելի ուշ Կրթութեան նախարարութեանը գրած 16/5/1324 (յուլիս 7, 1945) թուակիր մէկ այլ խնդրագրում մայրս պատմում է անյայտ մարդկանց կողմից հօրս առեւանգման մասին, աղաչում է նիւթապէս օգնել իրեն, քանի որ չափազանց աղքատութիւնը իր եւ երկու փոքրիկ երեխաների կեանքին է սպառնում: Նրա խնդրագիրը որեւէ արձագանք չունեցաւ:

Մեզ նիւթապէս օգնում էին Ասատուր հօրեղբայրս, որ ընտանիքով Թւորիզում էր բնակւում, Ալմաստ հօրաքրոջս տղան՝ Վաչիկն ու մօրեղբայրներս՝ Ալեքսանն ու Վահանը՝ Թեհրանից: Ինչքան գիտեմ՝ Դաշնակցութեան տեղական մարմինն էլ ամսական մի չնչին գումար էր նշանակել: Բայց ոչ մէկը կանոնաւոր եկամուտ չէին ապահովում մեր ընտանիքի համար: Երբ այդ օրերի մասին եմ մտածում, իսկապէս զարմանում եմ. մայրս ինչպէ՛ս կարողացաւ դիմանալ ու չխենթանալ: Նա հպարտ կին էր, երբեք մէկից օգնութիւն չէր խնդրել: Եւ հիմա՝ աչքը ուրիշների ձեռքին: Թեհրանից իրեն գրուած նամակները ցոյց են տալիս, որ նա երբեք չի գանգատուել, երբ իր վիճակի մասին են հարցրել, խուսափել է պատասխանել: Մեր ազգականները Թեհրանից գրում էին, որ մարդիկ խօսում են մեր ծայր աստիճան աղքատութեան մասին. ինչո՞ւ մայրս չի գրում, օգնութիւն չի խնդրում: Նրա քաջութիւնն ու վճռականութիւնը զարմացնում են ինձ: Իրօք որ, արտակարգ իրավիճակները արտակարգ վարուելաձեւ են պահանջում, եթէ չես կքել, տեղի չես տուել:

Շատ չեն ձերբակալուածների կանանց քաջութեան եւ տոկունութեան դրուագները հայաստանեան յուշագրութիւններում: Սուրէն Ղազարեանը քչերից է: Նա նկարագրում է շաբաթներ բանտարկութիւնից յետոյ իր միակ տեսակցութիւնը կնոջ՝ Լիւբայի հետ: «Տեսակցութեան ժամանակ Լիւբան հերոսաբար

հաւաքել էր իրեն, ջղերի ամենավերջին լարուածութեամբ աշխատել ցոյց չտալ ինձ ոչինչ...»:<sup>1</sup> Որտեղի՞ց էր գտել այդքան քաջութիւն՝ ձեւացնելու համար, որ ամէն ինչ բնականոն է: Նա նոյնիսկ ցոյց չէր տուել, որ նկատել է ամուսնու արիւնոտ ու այլայլուած դէմքը: Այդ օրը Սուրէն Ղազարեանին չարչարալից հարցաքննութեան էին ենթարկել: Բայց ամուսնու վրայ թողած տպաւորութիւնը միանգամայն կեղծ էր: Լիւբան տուայտում էր հոգեկան, տնտեսական եւ ֆիզիքական հալածանքի տակ եւ այլեւս անկարող էր դիմանալ: Ինքնասպանութիւնից առաջ մի երկտողում խնդրում էր ամուսնուն չյայտնել այդ մասին: Եւ իրօք, տարիներ աքսորի մէջ Ղազարեանը չիմացաւ, թէ ինչ է կատարուել, թէ իր փոքրիկներին իր մայրն էր մեծացնում եւ նրանց ապրուստը հոգալու համար ամէն տեսակ սեւ աշխատանք էր կատարում: Զաւակի 17 տարուայ աքսորի ընթացքում երբեք չկասկածեց նրա վերադարձի մասին: Մի քանի նամակում, որ յաջողել էր ուղարկել նրան, Լիւբայի ինքնասպանութեան մասին չէր գրել. ջլինի այդ լուրից տղան յուսահատ, կորցնի իր դիմադրութեան ուժը եւ տեղի տայ, մահին յանձնուի: Նա մահացաւ մի երկու տարի տղայի արդարացումից առաջ: Հակառակ այս օրինակին, շատ են այն պարագաները, ուր կինը պարտադրում է ուրանալ ձերբակալուած ամուսնուն եւ կապը կտրել նրանից:

Ուրեմն, մեր վիճակը անհամեմատ աւելի լաւ էր: Հակառակ Խորհրդային Միութիւնում ստալինեան մաքրագործումների գոհերի կանանց եւ ընտանիքներին, մենք երբեք չհալածուեցինք, խտրականութեան չենթարկուեցինք: Մեզ կարեկցեցին ու յարգեցին:

Առանց կայուն եկամտի, կեանքը Թաւրիզում աւելի ու աւելի էր դժուարանում, եւ մայրս քիչ-քիչ համոզւում էր այն մտքի հետ, որ հօրս խորհրդաւոր անհետացումը մնայուն իրողութիւն է, որ

1 Ղազարյան, «Պա չպետք է կրկնվի», էջ 99:

լուծում չունի այլևս: Միեւնոյն ժամանակ նամակները Թեհրանից յամառօրէն պնդում էին, որ մայրս Թեհրան տեղափոխուի, քանի որ Ասատուրը Թաւրիզում եւ միւս հարազատները Թեհրանում հնարաւորութիւն չունեն տեւական կերպով եւ կանոնաւոր օգնութիւն ցոյց տալ մեզ: Այդ ժամանակ, կարծեմ, բոլորն էլ այն եզրակացութեան էին յանգել, որ հայրս վերջացած է, որ իրավիճակը նոյնն է մնալու, եւ մեր ընտանիքի համար հիմնական մի բան պիտի դասաւորուի: Մայրս տատանւում էր: Չէր համոզուում իր երբեմնի բոյնը քանդել եւ դէպի անորոշութիւն ուղղուել: Բայց վերջապէս տեղի տուեց: Եւ 1944-ի վերջերին՝ 10 ամիս հօրս անհետացումից անց, մենք Թեհրան փոխադրուեցինք ու տեղաւորուեցինք Ալմաստ հօրաքրոջս տանը մեզ տրամադրուած մէկ սենեակում:

Թեհրանում մօրս առաջին մտահոգութիւնը մեզ դպրոցում արձանագրելն էր: Թաւրիզում եւ Կաթողիկէ կոյսերի ֆրանսական դպրոցն էի յաճախում, նաեւ՝ Հայկ Աճեմեանի<sup>2</sup> Աբովեան դպրոցը, ուր ամէն տարիքի տղաներ ու աղջիկներ հայերէն էին սովորում: Թողել էի հարազատ դպրոց ու դասընկերներ. հիմա Թեհրանում նոր դպրոց պիտի սկսէի: Մայրս, ի հարկէ, մեզ հայոց դպրոց տարաւ: Գիտէին մեր ով լինելը, գիտէին, որ վճարունակ չենք: Բարի գտնուեցին քրոջս մանկապարտէզ ընդունելու: Ասացին՝ երկու անվճար աշակերտ չեն կարող ընդունել: Ես դուրս մնացի: Ինձ արձանագրեցին Թամադոն կոչուող պետական դպրոցում եւ նստեցրին պարսիկ աշակերտներով լի մի երկսեռ դասարանում, իսկ ես ոչ մի բառ պարսկերէն չգիտէի: Առաջին օրս սոսկալի էր. ուսուցիչը կարծեց, թէ ես մտաւոր խնդիրներ ունեմ կամ ապուշ

2 Հայկ Աճեմեանը հօրս մտերիմ ընկերներից էր, Թաւրիզում յարգուած ուսուցիչ, գրող, մտաւորական: 1915-ին պատանի տարիքում մասնակցել էր Վանի ինքնապաշտպանութեանը: Հայրս նրա անունը յիշում է իր յուշերում՝ այս գրքի 3-րդ գլխում:



են, որովհետեւ, երբ խօսում էր հետս, ես պատասխանելու փոխարէն նայում էի՝ ապուշի պէս բերանս ու աչքերս լայն բացած: Տառապանքս շարունակուեց. պաշտպանուած, նեղ ու մտերմիկ դպրոցական միջավայրից մի հսկայ դպրոց, ուր տարրական երկսեռ աշակերտութիւնը միախառնուած էր տղայոց միջնակարգ դպրոցի աշակերտների հետ, բոլորը՝ նոյն շէնքում ու նոյն բակում: Դա իմ կեանքի առաջին մարտահրաւէրն էր, եւ պիտի յաղթահարէի այն: Այդ ուսումնական տարուայ վերջում դասարանի լաւագոյն աշակերտ ճանաչուեցի: Բարեբախտաբար, յաջորդ տարին ես այդ դպրոցում չճարունակեցի: Դասարանը կրկնող արդէն տարիքով մենք պարսիկ տղաներով խճողուած դպրոցը հայ աղջնակի համար ապահով միջավայր չէր:

Այստեղ պիտի յիշեմ Բագիլ ընտանիքին, որոնց երբեք չեմ մոռանայ (հորաքրոջս տնից դուրս գալուց յետոյ, նրանց սեփական շէնքում մենք մի սենեակ վարձեցինք): Չեմ մոռանայ յատկապէս Սեդային՝ ընտանիքի հարսին, որ քրոջ պէս օգնեց մամայիս, կարի մեքենայով ասեղնագործութիւն, ձեռագործ սովորեցրեց եւ եկամտաբեր աշխատանք հայթայթեց նրան: Սեդան դուստրն էր Քեռի Սարգիսի (Յարութիւնեան), յարգուած մտաւորական, որ «Ալիք»ում սրբագրիչ էր աշխատում: Սեդայի միջոցով Յարութիւնեան ընտանիքը մեզ իր թելերի տակ առաւ: Ես հիմա էլ յիշում եմ Տիկ. Աստղիկի համով ճաշերը, երբ երբեմն իրենց տուն էինք հրաւիրում: Էբին՝ մեղմ, բարեսիրտ, Սեդայի մենք քոյրը, Թեհրանի լաւ փողոցներից մէկում մի խանութ ունէր, որ երեխաների հագուստ եւ ամէն տեսակի յարմարանքներ էր կարում եւ գունաւոր ձեռագործով զարդարում: Նրա ճաշակը շատ սիրուած էր ու գործը՝ փնտրուած: Նա էլ խանութի որոշ, աւելի պարզ պատուէրներից մամային էր վստահում:

Բագիլ ընտանիքը պատկանում էր Թեհրանի Աւետարանչական համայնքին, որ ունէր մէկ եկեղեցի՝ հայ եւ պարսիկ անդամներով,



Եւ մէկ տարրական դպրոց «Մեիր» (մօտաւոր իմաստով՝ «սէր», «համակրանք») անունով: Տիկ. Բազիլը եւ նրա քոյր Տիկ. Մազլումեանը այդ դպրոցի հոգաբարձութեան անդամներից էին, եւ ես նրանց բարեխօսութեամբ այդ դպրոցն անվճար ընդունուեցի: Պետական ծրագրով տարուող եւ քրիստոնէական գաղափարներով ղեկավարուող այս դպրոցը իր անուան հարազատ՝ հաճելի մթնոլորտ ունէր, եւ Թամադդոնի խենթ միջավայրից յետոյ ինձ համար ցանկալի փոփոխութիւն էր: Բայց դպրոցում անվճար սովորելու համար պայման էր դրուած. ես պէտք է միշտ բոլոր դասերից բարձր նիշեր ունենայի եւ բողոքական եկեղեցու ուրբաթօրեայ կրօնական դպրոցը յաճախէի:<sup>3</sup> Ինձ համար դժուար չէր առաջին պայմանը լրացնել: Բայց Ուրբաթ օրերը դպրոց գնալը, երբ ուրիշները կամ հանգստանում էին, կամ խաղ անում, ծանր յանձնառութիւն էր: Բայց երբ յետ եմ նայում, դա այդքան էլ վատ չէր: Վերջապէս այդտեղ էր, որ ես սովորեցի Քրիստոսի կեանքի, քրիստոնէական սկզբունքների ու ուսմունքի մասին. մի առիթ, որ պետական դպրոցներում երբեք չէի ունենայ:

Բարձր նիշերս ինձ օգնեցին դարձեալ անվճար Իրանի լաւագոյն դպրոցներից՝ Ռեզա Շահ Քաբիր միջնակարգ դպրոցն ընդունուելու: Իրանի բոլոր միջնակարգ դպրոցներում եւ այստեղ էլ, որպէս օտար լեզու, ֆրանսերէն կամ անգլերէն էին դաստանդում. ընտրութիւնը աշակերտներինն էր: Ի հարկէ, աշակերտները մեծ մասամբ անգլերէն էին ընտրում. ֆրանսերէնը այդ ժամանակ կորցրել էր իր առաջնային դերը Միջին Արեւելքում ու տեղի տուել անգլերէնին: Բայց այստեղ էլ անվճար սովորելու դիմաց դրուած պայմանն այն էր, որ ես ընտրութիւն չունէի. ֆրանսերէն պիտի սովորէի, քանի որ անգլերէնի դասարանները

3 Իրանում, որպէս իսլամական երկիր, ոչ աշխատանքային օրը Ուրբաթն էր, եւ ուրեմն կրօնական դասընթացներն էլ Ուրբաթ օր էր կազմակերպուած: Եկեղեցու Կիրակնօրեայ դպրոցի փոխարէն Իրանում Ուրբաթօրեան ունէինք:

միշտ շատ լեցուն էին, եւ ձրի աշակերտի համար տեղ չկար: Ես ուզէի կամ չուզէի պիտի համակերպուէի: Մի քիչ նուաստացած, ֆրանսերէնը «ընտրեցի», եւ երբ դասընկերուհիներս զարմացած հարցնում էին, թէ այդ ի՞նչ գործ ես արել, ասում էի՝ դիտաւորեալ եմ ֆրանսերէն ընտրել: Ամաչում էի, չէի ուզում, որ իմանան, որ ես անվճար սովորող աշակերտ եմ: Նորից, երբ յետ եմ նայում, պարտադրանքի տակ ֆրանսերէն ընտրելը անկրկնելի առիթ էր ինձ համար, որ գիտելիքներս հարստացրեց, ինձ ֆրանսական ճոխ մշակոյթին ծանօթացրեց եւ ապագայում ինձ համար անսպասելի հնարաւորութիւններ ստեղծեց:

Քոյրս շարունակեց հայոց դպրոցում՝ մինչեւ աւարտեց միջնակարգը: Եւ ես միշտ երանութեամբ նայեցի նրա հայերէն դասագրքերին. նոյնիսկ նախանձեցի, որ նա հայ ուսուցիչներ ունի ու մի շատ հայ դասընկերներ: Հայերէնի պակասը լրացնելու համար դեռ Թաւրիզում ստացած գրաճանաչութիւնս գործածեցի ու հայերէն գրքեր կարդացի որքան կարող էի, աւելի շատ, քան իմ տարեկիցները: Ընթերցանութեան միջոցով փորձեցի սովորել ինձ մերժուած հայերէնը: Պատանի տարիքում արդէն կարդացել էի Րաֆֆի, Ահարոնեան, Շիրվանզադէ, Մալխաս եւ այլն. հայ գրականութիւնը առիւթներ էր ինձ: Երեւի այդ արտակարգ ճիգն էր, որ ապագայում ինձ հնարաւորութիւն տուեց հետեւելու համալսարանական մակարդակի հայագիտական ուսմանը՝ առանց հայերէն լեզուի դպրոցական պատրաստութիւն ունենալու:

Մայրս փորձեց մեզ մեծացնել այնպէս, որ անհայր լինելու բարդոյթ չունենանք, որ, որքան որ կարելի է, մեր հօր ներկայութեան ու նրա հայրական հովանու պակասը չզգանք, բայցեւայնպէս՝ նրան չմոռանանք: Նրա յիշատակը մեր մտքերում ու մեր սրտերում վառ պահելու համար մայրս նրա կեանքից դրուագներ էր պատմում ու մեզ յոյս ներշնչում, որ նա ողջ է, բայց՝ շատ հեռու մեզանից: Ի հարկէ, ես յիշում էի նրան, յիշում էի,

թէ որքան էր ինձ սիրում, որքան ուշադիր էր իմ նկատմամբ, եւ նուէրները, որ բերում էր ինձ, երբ Թեհրան էր ճամբորդում: Այդ նուէրներից մէկը մի գեղեցիկ պուպրիկ էր՝ ճենապակեայ գլխով եւ կապոյտ աչքերով, որ շարժում էին: Ես երբեք այդպիսի պուպրիկ չէի տեսել: Երբ նրան պառկեցնում էի քնելու, աչքերը փակում էր, եւ երբ բարձրացնում էի, բացում էր: Մի օր մուրճով գլխին խփեցի, որ գլուխը բացեմ, տեսնեմ՝ դա ինչպէս է լինում: Խեղճ պուպրիկիս ճենապակեայ գլուխը շարդուեց, եւ փոքրիկ աչուկները դուրս թռան: Իմ երեխայական հետաքրքրասիրութեանս յագուրդ էի տուել. տեսայ՝ ինչպէս են աչքերը շարժում: Բայց իմ պուպրիկը մեռել էր: Շատ լաց եղայ, անօգուտ:

Ռուզանը շատ փոքր էր, երբ պապային տարան. նրանից ոչինչ չէր յիշում: Եւ երբ ես պարծենում էի, որ երագումս պապին եմ տեսել, լաց էր լինում ու մղկտալով ասում էր. «Ես պապի եղունգի ծայրն էլ չեմ տեսնում»: Ես այնքան սիրով էի պահում իմ փոքրիկ, իմ անձնական ալբոմն՝ մուգ կարմիր կազմով ու ոսկեգոյն ծուփով, մէջը լիքը նկարներ՝ փոքրիկ Ռուբինան պապայի գրկում: Ես դեռ ունեմ այդ ալբոմը: Բայց, չգիտեմ ինչու, Ռուզանը պապի հետ ոչ մի նկար չկար: Դա էլ մի հոգս էր Ռուզանի համար: Պատերազմական ժամանակներ էր եղել, ու պապան այնքան զբաղուած հանրային աշխատանքներով եւ կուսակցական պարտականութիւններով, որ չէր կարողացել մեր ընտանեկան պտոյտներին մասնակցել: Ռուզանին հանգստացնելու համար ես ու մաման որոշեցինք իմ եւ պապայի նկարներից մէկը ցոյց տալ իրեն եւ համոզել, որ պապի գրկում փոքրիկ աղջիկն ինքն է: Հաւատաց եւ ուրախացաւ:

Պատերազմի խառն իրավիճակում առիթ չէր եղել Ռուզանին կնքելու: Մաման ասում էր, որ սպասում էին պատերազմի աւարտին, որպէսզի Ռուզանին կնքէին ու իմ կնունքի պէս մի ճոխ հանդէս կազմակերպէին: Հօրս անհետացումից յետոյ մայրս Ռուզանին կնքելու սիրտ չունեցաւ: Յիշում եմ՝ մենք կատակով

ասում էինք, որ Ռուզանը մեր ընտանիքի հեթանոսն է, նրանով հանդերձ, որ ինքը մեր մէջ ամենից հաւատացեալն էր: Ռուզանը կնքուեց իր ամուսնութիւնից մէկ օր առաջ, եւ ամուսինս՝ Նշանը, նրան կնքահայր կանգնեց: Մկրտուած լինելը մեր եկեղեցում պարտադիր էր ամուսնանալու համար:

Մայրս ջանք էր թափում հօրս բացակայութեան պատճառով մեր կեանքում առկայ բացը լցնել: Մենք աղքատ էինք, բայց ուրախ եւ գոհ էինք. կամ՝ գուցէ մայրս մեզ այդպէս էր հաւատացրել: Յիշում եմ՝ ամէն Նոր Տարի գիշեր, երբ երեխաներն անկողին էին մտնում այն յոյսով, որ առաւօտեան բարձի տակ մի լաւ նուէր են գտնելու, մենք գիտէինք, որ մեր բարձի տակ գունաւոր թղթի մէջ փաթթուած եւ ժապաւէնով կապուած մի բուռ չամիչ եւ ընկոյզ է լինելու, եւ ուրախ-ուրախ սպասում էինք դրան: Երբեմն էլ յանկարծ մի պզտիկ պուպրիկ էր լինում բարձի տակ՝ ի հարկէ, եթէ մաման իր «Նոր Տարուայ գնումների» համար ուրիշներից «օգնութիւն» ստացած լինէր:

Պատանի տարիքից ես Հայ երիտասարդական մշակութային միութեան (ՀԵՄՄ) օժանդակ խմբակի անդամ էի: Օժանդակները պատանիներ էին, որոնց տարիքը չէր ներում միութեան լիիրաւ անդամ լինելու համար: Ես մասնակցում էի պատանիների երգչախմբին եւ գրադարանից գիրք էի վերցնում: Յիշում եմ, այդ տարիքում սիրում էի բանաստեղծութիւն գրել. բանաստեղծութիւն՝ այսինքն՝ յանգաւոր նախադասութիւններ, այսինքն՝ երեխայական ոտանաւոր, ինչ որ կարելի է անուանել դրանց: Բանաստեղծութիւններիցս մէկը, որ հօրս մասին էր, մեր օժանդակ խմբակի խորհրդատուին ցոյց տուեցի: Հաւանեց եւ հրատարակել տուեց 1949 թուի «Էրոս» օրացոյցում՝ պատանի բանաստեղծներին նուիրուած բաժնում: Դեռեւս պահել եմ օրացոյցի այդ էջը: Գուցէ ընդօրինակեմ այստեղ: Կամ աւելի լաւ

է տողատակում աւելացնեն:<sup>4</sup>

Բոլոր դէպքերում, մայրս շատ չհաւանեց այն գաղափարը, որ ես մեծանամ, բանաստեղծ դառնամ: Իր կարծիքով՝ հայրս դա չէր պատկերացնում ինձ համար: Հայրս ասել էր՝ ես Ուրիկի համար երկու բան չեմ ուզում՝ բանաստեղծ եւ պարուհի: Ոչ մէկն էլ չդարձայ. շնորհքն էլ չունէի: Մի օր էլ, երբ ես բառեր էի խզմզում ու ոտանաւոր սարքում, մաման պատուհանը բացեց ու սկսեց կանչել. «Քը՛շ, քը՛շ, Ուրիկի մուսանէ՛ր, փախէ՛ք»: Այդպիսով, վերջը տրուեց բանաստեղծութիւն գրելուս ու բանաստեղծ դառնալու երազանքիս:

Քոյրս եւ ես շրջապատուած էինք մեզ տարեկից երեխաներով, որոնց մայրերը յատուկ փորձ էին անում մեզ ուրախացնելու, մեզ իրենց տուն էին հրաւիրում, իրենց երեխաների տարեդարձներին ու Նոր Տարուայ խնճոյքներին մեզ էլ մասնակից դարձնում: Այս խնճոյքներից մէկը դրոշմուած է մնացել իմ յիշողութեան մէջ: Ես այնպէս լաւ յիշում եմ այն օրը: Ես տասը տարեկան էի, եւ ընկերուհիս՝ Իռէնը, 12 էր դառնում: Մայրը հրաւիրել էր Իռէնի բոլոր ընկերներին ու ընկերուհիներին: Ներկայ էին նաեւ ոմանց ծնողները: Իռէնը եւ ես միշտ երգում էինք միասին. ես նրա սոպրանո ձայնին ալտօ ձայնով էի ընկերակցում: Այդ օրն էլ Իռէնի մայրը ստիպեց, որ վեր կենանք, երգենք ու մեր շնորհքը ցոյց

#### 4 Հայրիկիս

Ես սիրում եմ քեզ հայրիկ թանկագին,  
Այդ սիրոյ համար տանջւում եմ անվերջ ամենքից թաքուն,  
Թէկուզ ուր էլ լինեմ ես, թէկուզ ինչ էլ անեմ ես՝  
Քո գաղափարին չեմ դաւաճանի, սուրբ է ինձ համար.  
Քեզ չեմ մոռանայ, սրտէս չեմ հանի, կեանք ես ինձ համար:  
Ո՛վ է դատել, ո՛վ է չափել քո մեղքերը:  
Ախ երանի թոյնն լինեմ, թելեր առնեմ ու թոյնեմ  
Այնքան թոյնեմ, այնքան թոյնեմ, որ ի վերջոյ քեզ գտնեմ  
Ու կարօտած սիրտս փոքրիկ քեզ մօտ բերեմ հայրիկ ջան:

Ռուբինա Մինասեան  
6-րդ դասարանի աշակերտուհի

տանք միւս երեխաներին: Այս պատմութեան շարունակութիւնն ինձ վերադարձաւ տարիներ յետոյ Ամերիկայում, երբ ամուսնուս ընկերը՝ Հրանդը, դա պատմեց որպէս մանկութիւնից իր վրայ տպաւորութիւն գործած մի դէպք: Ինքն էլ, ուրիշ երեխաների հետ, որոնց շատերին չէի ճանաչում, ներկայ էր եղել Իռէնի տարեդարձի խնճոյքին: Պատմեց, որ ինչպէս Իռէնը եւ ես կանգնեցինք սենեակի մէջտեղում եւ սկսեցինք «Զինուորի երգը» երգել, «Թռչի մտքով տուն...»: Բայց յանկարծ երգի կէսից ես սկսեցի լաց լինել ու դուրս փախայ: Բոլորը զարմացան, թէ ինչ կատարուեց: Հրանդն ասում էր, որ ծնողներից մէկը բացատրել էր, որ հայրը Սիբիր է աքսորուած, եւ այդ երգով հորն է յիշել: Հրանդին ճիշտ էին բացատրել. յուզուել էի, հորս էի յիշել: Բայց կար նաեւ մի ուրիշ երեւոյթ. այդ ուրախ խնճոյքին երեխաների ծնողների եւ Իռէնի հօր ներկայութիւնը կայծակի պէս շանթել էր սիրտս, յիշեցրել, որ ես որք եմ, հայր չունեմ...

Երբ հօրաքրոջս տնից Տիկ. Բազիլի շէնքում մեզ վարձով տուած սենեակը փոխադրուեցինք, մեզ համար նոր միջավայր ստեղծուեց:<sup>5</sup> Շէնքում շատ սենեակներ կային եւ ուրեմն՝ շատ հարեւաններ: Բոլորն էլ բարի մարդիկ էին: Բայց չպիտի իմանային, թէ մենք որքան աղքատ ենք. դա մեր գաղտնիքն էր: Բակում հարեւանների երեխաների հետ խաղալիս չգիտեմ՝ ինչու խօսք էր գնում, թէ մաման այդ օրը ինչ էր եփել: Մենք չէինք կարող ասել, թէ միայն հաց ու պանիր ունէինք: Ուրեմն, որոշեցինք ճոխ ու համով կերակուրների անուններ կեղծել մեր կերածի համար, օրինակ՝ *դորսէ սաքզի*, եթէ հաց ու պանիր ու քաղցր թէյ էր եղել մեր ճաշը, կամ *ֆունջան*, եթէ՝ հաց ու պանիր ու ձմերուկ: Ինչո՞ւ պիտի

5 Հօրաքրոյս մի օր մամային ասել էր, որ սենեակը պէտք ունի, եւ լաւ է, որ մենք ուրիշ սենեակ փնտրենք (ի հարկէ, այդ պատճառով մի քիչ սրտնեղութիւն առաջացաւ մեր մէջ, որ տեսեց մինչեւ պապայի ազատուելու լուրը ստանալը): Մեղան մեզ օգնութեան հասաւ: Իր սկեսրոջ՝ Տիկ. Բազիլի մօտ բարեխօսեց, եւ սենեակը Բազիլների շէնքում գեղջով վարձեցինք:

իմանային, թէ ինչ է անցնում-դառնում մեր տանը, թէ մենք ամէն օր տաք ճաշ ուտելու հնարաւորութիւնը չունէինք: Այնուամենայնիւ, կեանքը շարունակում էր բնականոն ընթացքով:

Մայրս սկսեց «Զինգեռ» (Singer) կարի մեքենայի ընկերութիւնում աշխատել: Կարի մեքենա գնողներին մեքենայի գաղտնիքներն էր սովորեցնում ու նաեւ՝ մեքենայի ասեղնագործութիւն: «Զինգեռ»ի վաճառատունը մօտ չէր մեր տանը, բայց մայրս ոտքով էր գործի գնում, եւ դա շատ յոգնեցնող էր նրա համար, մանաւանդ որ՝ միակ ունեցած կօշիկը (որ հարեւաններից մէկն էր իրեն տուել) բարձրակրօնկ էր եւ ոտքին առնուազն մէկ չափ մեծ. ուրեմն, քայլելուց անդադար դուրս էր գալիս: Մաման մի փոքրիկ շիշ ջուր էր պահում պալոսակում եւ երբեմնակի թրջում էր կրունկները, որ կօշիկին կպչի: Ու չէր գանգատում. հարցը լուծուած էր, մենք էլ դեռ ծիծաղում էինք նրա հնարամտութեան վրայ:

Միայն մամաս չէր, որ մէկ գոյգ կօշիկ ուներ: Սովորաբար ամէն տարի Զատկին կամ Նովրուգին (պարսկական Նոր Տարին, գարնան առաջին օրը), մաման մեզ համար մի գոյգ կօշիկ էր գնում: Մեր ունեցածը մինչ այդ արդէն այնքան էր հնացել ու փոքրացել, որ յետեւները կտրում էինք ու տան մէջ գործածում: Մի տարի յիշում եմ, նոր կօշիկս երկգոյնանի էր՝ կարմիր եւ մուգ կապոյտ: Ես այնքան էի սիրում իմ նոր կօշիկը եւ հպարտութեամբ էի դրանով դպրոց գնում: Բայց մի օր կօշիկիս հատը Տիկ. Բազիլենց տան մույթ նկուղում *աքէ-շահ*-ի (թագաւորի ջուր) ծորակի տակի ցեխաջրով լիքը փոսի մէջ ընկաւ ու կորաւ: Մի՛ զարմացէք եւ մի էլ ծիծաղէք. շատ տխուր բան էր: Բացատրեմ: Այդ օրերին Թեհրանում ջրաբաշխման խողովակների ցանց չկար: Ջուր ծախողները, որոնց *աքի* (*աք* ջուր է նշանակում) էինք կոչում, ջրի տակառները ձիով կամ էշով քաշուող կառքի վրայ բարձած, տնէ տուն էին գնում ու դռներով խմելու ջուր ծախում: Տիկ. Բազիլի

շենքը այն քչերից էր, որի տակից անցնում էր խմելու ջուրը դեպի քաղաքի հարաւը տանող ջրանցքը: Յատուկ թոյլտուութեամբ, Տիկ. Բագիլը նկուղ էր փորել տուել եւ աստիճաններով հասել էր ջրանցքին, որին շենքի օգտագործման համար ծորակ էր միացրել: Մեր տան ջուր բերողը ես էի եւ ամէն օր կիսամույթ, թաց ու լպրծուն աստիճաններով ցած էի վազում ու դոյլը ջրով լցրած երկրորդ յարկ՝ մեր սենեակն էի հասցնում: Մի օր ոտքս սահեց, եւ աստիճաններից ցած գլորուեցի: Կօշիկիս հատը ոտքիցս դուրս եկաւ եւ ցեխաջրով լիքը փոսի մէջ ընկաւ: Կօշիկս ազատելու ձեւ չկար: Պատկերացրէ՛ք իմ վիշտը: Միւս օրը հին կօշիկս, որ արդէն ոտքիս շատ նեղ էր, հագայ ու դպրոց գնացի: Ես դեռ յիշում եմ իմ գեղեցիկ երկգոյնանի կօշիկը եւ թէ որքան ամօթ էի զգում իմ հին կօշիկով, մինչեւ որ մայրս կարողացաւ նորից մի գոյգ կօշիկ գնել ինձ համար:

Այնուամենայնիւ, կեանքը շարունակւում էր բնականոն ընթացքով... Երեկոները մենք մամայից աւելի շուտ էինք տուն հասնում, եւ ես փորձում էի տան մեծ աղջկայ դերի մէջ մտնել. օրինակ՝ մինչեւ մամայի գալը «ընթրիք» պատրաստել՝ խաշած բրինձ (հաց ու պանիրին փոխարինող այլընտրանք), որ բալի անուշով (մուրաբա) էինք ուտում, եւ սա մեր համեստ տարբերակն էր պարսկական շատ սիրուած ճաշատեսակի՝ *սալթալուիո*-ի: Ես նաեւ փորձում էի մամային իր ձեռագործի պատուէրների մէջ օգնել, որ մեծ մասամբ հարսի կամ նորածինի օժիտ էր: Երբեք չեմ մոռանայ, երբ մի օր ես՝ տասը-տասներկու տարեկան, փորձեցի յատուկ փոքր կեռ մկրատով հարսի վարդագոյն սաթին գիշերանոցի վրայ կարուած սպիտակ սաթին ծաղիկների շուրջի աւելորդ կտորը կտրել: Եւ յանկարծ մկրատս խոր գնաց եւ գիշերանոցն էլ ծակեց: Սա ուղղակի աղէտ էր: Ի՞նչ պատասխան պիտի տայի մամայիս: Մինչեւ իր տուն գալը միայն լաց եղայ: Յիշում եմ՝ մամայի այլայլուած դէմքը, երբ կատարուածը տեսաւ:



Ոչինչ չէր կարելի անել: Միւս օրը երեկոյեան հարսնացուն եւ իր մայրիկը եկան գործը տանելու: Ի՛նչ անտանելի վիճակ էր: Ինչպէս էին ճշում ու մօրս հայիոյում: Մայրս, սոսկալի ընկճուած ու խեղճացած, միայն խնդրում էր ներել եւ թոյլ տալ վնասը հատուցել: Բայց մայր ու աղջիկ կատաղած գոռում էին: Վերջը ամբողջ պատուէրը առած գնացին եւ ոչինչ չվճարեցին: Այդ գիշեր ես լսեցի, թէ ինչպէս մայրս լուռ լաց էր լինում անկողնում:

Ինչպէս ասացի, այնուամենայնիւ կեանքը շարունակում էր... Բայց մայրս կորցնում էր իր առողջութիւնը: Անուշադրութեան մատնուած ցրտառութիւնն ու հազը բրոնխիտի ու յետոյ էլ՝ քրոնիկական բրոնխիտի էր վերածուել, որ անբուժելի էր: Պատրաստ չէր ծխելը թողնել, որ շարունակում էր վնասել նրա փխրուն առողջութեանը: Նրա համար ծխելն իր կեանքի միակ հաճոյքն էր: Ամենաուժեղ հազի օշարակներն էլ այլեւս չէին օգնում: Հազն ատելի սոսկալի էր դառնում, երբ պառկում էր քնելու: Բայց դրա ձեւն էլ էր գտել: Մի կտոր չոր հաց էր պահում բարձի տակ ու կրծում էր, երբ հազը հանգիստ չէր տալիս: Ինչպէս երեւում է, չոր հացը քերում էր կոկորդը, հազ առաջացնող քորը մեղմացնում: Մօրս առողջական նման պայմաններում ես շատ եսասէր պիտի լինէի, եթէ շարունակէի համալսարանական կրթութիւն երազել եւ սպասել, որ մայրս իմ կրթութեան ծախսը հոգայ:

Մայրս երբեք լիովին չապաքինուեց եւ չվերագտաւ իր երբեմնի ուրախ ու առոյգ բնութիւնը, նոյնիսկ՝ հօրս վերադարձից յետոյ: Տարիների ապրած շարունակական անձկութիւնն ու անորոշութիւնը, երկար ու ծանր աշխատանքը եւ ծխախոտը վերջնականապէս վնասել էին նրա ֆիզիքական եւ հոգեկան առողջութեանը: Ի հարկէ, անառարկելի է, որ հօրս վերադարձը եւ նրա վարակիչ խանդավառութիւնն ու ապրելու եռանդը մի տեսակ խթանիչ ուժ դարձան, մայրս ատելի ուրախ եւ հանդարտ բնաւորութիւն ստացաւ: Մինասեան ամուլը ընկերների ու

բարեկամների լայն շրջանակ ուներ, որ զոյգին մենակ չէին թողնում: Հօրս դասախօսական ճամբորդություններին մայրս ընկերակցում էր նրան եւ միշտ ընդունում էր որպէս այն հերոս կինը, որ երկու որբեր մեծացրեց եւ իր ամուսնու յիշատակին երբեք չդաւաճանեց: Դեռ աւելին, նրան նայում էին որպէս շնորհալի եւ վայելուչ կինը մի հերոս դաշնակցականի, ով Սիբիրի անասելի տառապանքը կրել էր անյողդողդ: Թոռնիկների ծնունդուց յետոյ մայրս «մեմամա» դարձաւ՝ սիրող, նուիրաբերող, օգնելու միշտ պատրաստ:

Որբեւայրութեան յատուկ զրկուածի ու անտիրականի բնութիւնը, սակայն, մնաց նրա հետ ամբողջ կեանքում: Նրա ֆիզիքական առողջութիւնը վատթարացաւ, եւ հօրս մահուանից յետոյ, երբ նա Ամերիկա փոխադրուեց մեր ընտանիքին միանալու համար, նրա անբուժելի քրոնիկական բրոնխիտի վրայ աւելացաւ *emphysema*-ն եւս, որին չկարողացաւ դիմադրել եւ մահացաւ 1987-ի յունիս 6-ին: Նա ընդամենը 73 տարեկան էր:

Արդե՞՞ք մօրս պէս, ես եւ քոյրս էլ չկարողացանք ձերբազատուել մեր տասնմէկ տարուայ որբութեան գործած ազդեցութիւնից: Իմ եւ մամայի համար պարզ էր, որ Ռուզանը գերզգայուն բնաւորութիւն ունի, իրեն վնասելու աստիճան պաշտպանում, փայփայում ու հոգ է տանում իր հարազատին, իր սիրածին. կարծես միշտ նրանց կորցնելու վախն ունի: Մեղքը մերն էր: Մենք իրեն փայփայել էինք երեխայի պէս ու մեր իմացած ձեռով դժուարութիւններից պաշտպանել, զերծ պահել նրան: Գուցէ հոգեբանը աւելի լաւ բացատրութիւն տայ այս երեւոյթին:

Իսկ ե՛ս: Ես ուժեղն էի. գոնէ այդպէս էի կարծում: Ես մօրս սրտակիցն էի, նրա վիշտն ու մենութիւնը եւ նրա կեանքի դժուարութիւնները կիսող: Բայց հօրս վերադարձից յետոյ ես այդ բոլորից ազատուեցի: Ճիգ արեցի ձերբազատուելու նաեւ այն ամէն տխուր բաներից, որ որբութեան հետ է գալիս, այսինքն՝ որբի

հոգեբանությունից: Ես հետեւեցի բարձրագույն ուսման, Իրանում կին ճարտարագետ դառնալու իմ երազին: Ես ամուսնացայ եւ երջանիկ բոյն կազմեցի: Նոյնիսկ 1979 թ. Իրանի Իսլամական Յեղափոխութիւնը, որ անկիւնադարձ եղաւ մեր կեանքում, այդպէս էլ չազդեց ինձ: Յեղափոխությունից առաջ մի երկու շաբաթուայ արձակուրդի նպատակով սկսած մեր ճամբորդութիւնը Ամերիկայի Կալիֆորնիա նահանգը յեղափոխութեան առաջացրած խառն ու շփոթի պատճառով երկարեց, եւ մենք, առանց ծրագրած լինելու, մեզ գտանք Ամերիկայում մշտապէս ապրող՝ իրանահայ գաղթականի իրավիճակում: Գուցէ դա այդպէս պիտի լինէր: Եւ նրանով հանդերձ, որ ամէն ինչ, մանաւանդ՝ գործ եւ նիւթական միջոցների հայթայթում, նորից նոր պիտի սկսէինք, ես դա էլ որպէս չսպասուած բարիք ընդունեցի: Չկայ չարիք առանց բարիք կամ, ինչպէս ֆրանսացիներն են ասում, *un mal pour un bien*:

Կալիֆորնիայի Համալսարանը Լոս Անջելըսում (UCLA) իմ երկրորդ երազիս իրականացման ճամբան բացեց ինձ համար: Անցեալից մնացած հայ գրականութեան սէրը իմ մէջ դարձել էր երազ. այնպէս ուզում էի հայագիտութիւն սովորել, ինչպէս ասում են՝ Armenologist դառնալ: Եւ UCLA-ն այդ առիթը տուեց ինձ՝ ի հարկէ, ի դիմաց լուրջ աշխատանքի եւ նուիրումի: Ուրեմն, նորից դպրոց վերադարձայ, UCLA, Near Eastern Languages and Cultures Department (Միջին Արեւելեան Լեզուներ եւ Մշակոյթներ) ուր Հայագիտական Ամբիոնն էր ընդգրկուած: Աշխատանքս ծանր էր: Ընտանեկան պարտականութիւններիս կողքին աշխատում էի ամուսնուս հետ հիմնադրած շինարարական ընկերութիւնում եւ միաժամանակ համալսարանի աւարտական ուսանող էի: Բայց աշխատում էի սիրով ու եռանդով: Եւ երբ ժամանակն էր դոքտորական աւարտաճառս պատրաստելու, նիւթը յստակ էր իմ մտքում: Պիտի ուսումնասիրէի Հայոց Յեղասպանութեան ազդեցութիւնը հայ մարդու կեանքի վրայ, նրա հոգեբանութեան,

նրա ինքնության ու աշխարհընկալման վրայ, եւ թէ այդ ազդեցութիւնը ինչ արտացոլք է գտել գեղարուեստական գրականութեան մէջ: Ու ես ընկղմուեցի ցեղասպանութեան գրականութեան ընթերցանութեան մէջ, յուշագրութիւն, վէպ, պատմուածք, բանաստեղծութիւն: Պարտականութիւններիս մէջ էր նաեւ հարցազրոյց վերապրողների հետ: Նիւթը ծանր էր: Գիտեմ, որ այդ մի քանի տարիների աշխատանքի արդիւնքում փոխուեց երբեմնի թեթեւ ու հանգիստ բնաւորութիւնս. մտածկոտ դարձայ, սկսեցի ապրել կեանքը վերապրողների, որոնց զարհուրելի պատմութիւնները հոգուս լարերին էին փաթաթուել, ընկճել էին հոգիս: Յիշում եմ՝ ամուսինս՝ Նշանը, ասում էր. «Ինչ լաւ կը լինէր, եթէ այս ծանր ու տխուր նիւթի փոխարէն մի թեթեւ նիւթ ընտրէիր, օրինակ՝ վարդի ու սոխակի սիրոյ թեմայի համեմատական ուսումնասիրութիւնը հայ եւ պարսիկ գրականութեան մէջ»: Անհանգիստ էր ինձ համար, բայց ինձ թիկունք եղաւ իմ ամբողջ ճամբի ընթացքին: Երբեք դժգոհութիւն չյայտնեց ու չգանգատուեց, բացի երբեմն մեր ընկերների շրջանում, օրինակ, այսպիսի մի արտայայտութեամբ, «Եթէ բոլոր հայերը տարին մէկ Ապրիլ 24 ունեն, մեր տանը ամէն օր Ապրիլ 24 է»: Երբ առաջին անգամ նրա այս արտայայտութիւնը լսեցի, ուղղակի ցնցուեցի: Ուրեմն նա էլ էր ինձ հետ տառապում, զգում էր Հայոց ցեղասպանութեան ստուերը իմ բնաւորութեան եւ մեր տան մթնոլորտի վրայ:

Յեղասպանութեան գրականութիւնը ինձ համար դարձաւ հետազոտութեան դաշտ, կիզակէտը իմ ուսումնասիրութիւնների: Դա էր նիւթը իմ կարդացած դասախօսութիւնների, գիտաժողովներում ներկայացրածս զեկոյցների, իմ հրատարակութիւնների: Ու յանկարծ մի յայտնութիւն: Մի օր հրաւեր ստացայ որպէս կին ցեղասպանագէտ մասնակցելու մի խմբային քննարկման, որի թեման պիտի լինէր Connecting

biography and research:<sup>6</sup> Այսինքն՝ գտնել առնչությունը ուսումնասիրողի կենսագրության եւ նրա ընտրած թեմայի միջեւ: Առաջարկը զարմանք պատճառեց ինձ: Իսկապէ՛ս կարող էր այդպիսի կապ գոյություն ունենալ: Բայց նման հարցադրումն ինքնին ինձ համար յայտնություն էր: Ես երբեք չէի մտածել, որ հոգեբանօրէն դէպի հայ ժողովրդի ողբերգությունն եմ միտուած եղել, որ իմ մէջ կայ ուրիշների ապրած ողբերգութեանը առնչուելու հակումը: Սկսեցի խորանալ, պեղել անցեալս, մանկութիւնս: Գտայ: Այնտե՛ղ էր, իմ մանկութեան մէջ թաքնուած: Այնտե՛ղ էր հոգեբանական այն ազդակը, որ մղել էր ինձ ընտրելու Հայոց ցեղասպանությունը որպէս իմ ուսումնասիրութեան ասպարէզ: Ինձ համար դա եղել էր միջոց ու ճանապարհ՝ իմ զոհուած ժողովրդի դատը բարձրաձայնելու, ցեղասպան ոճրագործի դէմ իմ իմացած ձեւով իմ խօսքն ասելու: Եւ այս բոլորը, իմ անգիտակիցի մղումով, ինձ համար պիտի գործէր՝ մեղմացնելու անցեալի ցաւը, ամոքելու մանկութեանս՝ հոգուս մէջ բացուած վէրքը:

Իմ կատարած հոգեբանական ներհայեաց ինքնա-վերլուծումն ինձ բերեց այն եզրակացութեան, որ, իրօք, ես էլ զոհ եմ եղել՝ զոհը բռնախախտուած տարրական իրաւունքի, իրաւունք իւրաքանչիւր երեխայի՝ վայելելու ծնողների սէրն ու խնամքը, եւ ո՛չ թէ ամէն գիշեր աչքերը փակելիս պատկերացնել հօրը, որ չկայ, որ ինքն էլ է տանջուում հեռու Սիբիրի տաժանակիր աշխատանքի ճամբարներում: Ես մեծացայ այն գիտակցութեամբ, որ ես մաս եմ կազմում մի զոհուած ժողովրդի: Իմ եւ իմ ընտանիքի դէմ կատարուած բռնությունն անձնական չէր միայն, այլ նաեւ՝ հաւաքական: Պատժուում էր ժողովուրդս, որ համարձակուել էր հզօր Խորհրդային Միութեան դէմ մաքառել եւ Հայաստանի

6 Այս նիւթի քննարկմանը նուիրուած նիստը մաս էր կազմում Canadian Sociology and Anthropology Association-ի կազմակերպած տարեկան գիտաժողովին, Congress of May 25-30, 2001:

ազատության ձգտել: Ահա՛ այն հոգեբանական ազդակը, որ ինձ ենթագիտակցաբար դեպի ցեղասպանության գրականություն մղեց եւ նպաստեց այն աւելի խոր ըմբռնելուս ու նրա մէջ խորասուզուելուս:

Այլեւս պատրաստ էի զեկոյցով մասնակցելու այդ շատ հետաքրքիր, մտքի հորիզոնը ընդլայնող, ենթագիտակցութեան խորքերում թաղուած գաղտնիքները վեր՝ գիտակցութեան մակարդակին բարձրացնող քննարկմանը: Տարիներ անց, զեկոյցս աւելի ընդլայնելով, “A Personal Note in Lieu of Preface” վերնագրով զետեղեցի 2012-ին հրատարակած *The Armenian Genocide in Literature: Perceptions of those who Lived Through the Years of Calamity* հատորիս մէջ: Կարծում եմ՝ այդ գրութեան ճիշտ տեղն էր այդտեղ եւ կը սատարէր ընթերցողին աւելի լաւ ըմբռնելու իմ գործը, իմ հայեցադաշտը:

Հիմա, եթէ նորից հարցնէք, թէ արդեօք ապրածս որբութիւնը որեւէ ազդեցութիւն ունեցա՞ւ իմ յետագայ կեանքի վրայ, պիտի պատասխանեմ, թէ կարծում եմ՝ այո՛, ունեցաւ: Ազդեցութիւնը առկայ է իմ անհատականութեան, ընկերային եւ քաղաքական ինքնութեան վրայ, իմ զգացական եւ մտաւորական յարաբերութիւններում, իմ գործում, իմ կեանքում: Յաւիտենական ճնշուածութիւն ունեմ եւ երբեմն, իմ մտերիմներով շրջապատուած, ինձ միայնակ եմ զգում:

Այո՛, ստալինեան սարսափելի բռնաճնշումների ալիքները ինձ էլ էին հասել: Եւ այս հատորը իմ հոգու աղաղակն է իմ ընտանիքի եւ իմ ժողովրդի դէմ կատարուած ու երբեք չհատուցուած անարդարութեան. ճիշտ այնպէս, ինչպէս իմ նախորդ գրքերը՝ ընդդէմ թուրք դահիճների գործած անմարդկային ոճրի, որ Մեծ Եղեռն ենք կոչում ու աշխարհի արդարադատութեան սպասում:



Հայկ Աճեմեանի «Արովեան» դպրոցի աշակերտները (հոկտեմբեր 11, 1944). Ետևի շարքում,  
 ձախից աջ՝ Արք. Ներսես Մելիք-Թանգեան, Խորհրդային Հայաստանից այցելութեան եկած  
 Պրոֆ. Աշոտ Աբրահամեան, Հայկ Աճեմեան  
 Եւ աջից երկրորդ փոքրիկ աղջիկն էմ



Մայրս, քոյրս եւ եւ Թեհրանում

تاریخ ۱۶ / ۱۲ / ۱۳۲۲  
 شماره ۳۰۴۵۲  
 پیوست  
 موضوع



وزارت فرهنگ  
 اداره فرهنگ استان سوم  
 شعبة کارگزینی

آموزش شهرستانها  
 اداره کل شهریانیه

با ارسال رونوشت نامه بانو باریومیناسیان دایرهاینکه شوهر او، کتر باغدا سارمیناسیان دبیر دبیرستان فردوسی تبریز از ۱۳۲۲-۱۳۲۳ مفقود الاقرنده خواهشمند است دستور فرمایند در این قسمت تحقیقات لازم بعمل آورند و هرگونه اطلاعی بدست آمد وزارت فرهنگ را آگاه نمایم

از طرف وزیر فرهنگ - محدودید

---

رونوشت بضمیمه رونوشت نامه با سومیناسیان بآداره کارگزینی فرستاده میشود که دستور فرمایند نسبت به پرداخت حقوق ادای -  
 مناسیان دستور مقتضی بآداره فرهنگ استان سوم صادر شود

از طرف رئیس اداره آموزش شهرستانها

---

رونوشت تمام بآداره فرهنگ استان سوم فرستاده میشود که بانومیناسیان را از افراد امیکه شده مطلع سازند

از طرف رئیس اداره آموزش شهرستانها

رئیس فرهنگستان سوم  


۱۱۶۱  
 ۱۳۲۱/۱۷  
 رونوشت برای آگاهی بانو باریومیناسیان  
 ارسال میشود

Կրթութեան նախարարութեան նամակը Ատրպատականի ոստիկանութեանը՝ Դոքտոր  
 Բաղդասար Մինասեանին գտնելու համար հետախուզութիւն ձեռնարկելու յանձնարարութեամբ



Երևան ۱۳۳۷/۵/۱۶

جناب آقای وزیر فرهنگ

با کمال احترام معروض میدارد . شومر این چانه دکتر باغدا سار میناسیان که دبیر هیئتی دبیرستانهای تبریز بوده در تاریخ ۱۲ دیماه ۱۳۳۷ ساعت ۱۱ صبح در خیابان پهلوی تبریز مفقود الامر مفقود و تا کنون هیچ خبری از مکان و گونگی آن نرسیده است .

مشارالیه مدت ۹ سال مستقیم قراردادی وزارت فرهنگ برده و همه ساله تقدیرنامه از مقام محترم وزارت بمنشور آن مشارالیه صادر میگردد . بعد از مفقود شدن او اداره فرهنگ تبریز با وجود دستورات مرکز حاضر نشده چگونه کمک و مساعدتی بشانواده مشارالیه بنماید . کارستدیکه با کمال صداقت مدت ۹ سال برای آن وزارت خانه کار کرده است و بر سبب اینست تا سلسله مفقود الامر شده امر تا مالوب و طاقت فرمای فقدان او از تکلیف و وفای اداره فرهنگ تبریز از طرف دیگر وضعیت زندگانی که ما را بکلی متعلق نموده است اداره فرهنگ تبریز با وجود دستورات وزارت متبوعه حاضر نشود حقوق سال تحصیلی ۱۳۳۷ وقتی حقوق ۱۲ روزه دیماه و اضافه حقوق ششماهه مصوبه مجلس شورای ملی را بهر دوازده .

اینکه که با دو طفل مشغول شود تاگزین معبران آمده ام با عزیز مرا تب فوق معاشادام بحال اینچانه و دو اولاد که تا کنون با هزار سختی و مشقت با فروش شخص افادیه و لوازم زندگی و کمک چند نفر از اعضایان با عائله عویم زندگی نموده ایم و بعد از این کوچکترین آمدنی نداریم رسیدگی فرموده و در صورت امکان دستورات مقتضی صادر فرمائید تا بلکه به مساعدت جنابعالی در این موقع که مشکلات زندگی و گوانی بصحت اینچانه و دو طفل عزیزم را تجدید به مرگ مینمایند و نیز به زندگی بی سرپرست خود ادامه داده تا بلکه به لطف خداوند متعال امری از کم عده خود بیست آورده و مثل سابق -

و زنگار بهتری در رفاه و اما پیش بگزارانم .

با تقدیم احترامات غایتی

بائو یاریت میناسیان

## Գլուխ 8

# ԱՍՏՈՒԱԾԱՇՆՈՐՀ ՊԱՐԳԵԻԸ ՄԵԶ, ՈՐ ՎԱՅԵԼԵՑԻՆՔ ԱՄԲՈՂՁ ՔՍԱՆ-ԵՐԿՈՒ ՏԱՐԻ

Հօրս վերադարձը, իրօք որ, Աստուածային շնորհ էր մեզ համար: Նա ֆիզիքապես շատ հիւժուած էր. այնուամենայնիւ, նրա բարձր հոգեկանը, կորովն ու կենսունակութիւնը պատճառ դարձան, որ նա շուտով վերականգնի իր ուժերը եւ վերագտնի իր նախկին անհատականութիւնը: Նա շատ լաւ գիտէր, որ լուրջ մարտահրաւերների առջեւ է կանգնած: Նա պիտի ինքն իրեն յարմարեցնէր ու իր տեղը գտնէր հասարակութեան մէջ, իր անմիջական ընտանիքի եւ մտերիմ շրջապատի մէջ, աշխատանքի ասպարէզում եւ կուսակցական կեանքում, որոնք եւ ոչ մէկը իր բացակայութեան տասնմէկ տարիների ընթացքում նոյնը չէին մնացել:

Մենք շարունակ այցելուներ էինք ունենում՝ ազգականներ, բարեկամներ, բարի կամեցող անձանքներ եւ կուսակցական ընկերներ: Այցելուներից մէկը, որ մի քանի անգամ եկաւ, հակառակ միւսներին, առանձին էր խօսում հօրս հետ: Դա մի քիչ դժուար էր մեր մի սենեակում: Մենք պիտի դուրս գայինք եւ հարեւանի տանը սպասէինք: Ծնողներիս խօսակցութիւնից հասկացայ, որ նա ամերիկեան դեսպանատան պաշտօնեայ էր եւ բաւական գրաւիչ առաջարկ էր բերել հօրս. մեր ընտանիքին փոխադրում

Էին Ամերիկա եւ ամերիկեան կառավարութիւնը հոգում էր բոլոր ծախսերը, ներառեալ մեր ապրուստի եւ կեցութեան ծախսը Ամերիկայում: Ու յանկարծ այդ մարդու այցելութիւնները կանգ առան: Հայրս մերժել էր առաջարկը: Տասնմէկ տարուայ գողերի ու ոճրագործների հետ համակեցութիւնը ոչինչ չէր փոխել նրա մէջ: Տասնմէկ տարուայ տառապանքը՝ ի խնդիր իր գաղափարին, իր հաւատամքին չէր թմրեցրել նրա սկզբունքների ու կարգապահութեան զգացողութիւնը: Ամերիկեան կառավարութիւնը եւ կամ, այս պարագային, CIA-ն (Central Intelligence Agency – Կենտրոնական հետախուզական վարչութիւն) ի դիմաց այդ մեծ շնորհի՝ հորիցս ակնկալում էր ստանալ ամբողջական տեղեկութիւն Գուլագների ցանցի, կառավարման ձեւի, նպատակների ու միջոցների, քաղաքական բանտարկեալների, այլախոհական գաղափարախօսութեան, եւ վերջապէս այն ամէնի մասին, ինչ որ CIA-ին պետք էր երկու գերպետութիւնների միջեւ բորբոքուած պաղ պատերազմի մթնոլորտում: Հօրս պատասխանը եղել էր. «Ես տառապել եմ, որովհետեւ պատկանել եմ Հ.Յ.Դաշնակցութիւն կուսակցութեանը, որովհետեւ Հ.Յ.Դաշնակցութեան ղեկավար եմ եղել: Ես իմ զեկոյցը կը տամ Հ.Յ.Դաշնակցութեան, եւ միայն Հ.Յ.Դաշնակցութեան»:

Իրօք չգիտեմ, թէ ինչպէս, ինչ խողովակով տրուեց այդ զեկոյցը... Բայց յիշում եմ՝ ընկեր Գաբրիէլ Լազեանը<sup>1</sup> 1955-ին՝ հօրս ազատուելուց մի քանի ամիս յետոյ, այցելեց Իրան եւ տեսակցեց հօրս հետ: Ըստ երեւոյթին, հայրս իր համար կարեւոր սեպուղ երեք հարցերի մասին գրութիւններ էր պատրաստել՝ «Գալիքը եւ ՀՅԴ», «Անելը» եւ «ՀՅԴ եւ Ատրպատականի Կազմակերպութիւնը»: Ընկեր Լազեանը այս գրութիւնները «Յուսաբեր»-ի ժամանակի

<sup>1</sup> Գաբրիէլ Լազեանը ՀՅԴ Բիւրոյի անդամ էր, հիմնադիր խմբագիրն էր Կահիրէի ՀՅԴ պաշտօնաթերթ «Յուսաբեր»-ի: Մասնագիտութեամբ պատմաբան էր եւ հեղինակը Հայ Դատի պատմութեան բազմաթիւ հատորների:

խմբագիր Վահան Նաւասարդեանին էր յանձնել: 1955, մարտ 9-ին հայրս ստացաւ Վահան Նաւասարդեանի պատասխան մտերմիկ ու սիրալիր նամակը, որ խորագրուած էր «Իմ մշտապէս սիրելի եւ անմոռանալի Բաղդիկ»: Նա գրում էր ուղարկուած գրութիւնների մասին եւ հաստատում «նրանք իրենց վերապահուած դերը կ'ունենան մի շարք աւելի քան կենսական հարցերի լուսաբանման մէջ»:

Գուլագները վերապրած հօրս ապրելու եռանդը, ուժեղ կամքն ու վճռականութիւնը այն հիմքերն էին, որոնց վրայ հայրս կարողացաւ կառուցել իր նոր կեանքն ու իր ընտանիքի ապագան նոր հունի մէջ դնել: Յիշում եմ, որքան երկար ու դժուարին ճամբայ կտրեց՝ վերականգնելու իր անցեալը եւ վերահաստատելու իր ուսուցչական պաշտօնը Կրթութեան նախարարութեան մօտ: Նա սկսեց քիմիա դասաւանդել Էլմիէ միջնակարգ դպրոցում, որ բաւական հեռու էր մեր տնից:

Նրա թղթերի մէջ էր պահուած Էլմիէ դպրոցի 1334-35 (1955-56) ուսումնական տարեշրջանի տարեգիրքը: Նրա նկարը տեղադրուած է դպրոցի լաւագոյն ուսուցիչների շարքին: Իսկ իր աշակերտներից մէկի շարադրած ակնարկը նրա մասին ցուցանիշն է նրա ուսուցչական բարձր ունակութեան ու որակեալ դասաւանդման.

Չնայած մէկ տարի աւելին չի, որ դոքտ. Մինասեանը դասաւանդում է մեր դպրոցում, սակայն նա կարողացել է իր գիտական արժէքը փաստել բոլոր աշակերտներին:

Մեր քիմիայի դասարապահերը նրա հետ յատուկ քաղցրութիւն ու գրաւչութիւն ունեն, եւ քիմիայի ֆորմուլները, յատկապէս նրա կիսապարսկերէն լեզուով բացատրուած, գրաւում են աշակերտին ու դրոշմում նրա ուղեղում:

Դոքտ. Մինասեանը միշտ ժպտաղէմ է ու հաճելի խօսակից: Միշտ պատրաստ է լուծել աշակերտների հարցերը թէ՛ դասարանում,

թե՛ դասարանից դուրս: Մա ցոյց է տալիս նրա անդուլ ջանքը՝ աշակերտի մէջ զարգացնելու անհատականութիւն եւ սովորելու սէր: Չմոռանանք ասելու, որ նա ինքը շատ կարգապահ եւ բժախնդիր մարդ է, եւ դա օրինակ է աշակերտներին՝ լինելու կարգապահ եւ ուրիշների ժամանակը յարգող:

Պահուած թղթերի մէջ էր նաեւ Կրթութեան նախարարութեան կողմից նրան ուղղուած, 11/3/1342 (յունիս 1, 1963) թուակիր գնահատականը:

Հայրս աշխատում էր ջանասիրութեամբ եւ սիրում էր աշխատանքը: Մի թղթի վրայ նօթագրած գտայ նրա դասաւանդման շաբաթական ժամանակացոյցը՝ 11 ժամ էլմիէ դպրոցում, 3 ժամ Միր Աֆգալի դպրոցում, 12 ժամ հայոց դպրոցում: Զարմանալի: Ինչպէ՛ս էր հասցնում, մանաւանդ՝ եթէ նկատի առնենք խճողուած Թեհրան քաղաքում այդ երեք դպրոցների հեռաւորութիւնը միմեանցից: Եւ երբ տուն էր վերադառնում, աշխատանքային օրը վերջացած չէր իր համար: Ժամանակ չկար հանգստանալու: Աշակերտների գրաւորներն էր մանրակրկիտ կերպով ստուգում եւ միւս օրուայ պարապելիք դասն էր պատրաստում: Այո՛, դա սկզբունքային էր նրա համար, եւ երիտասարդ ուսուցիչներին էլ խորհուրդ էր տալիս նոյնն անել: Նա հաւատում էր, որ լաւ ուսուցիչը միշտ պիտի աչքի անցկացնի միւս օրուայ նիւթը, թէկու՛ճ եթէ այդ նիւթի դասաւանդման տարիների փորձ ունի: Հայրս մեր տան միակ աշխատող ձեռքն էր, եկամուտ հայթայթողը: Դա իր վճիռն էր: Ընտանիքի տնտեսական բեռը կրելուց ազատ էր կացուցել մօրս: Նա գերազանցում էր կրթական մշակի իր դերում, որ իր կոչումն էր ու նաեւ՝ եկամուտի աղբիւրը:<sup>2</sup>

2 Աստրալիայի «Հայ Դատ» թերթին տուած հարցազրոյցում (յունիս, 1976), երբ հարց էին տուել նրա ազգային-կուսակցական գործունէութեան եւ քիմիայի ուսուցչի իր ասպարէզի համատեղութեան մասին, նա քիմիայի իր մասնագիտութիւնը դասել էր «որպէս ապրուստի միջոց»:

Նրա կեանքի ու գործունեության կիզակետն էր ու միշտ մնաց՝ Դաշնակցության ճամբով հայ ժողովրդին նրա նուիրումը: Նա երիտասարդական խմբերի հետ էր աշխատում, դասախոսություններ էր կարդում հայ ժողովրդի պատմության, մանաւանդ՝ ՀՅԴ պատմության եւ գաղափարախօսության մասին: Միեւնոյն ժամանակ Բագին կամ Ատրուշանեան գրչանունով, համաշխարհային եւ ազգային քաղաքական կեանքի վերլուծական յօդուածներ էր տալիս «Ալիք»ին: Բացի այդ յօդուածներից, օրուայ հրատապ խնդիրների մասին թարգմանություններ էր կատարում *Le Monde* եւ *Le Figaro* ֆրանսական թերթերից: Դա իր զբաղումն էր ամբողջ տասը տարի, որից յետոյ հանգստի կոչուեց իր ուսուցչական ասպարէզից եւ իր ամբողջ ժամանակը նուիրեց «Ալիք»ին՝ որպէս խմբագրապետ, միաժամանակ կուսակցության՝ պարտականություններ ստանձնելով զանազան մարմինների մէջ, մինչեւ Կենտրոնական կոմիտէ: Որպէս ազգային-կուսակցական գործիչ՝ յաճախ Իրանի զանազան հայկական համայնքներ էր այցելում ու դասախոսություններ կարդում:

Խմբագրապետի իր հանգամանքը առիթ ընծայեց նրան Դաշնակցության տպագիր մամուլը Իրանում արժանի մակարդակի հասցնելու: Բէյրութի կուսակցական մարմիններից ստացած գովասանական նամակները քաջալերական էին: Այս նամակներից մէկում Կարօ Սասունին գովում էր նրա արթուն միտքը, խորաթափանց վերլուծությունները, ընդ որում եւ՝ «Ալիք»ի որդեգրած ուղին: Սասունին հաւաստում էր, որ օրը օրին հետեւում է հօրս գրուածքներին: «Աճապարանօք կը գրեմ այս երկտողը՝ ըսելու համար, թէ օրը օրին կը հետեւիմ «Ալիք»ին եւ քու գրածներուն: Շատ լաւ կ'ընթանայ եւ ուրախ եմ ըսելու, որ քեզ միշտ արթուն կը տեսնեմ մամուլի պատնէշին վրայ»: Նամակը յունիս 26, 1964 թուականն ունէր:

Նրա ոչ բոլոր գրութիւններն ու գաղափարներն էին

դիրքությամբ ընդունում եւ մարսում. այնուամենայնիւ, նա անգիշող էր, հաստատուն, բայց՝ անկեղծ իր գաղափարների մէջ: Նա յատկապէս քննադատում էր Սովետական վարչակարգի էութիւնը բացայայտող իր խմբագրականների պատճառով: Սովետական Հայաստանի վարչակարգը ջատագովող հայկական միւս քաղաքական կուսակցութիւնները դատաւիւտում էին նրան: ՌԿԿ-ի պաշտօնաթերթ «Զարթօնք»ը 1970 թիւ, մարտ 10-ի համարում այսպէս էր հակադարձում հօրս քննադատութիւններին, որոնք մաս էին կազմում «Ալիք»ի «Մի ապագային կուսակցութեան ապաքաղաքական ուղեգիծը» խորագրով խմբագրականների շարքին: Ասում էր՝ խմբագիրը «կը պախարակէ, որ անկախութեան ու վարչակարգի հարց չենք յարուցաներ, եւ չենք պահանջեր «Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստան»»: Ծաղրում էր «Ալիք»ում կրկնուող այն միտքը, որ մեր առաջին թշնամին Սովետական Միութիւնն է, երկրորդը՝ Թուրքիան: Այսօրուայ ընթերցողը, որ «Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստան» արտայայտութեան մէջ Դաշնակցութեան գերագոյն նպատակի հարազատ արտացոլքն է տեսնում, կը յիշի, թէ այն օրերին ինչպէս էր Սփիւռքի հակադաշնակցական հատուածը այս գաղափարի դէմ միաւորուել: Բայց աւելի լաւ է այստեղ կանգ առնել եւ չխօսել ալդ հակադաշնակցական հոսանքի մասին, նոյն հոսանքը, որ 1991-ի Հայաստանի անկախացումից յետոյ ուղղութիւնը փոխեց եւ այս անգամ միաւորուեց Հայաստանում ձեւաւորուած «Ազատ, Անկախ եւ Ամբողջական Հայաստան» գաղափարի շուրջ («ամբողջական» եզրոյթի գործածութիւնը՝ ՀՅԴ-ի բնաբան սեպուղղ «միացեալ» եզրոյթից խուսափելու համար):

Դժբախտաբար, հօրս հանդէպ թշնամանքը միայն հակառակորդներից չէր գալիս: Սկզբում, երբ հայրս նոր էր վերադարձել, որոշ ընկերներ, մանաւանդ՝ վերահաստատուած դաշնակցականներ, ովքեր Սովետների կողմից Ատրպատականը

գրաւելուց յետոյ գոյն էին փոխել, մի քիչ անհանգստութիւն ցոյց տուեցին: Վախենում էին, որ Բաղդիկը պիտի մատնի իրենց անցեալը: Յիշում եմ, որ դեկավար դիրքերում, դրանք «մեծահոգութեամբ» միջնորդեցին Բիւրոյի մօտ, որ հօրս համար մի լաւ պաշտօն գտնեն երկրից դուրս՝ հեռու Իրանի հայկական համայնքից: Առաջարկ կար, որ մեզ տեղափոխեն Հալէպ, ուր հայրս պիտի ստանձնէր տեղի ազգային դպրոցի տեսչութիւնը: Բայց դա հօրս սրտով չէր. չէր ուզում ծանօթ ու սիրելի միջավայրից հեռանալ: Նա տնտեսական նեղ վիճակում էր, եւ այդ ցածրոգիները շահագործում էին դա: Ինչպէս երեսում է, Բիւրոն տեղեակ էր այդ միջնորդութիւնների յետին նպատակների եւ Թեհրանի որոշ ընկերների անհանգստութեան մասին: Վերը յիշուած նամակում Վահան Նաւասարդեանը իր զգացումներն էր յայտնում այդ մասին եւ հօրս խորհուրդ էր տալիս չմտահոգուել, տեղում մնալ եւ իր եւ իր ընտանիքի բարօրութեան համար աշխատել: Լարուածութիւնը շիջաւ, երբ հայրս համայնքի մէջ հաստատուեց եւ պարզ դարձաւ, որ միտք չունի պատերազմի օրերին որոշ ընկերների ծաւալած տգեղ գործունէութիւնը բացայայտելու: Նա այս մանրութեանից շատ վեր էր եւ իր բարձր բարոյականութիւնը պահեց մինչեւ վերջ:

«Ալիք»ի համար հօրս ապահոված ուղղութեան հիմքում նրա անյողդողդ քաղաքական համոզումն էր, որը եւ շարժառիթն էր նրա անզիճող վերաբերմունքի դէպի անկարգապահ ընթացք ունեցող եւ անձնական փառասիրութիւնը հաւաքական շահից վեր դասող մարդկանց: Նրա բարոյական սկզբունքները նրան թիրախ էին դարձնում որպէս կարծր ծայրայեղական եւ նկատողութիւնների տեղիք տալիս: Ընկեր Սեպուհ Յովհաննիսեանի ակնարկն այդ իրականութիւնից է խօսում. «Իր կատարածների համար երբեք գնահատանք չակնկալեց, իսկ իր դէմ գրուած անարդարութիւնների նկատմամբ ցուցաբերեց ամենաբարձր ներողամտութիւն եւ



նախանձելի կեցուածք»:<sup>3</sup> Նոյնանման կարծիք էր յայտնում ընկեր Անուշաւան Գրիգորեանը՝ հօրս ընկերը եւ գործակիցը դպրոցում, նրա յիշատակին գրուած յօդուածում. «Հետագային շատ բաներ լսեց ու տեսաւ: Բայց լուռ ու անտարբեր մնաց միշտ: Ո՛չ մի գանգատ, ո՛չ մի տրտունջ. կարծես ուզում էր ասել՝ թող լի ու լի լեցուի բաժակը, որ սահմանուել է ինձ համար»:<sup>4</sup>

Եւ բաժակը լեցում էր: Մթնոլորտը աշխատանքի վայրում, այսինքն՝ «Ալիք»ի խմբագրատանը, գնալով աւելի էր սրում ու անշնչելի էր դառնում հօրս համար: Տասը տարուց աւելի «Ալիք»ի խմբագրապետի պաշտօնը վարելուց յետոյ, մարտ 1, 1970 թուակիր նամակով, հայրս իր հրաժարականը ներկայացրեց Թեհրանի ՀՅԴ Մրգաստանի Կենտրոնական կոմիտէին: Ի հարկէ, փորձ կատարուեց համոզելու նրան, որ յետ վերցնի հրաժարականը, բանակցութիւններ տեղի ունեցան, բայց հայրս իր որոշման մէջ անդդդուելի մնաց: Կենտրոնական կոմիտէն վերջապէս սեպտեմբեր 18, 1970 թուակիր նամակով ընդունեց հրաժարականը: Նոյն նամակում Կենտրոնական կոմիտէն հօրս եւ իր ընտանիքին հրաւիրում էր գնահատանքի ընթրիքի: Հայրս մերժեց հրաւերը...

Ի հարկէ, հայրս միշտ էր մերժել տարբեր կազմակերպութիւնների կողմից իրեն որեւէ ձեւով պատուելու առաջարկ: Միայն մեծ ակնածանքով ընդունեց Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ. Տէր Խորէն Կաթողիկոս Բարոյեանի կողմից տրուած Մեսրոպ Մաշտոց ոսկէ մեդալը՝ ի գնահատանք կրթադաստիարակչական ասպարէզում իր տարիների գործունէութեան:

Բաղդիկ Մինասեանի դէմ ճղճիմ հալածանքը շարունակուեց

3 Սեպուհ Յովհաննիսեան, «Դոկտ. Բաղդիկը» յօդուածը տէն Բաղդիկ Մինասեանի մահուան 30-ամեակին նուիրուած «Ալիք»ի յատուկ համարում, յուլիս 13, 2006:

4 Անուշաւան Գրիգորեան, «Բաղդիկը» յօդուածը տէն Բաղդիկ Մինասեանի յիշատակին նուիրուած «Ալիք»ի յատուկ համարում, օգոստոս 21, 1976:

իր հրաժարումից յետոյ եւս: Փետրուար 19, 1972 թուակիր նամակը՝ ՀՅԴ Մրգաստանի Կ. Կոմիտէին ուղղուած, ապացոյցն է դրա: Այդ նամակում նա մատնանշում է երեւոյթներ, ուր ղեկավարութեան դիրքերում գտնուող որոշ ընկերներ «միտում են սեւացնել իմ արած գործը եւ նուաստացնել իմ արժանապատուութիւնը»: Նրանով հանդերձ, որ հրաժարուած էր խմբագրապետի իր պաշտօնից, այնուամենայնիւ, թերթի բովանդակութիւնն ու ուղղութիւնը եւ ընդհանրապէս հիմնարկութեան բարօրութիւնը նրա համար շարունակեցին մնալ ուշադրութեան եւ երբեմն էլ՝ մտահոգութեան կենտրոնում: 1976 թ. մարտին գրած մի նամակում նա իր կարծիքն ու առաջարկներն էր ներկայացնում ի նպաստ թերթի բովանդակութեան, աշխատակազմի եւ կառուցուածքի բարելաման: Եւ որքան հատու ու տեղին են եղել քննադատութիւնները եւ որքան գործնական՝ բարելաման առաջարկները: Նամակն, արդեօք, որեւէ ազդեցութիւն ունեցա՞ւ: Չգիտեմ...

Հայրս յարգուած էր Իրանից դուրս Դաշնակցութեան մեծ ընտանիքում եւս: 1963 թ. սեպտեմբեր 28 թուակիր նամակով ՀՅԴ Բիւրոն ջերմ խօսքերով հրաւիրում էր նրան մասնակցելու եւ իր յոյժ կարեւոր ներդրումը բերելու Բէյրութում կայանալիք 18-րդ Ընդհանուր Ժողովին: Նամակը այսպէս էր սկսւում. «Բիւրոս, նկատի ունենալով ձեր անխոնջ եւ երկարամեայ ծառայութիւնը Հ.Յ.Դաշնակցութեան, որ բոլշեւիկեան ամեհի բռնութեան հարուածներուն տակ, փոխանակ տրորուած, դուրս եկաք անաղարտ հաւատքով, անսպառ կորովով, եւ նետուեցաք յարատեւ պայքարի կրկէսի մէջ, իբրեւ դրօշակակիր Հայ Դատի....»:

Հայրս նաեւ հրաւիրուեց մասնակցելու 19-րդ (1967, Բէյրութ) եւ 20-րդ (1972, Վիեննա) Ընդհանուր Ժողովներին:

Հայրս Բէյրութ հրաւիրուեց մէկ այլ առիթով եւս: 1974 թ. դեկտեմբեր 8-ին, Համագգային հայ կրթական եւ մշակութային

միության կազմակերպությամբ տեղի էր ունենալու Մուշեղ Իշխանի գրական գործունեության 40-ամեակին նուիրում հանդիսությունը: Նրա ելոյթը այս հանդիսությանը, որ ամբողջությամբ հրատարակուեց «Ալիք»ի դեկտեմբեր 25-ի համարում, արժանի դրուատանքն է հայ մեծանուն գրող, բանաստեղծ՝ Մուշեղ Իշխանի կեանքի ու գործի:<sup>5</sup> Հակիրճ ակնարկով հայրս ներկայացրել էր հայ ժողովրդի համար ստեղծուած անբարենպաստ իրավիճակը եւ այսպէս շարունակել.

Արդ, այս կացութեան մէջ եւ այս պայմաններում միայն հայը կարող է հայ լինել, հայ ապրել եւ հայ մնալ:

Այս կացութեան մէջ եւ այս պայմաններում միայն հայ գրողը, հայ բանաստեղծը, հայ արուեստագէտը, հայ կրթա-դաստիարակչական մշակը եւ հայ քաղաքական մարդը կարող են ստեղծագործել, աշխատել, ճիգեր անել եւ մինչեւ վերջ մնալ հայ ժողովրդի ազգային ինքնութեան պահպանման եւ նրա ազգային-քաղաքական ազատագրութեան պայքարի պատենշի վրայ:

Վկայ, մեր սիրելի յոբելեար Մուշեղ Իշխանը:

Հայրս իր ելոյթը աւարտել էր զգացական պաթոսով.

Սիրելի Մուշեղ, կ'ուզենայի քեզ տալ Հայոց Աշխարհի Վեհափառ Արքայ, Հայաստանի եւ հայ ժողովրդի յանրժականութիւնը եւ յալիտենականութիւնը խորհրդանշող Մասիսի վեհութիւնը եւ տոկունութիւնը:

5 Մուշեղ Իշխանը (1913-1990) Հայոց Ցեղասպանութեան օրերին հօրից որբ էր մնացել եւ ընտանիքի մնացորդացի հետ մագապուրծ ազատուել էր սպանդից: Նրա արձակն ու բանաստեղծութիւնները լաւագոյն պատկերներն են այդ սերնդի տխուր ու դաժան գոյապայքարի: Նրա յուշերը՝ «Մնաս բարով մանկութիւն» արտայայտիչն են այն ցաւի ու մորմոքի, որ երբեւէ չմեղմացաւ: Նրա գրականութեան թեմատիկ վերլուծութիւնը տեսն Rubina Peroomian, *The Armenian Genocide in Literature, Perceptions of those who Lived through the Years of Calamity* (Yerevan: Armenian Genocide Museum Institute, 2012, 2014):

Ես կ'ուզենայի քեզ տալ Հայոց Աշխարհի Մեծ Տիկին, Քառագագաթ Արագածի գունագեղ ծաղիկներից կազմուած բուրումնաւէտ ծաղկեփունջը:

Ես կ'ուզենայի քեզ տալ Բիւրականի պարզ, զուլալ ու սառնորակ աղբիւրների անմահական ջուրը:

Ես կ'ուզենայի քեզ տալ Հայաստանի սիրտը կազմող Արարատեան դաշտի գեղեցկութիւնն ու բեղունութիւնը:

Ես կ'ուզենայի քեզ ընծայել Մայր Արաքսի եւ Արածանիի ազատութեան կանչի հայրենական սուրբ օրհնութիւնը:

Վերջապէս, կ'ուզենայի քո ճակատին դրոշմել իրանահայութեան եւ իմ ջերմ համբոյրները:

Հօրս մէկամսեայ ուղեւորութիւնը Աւստրալիա նրա վերջին ճամբորդութիւնն էր, վերջին առաքելութիւնը՝ որպէս դասախօս եւ կուսակցական գործիչ: Աւստրալիայի «Հայ Դատ»ի յանձնախմբի տեղեկագիրը, յուլիս, 1976, գովեստով եւ հիացմունքով է խօսում նրա ամենագիտակութեան, նրա գերբնական եռանդի մասին եւ թէ Սիդնիի ու Մելբուռնի հայ համայնքը որքան մեծ խանդավառութեամբ եւ ոգեւորութեամբ ընդունեց նրան: Նա տուն վերադարձաւ բարձր տրամադրութեամբ, հոգեկան մեծ լիցքաւորումով, բայց՝ մահացու հիւանդութեամբ, որ քօղագերծուել էր ի հետեւանս Սիդնիի հիւանդանոցում ստացած արագ բուժման: Նա առիթը չունեցաւ իր ճամբորդութեան մասին պատմելու, բայց յետագայում մեզ ուղարկուած նկարներից երեւում է, թէ ինչքան ջերմ են ընդունել իրեն, եւ ինքը այդ մէկ ամիսը որքան ուրախ է անցկացրել: Նա մահացաւ Թեհրանի հիւանդանոցներից մէկում՝ չկարողանալով դիմադրել գլուխ բարձրացրած ստամոքսային վերքի արիւնահոսութեան. հիւանդութիւն, որ նա բերել էր Գուլագից, բայց որ ինքն իրեն չէր բացայայտել ամբողջ 22 տարի՝ նրա ընտանիքին տալով բախտը՝ որպէս աստուածաշնորհ պարգեւ վայելելու նրա ներկայութիւնը:

Բաղդիկ Մինասեանը զգացումների բուռն յորձանուտ էր, գիտելիքների աղբիւր, ամենաանհաւանական փորձառութիւնների շտեմարան, որ կղպանքի տակ մնաց այն դռան ետեւ, որ մենք չփորձեցինք լայն բացել:



Երջանկություն. մենք չորսս միասին ենք նորից



Հայրս՝ Բաղդիկը, Ասատուր եղբոր եւ  
Ալմաստ քրոջ հետ  
(1960-ականներ, Թեհրան)



Զախից աջ՝ Ալեքսան մօրեղբայրս, Մանուշ  
քեռակինս, նրանց դուստրը՝ Ռիթան, եւ հայրս  
(1956, Թեհրան)



Մորս եւ իօրս այցելութիւնը  
Նոր Զուղա, Սպահան




Մայրս եւ իայրս, ուխտագնացութիւն  
Սուրբ Թադէոս Առաքելի վանք



Դասարանում, Էլմիէ միջնակարգ դպրոց 23/8/38  
(նոյեմբեր 15, 1959)




Ուսուցչական կազմ եւ աշակերտներ, Էլմիէ  
միջնակարգ դպրոց 23/8/38 (նոյեմբեր 15, 1959)



Գնահատագիր Կրթութեան  
նախարարութիւնից, 11/3/42 (յունիս 1, 1963)





Բաղդիկ Մինասեան «Ալիք»ի խմբագրապետ,  
օգոստոս, 1961



Կարօ Սասունու այցելութիւնը «Ալիք»ի խմբագրատուն



Ուիլիամ Սարոյեանի այցելութիւնը «Ալիք»ի խմբագրատուն






Բաղդիկ Մինասեանի դասախօսական շրջագայութիւնը Աբադան և Ահուագ. ընկերները բարի գալուստ են մաղթում. Բաղդիկի ծախ կողմում Աբադանի հայոց դպրոցի տեսուչ Աշոտ Մուրադխանեանն է



Մի դասախօսութեան պահին



Երջանիկ մեծհայր. առաջին թոռնիկին՝ Վահէին, գրկած



ՀՅՂ 19-րդ Ընդհանուր Ժողովը, Բեյրութ, 1967



Բաղդիկ  
Մինասեան՝ «Ալիք»ի  
խմբագրապետ,  
յունիս, 1968



Բաղդիկն ու  
Փառիկը իրենց  
թոռնիկներով՝ Վահէ,  
Օշին եւ Զարեհ,  
1970-ականներին



«Ալիք»ի 40-ամեակի տոնախմբությանը, 1971



Մեծի Տանն Կիլիկիոյ  
Կաթողիկոս ՆՍՕՏՏ Խորեն Արք.  
Բարոյեանը «Մեսրոպ Մաշտոց»ի  
անուան շքանշան է պարգևատւմ,  
ապրիլ, 1973



Բաղդիկ Մինասեանը դասախօսութեան սրահը մուտք  
գործելիս, Սիզնի, մայիս, 1976



Յաղթանակի նշան՝ Հայ Դատի  
արդար լուծման յոյսով





Հայ Օգնության Միության անդամուհիների հետ,  
Աւստրալիայի Ուիլքբի Հայ Կենտրոնում



Հայ Երիտասարդաց Դաշնակցության կրտսեր եւ երեք անդամների հետ



Միդնիի հայ համալսարանական ուսանողների հետ



Այցելություն Ուիլբրիի շաբաթօրեայ դպրոցին

Գլուխ 9

ԻԶՆՈՒՄ Է ՎԱՐԱԳՈՅՐԸ.  
ԳԱՂԱՓԱՐԻ ԱՆԿՈՏՐՈՒՄ  
ԶԻՆՈՒՈՐԸ  
ՅԱԲԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ՃԱՄԲԱՆ Է ԲՌՆՈՒՄ

Հօրս մահը հարուածեց մեր ընտանիքին եւ խորապէս ազդեց նաեւ Իրանի հայ համայնքի վրայ:

Վշտահար մայրս ուղղակի յուսալքուած էր. նրա կեանքի սրտակից ընկերը, որին կորցրել էր դեռ շատ երիտասարդ ու վերագտել քսաներկու տարի առաջ, կորսուած էր յաիտեան: Երեխաները, երեք թոռնիկները, կորցրել էին մի եզակի, մի հոգատար մեծ հայր, ով կարող էր նրանց խորհուրդներ տալ, իր օրինակով նրանց առաջնորդել կեանքում:

Մեր համայնքը բաժնեկիցը դարձաւ մեր վշտի: «Ալիք»ի էջերը լեցուն էին ցաւակցականներով, յուշերով, կենսագրական յիշատակումներով:

Հօրս բազմամարդ յուղարկաւորութիւնը ցուցանիշն էր թեհրանահայութեան՝ նրա հանդէպ տաժած սիրոյ, յարգանքի ու ակնածանքի: Մահերգ, ներբող, դամբանականներ՝ ազգային թաղման անկեղծ ու մեծաշուք հանդիսութիւն:

Նրա կենսունակ ու պայծառ հոգին, որ դժնդակ, բայց

արգասաւոր կեանք էր ապրել՝ Ղարադաղից Թաւրիզ, Փարիզ, Պրագա, Թեհրան, Ղազուին, Ռաշտ, նորից Թեհրան եւ Թաւրիզ, նրա յոգնատանջ հոգին, որ Երեւանի մենակեաց բանտախուցի չարչարանքն ու սիբիրեան տաժանակիր աշխատանքի ճամբարների տառապանքն էր ապրել, նրա յուսավառ հոգին, որ նորից նոր կեանք էր մտել իր ընտանիքի երբեմնի բարօր կեանքը վերականգնելու ու իր ազգին, իր կուսակցութեան, դաւանած բարձր գաղափարներին ծառայելու, այժմ իր վերջին ուղեւորութիւնն էր կատարում՝ դէպի վերջին կայան՝ անմահութի՛ւն: Գնում էր՝ շատերի գնահատանքին արժանացած, շատերից անտեսուած...

Նրա երիտասարդ ընկերներից Աբոյենց Դերիկը մի բանաստեղծութիւն նուիրեց՝ պարզ, անպաճոյճ, բայց իմաստալից: Բանաստեղծութիւնը քանդակուած է նրա դամբանաքարի վրայ.

Բոց լեզուների  
Ամունքով սնուած  
Համոզումն էր նա... ոգեղինացած,

Շանթող մտքերի  
Անմեռ կրակով  
«Հրկիզուածն» էր նա... իղձերի հնոց,

Հինը վերյիշող  
Յասումը արդար... Նոր ուղիների  
«Հրկիզողն» էր նա...

Նրա մահուան տարելիցի առիթով Հայ Դատի Յանձնախումբը պատշաճ յայտագրով մի յուշ-երեկոյ կազմակերպեց: Հրատարակուած էր նաեւ մի գրքոյկ, որի մէջ՝ կազմակերպիչ յանձնախմբի ուղերձը նրա յիշատակին, օրուայ յայտագիրը, կենսագրական գծեր, Աւստրալիայում կարդացած նրա դասախօսութիւնները վերծանուած, նկարներ նրա կեանքի

տարբեր շրջաններից, մեջբերումներ նրա խմբագրականներից եւ մի քանի կուսակցական վաստակաւոր ընկերների սեղմ մտածումներ ու կարծիքներ:

Մեջբերում եմ մի հատուած կազմակերպիչ յանձնախմբի ուղերձից.

Նա՝

Բովանդակ մի կեանք, դժնդակ առօրեայի պարտադրած վաղահաս հասունութիւնից, մինչեւ աքսորական թիապարտի ըմբռնումնաւ բանտախուցերի հեղձուցիչ օդը, եւ մինչեւ քաղաքական պայքարների ու գաղափարական մարտնչումների անհարթ ուղիները, եւ մինչեւ մահն անագորոյն՝ պատնէշի վրայ, մէկ սեւեռակէտ ունեցաւ՝ Հայ Դատը միայն:

Եւ՝

Ասպետական անանձնականութեամբ Հայ Դատի գոհասեղանին նուիրաբերեց այն ամենը, որ իրն էր ու իր անձնականն էր:

Ուրեմն՝

«Մերն» էր, այն է՝ իր համայնքինը եւ իր ազգինը միանգամայն, եւ այդպէս էլ կը մնայ իր անունն ու գործը մեծ, որպէս անմար յուշ եւ աւանդ:

Հայ Դատի Յանձնախումբ

Վաստակաւոր ընկերներից արձանագրուած ուղերձների մէջ ինձ համար ուշագրաւ էր աւագ ընկեր Աւետիս Պոլուզեանի ակնարկը: Ինքը՝ Արեւմտեան Հայաստանի դաշնակցական ֆեդայի, հօրս էլ այդպիսին էր նկատում.

Մեր հայդուկներու կողքին ունեցեր ենք եւ վստահաբար այժմ ալ ունինք մտաւորական հայդուկներ, որոնք անձնուրաց կերպով կը սլանային այնտեղ որտեղ պէտք ըլլար:

Մեր ընկեր դր. Բաղդիկը ահա այս վերջին տիպարն էր:

Իր մէջ ծանրօրէն նստած էր կատարեալ մարդը, գիտակից



հայը, ազնիւ ու անխարդախ եւ պայքարող դաշնակցականը:

Պայքարը իր էութենէն բխող մէկ գիտակից երեւոյթ էր:

Որոշ խնդիրներուն մէջ անկոտրում կամք եւ վճռականութիւն ունէր, մանաւանդ սկզբունքային խնդիրներու մէջ:

Աւետիս Պուլուգեան

Յուշ-երեկոյի նշանախօսքն էր՝ «Մարդը, Հայը, Յեղափոխականը», որ նաեւ վերնագիրն էր հրատարակուած գրքոյկի, եւ որ հնչում էր ամենուրեք: Այդպէս էր բնութագրուած Բաղդիկ Մինասեանը, եւ յուշ-երեկոն նպատակադրել էր վեր հանել՝ «արդարամիտ մարդու, անաղարտ նկարագրի տէր հայի եւ Հ.Յ.Դաշնակցութեան գաղափարական դրօշի տակ պայքարող յեղափոխականի կեանքի համագումարը»:

Օրուայ գլխաւոր բանախօսը, ով ներկայացնում էր Հ.Յ.Դաշնակցութիւնը, Հայ Դատի Յանձնախումբը եւ «Ալիք» օրաթերթը, իսկ համակրանքը վայելող, հասարակական եւ կուսակցական երիտասարդ ղեկավար՝ Նորայր Պահլաւունին էր: Ուրախ եմ, որ նրա ելոյթը հրատարակուեց «Ալիք»ում, եւ ես պահեցի այդ համարը: Եւ հիմա՝ քառասուն տարի այդ յուշերեկոյից յետոյ, երբ արդէն մահացած է նաեւ Նորայրը, կամ, ինչպէս մենք՝ աւելի երիտասարդներս էինք իրեն անուանում, մեր ընկեր Նորիկը, կարդում եմ նորից: Նա էլ նոյն բառերով էր բնութագրել իր «գաղափարակից, մեծ ու վաստակաւոր ընկերոջ», «Մարդը – Հայը – Յեղափոխականը, այս պարզ, բայց իրենց մէջ անսահման ու անչափելի խորհուրդ պարունակող բառերով է բնորոշուած այն ֆիդայի մտաւորականը, որ եղաւ սիրելի ընկ. Բաղդիկը», եւ այսպէս էր աւարտել իր ելոյթը.

Սգահանդէս չէ այսօր, այլ յարգանքի տուրք մէկ նուիրեալի եւ պատգամը, որ կարող է փոխանցուել ապրող, գործի վրայ եղող եւ աշխոյժ ու պատրաստակամ երիտասարդութեան, հետեւեալն է՝ Զուր չխառնել այն անարատ գինուն, որ որպէս

քիրեղ արցունք աւանդ է թողնուել երիտասարդ սերունդներին՝ ուխտելով միաժամանակ, որ օտարութեան ցուրտ հողերի տակ ննջող մեր բոլոր նուիրեալների աճիւնները հետ մի երջանիկ օր սիրելի ընկ. Բաղդիկի աճիւններն եւս տարուեն խառնուելու Ազատ ու Անկախ Հայաստանի հողին:

Հաւատո՞ւմ էր նա, արդեօք, որ մի օր Սովետական կայսրութիւնը կը տապալուի. հաւատո՞ւմ էր Ազատ եւ Անկախ Հայաստանի հաւանականութեանը: Մենք բոլորս էինք հաւատում: Մենք ներշնչուած էինք, որ այդ օրը պիտի գայ: Դա Մեծ Յոյսն էր, դա Գերագոյն Նպատակն էր, դա *raison d'être*-ն էր Դաշնակցութեան:

Նոյնիսկ երկար տարիներ մահից յետոյ հայրս չմոռացուեց: Նրա մահուան տարելիցները յիշում էին «Ալիք»ում յատուկ խմբագրականներով: Նրա խմբագրականներից հատուածներ էին վերահրատարակում թերթում, որոնք արտատպւում էին Սփիւռքի թերթերում եւս: Նրա կերպարը խորհրդանշում էր անկաշառութիւն, արդարամտութիւն, իդեալականութիւն եւ գերագոյն զոհաբերում: 1978-ին Իրանի Հայ Դատի Յանձնախումբը Դոքտ. Բաղդիկ Մինասեան անունով եւ ի յարգանս նրան մի մրցոյթ յայտարարեց: Մասնակցողները պիտի ներկայացնէին 120-150 էջերից բաղկացած, փաստական նիւթերի վրայ հիմնուած, գիտական վերլուծութիւն՝ Հայ Դատին վերաբերող որեւէ թեմայի շուրջ: Գրութեան լեզուն կարող էր լինել հայերէն, պարսկերէն, անգլերէն, ֆրանսերէն, ռուսերէն կամ թրքերէն: Յաղթողը պիտի ստանար \$1500, որ ժամանակին մեծ գումար էր համարում, եւ նրա գործը պիտի հրատարակուէր:

2006 թուականին «Ալիք»ը Թեհրանում եւ «Ասպարէզ»ը Լոս Անջելըսում, իրենց էջերը յատկացրին՝ յիշատակելու Բաղդիկ Մինասեանի մահուան 30-րդ տարելիցը: Լոյս տեսած յօդուածների մէջ ուշագրաւ էր Մեպուհ Յովհաննիսեանի յօդուածը, ուր նա իր աւագ ընկեր Բաղդիկ Մինասեանի կեանքն ու գործը համարում էր

խորհրդանիշը այդ տագնապալի ժամանակներում հայ ժողովրդի վրայ պարտադրուած աշխարհաքաղաքական պայմանների: Նրա կարծիքով՝ «Բաղդիկը պատկանում էր այն խորաթափանցների փաղանգին, որոնք ըմբռնել էին ՀՅԴի էութիւնը իր ամբողջ խորքով ու լայնքով... Ահա այդպիսին էր իմ շատ սիրելի աւագ ընկերը: Նա ըմբռնել էր հիմնականը եւ հաւատքով լիովին նուիրուել այդ գաղափարի գործադրութեանը»:

Յովհաննիսեանը յիշում է 1972 թուին ՀՅԴ Վիեննայի Ընդհանուր ժողովին քննարկուող «...կախման կէտերով ներկայացուած օրակարգը» եւ հօրս եռանդուն մասնակցութիւնը այդ քննարկմանը: Նա նոյնիսկ մէջբերում է այդ ժողովում հօրս հակիրճ ելոյթի միտք բանին եւ դա վերցնում է նոյն գաղափարն արտայայտող հօրս խմբագրականներից մէկից.

Այսօր չենք ժխտում, ի հարկէ, խաղաղ պայքարը, դա էլ փաստերի վրայ հիմնուած վերլուծութիւններով, ո՛չ թէ հայիոյանքով կամ ամբոխավարութեամբ, բայց դրան զուգընթաց՝ պէտք է երկաթեայ շերտի վերականգնումը, պէտք է ակն ընդ ական, ատամն ընդ ատաման նշանաբանը, եթէ ոչ՝ մինչեւ վերջ մեզ կը համարեն տհաս, մեզ ոչինչ չեն տայ...:

Յովհաննիսեանը վկայում է, որ ժողովի տուած որոշումը մօտ էր նրա մտածումներին: «Չեմ մոռանայ նրա զուսպ, բայց կատարեալ խորք ունեցող հրճուանքը, որ գծագրուել էր նրա դէմքի վրայ: Ժողովի դադարին, երբ յայտնեցի, որ տեսել եմ իր դէմքի հրճուանքը, գրկեց ինձ ու ականջիս փսփսաց, «Ուրախ եմ, որ քաղաքական *ունանիզմին* փոխարինելու է իրական գործը»»:

2007-ին «Ալիք»ի 75-ամեակին նուիրուած հատորում Սեպուհ Յովհաննիսեանը հետեւեալ խօսքերով էր յիշում թերթի երբեմնի խմբագրին.

Հաւանաբար Բ. Մինասեանը Ալիքի խմբագրի պարտականութիւնը վարել է ամենաերկար ժամանակի համար՝ շուրջ տասներկու տարի: Նրա գրած խմբագրականներն ունէին շեշտուած քաղաքական բնոյթ, որը թարմութիւն էր տալիս թերթին: Արտակարգ համեստ էր նա. 1971-ին, իր խմբագրութեան օրօք, երբ տօնուում էր Ալիքի 40-ամեակը, ուր կային նաեւ բարձրաստիճան հիւրեր, մինչ ոմանք փորձում էին երեսան գալ ու պատկերներ առնել սրա կամ նրա հետ, Բաղդիկը գրեթէ չկար. երբ հասաւ իր ելոյթին, պարզ ու անսթեւեթ շնորհակալութիւն յայտնեց ներկաներին ու քաշուեց իր անկիւնը:<sup>1</sup>

Այժմ, երբ արդէն այս գրքի վերջին էջերին եմ հասել եւ ժամանակն է, որ շունչ քաշեմ թեթեւացած, յետ եմ նայում, փորձում եմ աշխատանքս ու թափած ջանքս արժեւորել: Կարողացե՞լ եմ, արդեօք, արժանին մատուցել: Հօրս կեանքի ու գործի մասին գրելով՝ ես նուազագոյնը մատուցեցի մի մեծ մարդու, որ աւելին էր, քան իմ կեանքի առաջնորդը, որին փորձեցի նմանուել ամբողջ կեանքում՝ թէ՛ նրա բացակայութեան տարիներին եւ թէ՛ վերադարձից յետոյ:

Գրածս նորից եմ կարդում, ու մտածում եմ՝ եթէ հայրս ժամանակն ունենար իր յուշերն աւարտելու, ի՞նչ պիտի լինէր նրա պատգամն իր ընթերցողներին: Արդեօք յաջողե՞լ եմ այս գրքով արձագանքը դառնալ այդ պատգամի: Ո՞ր փնտրեմ:

Շրջանակի մէջ առնուած մի պարբերութիւն հօրս խմբագրականներից մէկում, որ արտատպուած էր «Ալիք»ի՝ նրա մահուան 30-ամեակին նուիրուած համարում, ինձ յուշում է, որ գտել եմ փնտրածս: Այդ պարբերութիւնը արտայայտում էր մի միտք, որ անգամներ լսել եմ հօրիցս մասնաւոր խօսակցութիւնների կամ դասախօսութիւնների ընթացքում, զանազան ձեւերով

1 Տե՛ս Սեպուհ Յովհաննիսեան, «Կարօտախառն Բարեւագիր», «Ալիքի 75-ամեակը» հատորում, Թեհրան, 2007, էջ 71:

արտայայտուած, բայց ո՛չ երբեք՝ հռետորական ոճով (հայրս ատում էր ճարտասանութիւնը): Դա իր ըղձանքն էր, իմաստն իր կեանքի ու գործի: Եւ ահա, կարեւորութեամբ՝ շրջանակի մէջ առնուած միտքը, որ ես նրա վերջնագոյն պատգամն եմ համարում.

Զգաստացի՛ր, ուրեմն, սիրելի՛ ժողովուրդ հայոց, եղի՛ր իրատես եւ իրապաշտ ու մի կողմ թո՛ղ արդարութիւն, մարդկայնութիւն, մարդկային օրէնք ու իրաւունք աղերսելու Քո մտայնութիւնը: Վերջ տո՛ր նաեւ օտարի վրայ յոյս դնելու Քո հոգեբանութեան եւ ապաւինի՛ր ինքդ քեզ եւ դու ինքդ լուծի՛ր Քո Դատը:

Տասնամեակներ առաջ արտայայտուած այս միտքը դեռ թարմ ու պատեհ է հնչում: Ուրեմն, թող դա լինի նաեւ մարմնաւորումը այս գրքում, յատկապէս՝ երիտասարդ սերնդին փոխանցուող պատգամի: Եւ թող այս գիրքը ընդունուի իբրեւ անկեղծ մի փորձ՝ ազատութեան եւ արդարութեան ի խնդիր հայ ժողովրդի հաւաքական պայքարի պատմութիւնը համալրող հազարաւոր նուիրեալների պատմութիւններին աւելացնելու մի համեստ գինուորի կեանքի պատմութիւնը, պատմութիւնը Բաղդիկ Մինասեանի, որ գոհեց իր երիտասարդութիւնը, իր առողջութիւնը, իր ամբողջ էութիւնը, բայց երբեք՝ իր հաւատամքն ու սկզբունքները:

Այս գրքի անգլերէն բնագիրը ես աւարտեցի իմ հայերէն խօսքով: Յանկանում էի հօրս հետ խօսել մեր մայրենիով: Դա գրել ու հրատարակել էի հօրս մահուան 30-ամեակի առիթով «Ալիք»ում եւ «Ասպարէզ»ում: Թող դա նաեւ լինի վերջերգը այս հայերէն տարբերակի:

### **Երախտապարտ եմ քեզ, հայր Հօրս՝ Բաղդիկ Մինասեանի յիշատակին**

Երախտապարտ եմ քեզ, հայր, կեանքում առած իւրաքանչիւր դրական քայլիս համար: Երախտապարտ եմ այն հաւատի, մղումի ու պարտազգացութեան համար, որ ներշնչեցիր ինձ քո օրինակով: Այսօր՝ քո անսպասելի մահից երեսուն տարի անց, մտորումներս քեզ հետ են նորից. մտովի ապրում եմ կեանքդ եւ փորձում եմ իմ ընտրած ճանապարհի մեկնակէտի ու հանգրուանների գուգահեռը գտնել քո կեանքի պատմութեան մէջ: Բայց մի՞թէ կարող էի տոկալ այն բոլոր տառապանքներին, որ քո կեանքի տաժանքը եղան. կարո՞ղ էի այդքան տառապանքից ու մարդկանց քո դէմ թոյլ տուած հսկայ դաւաճանութիւնից ու անարդարութիւնից յետոյ այդքան բարձրոգի, այդքան լուսամիտ ու յուսալից նայել աշխարհին:

Վերջերս միայն քո թղթերի մէջ ինձ ուղղուած նամակդ գտայ: Մի փոքրիկ թերթիկ էր՝ 1943-ի յունուար 1-ին գրուած, նոյնիսկ ժամն էլ էիր նշել՝ 17:10: Գրել էիր առեւանգումիցդ մէկ տարի եւ երկու օր առաջ ու վերնագրել էիր՝ «Իմ անուշիկ բալիկս՝ Ուրիկ, կարդա՛ երբ մեծանաս»: Հիմա կարող եմ վստահ ասել, որ նախատեսում էիր ձերբակալուելդ, նախատեսում էիր, որ պիտի չկարողանաս երկար ինձ հետ լինել, ընտանիքիդ հետ լինել: Ու պատգամում էիր. «Հետեւի՛ր պապին, որ արհամարհեց փառք ու հարստութիւն, քայլեց ընտանիքի եւ հայրենիքի վեհ գաղափարի ճամբով»: Այո՛, առիթ չունեցար հայրական պարտականութիւններդ կատարելու: Այն ժամանակ, երբ քո ջերմութեան, քո հայրութեան կարիքն ունէի, դու խորհրդային դրախտի սառցապատ լագերներում հացի, լոյսի, արդարութեան ու ազատութեան կարօտ՝ սառուցեալ հողն էիր փորում ու աղիւս կրում: Այնուամենայնիւ, դու իմ ճամբան քո բացակայութեամբ իսկ գծեցիր: Երախտապարտ եմ: Վերադարձդ նոյնքան անսպասելի էր, որքան առեւանգումդ:

Այդ վտիտ մարմինը ինչպէ՛ս էր տոկացել տասը տարիների տաժանակիր աշխատանքին, քաղցին, ցրտին, հիւանդութեան: Եւ վերադարձել էիր նոր յոյսերով, մարդկային, քաղաքական ու կուսակցական անհամեմատելի փորձառութիւն ուսերիդ շալկած: Արդեօք ընկերներդ օգտուեցի՞ն այդ փորձառութիւնից, ականայ ամբարած տեղեկութիւններից: Վերադարձար ընտանիքիդ, երեսուն տարեկանում «որբեվայրի» մնացած կնոջդ ու «որբ» բալիկներիդ: Մեզ երջանկութիւն բերեցիր ու մենք էլ փորձեցինք հոգուդ վերքերը դարմանել, տառապալից անցեալիդ ցաւագին յուշերն ամոքել: Դատապարտուել էիր ու պատժուել՝ Հ.Յ.Դաշնակցութեան պատասխանատու անդամ լինելուդ եւ գազազած քննիչներիդ որեւէ տեղեկութիւն չփոխանցելուդ համար: Ու վերադարձից յետոյ էլ պատրաստ էիր միայն կուսակցութեանդ վերին մարմիններին փոխանցելու գիտցածդ: Հակառակ կրածդ չարչարանքին, տեսածդ անմարդկայնութեան, լաւատես էիր աշխարհի նկատմամբ, լաւատես էիր մեր ժողովրդի ու մեր հայրենիքի ապագայի նկատմամբ: Հաւատում էիր, թէ համաշխարհային քաղաքականութիւնը իր վերիվայրումների մէջ հայ ժողովրդին վերածնութեան ամիթ պիտի տայ, հաւատում էիր Հայ Դատի արդարութեանը եւ դրա լուծման կարելիութեանը՝ Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի իրականացման մէջ: Այդ հաւատքով վարակեցիր ինձ: Կարողացա՛յ, արդեօք, Հայ Դատի պայքարի ու ժողովրդականացման քո հաւատքի ճամբան շարունակել այնպէս, ինչպէս դու պիտի ուզէիր: Դաւանեցիր այն համոզման, թէ «Պատմութիւնը ազգերի համար հայելի է: Այդ հայելու մէջ, ապրող սերունդները տեսնում են իրենց անցեալը՝ ըստ այնմ վերագնահատութեան ենթարկելու իրենց ներկան եւ ապա մտածում գալիքի մասին»: Որքան էլ փառաւոր էր անցեալը, ներկան տառապեցնում էր քեզ, «մշակութային ու քաղաքական արժէք... փառք ու արժանապատուութիւն» ունեցած

մեր ժողովուրդը ինչո՞ւ է դարձել «թափառական, գաղթական»։ Մտորումներիդ մէջ տեսնում եմ ինքնաքննադատութեան այն գիծը, որ առկայ է մեր շատ մտաւորականների մէջ մեր ժողովրդի գլխին եկած որեւէ աղէտ մեկնաբանելիս։ Եւ դու էլ ես մտածում, «եթէ երկպառակտուած չլինէինք, եթէ ներքին պայքարների մէջ չբռնուէինք...»։ Բայց այդ բոլորը չէր արգելում քեզ հաւատով կրկնելու. «Մենք մեր զոհաբերութեամբ, մեր արիւնով միայն պիտի կարողանանք տիրանալ մեր արդար իրաւունքներին»։ Կատարեցիր քո բաժինը, տուեցիր աւելին։ Հիմա տես, որ քեզ յաջորդող սերունդներն են շարունակում։ Հայ Դատը դեռ կեանք է, ցաւ է, զոհաբերութիւն է, արիւն է. ու նրա արդար լուծումը՝ միակ կարելի հեռանկարը հայ ժողովրդի ապագայի։

Դուստրդ՝ Ռուբինա Փիրումեան Մինասեան



## ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ

- Աճեմյան, Գրիգոր. «Միբիրական». Երևան, ԵՊՀ  
հրատարակություն, 2009.
- Ալազան, Վահրամ. «Տառապանքի ուղիներով». Երևան,  
«Խորհրդային գրող», 1990.
- Արամյան, Վալտեր. «Կոլիմա». Երևան, Հայ գրողների  
միության հրատարակություն, 2006.
- Արշակ (Մերգեյ Արշակյան). «Գնչուհին». Երևան, «Վարք»  
հրատարակություն, 1995.
- Արշի (Արշալոյս Բաբայեան). «Մեր Բաղդիկը», «Ալիք»  
օրաթերթ, շաբաթ, 21 օգոստոս, 1976.
- «Բագին» (Բէյրութ). 1989, No. 7–12.
- \_\_\_\_\_. 1991, No. 9–10.
- \_\_\_\_\_. 1995, No. 7–8–9.
- \_\_\_\_\_. 2008, No. 4.
- Գրիգորեան, Անուշաւան. «Բաղդիկը». «Ալիք» օրաթերթ,  
շաբաթ 21 օգոստոս, 1976.
- Գուրգէն, Վ. «Յիշողութիւններ». «Ալիք» օրաթերթ, շաբաթ 21  
օգոստոս, 1976.
- Լազեան, Գաբրիէլ. «Հայաստան եւ Հայ Դատը հայեւորու  
յաբարբերութիւններու լոյսին տակ». Կահիրէ, «Յուսաբեր»  
հրատ., 1957.
- Խառատոյան Հրանուշ, Շագոյան Գայանէ, Մարության  
Հարություն և Աբրահամյան Լևոն. «Ստալինյան  
բռնաճնշումները Հայաստանում. պատմություն,  
հիշողություն, առօրյա». Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն»  
հրատարակություն, 2015.
- Խոնդկարեան, Արշամ (Ա. Աթան). «Հայրենիք» ամսագիր,  
նոյեմբեր, 1938.
- Կապուտիկյան, Միլվա. «Խճանկար հոգու և քարտեզի  
գույներից». Երևան, «Սովետական գրող»  
հրատարակություն, 1975.

- \_\_\_\_\_. «Էջեր փակ գորոցներից». Երևան, «Ապոլոն» հրատարակչություն, 1997.
- Կունդակչեան Կ. Արմինէ. «Հայրենադարձների բռնաճնշումները ստալինյան ժամանակաշրջանում». Երևան, հեղինակային հրատարակչություն, 2010.
- Հովսեփյան, Հովհաննես. «Ղարադաղի հայերը». ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2009, հատոր 1, Ազգագրություն.
- Ղազարյան, Սուրեն. «Դա չպետք է կրկնվի». Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1988.
- Ճգնափողյան, Զարեհ. «Կոչեմ ապրողաց» (*Enemy of the People: Armenians Look Back at the Stalin Terror* ֆիլմի հայերեն տարբերակը). առցանց՝ <https://vimeo.com/99905238>.
- Մանուկյան, Արմենակ. «Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում, 1920–1953». Երևան, «Առեքեսում»-Անի հրատարակչություն, 1999.
- \_\_\_\_\_. «Հայ Առաքելական Եկեղեցու բռնադատված հոգևորականները 1930-1938 (ըստ ՊԱԿի փաստաթղթերի)». «Ամբոց», Երևան, 1997.
- Մարտիրոսեան, Ռոբերթ. «Դաշնակցության հակաժողովրդական գործունեությունը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին». Երևան, Հայաստան հրատ., 1986.
- Մինասեան, Բաղդիկ. «Մանկավարժութեան Հիմունքներ, Principes de pédagogie». Թալիզ, 1931.
- \_\_\_\_\_. «Տասը տարի, տասն ամիս եւ տասներեք օր խորհրդային բանտերում եւ աշխատանքային ճամբարներում, 1944, 3 յունուար – 1954, 17 նոյեմբեր». Աթենք, հրատարակութիւն Հ.Յ.Դաշնակցութեան Բիւրոյի, Յեղափոխական գրադարան, թիւ 13, 1991.
- Մինասյան, Հարություն. «111... բռնադատված հայ բժիշկներ, 1920-1954թթ., Կենսագրական բառարան, Գիրք Ա». Երևան, 2006.
- Յովհաննիսեան, Սեպուհ. «Դոկտ. Բաղդիկը». «Ալիք» օրաթերթ, յուլիս 13, 2006.

- \_\_\_\_\_. «Կարօտախառն բարեւագիր. «Ալիքի 75 ամեակը». Թեհրան, տպարան «Ալիք», 2007.
- «Պատմություն Ատրպատականի Հայոց թեմական դպրոցի, 1909-1936», Թեհրան, տպարան «Ալիք», 1981.
- Պետրոսեան, Շահէն. «Անմոռանալի դէմքերից մէկը». «Ալիք» օրաթերթ, շաբաթ 21 օգոստոս, 1976.
- Սմբատյան, Գրիշա. «Երկաթե վարագույրից այս կողմ». Երևան, «Զանգակ» հրատարակչություն, 2009.
- Սոլժենիցին, Ալեքսանդր. «Արխիպելագ Գուլագ, 1918-1956. Գեղարվեստական հետազոտության փորձ», թարգմանությունը Արմեն Հովհաննիսյանի, հատոր Ա. Երևան, «Գիր գրոց» հրատարակչություն, 1994.
- Վիրաբյան, Ամատունի. «Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով: Հասարակական-քաղաքական կյանքը 1945-1957 թթ.». Երևան, 2001.
- «Փետրուար 18». Փրագա, Հ.Յ.Դաշնակցության Փրակայի ուսանող. միության հրատարակություն, 1927.

- Abrahamian, Yervand. *Iran Between Two Revolutions*. Princeton, NJ: Princeton University Press, 1982.
- Applebaum, Anne. *Gulag: A History*. New York: Anchor Books, 2004.
- Conquest, Robert. *The Great Terror: Stalin's Purge of the Thirties*. United Kingdom: Oxford University Press, 1968.
- Courtoise, Stéphane et al. *The Black Book of Communism*. Cambridge: Havard University Press, 1999.
- Conway, Allan. *The Secrets of Your Handwriting: Your Personality in Your Penmanship*. Pavillion Books, 2016.
- Getty, J. Arch, Gábor T. Rittersporn and Viktor N. Zemskov. "Victims of the Soviet Penal System in the Pre-war Years: A First Approach on the Basis of Archival Evidence." *American Historical Review*, october 1993 (98/4), pp. 1017–1049.
- Hosford, David, Pamela Kachurin and Thomas Lamont. *GULAG: Soviet Prison Camps and Their Legacy*. Cambridge,

- Massachusetts: Davis Center for Russian and Eurasian Studies, Harvard University, 2006.  
<http://gulaghistory.org/nps/downloads/gulag-curriculum.pdf>.  
 Ներբեռնում է ապրիլ, 2017-ին.
- Jones, Adam. *Genocide: A Comprehensive Introduction*. London and New York: Routledge University Press, 2006.
- Kozlov, Viktor. *The Peoples of the Soviet Union*. Tr. Pauline M. Tiffen. Bloomington: Indiana University Press, 1988.
- McGuire, Caroline. “Life in the Freezer: Inside the northernmost city on Earth whose residents endure –55°C temperatures and two months of total darkness every year.” *The Daily Mail* (London), January 26, 2016.  
[http://www.dailymail.co.uk/travel/travel\\_news/article-3416963/Think-s-cold-Spare-thought-residentsNorilsk-northernmost-city-world-endure-temperatures55-C-two-months-24-7-darkness-year.html](http://www.dailymail.co.uk/travel/travel_news/article-3416963/Think-s-cold-Spare-thought-residentsNorilsk-northernmost-city-world-endure-temperatures55-C-two-months-24-7-darkness-year.html). Accessed April 2017.
- Oganessian, Suren. *Under Stalin's Sun, Reflections 1920–1945*. Tr. James Tashjian. Los Angeles, California: N.p., 1981.
- Peroomian, Rubina. *The Armenian Genocide in Literature: Perceptions of Those Who Lived through the Years of Calamity*. Yerevan: Armenian Genocide Museum-Institute, 2012, 2014.
- Solzhenitsyn, Aleksandr I. *One Day in the Life of Ivan Denisovich*. Tr. Max Hayward and Ronald Hingley. New York: Frederick A. Praeger, 1963.
- \_\_\_\_\_. *The Gulag Archipelago, 1918–1956: An Experiment in Literary Investigation, I–II*. Tr. Thomas P. Whitney. New York: Harper & Row, 1973.
- Tjeknavorian, Zareh. *Enemy of the People: Armenians Look Back at the Stalin Terror*, Video, released in 1998
- Харатян Г. Контингентность и/или этничность: армяне в фокусе депортации 1949 года // Депортация армян 14 июня 1949 года, Сборник документов и материалов, отв. редакторы Н.Н. Аблажей, Г. Харатян, Новосибирск: «НАУКА», 2016, с. 191-200

\_\_\_\_\_. Реабилитационный ли закон РА «О репрессированных лицах» и кто такие репрессированные в Армении // Реабилитация и память (Отношение к жертвам советских политических репрессий в странах бывшего СССР), Москва. «Мемориал»-«Звенья», 2016, с. 80-127

عنایت الله رضا. آذربایجان و اران (آلبانیای قفقاز) تهران: وزارت امور خارجه ۱۳۶۰ (1981)  
 آوانسیان آرا از مدرسه هایکازیان تا دبیرستانهای پسرانه کوشش داویدیان و دخترانه کوشش  
 مریم. «Պայման» թիվ 66, 1392 (2014). پیمان شماره 66  
 ناطق ناصح زبان آذربایجان و وحدت ملی.  
 ایران ۱۳۵۸ (1980)

## ԱՆՈՒԱՆԱՅԱՆԿ

Ցանկում ընդգրկուած չեն անուններ, որոնք յաճախակի են կրկնուում, կամ միաձուլուած են պատումին

- Արոյենց Դերիկ. 289  
Արովեան դպրոց. 249  
Արրահամեան, Լեւոն. 7  
Ագարոնով (Ահարոնեան). 78, 79, 87, 88, 96, 100  
Ադրբէջան. 50, 51, 91, 93, 101, 186, 225  
Ագարբայջան, Իրան – տես՝ Ատրպատական.  
Աթրոփաթէն. 44  
Ալազան, Վահրամ. 3, 175, 178, 180, 181, 190, 191, 213, 228  
Ալթայ. 220  
«Ալիք». 21, 24, 32, 40, 47, 60, 61, 157, 237, 250, 272-275, 277, 288, 291, 292, 293, 294, 295  
Ահարոնեան [Աւետիս]. 252  
Աճառեան, Հրաչեայ. 48, 212  
Աճեմեան, Գրիգոր. 21  
Աճեմեան, Հայկ. 249  
Ամատունի [Ամատունի]. 227  
Ամերիկայի Կալիֆորնիա նահանգ. 261  
Այվազեան, Գրիշա. 7  
Անդրկովկաս. 77, 80, 85  
«անհատի պաշտամունք». 238  
Աշխաբադ. 162, 163  
Աշոտ դայի. 173  
Ատրպատականի ժողովրդային դեմոկրատական անկախ պետութիւն. 108, 109, 212  
Ատրպատականի կրթութեան նահանգային նախարարութիւն. 61, 246  
Ատրպատականի ոստիկանութիւն. 5, 246  
Ատրպատականի քրդական շարժում. 162  
Արամեան, Վալտեր. 3, 174, 187, 192, 209, 221  
Արասբարան. 44  
Արաքս գետ. 44, 45, 118  
Armenian Weekly. 185  
Արեւելեան Պրուսիա. 170  
«Արեւելք», Թաւրիզ. 64, 65  
Արշի (Արշալոյս Բաբայեան). 47  
Ափրլբամ, Անն (Applebaum, Ann). 2, 168, 187, 201, 205, 216, 229, 239  
Աֆթանդիլեան, Արմենակ. 96  
Բաբայեան, Վարոս. 95, 96, 103, 105, 112, 148  
Բալկանեան երկրներ. 76  
Բակունց [Ակսել]. 219  
Բաղդասարեան, Տիգրան. 32  
Բարդաք, Եանուս (Bardach, Janusz). 205  
Բարոյեան, Ն.Ս.Օ.Տ. Տէր Խորէն Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ. 275  
Բաքու. 80, 85, 91, 119, 135  
Բեգլարի, գնդապետ. 82, 84

- Բելգիա. 76  
 Բեռլին. 180  
 Բեսսոնով, Սերգեյ. 179, 180, 189  
 Բերիա, Լարենտի. 2, 180, 190, 225, 226, 228, 229, 233, 238  
 Բենեռային գօտի. 5, 12, 204, 206, 223  
 Բուդուգեշակ. 181  
 Բուտիրսկու բանտ – տես՝ Մոսկուա.  
 Բոքի, Գլեր. 194  
 Բրիգբլեն, Աստրալիա. 2  
 Բրիտանիա – տես՝ Մեծն Բրիտանիա.  
 Գագեն-Թորնի, Նինա (Gagen-Torn, Nina). 167  
 Գանձակ (Կիրովաբադ). 186  
 Գերմանիա. 62, 76-78, 80, 185, 186  
 Գիւմրի. 186  
 Գորբաչով [Միխայիլ]. 232, 215  
 Գրիգորեան, Անուշաւան. 275  
 Գրիգորեան, Խաչատուր. 106, 107, 112  
 Գրիգորեան, Յասմիկ. 7  
 Դալստրոյ. 180  
 Դաշնակից (ուժեր/ պետութիւններ). 62, 63, 77-80, 85, 92, 106, 107, 109, 129, 130  
 Դաշնակցական աշակերտական միութիւն. 51, 52, 147  
 Դաթեան Հայոց Ազգային միջնակարգ դպրոց. 60  
 Դուդինկա. 205  
 Դրունք. 44  
 Դրօ. 129  
 «Դրօշակ». 14, 18, 237  
 Եժով, Նիկոլայ. 180  
 Ենիսէյ. 19, 22, 138, 139, 158, 159, 161, 205  
 Եփրեմ [Խան]. 14  
 Զանգեզուրցի Գրիգոր. 104  
 Զանջան. 85  
 Զարեան, Նայիրի. 230, 231  
 «Զարթօնք», Բէյրութ. 273  
 Զարոդ, Քազիմիրզ (Zarod, Kazimierz). 205  
 Էլմիէ (պետական) միջնակարգ դպրոց, Թեհրան. 270, 271  
 «Էրոս» օրացոյց. 254  
 Թամադոն պետական դպրոց. 249  
 Թաւրիզի Կաթողիկէ կոյսերի ֆրանսական դպրոց. 249  
 Թիֆլիս. 135, 167, 186, 203.  
 Մետեխի բանտ. 167, 186  
 Թուդէ կուսակցութիւն. 107, 108, 110  
 Թուրքիա. 50, 62, 77-79, 85, 87, 110, 163, 273  
 Թրաս, Լէոնիդ (Trus Leonid). 182, 187  
 Ժամհարեան, Փանոս. 112  
 Իշխան, Մուշեղ. 277  
 Իրանի Իսլամական Յեղափոխութիւն 1979 թ. 261  
 Իրանի Կրթութեան նախարարութիւն. 56, 61, 246, 247, 270, 271  
 Լազեան, Գաբրիէլ. 269  
 Լեհաստան. 76  
 Լենինական – տես՝ Գիւմրի.  
 Լերմոնտով, [Միխայիլ]. 124  
 Լըմանթ, Թամըս (Lamont,

- Thomas). 169
- Խանջեան, Աղասի. 160, 212, 226-228
- Խաչիկեան, Սամսոն. 102
- Խառատեան, Հրանուշ. 3, 7
- Խոնդկարեանը, Արշամ (Ա. Աթան). 225
- «Խորհրդային Հայաստան». 226, 227
- Խորուշով [Նիկիտա]. 229, 230, 232, 236-239
- Կալիֆորնիայի Համալսարան, Լոս Անջելըս (UCLA). 261
- Կալմիկ. 138, 139
- Կապուտան լիճ – տես՝ Ուրմիա.
- Կապուտիկեան, Սիլվա. 224, 230, 238
- Կասպից ծով. 36
- Կարա ծով. 139
- Կենտրոնական հետախուզական վարչություն (Central Intelligence Agency - CIA). 269
- Կոչկով, սերժանտ. 146
- Կոլիմա (աշխատանքային ճամբար). 175, 179, 181, 204, 206, 214
- Կոստյեան, Հայկակ. 105
- Կովկաս – տես՝ Անդրկովկաս.
- Կուկունեան, [Սարգիս]. 14
- Կրասնոյարսկ (Կրասնայարսկ). 19, 158, 161, 168, 205, 209, 223
- Հալեպ. 274
- Հախնազարեան, Յովհաննէս. 54, 55
- Համադան. 58, 59, 63, 98
- Հայաստանի Ազգային անվտանգության ծառայություն ՀՀ ԱԱԾ. 24, 144, 238
- Հայաստանի Ազգային արխիւ. 23, 24, 151
- Հայ Դատի յանձնախումբ, Իրան. 289-292
- «Հայ Դատ», Աւստրալիա. 278
- Հայ երիտասարդական մշակութային միություն – ՀԵՄՄ. 38
- Հայկազեան Ազգային միջնակարգ դպրոց. 60, 61
- Հայ մշակութային Արարատ կազմակերպություն – ՀՄԱԿ. 38
- Հայոց դպրոցի Շրջանաւարտից միություն. 37
- Հայոց Եղեռն, տես՝ Մեծ Եղեռն.
- Հայոց ցեղասպանություն, տես՝ Մեծ Եղեռն.
- Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտ. 3
- «Հայրենիք». 146
- Հըրլինգ Գուսթաւ (Herling Gustav). 182
- Հիալեր, [Ադոլֆ]. 76, 77, 211, 233
- Հիսիսային ովկիանոս. 134, 139, 159
- Հ.Յ.Դաշնակցութեան Պրագայի ուսանողների միություն. 54, 147
- ՀՅԴ 18-րդ Ընդհանուր Ժողով (1963, Բէյրութ). 276
- ՀՅԴ 19-րդ Ընդհանուր Ժողով (1967, Բէյրութ). 276
- ՀՅԴ 20-րդ Ընդհանուր Ժողով (1972, Վիեննա). 276, 293
- Հոլանդիա. 76



- Հոսֆորդ, Դեյվիդ (Hosford, David). 169
- Հոբսբայլդ, Ադամ (Hochschild, Adam). 206
- Ղազախստան. 171
- Ղազարեան, Ռուբեն. 121, 122, 124, 125, 128, 129, 132, 133, 152
- Ղազարեան, Սուրեն. 3, 13, 166, 167, 172, 174, 179, 180, 189, 192, 225, 231, 247, 248. կինը՝  
Լիլա. 247, 248
- Ղազուին. 55, 58, 59, 289
- Ղազո, Դավի. 89, 94
- Ղարաբաղ. 44, 45
- Ղարաղաղ. 43, 44, 49, 289
- Ճգնաւորեան, Զարեհ. 13, 174, 176
- Մագադան. 180, 214
- Մագմանեան, Միքայել. 202-204, 215
- Մալխաս. 252
- Մակունց, [Ղազար]. 114
- Մահարի, Գուրգեն. 3, 13, 21, 171-174, 177, 234
- Մանեշեան, Քնարիկ. 185
- Մաշհադ. 31
- Մանուկեան, Արմենակ. 215, 230, 234
- Մարաղա. 98
- Մարիամեան Ազգային աղջկանց միջնակարգ դպրոց. 34
- Մառինսկ. 214
- Մարութեան, Յարութիւն. 3, 7, 202, 203, 217, 235, 236
- Մարտիրոսեան, Պետական Ապահովութեան նախարար. 121-123, 125
- Մարտիրոսեան, Սամսոն. 217, 218
- Մարտիրոսեան, Վոլոդիա. 217, 218
- Մդիվանի, լէյտենանտ. 146
- Մելքուն, Աստրալիա. 21, 278
- Մելիք-Թանգեան, Ներսես, Արք. 49, 90, 101, 113
- Մելքոնեան, դոկտ [Հայկ]. 98, 99
- Մեծ Եղեռն. 2, 3, 9, 49, 50, 52, 239, 261-264
- Մեծն Բրիտանիա. 62, 76, 77
- «Մեհր» տարրական դպրոց. 251
- ՄրքԳուայր, Քարոլայն (McGuire, Caroline). 204, 205
- Միկոյեան, Անաստաս. 237
- Միր Աֆգալի (պետական) միջնակարգ դպրոց, Թեհրան. 271
- Մոհամադ Ռեզա [Փահլավի]. 62
- Մոսադեղ, [Մոհամմադ]. 30, 162
- Մոսկուա. 5, 109, 112, 134, 138, 148, 155, 161, 162, 170, 193, 218, 231, 233. Բուտիրսկի բանտ. 189.
- Մեմորեալ ընկերակցութիւն. 232, 235.
- Տրոյկա (Յատուկ խորհուրդ). 133, 134, 140, 193, 194.
- Մուդոդուսի, Խաչիկ. 228
- Moscow News*. 170
- Monde, Le*, Փարիզ. 272
- Յարութիւնեան, Գուրգեն. 212
- Յարութիւնեան, Ռեիկ. 212
- Յարութիւնեան, Քեռի Սարգիս. 250
- Յովհաննիսեան, Սեպուհ. 274, 292, 293

- Յովհաննիսեան, Սուրեն. 174, 185, 186, 225
- Յովսէփեան, Յովհաննէս. 44, 45
- «Յուսաբեր», Կահիրէ. 61, 269
- Նաւասարդեան, խորհրդային  
հիւպատոս Թարիգում. 113
- Նաւասարդեան, Վահան. 270, 274
- Նենեց. 158
- Նժդեհ, Գարեգին. 14, 51, 129
- Նորիլագ, տես՝ Նորիլսկ.
- Նորիլսկ (Նարիլսկ). 5, 22, 134, 135, 139, 155, 158, 161, 168, 181, 182, 187, 201-206, 209, 214, 217, 218
- «Новый мир» (Նովիի միր). 231
- Շագոյեան, Գայեանէ. 7, 188, 212
- շարաշկա*  
(«ղրախտ-կղզիներ»). 224
- Շիրվանզադէ [Ալեքսանդր]. 252
- Ողան. 43
- «Ոսկէ Կամուրջ». 80
- Ուզբեկիստան. 162
- Ուկրաինա. 140
- Ուրմիա. 85, 98, 99
- Չարենց, [Եղիշէ]. 212, 236
- Չեխովովսկիա. 76
- Չիթչեան, Օննիկ. 97
- «Չոռնի վառոն» - տես՝ «Մեւ ագռաւ».
- Պահլաւունի, Նորայր. 291
- Պանիրեան, Հայրապետ. 105
- Պասեան, Ներսէս. 118
- Պետրոսեան, Շահէն. 60
- Պետրոսեան, Պետիկ. 177
- Պերեստրոյկա*. 215, 232
- Պիոնեան, Կարապետ. 48, 53
- Պուլուգեան, Աւետիս. 240
- Պրագա. 53, 58, 147, 289.  
Universitatis Carolinae  
Pragensis. 52
- Պրաւդա*. 109, 212
- Ջիրլախտ աշխատանքային  
ճամբար. 186
- Ջոնզ, Ադամ (Jones, Adam). 206
- Ջուլֆա. 88, 118, 119
- Ռաշտ. 55, 99, 106, 112, 147, 289
- Ռեզա Շահ [Փահլավի]. 62
- Ռեզա Շահ Քաբիր միջնակարգ  
դպրոց. 36, 351
- Ռըզայիէ- տես՝ Ուրմիա.
- Ռիբակով, Անատոլի. 2
- Ռոսի, Ժաք (Rossi, Jacques). 170
- Ռոստով. 134, 135, 137. Բաշխիչ  
կայարան. 136, 166, 168
- Ռուզվելթ-Չըրչիլ-Ստալին Եռեակ  
համագումար. 109
- Սալմաստ. 85, 98, 99
- Սախարով, Անդրէյ. 235
- Սասունի, Կարօ. 272
- «Մեւ ագռաւ». 12, 137, 166, 167
- «Մեւ Մարիա» - տես՝ «Մեւ ագռաւ».
- Միդնի, Աստրալիա. 21, 27, 278
- Միմոնեան, Դրաստամատ. 227
- Մինանեան, Արշակ. 99
- Միւնիք. 44, 51
- Մլախին, Անդրէյ. 177
- Սմբատեան, Գրիշա. 215
- Սովժենիցին, Ալեքսանդր. 2, 13, 21, 167, 170, 171, 178, 182, 184, 191, 194, 207, 216, 224, 232,

- 236Սողովեցկ. 172, 179, 214  
 Սորայեա թագուհի. 36  
 Սովթանեան, Կ. Կ. 146  
 Ստեփանեան, Ասլան. 32, 33  
 Ստեփանեան, Հայկ. 97  
 «Վաթան Եղինդա». 91, 93  
 Վասիլև. 194  
 Վասմինջ. 82  
 Վասպուրական. 44  
 Վիեննա. 276, 293  
 Վիշինսկի, Անդրէյ. 187  
 Վիրաբեան, Ամատունի. 24, 151  
 Վոլկոգոնով, Դմիտրի. 215  
 Վորկուտա. 204, 206  
 Վոլ. 194  
 Վրաստան. 225, 226  
 Վրացեան, Սիմոն. 51  
 Տայմիր թերակղզի. 135, 139, 158  
 Տէր-Մինասեան, Լիլիթ. 203  
 Տէր-Օհանեան, [Անդրէ]. 106  
 Տուարդովսկի, Ալեքսանդր. 231  
 Տունգուզ. 158  
 Տրոցկի, Լէոն. 188, 190, 237  
 Րաֆֆի. 252  
 Ցեղասպանագէտների միջազգային  
 ընկերակցություն. 2  
 Փափագեան, Դալիթ. 97  
 Քանուէյ Ալլան (Convey, Allan). 154  
 Քանքուեսթ, Ռաբըրթ (Conquest,  
 Robert). 2, 216  
 Քաչըրին, Փամելա (Kachurin,  
 Pamela). 169  
 Քարաջ. 85  
*Քէյխան* օրաթերթ. 30  
 Քուփըր, Լէօ (Kuper, Leo). 206  
 Օխոտսկ ծով. 180  
 Օհանջանեան, Համօ. 14  
 Օրդուխանեան, Աբէլ. 217-219  
 Օրդուխանեան, Իռէն. 217-219,  
 222, 223  
 Ֆարագմանդ Խանում  
 [Էշրաթօլմուլուք]. 34  
 Ֆովկիէ թագուհի. 246  
 Ֆրանսիա. 76  
*Figaro, Le*, Փարիզ. 272